

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԽ Աշխատանքային խումբ
ԱՀՌԾ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄԳ Աղքատության մասնակցային գնահատում
ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՊԿԶՆ Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում
Գ.ԶՄՀ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ԵՄ Եվրամիություն
ԿԶԾ – Կայուն զարգացման ծրագիր
ՀԿ Հասարակական կազմակերպություն
ՀՀՌԲԾ Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր
ՀՊԾ Համաշխարհային պարենի ծրագիր
ՀՏԶԾ Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր
ՀՕՖ Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ ԶԾ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱՄՀ Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԳ Մոնիտորինգ և գնահատում
ՄԶԱՀ Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԾ Մարզի զարգացման ծրագիր
ՄԶՀ Մարզային զարգացման հանձնաժողով
ՄԶՄԿ Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄԶՆ Միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄՄՈՒՀ Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱԽ -Ոլորտային աշխատանքային խումբ
ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԾՏԳ Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԱՊ Տարեկան աշխատանքային պլան
ՏԻ Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ Տեղական ինքնակառավարման մարմին
ՈւԹՀՎ Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՓՄՁ Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ
ՕՈՆՆ- Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ



ՀՀ Արագածոտնի մարզն իր սոցիալ-տնտեսական, արտադրական և բնակլիմայական պայմաններով, ձեռք բերած ցուցանիշներով էապես առանձնանում է երկրի մարզերի շարքում:

Արարատյան դաշտավայրին հարող շրջաններում, համեմատած լեռնային և բարձրլեռնային գոտիների հետ, առավել բարձր են աշխատանքի արդյունավետությունը, եկամուտները, ավելի լավ են մարդկանց սոցիալական և տնտեսական պայմանները:

Ուստի, զարգացման անհամաչափությունները մարզում ավելի խիստ են արտահայտված:

Բացի այդ, նույնիսկ բնակլիմայական նպաստավոր պայմաններում, տարածաշրջանների զարգացման տեմպերը բարձր չեն: Կուտակվել են

հիմնախնդիրներ, որոնք, առանց զարգացման լուրջ և հիմնավորված ծրագրի, դժվար է իրականացնել:

Չարգացման հստակ ծրագրերի բացակայության պայմաններում տարիներ շարունակ մարզում կատարված ներդրումները հաճախ ուղղվել են ոչ այն ոլորտներն ու բնագավառները, որտեղ ավելի շատ էր զգացվում դրանց անհրաժեշտությունը:

Ծրագրերի գերակշիռ մասն իրականացվել է առանց հստակ մեթոդաբանության, ենթակա ներդրողների և ծրագիրն իրականացնողի անձնական նկատառումներին և պատկերացումներին:

Արագածոտնի մարզի զարգացման քառամյա ծրագիրը նպատակ ունի կանոնակարգել այս իրավիճակը:

Ծրագրում հստակ սահմանված են մարզի զարգացման առաջնահերթություններն ու գերակայությունները, տրված են դրանց լուծման ուղիները, ճշտված են ֆինանսավորման աղբյուրները:

Հսկայական աշխատանք է կատարվել փաստերի հավաքագրման, վերլուծության, հասարակական պահանջմունքների ուսումնասիրման նպատակով: Ծրագրի առանձին ոլորտների քննարկումներն իրականացվել են առավել թափանցիկության մթնոլորտում: Հաշվի են առնվել նաև մարզի զարգացման ուղղությամբ գիտական և հասարակական կազմակերպությունների նկատառումները: Մարզի բոլոր համայնքները մշակել և գործողության մեջ են դրել համայնքների զարգացման քառամյա ծրագրերը, մարզի գործարարները ներկայացրել են իրանց բիզնես պլանները և առաջարկները:

Առաջիկայում մենք հսկայական աշխատանք ունենք անելու: Մեր նպատակն է ամբողջովին կատարել մեր առջև դրված խնդիրները, հիմքեր ստեղծել մարզի կայուն և արագ առաջընթացի համար: Մարզպետարանը դրա համար ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները:

Մենք գիտակցում ենք, որ ծրագիրը վերանայման ու լրացման կարիք ունի:

Մենք պատրաստ ենք այդ առթիվ լսել ցանկացած դիտողություն և առաջարկ, աշխատել բոլորի հետ, ում համար ծրագրի իրականացումը լուրջ նշանակություն ունի:

Մարզի զարգացման ծրագիրը մեր հետագա քայլերի և անելիքների ուղեցույցն է, և մենք վճռական ենք դրանք կյանքի կոչելու գործում:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Արագածոտնի մարզը կազմավորվել է 1996 թ.-ին: Այն ներ է առել Թալինի, Աշտարակի, Ապարանի և Արագածի նախկին վարչական շրջանների տարածքները:

Տարածքը - 2 756 քառ. կմ (հինգերորդը ՀՀ-ում): Չբաղեցնում է ՀՀ տարածքի 9.3 տոկոսը: Բնակչությունը 140.5 հազար մարդ - (01.01.2008 թ.) Կազմում է ՀՀ բնակչության 4.4 տոկոսը:

Խտությունը 1 քառ. կմ-ի վրա - 51 մարդ:

Մարզային կենտրոնը –ք. Աշտարակ (20.8 հազար բնակիչ)

Քաղաքային համայնքներ - 3 (Ապարան - 6.6 հազար, Թալին - 5.7 հազար բնակիչ - (01.01.2008 թ.):

Գյուղական համայնքներ -111

Քաղաքային բնակչություն – 33.1 հազար մարդ

Գյուղական բնակչություն -107.4 հազար մարդ

Գյուղատնտեսական հողատեսքեր – 136667 հա,

այդ թվում՝ վարելահողեր 55711 հա:

Ամնաբարձր կետը ծովի մակարդակից - 4090 մ (Արագած լեռ)

Մարզն իր անվանումը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից: Արևմուտքում մարզը ձգվում է մինչև Թուրքիայի պետական սահմանը:

Արագածոտն մարզի տարածքն ընկած է հյուսիսային լայնության $43^{\circ} 12'$ և $43^{\circ} 45'$, արևելյան երկայնության $43^{\circ} 35'$ և $44^{\circ} 32'$ միջև:

Արագածոտն մարզի տարածքը Արարատյան գոգավորության արևմտյան լեռնալանջն է, որի շնորհիվ սառնամանիքներն ավելի թույլ են, քան Արարատյան դաշտում, իսկ ամռանը լանջերի և հարթավայրերի միջև զարգանում է օդի լեռնահովտային շրջանառություն (քամիներ):

Մարզի լանդշաֆտները կրում են ինչպես բարեխառն, այնպես էլ մերձարևադարձային կլիմայական գոտիների ազդեցությունը: Այս պատճառով ամառները մարզի ստորին գոտում (1000-1600 մ) տաք և չորային են, ձմեռները՝ չափավոր ցուրտ:

Մարզում հունվարին օդի միջին ջերմաստիճանը փոփոխվում է -5 -8 – ից մինչև -12 աստիճան, իսկ հուլիսին՝ 25-30 աստիճան:

Տարածքի ստորին գոտում նկատվում են ուժգին և միջակ ուժի երաշտներ: Հաճախ են նաև կարկտահարությունները:

Տարածքով անցնում է Արգնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը: Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի ջրամբարները: Դրանցից ամենախոշորը Ապարանի ջրամբարն է, որի հայելու մակերեսը 780 հա է, իսկ ծավալը՝ 91 միլիոն խմ: Գոյություն ունեն գրունտային և արտեզյան ջրերի խոշոր պաշարներ:

Կլիմայական գոտիներից հանդիպում են չոր ցամաքային, չափավոր տաք-չոր, բարեխառն տաք ամառով, չափավոր ցուրտ, ցուրտ լեռնային գոտիները: Բնական լանդշաֆտային գոտիներից հանդիպում են կիսասանապատային, չոր լեռնատափաստանային, ալպյան և նիվալ գոտիները:

Օգտակար հանածոներից մարզում շռայլորեն տարածված են շինանյութերը՝ տուֆ, բազալտ, կրաքար, կավահող, խարամ, պեմզա և պեռլիտ:

Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ.) և Ծաղկասար (2219 մ.), Իրինդ (2050 մ.), Արտենի (2047 մ.) հանգած հրաբուխները:

Գետային ցանցը թույլ է զարգացած: Մարզի գլխավոր գետը Քասախն է, որի ընդհանուր երկարությունը 89 կմ-է: Քասախի վտակներն են Գեղարոտը (25 կմ), Ամբերդը (36 կմ), Շաղվերդը (28 կմ) և Քարադբյուրը (20 կմ): Մարզում կան ժամանակավոր հոսք ունեցող մի քանի գետակներ: Դրանցից ամենամեծը Մաստարայի սելավատարն է (90 կմ.):

Մարզում կա 8480 հա անտառաշերտ: Մարզի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտոմայրուղիները՝ Երևան Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան – Աշտարակ – Սյիտակ և Երևան-Արմավիր-Քարակերտ-Գյումրի:

Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում):

Մարզը հանրապետության գիտական խոշոր կենտրոններից է: Աշտարակի տարածաշրջանում գործում են ՀՀ Գիտությունների ակադեմիայի 6 գիտահետազոտական ինստիտուտ և կոնստրուկտորական բյուրո: Դրանց թվում է նաև Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանը: Մարզն նաև ունի հանգստյան գոտիների լայն ցանց, որոնք հիմնականում տեղավորված են Բյուրականի անտառային գոտում: Զբոսաշրջության զարգացման համար կան նպաստավոր պայմաններ:

Մարզում կան Հայոց պատմության գրեթե բոլոր ժամանակներին բնորոշ մեծ թվով պատմական հուշարձաններ:

Լավ պահպանված են կիկլոպյան ամրոցներ, մ.թ.ա. 3-1-ին հազարամյակի բնակատեղի (Գեղարոտ), ուրարտական ամրոցներ (Հնաբերդ, Ծաղկահովիտ), Արշակունյաց թագավորների դամբարանը Աղձքում (4-րդ դար), Ագարակի, Ավանի, Քաղսիի, Փարայի բազիլիկները (5-րդ դար), Օհանավանքը (5-8-րդ դար), Օշականում Մ. Մաշտոցի դամբարանի վրա կառուցված եկեղեցին (5-րդ դար), Շենիկի (5-7-րդ դար), Մաստարայի (6-րդ դար), Գառնահովիտի (6-7-րդ դար), Ներքին Սասնաշենի եկեղեցիները, Քրիստափորի վանքը (7-րդ դար), Թեղենյաց վանքը (7-13-րդ դար), Աշտարակի կամուրջը (17-րդ դար), Աշտարակի Ակնատեսի առուն (ուրարտական ժամանակաշրջան):

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզային զարգացման ծրագրի գաղափարախոսությունը ձևավորվել է ՀՀ կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի, 2008 թ. վերանայված ԿԶԾ-ի, մարզի մարդկային, մասնագիտական, բնական, ավանդույթային և մյուս առանձնահատկությունների, հանրապետության տնտեսական և տարածաշրջանային զարգացման ռազմավարական հեռանկարային նպատակների համատեքստում:

Մարզի սոցիալ-տնտեսական իրական վիճակը ճշտելու և հիմնախնդիրները բացահայտելու նպատակով լուրջ ուսումնասիրություններ են կատարվել, հավաքվել և վերլուծվել են վիճակագրական տվյալները, համադրվել են ցուցանիշները, բնակչության, գործարարների և համայնքնապետերի շրջանում անց են կացվել հարցումներ:

ՀՀ Արագածոտնի ՄԶԾ-ի մշակման գործընթացն սկսվել է 2008 թ. հոկտեմբերից՝ ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թ. սեպտեմբերի 18-ի նիստի որոշման:

Այդ որոշման իրականացման համար ՀՀ Արագածոտնի մարզպետարանում կային բոլոր անհրաժեշտ հիմքերը: Ստեղծվել էր վիճակագրական բազմամյա տվյալների, մարզի և համայնքների հիմնախնդիրները բնութագրող ցուցանիշների, ուսումնասիրությունների արդյունքների և գնահատման հարուստ բազա:

Նախօրոք ուսումնասիրություններ էին իրականացվել համայնքներում, բացահայտվել էին հիմնախնդիրները, կազմվել էին համայնքների զարգացման եռամյա և քառամյա ծրագրեր և դրանց վրա հիմնված հիմնախնդիրների լուծման ժամանակացույցեր և միջոցառումների ցանկեր: Անց էին կացվել նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող հարցումներ և սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Մարզում իրականացվել է աղքատության մասնակցային գնահատում՝ աղքատության մասին բնակչության տեսակետները հավաքագրելու նպատակով:

ԱՀՌԾ-ի, մարզի զարգացման ՄԺԾԾ-ի և գոյություն ունեցող այլ ծրագրերի հետ դրանք դրվել են ՄՁԾ-ի ռազմավարության, գերակայությունների և առաջնահերթությունների սահմանման և ծրագրի կազմման հիմքում:

Ծրագրի կազմման և իրականացման նպատակով անհրաժեշտ հրահանգավորումներ ստանալու նպատակով մարզպետի, նրա տեղակալների և աշխատակազմի ղեկավարի մոտ հրավիրվել են մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և մասնագետների խորհրդակցություններ, որտեղ բացատրվել են ՄՁԾ-ի կազմման հիմնախնդիրները, տրվել են հանձնարարականներ, նշվել են գործունեության ուղղությունները և ոլորտները:

Մարզային զարգացման ծրագրում ընդգրկված ոլորտներում տիրող վիճակի, ուսումնասիրման, վերլուծության, գնահատման և ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպման նպատակով մշակվել են աշխատանքային պլաններ և գործողությունների ժամանակացույցեր:

Ձևավորվել է նաև Մարզային զարգացման հանձնաժողովը՝ Արագածոտնի մարզպետի նախագահությամբ: Դրա կազմում ընդգրկված է մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների և ՀԿ-ների 28 ներկայացուցիչ: Մարզային զարգացման հանձնաժողովի նպատակն է եղել ուսումնասիրել և քննարկել աշխատանքային խմբերի մշակած փաստաթղթերը, լուծել հարցերը, ծրագիրը ներկայացնել մարզային խորհրդին:

Հանձնաժողովի, ինչպես նաև մարզի համայնքների, ոչ պետական հատվածի, ՀԿ-ների, մարզում գործող դոնոր կազմակերպությունների և բանկերի ներկայացուցիչների համար մարզպետարանում հրավիրվել է սեմինար-խորհրդակցություն, որտեղ մանրամասն բացատրություններ են տրվել ՄՁԾ-ի, մարզի զարգացման ռազմավարական ուղղությունների, աշխատանքների կազմակերպման ձևերի և մեթոդների, հիմնախնդիրների, դրանց առաջնահերթությունների և գերակայությունների, իրականացվելիք գործընթացի փուլերի, պահանջների և արդյունքների մասին: Ոչ պետական հատվածի կազմակերպություններին առաջարկվել է գործուղել իրենց ներկայացուցիչներին՝ խմբերի աշատանքներում ընդգրկվելու համար:

ՄՁԾ-ի մոտեցումները, սկզբունքները, կազմն ու գործունեությունը կարգավորող տեխնիկական առաջադրանքը, ձևավորման աղբյուրները հաստատվել են ՄԽ նիստում:

Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ մարզում ստեղծվել է 8 ՈԱԽ.

- 1. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման,*
- 2. Գյուղատնտեսության և բնապահպանության,*
- 3. Մարզային ենթակառուցների,*
- 4. Քաղաքաշինության,*
- 5. Սոցիալական ապահովության և սոցիալական ծառայությունների,*
- 6. Կրթության, մշակույթի և սպորտի,*
- 7. Առողջապահության,*

8. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, քաղաքացիական հասարակության:

Յուրաքանչյուր աշխատանքային խումբ բաղկացած է 6-12 հոգուց, որոնք ներկայացնում են մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, մասնագիտացված կառույցները, հասարակական կազմակերպությունները, համայնքային միավորումները: ՈԱԽ-ները ղեկավարում են մարզպետարանի համապատասխան վարչությունների պետերը:

Մարզպետարանի տրամադրության տակ եղած բոլոր անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև «Մարզային զարգացման ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցը» մարզպետարանը մշակել և տրամադրել է ՈԱԽ-ներին: Խմբերը կազմել են տարեկան աշխատանքային պլաններ, որոնք հաստատել է ՄՁՀ –ն:

Ձևավորվել է նաև ՄԳ խումբ՝ բաղկացած 7 հոգուց: Խմբում ընդգրկված քաղաքացիների պաշտոնների անձնագրերում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Մշակվել է խմբի գործունեության կանոնակարգը և հաշվետվությունների ցանկը:

Խմբի համակարգողը փոխմարզպետն է:

ՄՁՀ-ն 2011-2014 թ.թ. ՄՁԾ-ի համար սահմանել է հետևյալ գերակայությունները.

• Մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն

Գործարար միջավայրը մարզում կայացած է: Գործում են գործարարությանն աջակցող մարզային և տարածաշրջանային կառույցներ, այդ թվում՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մարզային կենտրոնը:

Մասնավոր հատվածը և փոքր ու միջին ձեռնարկատիրությունը մարզում լուրջ դեր են կատարում ինչպես իրենց տնտեսական գործունեությամբ, այլև՝ սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում: Նոր ստեղծվող ձեռնարկություններում, համաձայն մարզի հարկային տեսչության տվյալների, ամեն տարի աշխատանքի է տեղավորվում 120-150 մարդ:

Մարզում մեծ հնարավորություններ կան ՓՄՁ զարգացման համար: Դրանք կարևոր դեր կարող են խաղալ արդյունաբերական արտադրանքների արտադրության, զբոսաշրջության, գյուղմթերքների արտադրության և վերամշակման, մանրամեծածախ ապրանքաշրջանառության, սպասարկման և այլ ոլորտներում:

Արտադրությունների և ծառայությունների մոտեցումը բնակչությանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը ՓՄՁ հիմնական խնդիրներից է: Խնդիր է դրվում ավելացնել ծառայությունների քանակը, այն հավասարաչափ՝ ըստ կարիքի, բաշխել մարզի տարածաշրջաններում և բնակավայրերում, դրանք բնակչության համար դարձնել ավելի մատչելի:

• Գյուղատնտեսություն և բնապահպանություն

Գյուղատնտեսությունը մարզի առաջատար ճյուղն է: Այն տալիս է մարզի համախառն տարեկան արդյունքի մոտ 70 տոկոսը, և ոլորտում զբաղված է մարզի գյուղական բնակչության շուրջ 90 տոկոսը: Բնագավառը լուծում է մարզի համար առավել կարևոր տնտեսական և սոցիալական խնդիրներ:

Առաջիկա 4 տարում գյուղատնտեսությունը մնալու է մարզի զարգացման հիմնական գերակայությունը: Կբարելավվեն սերմնաբուծությունն ու տոհմային գործը, կշարունակվի ոռոգման համակարգի կատարելագործումը, կթարմացվի գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանը, կբարելավվեն մատակարարման և մթերքների իրացման պայմանները: Դրա

հետևանքով գյուղացիական տնտեսությունները կամրապնդվեն, կբարձրանա աշխատանքի արդյունավետությունը, կավելանան ֆինանսական միջոց:

Գյուղում կշարունակվի նաև արտադրական ենթակառույցների զարգացումը, կավելանա առևտրի, սպասարկման, արտադրությունների և ծառայությունների մատուցող կազմակերպությունների թիվը, կմեծանան ծավալները:

Մարզի բնությունը բավականին հարուստ է, և դրա պահպանումն ու վերականգնումը կարևոր խնդիրներ են: Մարզում գործում են հանքարդյունաբերության զգալի թվով ձեռնարկություններ, զարգանում է զբոսաշրջությունը, ընդարձակվում է հանգստյան և ժամանցի գոտիների ցանցը: Դրանք առաջացնում են բնապահպանական լուրջ խնդիրներ, որոնց լուծումը նույնպես կարևոր է:

Կավելանան բնապահպանությանը հատկացվող միջոցները, կակտիվացվի ոլորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների և բնակչության դերը: Կգործի իրազեկման համակարգ:

Միաժամանակ, կշարունակվեն բնապահպանական միջոցառումները՝ անտառների տնկումները, աղբավայրերի գործունեության կանոնակարգումը, կսկսվի աղբի արդյունաբերական վերամշակումը:

- *Կրթական, մարզական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում*

Գերակա ուղղություն են մնում կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտները: Կլուծվեն բնագավառների վիճակի բարելավման, դրանց որակի և մատչելիության բարձրացման հիմնախնդիրները: Կբարելավվի մարզական կյանքը, կգործեն մարզական և մշակութային կազմակերպություններ և խմբեր:

Մարզում առաջիկա 4 տարում կշարունակվի ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, ուսումնակրթական բազայի հարստացման, ուսուցման և ուսման որակի բարձրացման գործընթացը, կկատարելագործվեն դպրոցների ինքնակառավարման կարողությունները, կզարգանան ներառական կրթության և նախադպրոցական կրթության համակարգերը, կաշխուժանա մարզամշակութային կյանքը և այլն:

Կբարելավվեն նաև բուժական հաստատությունների շենքային պայմանները, սպասարկումը կնոտեցվի բնակչությանը և կցուցաբերվի առավել մատչելի և որակյալ բուժօգնություն: Կարևոր խնդիր է համարվում առաջնային բուժօգնության առավել արդյունավետ կազմակերպումը, պայքարը տարափոխիկ, մանկական, վարակիչ և այլ հիվանդությունների դեմ:

Մարզի բնակչությունն առավել տեղեկացված կլինի մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի մասին, կբարելավվի սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատանքը, առավել բազմազան կդարձվեն ծրագրերը և կընդգրկվեն առավել շատ մարդիկ՝ նամանավանդ, սոցիալապես խոցելի խավերից:

- *Քաղաքաշինություն և համայնքային ենթակառուցվածքների կատարելագործում*

Ծրագրավորվող տարիներին քաղաքաշինության և համայնքային ենթակառույցների կատարելագործման ուղղությամբ ծրագրվում է շարունակել նախորդ տարիների աշխատանքները:

Կբարեկարգվեն ինչպես հանրապետական, այնպես էլ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները, կշարունակվի բնակավայրերի գազաֆիկացումը, կնորոգվեն համայնքների խմելու ջրագծերը, կկառուցվեն նորերը, կիրականացվեն ենթակառույցների հիմնական և ընթացիկ նորոգումներ: Դրանք կբարելավեն բնակչության կենսապայմանները,

կիրճատեն անարդյունավետ ծախսերը, կհեշտացնեն և առավել մատչելի ու հասանելի կդարձնեն սպասարկման պայմանները:

Բնակարանաշինության ոլորտում կշարունակվեն նախորդ տարիների աշխատանքները: Կնորոգվեն և կամրացվեն բազմաբնակարանոց շենքերը: Կիրականացվի անհատական բնակարանաշինություն:

• *Տարածքային կառավարման քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացում, տեղական ինքնակառավարման ուժեղացում և քաղաքացիական հասարակության ակտիվության խրախուսում*

ՄՁԾ-ի ինստիտուցիոնալ բաղադրիչն առաջարկում է շարունակել մարզպետարանի աղքատամետ ռազմավարական պլանավորման կարողությունների բարձրացումը, ՄՁԾ-ի ինստիտուցիոնալ համակարգի կենսունակության ապահովումը, մարզպետարանի աշխատակազմի տեխնիկական և մասնագիտական կարողությունների հզորացումը, տեղեկատվության կառավարման և կառուցվածքային կառավարչական համակարգի բարելավումը, համայնքային ծառայության համակարգի զարգացումը, միջհամայնքային միավորումների ձևավորումը, ՏԻՄ-երի տեխնիկական և մասնագիտական կարողությունների, մարզի բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև հասարակության մասնակցության ապահովումը հանրային կարևորության ծրագրերի մշակմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը:

ՄՁԾ-ի կազմման գործընթացն ուղղորդվել է հետևյալ սկզբունքներով.

ա/ ծրագիրը համահունչ է պետական քաղաքականության հետ:

ՄՁԾ-ի հիմքում դրվել են ԱՀՌԾ-ի, ՄԺԾԾ-ի, հանրապետության ԿՁԾ-ի ոլորտային ռազմավարությունները, նախարարությունների և գերատեսչությունների՝ մարզին վերաբերող ծրագրերը: Այդ ենթատեքստում հաշվի են առնվել մարզին բնորոշ զարգացման առաջնահերթությունները:

բ/ ՄՁԾ-ն ամբողջական է և ընդգրկում մարզի զարգացման բոլոր ոլորտները:

Դրանք դիտարկվել են աղքատության հաղթահարման ծրագրի և ԿՁԾ ենթատեքստում: Ծրագրի կազմումն սկսվել է փաստերի հավաքագրումով, վիճակի իրական գնահատմամբ, գերակայությունների և առաջնահերթությունների որոշակիացմամբ, կազմակերպական ու կառուցվածքային հնարավորությունների բացահայտմամբ և ավարտվել է ֆինանսական աղբյուրների ճշտմամբ ու նախանշմամբ:

գ/ ապահովվել է մարզի պետական ու ոչ պետական կառույցների և բնակչության առավելագույն մասնակցությունը գործընթացին:

Ծրագրի կազմմանը հնարավորինս շատ մասնակցություն է ապահովվել: Այդ աշխատանքներում ընդգրկվել են առավելագույն թվով շահառուներ, որոնց վերաբերում է ՄՁԾ-ն: Դա նպաստել է, որ ծրագիրը դառնա ավելի ամբողջական և համապատասխանի հիմնախնդիրների ներկայացման հարցերին՝ ըստ գերակայությունների և առաջնահերթությունների: Առավել ճշգրիտ են կազմվել ծրագրի իրականացման

ժամանակացույցը և աշխատանքային գրաֆիկը: Դա ապահովել է նաև ծրագրի վրա անհրաժեշտ վերահսկողության իրականացումը:

ՄՁԾ-ի մշակման հիմքերն են նաև համայնքների զարգացման եռամյա և քառամյա ծրագրերը, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի կարիքները:

դ/ ծրագիրը նպաստում է կառավարման համակարգի ժողովրդավարության խորացմանը և զարգացմանը:

Ծրագրին լայն մասնակցության ապահովումը հնարավորություն է տվել, որպեսզի ՄՁԾ-ում հաշվի առնվեն այն բոլոր առաջարկները, որոնք շոշափում են համայնքների, նրա բնակիչների, մասնավոր հատվածի, տեղական ինքնակառավարման և պետական կառավարման ոլորտների շահերն ու հետաքրքրությունները: Ծրագրի կազմման ընթացքի լայն հրապարակայնության ապահովումը հնարավորություն է ընձեռել մարզի բնակիչներին՝ առավել տեղեկացված լինել կատարվող աշխատանքների մասին, գնահատել կատարվող գործի կարևորությունը և զգալ իրենց մասնակցությունն այդ աշխատանքներին:

Ծրագիրը մշակվել է Արագածոտնի մարզի իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, փորձագետների և շահագրգիռ այլ կազմակերպությունների մասնակցությամբ:

ե/ ծրագիրն ապահովում է մարզպետարանի դերի բարձրացումը:

Ծրագրի իրականացման գործում մարզպետարանի դերի բարձրացման նպատակով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շրջանակներում արվել են առաջարկություններ, կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, քաղաքաշինության պաշտոնների անձնագրերում կատարվել են անհրաժեշտ ճշտումներ, որոնք բարձրացնելու են մարզպետարանի դերը մարզի զարգացման ծրագրերի կազմման, իրականացման և վերահսկողության գործում, առավել արդյունավետ և նպատակային են իրականացվելու մոնիթորինգի և վերահսկողության գործառնությունները: Մարզպետարանն ստանձնել է բյուջետային ու տեխնիկական կարողությունների և որոշումների ընդունման, մարզում իրականացվելիք ծրագրերի իրականացման և դրանց թափանցիկության ապահովման պարտականությունները:

զ/ հատակ սահմանագատված են ՄՁԾ – ների մշակման և իրականացման մասնակիցների դերերը և զարգացվել են մասնակիցների կարողությունները:

Ծրագրի կարևորությունը թելադրում է գործընթացի մասնակիցների կարողությունների զարգացում, նրանց պատասխանատվության և գիտելիքների անընդհատ բարձրացում, պարտականությունների և լիազորությունների ամբողջական իրականացում: Այդ նպատակով մարզպետարանում հրավիրվել են խորհրդակցություններ, անց կացվել են սեմինարներ և քննարկումներ, ընդունվել են ներկայացված բոլոր առաջարկները և դրանք քննարկվել են առավել թափանցիկության պայմաններում: Ծրագրի կազմման մասնակիցներին ցույցաբերվել է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն, ուղորդվել է նրանց աշխատանքը:

է/ ստեղծվել է ՄՁԾ-ների ՄԳ կայուն համակարգ: Աշխատանքի ընթացքում համակարգը հետևողականորեն զարգացել է: Առավել ակնհայտ են դարձել ծրագրի հիմնախնդիրները, հիմնադրույթները, ներ դրվել են աշխատանքի նոր ձևեր ու մեթոդներ:

ՄՁԾ-ի կազմման, ուսումնասիրությունների, վերլուծությունների, գնահատման ասպարեզներում առավել կարևոր տեղ է հատկացվել մոնիթորինգի և գնահատման համակարգին:

ՄԳ համակարգն ունեցել է երկու ուղղություն.

1. **Կառուցվածքային** – ՄԳ խմբում ընդգրկվող մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնների անձնագրերում կատարվել են անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ: Դրանցում ամրագրվել է մոնիթորինգի գործառույթը:

2. **Գործառույթային** - այն բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

**ա/ քաղաքականության վերլուծություն,
բ/ ՄՁԾ ցուցանիշների և թիրախների վերանայում,
գ/ մասնակցային ՄԳ,
դ/ ազդեցության գնահատում:**

Առաջին երկուսը ներառված են մարզպետարանի ՄԳ խմբի անդամների պարտականություններում:

Մասնակիցների կարողությունների վերապատրաստումն ու զարգացումն ապահովվել է մարզպետարանի կարողությունների զարգացման պլանի և տարեկան աշխատանքային պլանի շրջանակներում:

ՄՁԾ մոնիթորինգի և գնահատման համակարգը համահունչ է ԿՁԾ-ի, Աղքատության հաղթահարման ռազմավարության մոնիթորինգի և գնահատման համակարգին և ընդգրկում է այն հիմնական չափորոշիչները, որոնք հնարավորություն կտան մարզային մակարդակում գնահատում իրականացնել: Այն ներառում է նաև ԱՀՌ-Ծ-ին հատուկ չափորոշիչներ:

ը/ մարզային զարգացման ծրագրերի և գերակայությունների սահմանման գործընթացին տրվել է առավելագույն հրապարակայնություն, ապահովվել է թափանցիկությունը:

Ծրագրի մշակման և իրականացման փուլերում մեծ ուշադրություն է դարձվել մասնակցային մոտեցումների կիրարկմանը՝ ֆոկուս խմբային քննարկումների, աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովի, մարզի ՀԿ-ների ցանցի հետ քննարկումների, մասնակցային մոնիթորինգի, միջոցառումների ազդեցության անկախ գնահատման միջոցով: Մասնավորապես՝ մարզի սոցիալ-տնտեսական վիճակը բացահայտելու, բնակչությանը մտահոգող և նրանց առաջադրած հարցերը քննարկելու և ՀՏՁԾ-ի գործունեության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով մարզի գյուղական և քաղաքային համայնքներում ՀՏՁԾ-ն և մարզպետարանը համատեղ կազմակերպել են ֆոկուս խմբային քննարկումներ:

Այս նպատակով գործընթացում ներգրավվել են հանրապետությունում և մարզում գործող զանգվածային լրատվության միջոցները, հասարակական կազմակերպությունների հնարավորությունները: Մարզի կայքէջում տեղադրվել են բոլոր անհրաժեշտ նյութերը: Ստեղծվել է ծրագրի կոորդինացման և հրապարակայնության ապահովման հանձնախումբ:

Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ուղղությունները ՄՁԾ-ում ներկայացված են հետևյալ կառուցվածքով՝

• ներկա իրավիճակի վերլուծություն՝ 2005-2009 թթ.-ին ոլորտներում իրականացված աշխատանքների նկարագրություն և վերլուծություն, հիմնախնդիրների և դրանց միջև պատճառահետևանքային կապերի բացահայտում,

- 2011-2014 թ.թ.-ի ոլորտային նպատակների և զարգացման ռազմավարության մշակում,***
- ռազմավարական ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորում,***
- համապատասխան ոլորտի զարգացման ծրագրերի տրամաբանական հենքի պատրաստում:***

Վերջինս ոլորտային նպատակները, խնդիրները, միջոցառումների կենսագործումից ակնկալվող արդյունքները շաղկապում է միջանկյալ և վերջնական ցուցանիշներին, ինչպես նաև

նկարագրում է նպատակներին հասնելու կարևոր նախապայմաններն ու հնարավոր խոչընդոտները, ռիսկերը: Տրամաբանական հենքը կազմում է ՄՁԾ-ի տարեկան աշխատանքային պլանի բաղկացուցիչ մասը, որը տարին երկու անգամ կենթարկվի մոնիթորինգի:

Մոնիթորինգի և գնահատման համակարգը (Գլուխ 9) ներառում է հետևյալ գործառույթները.

• քաղաքականության վերլուծություն

Այս բաղադրիչը մշակել և իրականացրել է *մարզպետարանի ՄԳ խումբը*:

Կատարվել է աշխատանքների և արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն: Նյութերը ներկայացվել են ՄՁՀ-ին:

Տարին երկու անգամ քննարկվելու է ՏԱՊ-ի տրամաբանական հենքում սահմանված միջոցառումների իրականացման ընթացքը, որը կարտացոլվի կիսամյակային ու տարեկան հաշվետվություններում: Մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը պատրաստելու համար տարվա ընթացքում կթարմացվի ՄՁԾ-ի ցուցանիշների ցանկը, որի հիմնական աղբյուրներն են ՏԱՊ-ի տրամաբանական հենքում ամրագրված ՄՁԾ-ի հատուկ ցուցանիշները, և ԱՀՌԾ-ի մոնիթորինգի համակարգում ընդգրկված ցուցանիշները:

Ոչ-պետական քաղաքիչը. Տարվա վերջում մարզի ՀԿ-ները մասնակցային մոնիթորինգ և գնահատում են իրականացնելու: Միջոցառումը հատկապես նշանակալի է այն առումով, որ իրականացվելու է քաղաքացիական հասարակության կողմից վերահսկում՝ մարզպետարանի մոնիթորինգի և գնահատման խմբի հետ սերտ համագործակցությամբ: Մասնակցային ՄԳ-ն հնարավորություն կտա ՏԱՊ-ով սահմանված միջոցառումների իրականացումը գնահատել ուղղակի շահառուի տեսանկյունից, որը հիմք է ծառայել արդյունավետության ու ազդեցության որակական գնահատականների ձևակերպման համար:

Այս բաղադրիչով քաղաքացիական հասարակությանը հնարավորություն է տրվում ՄՁԾ-ի վարչարարության նկատմամբ իրականացնել հանրային հսկողություն: Նման մեխանիզմի միջոցով ուժեղանալու է հասարակության համագործակցությունը մարզպետարանի ՄԳ խմբի հետ: Բացի այդ, մասնակցային մոնիտորինգը և գնահատումը թույլ է տալիս քննության առնել ՏԱՊ-ի միջոցառումները մարզի բնակչության տեսանկյունից, ինչպես նաև արձանագրել դրանց արդյունավետության ու իրական ազդեցության որակական գնահատականները:

• ՄՁԾ-ի ցուցանիշների և թիրախների վերանայում,

Նույնպես իրականացնելու է ՄԳ խումբը: Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ՄՁԾ-ում արվելու են անհրաժեշտ փոփոխություններ և ճշտումներ:

• մասնակցային մոնիթորինգ և գնահատում,

Իրականացնելու են ՀԿ-ներն ու անկախ փորձագետները: Ուսումնասիրվելու և գնահատվելու է մասնակցային գործընթացի կազմակերպումը, ՄՁՀ-ին արվելու են դրանց արդյունավետությունը բարձրացնելու առաջարկներ:

• ոլորտային ազդեցության գնահատում,

Աշխատանքը նույնպես իրականացնելու են ՀԿ-ները և անկախ փորձագետները: Գործընթացում ընդգրկված են նաև մարզպետարանի ստորաբաժանումների մասնագետներ: Խումբը ղեկավարում է փոխմարզպետը:

Խումբը գնահատելու է կատարված աշխատանքների արդյունքները, դրանց ազդեցությունը աղքատության հաղթահարման և մյուս ծրագրերի իրականացման ընթացքի վրա:

Յուրաքանչյուր տարվա վերջում իրականացվելու է «Ազդեցության գնահատում» ուսումնասիրությունը, որի հաշվետվությունը դառնալու է մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվության մեկ բաժինը: Այս ուսումնասիրությունն ընդգրկում է ՄՁԾ-ով սահմանված որևէ բնագավառ (օր. 2011 թ.-ին՝ գյուղատնտեսության ոլորտը, 2012 թ.-ին՝ դպրոցաշինության ոլորտը):

Ուսումնասիրությունն իրականացնելու են անկախ փորձագետները, որոնք կատարում են համապատասխան ոլորտում ձեռնարկված միջոցառումների որակի մասնագիտական գնահատում:

• ՄՁԾ-ի ֆինանսական աղբյուրների ճշտում և ֆինանսավորման ապահովում,

Ֆինանսավորման աղբյուրները հիմնված են (կարիքները գնահատվել են 53 միլիարդ 333,3 միլիոն դրամ). պետական բյուջե, համայնքների բյուջեներ, վարկային միջոցներ և դոնոր կազմակերպություններ:

ՄՁԾ-ի առաջնահերթություններն արտացոլված են միջնաժամկետ ծրագրային հայտերում՝ այսինքն՝ ՄՁԾ միջոցները կառավարվում են պետական գործող ընթացակարգերով: Այս ռազմավարական մոտեցումը որոշիչ նշանակություն ունի այն տեսանկյունից, որ ՄՁԾ-ները և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցները դառնում են միջնաժամկետ ծախսերի ամբողջ գործընթացի անբաժանելի մաս:

ՄՁԾ-ում սահմանված ծրագրերի մեծ մասը ներկայումս չունի ֆինանսավորման աղբյուր: Դրանք նախատեսվում է հայթայթել ծրագրի իրականացման ընթացքում: Այդ նպատակով մարզպետարանը Հայաստանում գործող դոնոր կազմակերպություններին ներկայացնելու է ՄՁԾ-ներով սահմանված այն ծրագրերը, որոնք ֆինանսավորման կարիք ունեն:

Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարությունները քննարկել և հավանության է արժանացրել Մարզային զարգացման հանձնաժողովը: Ռազմավարությունները միավորվել են մարզի զարգացման ընդհանուր փաստաթղթում:

Մարզային զարգացման հանձնաժողովը, որը գործում է որպես Արագածոտնի մարզային խորհրդին առընթեր խորհրդակցական մարմին, ստեղծվել է ՀՀ Արագածոտնի մարզպետի 2009թ. ապրիլի 10-ի N 32-Ա կարգադրությամբ:

ՄՁՀ-ն նպատակ ունի համակարգել ՄՁԾ կազմման գործընթացները, այդ թվում՝ քննարկել ռազմավարությունները, հավանություն տալ դրանց և միավորել մեկ համապարփակ փաստաթղթում: Մարզային զարգացման հանձնաժողովը նույնպես մասնակցային միավոր է: Նրա 25 անդամները ներկայացնում են մարզպետարանը, ՏԻՄ-երը, համայնքների միությունները, հասարակական և մասնավոր հատվածները:

ՄՁԾ-ն գնահատվում է հետևյալ չափանիշներով.

- *ՄՁԾ-ն աղքատամետ է,*
- *համահունչ է պետական ռազմավարություններին և քաղաքականություններին, ազգային ԱՀՌԾ-ի, ԿՁԾ-ի նպատակներին և սկզբունքներին,*
- *ընդգրկված է ՄԺԾԾ-ում և տարեկան բյուջետային ընթացակարգերում, համայնքների զարգացման եռամյա և քառամյա ծրագրերում,*
- *արտացոլում է մարզի իրական կարիքները, որոնք բացահայտվել են մասնակցային գործընթացների արդյունքում,*
- *հիմնված է լուրջ ուսումնասիրությունների վրա,*

- **ապահովված է մոնիթորինգի և գնահատման համակարգով,**
- **իրատեսական է:**

Այս փաստաթղթում սահմանվել են տարբեր ոլորտներում միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական կարիքները:

ՄՁԾ-ի իրականացմանն աջակցելու նպատակով մշակվել են տարեկան աշխատանքային պլաններ, որոնք սահմանում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու են մարզային իշխանությունները և ներկայացնում են այն բազան, որի հիման վրա հնարավոր է վերահսկել իրականացման ընթացքը:

Մոնիթորինգի և գնահատման խումբը ձևավորվել է մարզպետարանի կազմում: Այն բաղկացած է 13 ոլորտային մասնագետներից և վերահսկում է ՄՁԾ-ի իրականացումն ու ազդեցությունը, ինչպես նաև ՄՁԾ-ով սահմանված նպատակների շրջանակում ընդհանուր առաջընթացը: Խումբը ղեկավարում է Արագածոտնի փոխմարզպետը: Այս խիստ կարևոր օղակը, որը ձևավորվել է մարզպետի կարգադրությամբ, կգործի նաև հետագայում:

ՄԳ համակարգը կազմված է երեք բաղադրիչներից, որոնցից ստացվող տվյալների համադրմամբ հնարավոր է ստանալ ՏԱՊ-երի իրականացման համապարփակ ու վստահելի պատկերը:

Հիմնավորված. ՄՁԾ-ում արձանագրվող առաջնահերթություններն ու միջոցառումները հիմնված են իրական տվյալների և դրանց վերլուծությունների վրա, այդ թվում`

• **ԱՀՌԾ-ի և ԿՁԾ-ի դրույթներն ու մոտեցումները և դրանցով նախատեսված առաջնահերթություններն ու ռազմավարությունները,**

• **2005-07 թվականներին անցկացված Աղքատության մասնակցային գնահատում,**

• **ՄՁԾ-ի մոնիթորինգի և գնահատման հաշվետվությունները,**

• **2007, 2008, 2009 թթ. Տարեկան աշխատանքային պլանները,**

• **Վիճակագրական տվյալների բազաները,**

• **ԱՎԾ-ի, բանկերի, դոնոր, ՀԿ և միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները և ուսումնասիրությունները,**

• **ՀՀ կառավարության, նախարարությունների և գերատեսչությունների հաշվետվությունները, ծրագրերը, հայեցակարգերը :**

Գնահատելի. ՄՁԾ-ում առաջարկվող միջոցառումները չափելի են, ունեն ցուցանիշներ և թիրախներ: Բոլոր բաժիններն ունեն ոլորտային տրամաբանական հենք:

Իրականացալի. ՄՁԾ-ում առաջարկված միջոցառումներն իրատեսական են:

Ծրագրում արտացոլված են և այն միջոցառումները, որոնց համար արդեն իսկ կան ֆինանսական միջոցներ և այն, որոնց համար ֆինանսավորման աղբյուրները պետք է գտնվեն:

Աշխատանքային խմբերն իրենց գործունեությունն սկսել են փաստահավաքմամբ, հիմնարար փաստաթղթերի, հաշվետվությունների և սոցիալ-տնտեսական տվյալների, եզրակացությունների քննարկումով, ինչպես նաև առաջնահերթությունների վերաբերյալ իրենց կարծիքների ձևավորումով:

Ոլորտային աշխատանքային խմբերի գործունեության երկրորդ փուլում համաձայնություն է ձեռք բերվել ոլորտի խնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ, քննարկվել են ընթացիկ վիճակն ու հիմնախնդիրները:

Ոլորտի խնդիրներն ու ռազմավարություններն ամրագրվել են տրամաբանական հենքի ձևաչափով: Տրամաբանական հենքը կառավարման մի գործիք է, որտեղ հստակորեն ներկայացվում են միջոցառումների, խնդիրների ու նպատակների միջև գոյություն ունեցող և հնարավոր կապերը:

ՄՁԾ-ի կազմման համար կիրառվել է տրամաբանական հենքի պարզեցված տարբերակը, ինչը.

• Նկարագրում է ոլորտի հիմնական խնդիրը, որը պետք է լուծել: Սա «քաղաքական ու ռազմավարական մակարդակի» նպատակ է, որն ամրագրված է ընդհանուր ճևակերպումներով և պարտադիր չէ, որ այն լիարժեքորեն իրականացվի ՄՁԾ-ի գործողության քառամյա ժամկետում:

• Նկարագրում է առաջնահերթ ծրագրերը, որոնք ուղղված են ոլորտի խնդրի իրականացմանը:

• Մահմանում է այն ցուցանիշները, որոնց միջոցով կատարվելու է ծրագրի իրականացման և ոլորտային խնդիրների լուծման մոնիթորինգ:

• Նկարագրում են բոլոր այն հնարավոր ռիսկերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրերի մշակման ու կատարման կամ ոլորտի ավելի լայն խնդիրների լուծման վրա:

Տրամաբանական հենքի նպատակն է առանձին միջոցառումների մակարդակում ավելի մանրամասն պլանավորման հիմքեր ապահովել: Այս աշխատանքները պետք է կատարվեն տարեկան կտրվածքով՝ ՄՁԾ-ի իրականացման ամբողջ ընթացքում: Ավելի մանրամասն պլանավորման ընթացքում բացահայտվելու են միջոցառումների արդյունքների ու անելիքների մանրամասները, ինչպես նաև գտնվելու են դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Համաձայնեցնելով ոլորտային խնդիրներն ու գերակայությունները՝ ՈԱԽ-ները պատրաստեցին ոլորտային ռազմավարությունների նախագծերը: Սրանց հիմքում համապատասխան ոլորտների տրամաբանական հենքերն են, որոնք կազմված են համաձայն հետևյալ կառուցվածքի.

ա) ոլորտի իրավիճակի վերլուծություն,

բ) ոլորտի ռազմավարություն,

գ) ոլորտի ֆինանսավորում:

Վերջին բաժնում ներկայացված են ոլորտային ռազմավարությունների իրականացման ֆինանսավորման մանրամասները, ինչպես նաև միջնաժամկետ ծախսերի ծրագրի համաձայն տեղեկատվություններ՝ առկա ֆինանսական աղբյուրների ու միջոցների մասին:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական նոր հարաբերությունների հաստատման պայմաններում ինչպես երկրում, այնպես էլ ՀՀ Արագածոտնի մարզում տնտեսական համակարգը, փաստորեն, կազմալուծվեց: Տեղի ունեցան հասարակական և տնտեսական, անցանկալի ներքին խոր փոփոխություններ: Նախկին արտադրական և սոցիալական կապերի փլուզման հետևանքով շատ արտադրություններ դադարեցին գործելուց: Որպես հետևանք, տեղի ունեցավ բնակչության զանգվածային աղքատացում, սկսվեց արտագաղթը մարզից:

Նոր արտադրահարաբերությունների պայմաններում նվազագույնի հասցվեց ինչպես պետության, այնպես էլ պետական մարզային կառույցների միջամտությունը առաջին հերթին՝ արտադրական ոլորտներում իրականացվող գործընթացներին: Դրա հետևանքով մարզի տնտեսությունն սկսեց զարգանալ տարերայնորեն՝ ենթակա ոչ թե մեկ ընդհանուր նպատակի, այլ անհատների և կազմակերպությունների անձնական և խմբակային շահերին:

Դա հասցրեց այն բանին, որ հասարակական ամբողջական արդյունքում, եկամուտների ավելացման պայմաններում, դրանք սկսեցին խիստ անհավասարաչափ բաշխվել: Հասարակությունը ենթարկվեց անվերահսկելի բևեռացման: Դա հանգեցրեց ոչ միայն հասարակական տարբեր շերտերի՝ միմյանցից օտարացման, այլև օտարացման հենց պետությունից, անվստահություն պետության և պետական ձեռնարկումների հանդեպ: Սկսվեց երկրի և հասարակական շահի գիտակցության աստիճանական տեղատվությունը:

Որպես հետևանք, ամբողջությամբ չկայացան քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիական համաձայնությունը: Երկիրը, նրա կազմում և մարզը, չկարողացան հասնել ժողովրդավարության նախանշված բնագծերին՝ դրա բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:

Այնուհանդերձ, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, 1990-ական թվականների կեսերից սկսվեց որոշ առաջընթաց գրանցվել ինչպես երկրում, այնպես էլ մարզի տնտեսությունում:

Մարզում տնտեսական աճը սկսվել է 1995 թ-ից և շարունակվում է մինչև այժմ: Սակայն այդ աճին դեռևս բնորոշ են տնտեսական ճգնաժամ ապրող երկրներին բնորոշ որակներ:

Անկանխատեսելի վերելքներին հետևում են նույնքան անկանխատեսելի անկումները, գրեթե յուրաքանչյուր տարի հաստատվում է որոշակի գերակայություն, որը հաջորդ իսկ տարում կտրուկ փոխվում է: Դա իր հետ բերում է սոցիալական և տնտեսական զգալի ցնցումներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում արտադրական և հասարակական կյանքի վրա:

Որոշ արտադրություններ ընդհանրապես փակվում են, շատերը կրճատում են ծավալները: Որպես հետևանք, տեղի է ունենում արտադրական անձնակազմի աշխատանքից զանգվածային ազատում, արտադրական պրոֆիլի փոփոխման պայմաններում մարդիկ հնարավորություն չեն ունենում արագ վերաորակավորվել և դառնում են ցածր որակավորման աշխատուժ, որն առավել մեծ չափերով է ենթակա գործազուրկ դառնալու վտանգին:

Այդ պայմաններում հասարակության մեջ աղքատության նվազումը նույնպես անվերահսկելի է:

Չնայած ուսումնասիրվող տարիներին մարզում կրճատվել է աղքատ և շատ աղքատ ընտանիքների թիվը, սակայն առավել մեծ չափերի է հասել հարաբերական աղքատացումը, հասարակության բևեռացումը: Դա հետևանք է հասարակական ամբողջական արդյունքի և եկամուտների խիստ անհավասարաչափ բաշխման:

2.1. ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մարզի տնտեսության հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է: Յածրադիր վայրերում մշակվում են ջերմասեր մշակաբույսեր՝ խաղող, դեղձ, որոշ մերձարևադարձային մշակաբույսեր: Բարձրադիր գոտիներում մշակվում է կարտոֆիլ, կաղամբ, զարգացած է անասնաբուծությունը:

Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Սակայն գործում են մի քանի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ Դրանցից են «Աշտարակկաթը», «Դայնոթերը», շինարարական արդյունաբերության մի քանի ձեռնարկություններ: Զարգանում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը:

Աղյուսակ 1. Մարզի տնտեսության 1998-2008 թթ. ցուցանիշները. (մլն.դրամ)

h/h	Ոլորտը	1998 թ.	2008 թ.	աճը (%)
1	Արդյունաբերություն	4076.5	13040.7	319.9


ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

2	Գյուղատնտեսություն	41100.0	48800.0	118.7
3	Շինարարություն	4653.0	7854.3	168.8
4	Առևտուր	4073.4	6104.4	126.3
5	Ծառայություններ	1752.4	2838.4	161.4

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 1998-2008
 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ.-ին».

Մարզի տնտեսության կառուցվածքի մասին առավել ամբողջական պատկերացում է տալիս N1 գրաֆիկական պատկերը:

Գրաֆիկական պատկեր 1. Մարզի տնտեսության կառուցվածքը ըստ բնագավառների



Համաձայն վիճակագրական տվյալների, վերջին 10 տարում ամենամեծ առաջընթացը գրանցվել է արդյունաբերության ոլորտում՝ 219.9 տոկոս:

Դրա պատճառն այն է, որ 1998 թ.-ին մարզի արդյունաբերական ձեռնարկություններն աշխատում էին չափազանց թերբեռնված և ունեին մեկնարկային բավականին ցածր նիշ:

Բացի այդ, 2000 թ.-ից սկսած, շահագործվեցին մի քանի համեմատաբար խոշոր արտադրություններ: Դրա հաշվին մարզի արդյունաբերությունն այսպիսի աճ է գրանցել:

Ամենացածր աճի տեմպն արձանագրվել է գյուղատնտեսության ոլորտում՝ ընդամենը 18.7 տոկոս: Դրա պատճառն այն է, որ ճյուղում այդ տարիներին կապիտալ լուրջ ներդրումներ չեն եղել, և բնագավառը հիմնականում գոյատևել է ներքին ռեզերվների հաշվին:


Աղյուսակ 2. Համախառն ներքին արդյունքը Հայաստանում՝ տարածքային կտրվածքով, 1999-2006թթ. (մլրդ դրամ՝ ընթացիկ գներով)

Ցուցանիշներ	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստան	987.4	1031.3	1175.9	1362.5	1624.6	1907.9	2242.9	2656.2
Երևան	416.0	477.2	537.4	648.2	820.2	979.7	1249.8	1550.8
Արագածոտն	41.6	28.5	34.2	44.5	46.6	50.5	53.4	68.0
Արարատ	72.7	73.0	70.4	93.5	101.0	116.2	119.9	132.4
Արմավիր	97.0	87.8	81.2	94.6	94.3	114.6	122.7	126.7

Գեղարքունիք	58.1	57.0	66.9	74.8	92.9	101.3	99.8	114.0
Լոռի	62.8	64	72.3	79.7	90.7	108.2	110.3	139.1
Կոտայք	86.6	87.8	108.9	105.1	127.6	125.9	144.0	149.2
Շիրակ	64.2	63.6	67.9	84.0	93.4	90.4	90.3	100.4
Սյունիք	45.7	53.7	75.4	73.3	90.7	142.8	172.7	186.6
Վայոց ձոր	15.5	14.5	29.5	23.6	27.5	33.3	34.4	37.7
Տավուշ	26.7	23.6	31.7	39.9	38.7	45.1	45.3	51.5
Գյուղական բնակավայրեր	341	313.4	385.5	425.1	469.1	544.5	560.3	636.2

ՀՆԱ-ի ցուցանիշով մարզը Հայաստանում զբաղեցնում է 9-րդ տեղը՝ գերազանցելով միայն Վայոց ձորի և Տավուշի մարզերին:

Գրաֆիկական պատկեր 2. Մարզի մասնաբաժինը հանրապետության ՀՆԱ-ի կազմում



Ութ տարվա ընթացքում մարզի ՀՆԱ-ն ավելացել է 18.4 միլիարդ դրամով: Սակայն այդ աճին բնորոշ են անկայուն տեմպերը: Մինչև 2001 թ.-ը աճը հերթազարկվել է հետընթացով: Կայուն զարգացումն սկսվել է 2002 թ-ից և շարունակվել մինչև 2007 թ-ը: 1999 թ-ի նկատմամբ 2006 –ին աճը կազմել է 28.9 տոկոս: Ընդ որում, ամենամեծ աճը գրանվել է 2006 թ-ին (27.2 տոկոս):

Սակայն մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակով մարզը հանրապետությունում զիջում է միայն Կոտայքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերին:


Աղյուսակ 3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն Երևանում և Հայաստանի մարզերում 1999-2006թթ. (հազար դրամ, ընթացիկ գներով)

	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Երևան	376.7	432.1	486.6	587.5	744.3	889.1	1134.1	1404.9
Արագածոտն	300.6	205.7	246.7	321.4	335.7	362.8	383.3	487.5
Արարատ	267.5	268.8	258.9	343.7	370.7	425.0	437.8	481.9
Արմավիր	351.1	317.6	293.9	341.3	340.1	411.7	438.9	452.4
Գեղարքունիք	244.5	239.8	281.3	314.3	389.3	424.1	417.3	474.9
Լոռի	219.2	223.8	252.5	279.7	319.3	381.4	389.0	490.3
Կոտայք	317.6	322.3	399.5	386.0	467.4	458.8	522.8	540.9

Շիրակ	226.8	224.7	239.9	297.3	331.2	321.0	321.0	356.8
Սյունիք	299.5	352.2	493.4	480.0	592.5	932.7	1128.4	1218.0
Վայոց ձոր	276.1	259.7	527.0	422.4	492.0	595.7	615.8	675.8
Տավուշ	204.5	181.0	240.4	307.3	299.2	337.9	338.0	380.7

Ցուցանիշներն առավել ակնհայտ են 3-րդ գրաֆիկական պատկերում

Գրաֆիկական պատկեր 3. Մարզի տեղը հանրապետությունում 2006 թ-ին՝ ըստ ՀՆԱ-ի մակարդակի



Բայց, չնայած այս որակական ցուցանիշի համեմատաբար բարձր լինելուն, մարզում ՀՆԱ-ի բացարձակ արժեքը մնում է ցածր մակարդակի վրա: Դա նշանակում է, որ սեփական ներդրումների ծավալի առումով մարզում լուրջ հիմնախնդիրներ կան: ՀՆԱ -ի ցածր մակարդակը հնարավորություն չի տալիս իրականացնել խոշոր կապիտալ ներդրումներ: Դրա համար արտաքին ֆինանսական հոսքերի անհրաժեշտություն կա:

1999-2006 թ.թ. ՀՆԱ-ի աճի տեմպերով ՀՀ Արագածոտնի մարզը երկրում 6-րդ տեղում է՝ 162.2 տոկոս:

Չնայած դրան, Երևանի համեմատությամբ ՀՆԱ-ի զարգացման տեմպերը մարզում ետ են մնում: Եթե 1999 թ-ին մայրաքաղաքի համեմատությամբ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն մարզում կազմում էր 79.8 տոկոս, ապա 2006 թ.-ին այդ ցուցանիշը կրճատվել է՝ հասնելով 34.7 տոկոսի:

Այս միտումը բնորոշ է ողջ երկրի համար:

Դրա հիմնական պատճառը ներդրումների խիստ անհամաչափ բաշխումն է Երևանի և մարզերի միջև: Հայաստանում 2001-2006 թ.թ. - երին ներդրումների 72.8 տոկոսը բաժին է ընկնում Երևանին, 27,2 տոկոսը՝ մարզերին: Արագածոտնի մարզը հանրապետության մյուս մարզերից այս իմաստով գրեթե չի տարբերվում:

Ընդհանուր առմամբ 2006-08 թթ.-երին մարզում կատարվել են 42250.1 միլիոն դրամի ներդրումներ, բեռնաշրջանառության ծավալներն աճել են 2.2 անգամ, ուղևորափոխադրումների ծավալները՝ 3.8 անգամ, 2.8 անգամ ավելացել են նաև ծառայությունների ծավալները: Արդյունքում ավելացել է մարզի ՀՆԱ-ն:

Ներդրումները կատարվել են մարզի սոցիալական և տնտեսական բոլոր ոլորտներում:

Ամենաշատ ֆինանսական միջոցները հատկացվել են կրթության, , գյուղատնտեսության և ենթակառուցվածքների ոլորտներում:

Բավականին զգալի են ներդրումները բնակարանաշինության ոլորտում: Դրա պատճառն այն է, որ մարզի բնակիչները մեծապես տուժել էր Սպիտակի երկրաշարժի ժամանակ:

Բավականին զգալի է նաև նպատակային ներդրումների՝ սուբվենցիաների տեսակարար կշիռը:

Ընդ որում, ներդրումները տարեցտարի ավելացել են բոլոր բնագավառներում:

Այդ մասին առավել մանրամասն տեղեկություններ է տալիս ստորև ներկայացվող աղյուսակը:

Աղյուսակ 4. 2006-08 թթ.երին մարզում կատարված ներդրումները


մլն. դրամ

h.h.	Ոլորտը	2006	2007	2008	Ընդամենը
1	Կրթություն	2068.5	2856.3	3256.4	8181.2
2	Մշակույթ	378.3	452.6	528.6	1359.5
3	Առողջապահություն	59	103.4	126.8	289.2
4	Ոռոգման ջրամատակարարում	61.3	398.9	426.5	886.7
5	Գյուղատնտեսություն	4694.8	5254.3	5886.3	15835.4
6	Խմելու ջրամատակարարում	622.9	685.4	728.6	2036.9
7	Բնակարանաշինություն	116.9	185.2	286.5	588.6
8	Ճանապարհային տնտեսություն	783.0	1504.5	2995.8	5283.3
9	Նպատակային հատկացումներ -սուբվենցիա	394.0	463.0	568.2	1425.2
10	Հեղեղատների կառուցում և նորոգում	245.5	256.4	125.6	627.5
11	Այլ ծրագրեր	1727.7	1952.6	2056.3	5736.6
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	11151.9	14112.6	16985.6	42250.1

Ներդրումների ծավալներն տարեցտարի աճել են: Ամենամեծ աճը գրանցվել է 2008 թ-ին:

Այդ մասին առավել տեսանելի պատկերացում է տալիս ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերը:

Գրաֆիկական պատկեր 4. Ներդրումների աճը մարզում 2006-2008 թ.թ. -երին



Սակայն ներդրումների անբավարար ծավալը հնարավորություն չի տալիս տնտեսական լուրջ առաջընթաց ապահովել: Բացի այդ, ներդրումները կատարվել են հիմնականում ենթակառուցվածքների բարելավման նպատակով: Արտադրական ոլորտում կատարված ներդրումները չափազանց քիչ են և որոշակի որակ չեն կարող ապահովել:

Տնտեսության առաջընթացի համար զսպող լուրջ գործոն են նաև անառողջ մրցակցությունը, վարկային բարձր տոկոսադրույքները և վարկերի անհասանելիությունը, հարկերի վճարման ցածր և սովորայնության բարձր մակարդակը:

Այս բացասական երևույթները հատուկ են նաև Արագածոտնի մարզին և մեծապես ազդում են նրա տնտեսության վրա:

Այդ պատճառով, ընդհանուր առաջընթացի պայմաններում առաջացել են հիմնախնդիրներ, որոնք, առանց զարգացման հայեցակարգի և ծրագրի, կարող են լուրջ խնդիրների առջև կանգնեցնել մարզը:


Նախ, զարգացման առաջնահերթությունների և գերակայությունների բացակայության պայմաններում մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն ընթացել է առանց հստակ մեթոդաբանության և ծրագրի: Չափազանց մեծ դեր է խաղացել շուկայական պահանջարկի անկանխատեսելիությունը:

Ասվածն ամբողջապես վերաբերում է մարզի տնտեսության բոլոր ոլորտներին: Սակայն այն առավել արտահայտիչ է արդյունաբերության բնագավառում:

Այսպես, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալների ինդեքսը մարզում 1988 թ. 120.5-ի փոխարեն 2000 թվականին կազմել է 95.3 %: 2001 թ-ին՝ նախորդ տարվա համեմատությամբ՝ 99.2 %: Աճն սկսվել է 2002 թ-ից: Սակայն անհամաչափ զարգացումը պահպանվել է: 2005 թ-ին մարզի արդյունաբերությունը թողարկել է 8 միլիարդ 260 միլիոն դրամի արտադրանք, սակայն 2006 թ-ին դրա ծավալները կրճատվել են մինչև 7 միլիարդ 255.5 հազար դրամը: 2008 թ-ին այն հասել է վերջին 10 տարում ամենաբարձր մակարդակին: Նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է 37.0 %:

2007 թ-ին մարզի արդյունաբերության բաժինը հանրապետությունում ներկայացվում է և ներկայացվող գրաֆիկական ապատկերում.

Գրաֆիկական պատկեր 5. Մարզի արդյունաբերության բաժինը երկրում



Տեղի է ունենում նաև արտադրության անխուսափելի խոշորացում: Հիմնականում փոքր արտադրողները, չլիմանալով մրցակցությանը, վաճառում են իրենց հիմնական միջոցները առավել հզորներին և դառնում վարձու աշխատող կամ համալրում գործազուրկների շարքերը:

Նույնպիսի վիճակ է տիրում նաև տնտեսության մյուս ոլորտներում:

Չափազանց ցածր է եղել արտադրողների սոցիալական պատասխանատվությունը: Որպես կանոն, ծախսերի կառուցվածքում բավականին ցածր է աշխատանքային ծախսումների տեսակարար կշիռը: Դա հանգեցնում է հասարակական տարբեր շերտերի մեջ հարստության խիստ անհավասարաչափ բաշխման, որի հետևանքով խորանում է հարաբերական աղքատությունը:

Նման միտումները վկայում են, որ անհրաժեշտ է ունենալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգ և ծրագիր, ավելի ակտիվորեն միջամտել հասարակական լայն հնչեղություն ունեցող գործերին, ինչպիսիք են զարգացման առաջնահերթությունների և գերակայությունների սահմանումը:

Ներկայացվող հայեցակարգի հիմքում այն իրողությունն է, որ մարզն ունի առավելություններ, հնարավորություններ, ուժեղ և թույլ կողմեր, որոնք տնտեսական և հասարակական ոլորտներում կարող են ապահովել առավել առաջընթաց տեմպերով զարգացում: Միաժամանակ, նկատի են առնվել ներմարզային մարդկային, մասնագիտական, բնական և այլ ռեսուրսների առկայությունը, ավանդույթները, շուկայի պահանջումները: Առկա հնարավորությունների նպատակային զարգացումը կապահովի առավել տնտեսական և սոցիալական նկատելի արդյունք:

Միաժամանակ, նախատեսված են միջոցառումներ, որոնք նվազագույնի են հասցնելու թույլ գործոնների ազդեցությունները:

Մարզի զարգացման համար նպաստավոր են հետևյալ գործոնները.

- Մարզը գտնվում է երկրի աշխարհագրական կենտրոնական մասում:
- Համեմատաբար զարգացած է ճանապարհային ցանցը. մարզի տարածքով են անցնում դեպի Վանաձոր, Գյումրի, Վրաստան, Թուրքիա տանող ավտոմոբիլային ուղիները: Գոյություն ունեն Երևանը շրջանցող ճանապարհներ բոլոր ուղղություններով, այդ թվում՝ դեպի «Զվարթնոց» օդանավակայան: Կա նաև երկաթուղի:

- *Աշտարակի տարածաշրջանում գործում է ՀՀ Գիտությունների Ակադեմիայի առաջատար 6 հիմնարկ, որոնք ունեն գիտատար արտադրության կազմակերպման մեծ հնարավորություններ: Դրանց կից ստեղծվել և գործում են մի շարք արտադրական կոոպերատիվներ և ընկերություններ:*
- *Գոյություն ունեն գործնականում անսպառ որակյալ պեղիտի, խարամի և կավի հանքավայրեր:*
- *Կան մեծ թվով շենքեր, շինություններ և կառույցներ, որոնք պիտանի են արտադրության նպատակներով հետագա շահագործման համար:*
- *Մարզը էկոլոգիապես մաքուր և աշխարհում մեծ պահանջարկ ունեցող գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վերամշակման մեծ հնարավորություններ ունի:*
- *Ամառային ու ձմեռային զբոսաշրջության և լեռնագնացության զարգացման մեծ հեռանկարներ կան:*

Սրանցով հանդերձ, մարզն ունի նաև ակնհայտ թույլ կողմեր: Դրանք հետևյալ գործոններն են.

- *Մարզում տարիների ընթացքում կազմավորված արտադրական ներուժը թույլ է և ունի զարգացման սահմանափակ ներքին հնարավորություններ ու ռեզերվներ:*
- *Նախկին արտադրական ձեռնարկությունների գերակշռող մասի հիմնական միջոցները բարոյապես և ֆիզիկապես մաշված են: Դրանք չեն կարող համաշխարհային ստանդարտների պահանջներին համապատասխան արտադրանք թողարկել:*
- *Թույլ է մարզի տեխնիկական բազան: Մեխանիզմները մեծ մասամբ մաշված են: Մեքենասարքավորումների հավաքակալանի պատրաստականությունը ցածր է:*
- *Գյուղատնտեսությունը զարգանում է էքստենսիվ եղանակով, ինքնապահովման և վերարտադրության հնարավորությունները ցածր են: Բնագավառի ենթակառուցվածքները թույլ են զարգացած:*
- *Մարզի տարածաշրջաններում խիստ տարբեր են բնական և կլիմայական պայմանները: Չեռնարկությունների և բնակչության եկամուտները տարածաշրջաններում խիստ անհավասարաչափ են՝ պայմանավորված բնական պայմանների և տեխնիկական զարգացման մակարդակների տարբերություններով:*
- *Արտադրական կառուցվածքներն ու ենթակառուցվածքներն ընդգծված անհամամասնություններով են բաշխված տարբեր տարածաշրջանների միջև:*
- *Չկա ժամանակակից կադրային բազա:*
- *Շուկայական տնտեսության ինստիտուտների կայացման մակարդակն անբավարար է:*
- *Ստվերային տնտեսության աստիճանը և կոռուպցիոն ռիսկերը բարձր են:*

2.2. ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայեցակարգի հիմքում այն գաղափարն է, որ օգտագործելով մարզի առավելությունները, ուժեղ կողմերը և հնարավորությունները, ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական ներդրումների միջոցով հնարավոր կարճ ժամանակում ստեղծել արագ զարգացող և հզոր տնտեսություն, ապահովել երկրի կազմում մարզի լիարժեք ինտեգրացումը:

Ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել այն բոլոր գործոններ, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել մարզի տնտեսության զարգացման հեռանկարների ձևավորման, առաջնահերթությունների և գերակայությունների ճշտման վրա:

Հայեցակարգի հիմնական սկզբունքն այն է, որ մարզում պետք է ընտրվեն նոր գերակայություններ: Դա թելադրված է մի շարք իրողություններով:

Այսօր մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, որը տալիս է մարզում արտադրվող համախառն ներքին արդյունքի գրեթե 70 %-ը: Սակայն այդ ոլորտը հիմնականում լուծում է ինքնապահովման խնդիր: Դյուղից ստացվող ֆինանսական միջոցները ուղղվում են արտադրողի ներքին կարիքների բավարարմանը և արտադրության հետագա կազմակերպմանը: Ընդ որում, հնարավորություններ չկան ընդլայնված վերարտադրության կազմակերպման համար:

Գյուղատնտեսության ոլորտը հիմնականում ներկայացնում են փոքր տնտեսություններ, որոնց համար արտադրության արդյունավետ զարգացման հնարավորությունները չափազանց սահմանափակ են: Դրանք ներկայումս չեն կարող խոշոր ծավալի դրամական, նամանավանդ, արտարժույթային մուտքեր ապահովել, միջոցներ ստեղծել ոչ միայն ոլորտի, այլև տնտեսության մյուս ճյուղերի արագ և դինամիկ զարգացման համար:

Չնայած վերջին տարիներին ճյուղի եկամտաբերությունը համեմատաբար բարձրանում է, այնուամենայնիվ, այն մնում է բավականին ցածր մակարդակի վրա: Ներկայումս վարվող տնտեսական քաղաքականության պայմաններում ճյուղը անկարող է ռազմավարական խնդիրներ լուծել:

Մարզի սահմանափակ հողային հնարավորությունների պայմաններում բնագավառի ռազմավարական խնդիրը ոլորտի լիարժեք ինքնապահովումն է և մթերքների արտադրության ավելացումն այն հաշվով, որպեսզի հնարավորինս սեփական արտադրությամբ ապահովվի մարզի, ինչպես նաև՝ նաև երկրի բնակչության ներքին պահանջները:

Մարզի տնտեսության մյուս ճյուղերը ևս՝ զբոսաշրջությունը, կապը, տրանսպորտը, շինարարությունը, ծառայությունները կարող են լուծել միայն բնագավառային խնդիրներ: Սակայն դրանք չեն կարող գերակա ուղղություն դառնալ մարզի զարգացման ռազմավարության մեջ՝ առկա բազմաթիվ հիմնախնդիրների պատճառով:

Ջարգացման նման միտումների շարունակության դեպքում մարզը մնալու է որպես ցածր արդյունավետությամբ գյուղատնտեսական շրջան և հնարավորություն չի ունենա լուրջ տնտեսական առաջընթաց ապահովել:

Բազմաթիվ գործոնների վերլուծությունները, քննարկումները, հետազոտությունները, տեղական և համաշխարհային շուկայի պահանջումների ուսումնասիրությունը, հեռանկարները և թիրախների համադրումները ծրագրի հեղինակներին բերել են այն համոզման, որ մարզը հեռանկարում ունի բոլոր հնարավորությունները՝ գյուղատնտեսության հետ միասին որդեգրել նոր գերակայություն. ***դառնալ գիտաարտադրական համալիրի համապետական կաևոր կառույց:***

Ջարգացման առաջարկվող հայեցակարգը կազմավորվել է բնագավառում տարիների ընթացքում կազմավորված ավանդույթների, փաստացի վիճակի, ճյուղից մարզին մնացած ժառանգության, զարգացման հեռանկարների վերլուծության արդյունքների հիման վրա:

Արդյունաբերական արտադրանքի բացարձակ ծավալով, համաձայն ՀՀ վիճակագրության հաշվետվությունների, ՀՀ Արագածոտնի մարզը թողարկում է հանրապետության արդյունաբերական համախառն արտադրանքի 1-1.5 %-ը, որը գերազանցում է միայն Վայոց ձորի և Տավուշի մարզերի ցուցանիշներին:

Վերջին հինգ տարում մարզի արդյունաբերությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. (մլն. դրամ)


Աղ.5. Մարզի արդյունաբերությունը 2004-2008 թթ. երին

Ոլորտը	2004 թ.	2005 թ.	2006 թ.	2007 թ.	2008 թ.
--------	---------	---------	---------	---------	---------

ԱՄԲՈՂՁ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ	7840.0	8260.0	7255.5	9574.9	13040.7
Արտադրանքի իրացում	6272.0	7434.0	7941.4	9812.9	13420.2
Արտահանում (մլն. դոլար)	1712.0	2225.6	1534.8	2962.8	3040.4

Արտադրանքի իրացման և արտահանման հարաբերակցությունը մարզում ներկայացվում է 6-րդ գրաֆիկական պատկերում:

Գրաֆիկական պատկեր 6. Արտադրանքի իրացման և արտահանման հարաբերակցությունը




Արտադրության աճը տեղի է ունեցել հանքագործական արդյունաբերության մեջ /պեռլիտ, քար, խարամ/ 3.3 անգամ, սննդամթերքի / ներառյալ խմիչքը/ արտադրությունում` - 112.6 %:

Մարզում երկրի արդյունաբերական համախառն արտադրանքի տեսակարար կշիռը 2003 թ. 1.8 % -ի փոխարեն 2008 թ.-ին իջել է 1.3 %-ի:

Մարզում արդյունաբերական արտադրանքի արտադրության տեմպերի ոչ հաստատուն լինելը և երկրում չափաբաժնի նվազումը բացատրվում է նրանով, որ Հայաստանում 1999-2008 թթ. զարգացման գերակայությունները մարզին գրեթե չեն առնչվել, և արդյունաբերությունը գոյատևել է հիմնականում ներքին ռեզերվների հաշվին:

Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ ամենամեծ բաժինը պատկանում է վերամշակող արդյունաբերությանը, որը թողարկում է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 82.7 տոկոսը: 10.8 տոկոսը վերաբերում է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությանը և բաշխմանը, 2.1 տոկոսը` հանքարդյունաբերությանը:

Գրաֆիկական պատկեր 7. Մարզի արդյունաբերության ցուցանիշների հարաբերակցությունը



Վերամշակող արդյունաբերության մեջ ամենամեծ բաժինը պատկանում է աղամանդագործությանը: Մարզում 2002 թ-ից գործում է բնական աղամանդի մշակության «Դ-այնոթեք» ընկերության Թալինի արտադրամասը: Հզորությունը մեծացրել է նաև Մելիքյուղի գործարանը: 2008 թ.-ին մարզում մշակվել է մոտ 12800 կարատ աղամանդ, որը 2002 թ.-ի համեմատությամբ ավել է 3000 կարատով:

Առաջընթաց կա սննդարդյունաբերության մեջ: Կաթնամթերքի արտադրությունը 2008 թ-ին, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1.5, երշիկեղենի արտադրությունը՝ 2.1 անգամ: Այս բնագավառում հիմնական արտադրողներն են «Աշտարակկաթ» միավորումը, «Աշտարակմիս» և «Ապարանմիս» ձեռնարկությունները:

Մարզում նախկինում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չեն գործել, համեմատաբար քիչ է եղել ճյուղում զբաղված անձնակազմի թիվը, թույլ է եղել ֆոնդազինվածությունը: 1990 թ-ին արդյունաբերական անձնակազմի տարեկան միջին թիվը կազմել է 4532 (մարզի բնակչության մոտ 2.6 %-ը) 1997 թ-ին՝ 2983 մարդ (1.8 %): 2002-2008 թթ-երին արդյունաբերության մեջ զբաղվածների թիվն ավելացել է հիմնականում ի հաշիվ «Աշտարակկաթ», Թալինի «Դ-այնոթեք», «Աշտարակյան գինիներ» գործարանների, Արագածի արհեստական ալմաստի, Ապարանի «Նիգ», «Արև» գործարանների վերապրոֆիլավորման և վերագործարկման, «Թամարա Ֆրուտ» պահածոների արտադրության ծավալների ընդլայնման: Սակայն մյուս արդյունաբերական ձեռնարկություններում աշխատակիցների թիվը կրճատվել է: Գործունեությունը ամբողջովին դադարեցրել է Աշտարակի կիսահաղորդիչների գործարանը:

Հիմնական ֆոնդերի և հարաբերական, և բացարձակ ցուցանիշներով, ֆոնդահատույցով, մարզը հանրապետությունում վերջին տեղում է: Աշխատանքի արտադրողականությունը մեկ մարդու հաշվով 2008 թ.-ին կազմել է 848 հազար դրամ: Նույնիսկ 25 % շահութաբերության մակարդակի դեպքում մեկ մարդու ստեղծած զուտ եկամուտը կազմում է 287.2 հազար, իսկ հարկերի վճարումից հետո՝ մոտ 75 հազար դրամ: Սա այն վերջին սահմանն է, որից հետո արտադրությամբ զբաղվելը դառնում է ոչ նպատակահարմար: Այս պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական մասն անկարող է ընդլայնված վերարտադրություն կազմակերպել:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները նախկինում կողմնորոշված են եղել դեպի խորհրդային սպառողը: Այդ համակարգի փլուզումից հետո դրանց ներկա ներուժը և հնարավորությունները, նույնիսկ ձեռնարկությունների վերագործարկման և արտադրական հզորությունների լրիվ վերականգնման դեպքում թույլ չեն տա այդ ճյուղում լուրջ առաջընթաց ապահովել, մարզը վերածել արդյունաբերական կենտրոնի:

Իր հերթին, հայրենական սպառողը կողմնորոշվում է դեպի ավելի զարգացած, արտերկրյա տեխնոլոգիաներով թողարկվող բարձրորակ արտադրանքը, և հայրենական հնացած տեխնոլոգիաներով արտադրությունը նրան այլևս չի բավարարում:

Այս պայմաններում անցած տարիներին մարզի արդյունաբերության զարգացման քաղաքականությունը հիմնականում հանգել է եղած ձեռնարկությունների վերագործարկմանը: Սակայն այս ուղղությամբ կազմակերպությունների մեծ մասի ջանքերը որոշակի դրական արդյունքներ չեն տվել:

Դա ունի իր և օբյեկտիվ, և սուբյեկտիվ պատճառները:

Օբյեկտիվ պատճառներից հիմնականն այն է, որ մարզի **արդյունաբերական նախկին ներուժն իրեն սպառել է:** Եղած ձեռնարկությունների՝ ամեն գնով վերագործարկման միտումը դրանց նախկին կարգավիճակով թե տնտեսապես, թե քաղաքականապես սնանկ է: Այդ պայմաններում, որոշ տնտեսական վերելքին անխուսափելիորեն հետևելու է արագ անկումը: Այս դեպքում, իր տեխնոլոգիական հետամնացության պատճառով, հայրենական տնտեսությունն ընդհանրապես կախման մեջ է ընկնելու արտերկրի բարձր տեխնոլոգիական արտադրողից, լավագույն դեպքում դառնալու է նրա կցորդը: Հետամնացության հաղթահարումը առանց նոր հայեցակարգի և նպատակային ներդրումների, կդառնա անհնարին կամ չափազանց ուշացած:

Նման պայմաններում զարգացման հաստատուն հեռանկարներ ունեն միայն այն ձեռնարկությունները, որոնք թողարկում են կամ բարձր տեխնոլոգիաների ոլորտի, կամ բարձր արժեք ու մեծ պահանջարկ ունեցող արտադրանք: Ներկայումս այդպիսի արտադրանք են թողարկում Թալինի «Դայմոթեք» և Մելիքգյուղի ադամանդի գործարանները:

Սրանով ներկայումս սպառվում են եղած արդյունաբերական ներուժի զարգացման ներքին հնարավորությունները:

Ինչպես այս, այնպես էլ հանրապետության մանաստիպ ձեռնարկություններում կան հիմնախնդիրներ, որոնք կարող են լուրջ հարցերի առջև կանգնեցնել և մարզը, և երկիրը:

Այս ձեռնարկությունների տնտեսական արդյունքները բնութագրվում են որակական բավականին ցածր ցուցանիշներով. մեծ շահութաբերությամբ, ինքնարժեքի կառուցվածքում ցածր աշխատանքային ծախսումների, բարձր էներգատարության և հիմնական միջոցների արժեքի բավականին ցածր մակարդակով: Դա թույլ է տվել այդ ձեռնարկություններին՝ արագորեն հետ գնել կապիտալ ներդրումները և աշխատել մեծ շահույթով /մինչև 200 %/: Այսպիսի ցուցանիշները բնութագրական են զարգացող երկրների տնտեսությունների համար:

Սակայն համաշխարհային տնտեսության մեջ հանրապետության և մարզի ինտեգրումը, իրացման գների հավասարեցման միտումը, ի վերջո, հասցնելու են այն բանին, որ արդյունավետության մյուս ցուցանիշները ևս կսկսեն համեմատվել համաշխարհայինի հետ: Այս դեպքում աշխատավարձերը նույնպես անխուսափելիորեն կբարձրանան մինչև համաշխարհային մակարդակ:

Արդեն այսօր այս միտումներն իրենց զգացնել են տալիս:

Ցածր աշխատավարձի պատճառով որոշ որակյալ աշխատողներ լքում են ձեռնարկությունը և աշխատանք են գտնում Ռուսաստանի տարբեր, հիմնականում՝ ադամանդագործական շրջաններում, ուր նրանց նկատմամբ պահանջարկը բավականին բարձր է: Այս առթիվ «Դայմոթեքում» ներկայումս լուրջ անհանգստություն կա: Սակայն վաղ թե ուշ ձեռնարկությունը կանգնելու է աշխատավարձը բարձրացնելու անհրաժեշտության առջև: Դա են թելադրում է նաև սպառողական շուկան, գների անխուսափելի բարձրացումները:

Նման հեռանկարի դեպքում այսպիսի ընկերությանը այլևս ձեռնտու չի լինի պահել գործող ձեռնարկությունը: Իսկ նրա հեռանալու դեպքում, քանի որ հիմնական միջոցների արժեքը ցածր է և դրանք այլ նպատակներով օգտագործելը՝ անհնարին, դրանք այլևս սպառողական բարձր արժեք չեն ունենա:

Դիտարկումները և վերլուծությունները վկայում են նաև, որ մարզի տարածքում եղած, այսօրվա դրությամբ չգործող արդյունաբերական ձեռնարկությունների միայն մի մասն իր ներկա վիճակով որոշակի արժեք ունի և կարող է հետաքրքրել հավանական ներդրողներին կամ գնորդներին: Մնացած ձեռնարկությունները կամ պետք է լուծարվեն կամ վերապրոֆիլավորվեն որպես նոր արտադրություններ:

Դրանցում տեխնիկական հիմնականում հնացած է, ֆիզիկապես և բարոյապես մաշված, որոշ ձեռնարկություններում հավաքակալայան ամբողջովին վաճառվել է: Փաստորեն, բացի մի քանի, արդեն իսկ գործող ձեռնարկությունները, եղածներից ոչ մեկն այսօրվա վիճակով անկարող է գործել:

Այդ ձեռնարկությունների վերագործարկման համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ:

Եղած ձեռնարկությունների վերագործարկման ծրագիրը բավականին ծախսատար է, կպահանջվի արտերկրում գտնել գործընկերներ, ապահովել անհրաժեշտ ֆինանսական ներդրումներ, արտադրանքի անխափան իրացում և արտադրության բարձր արդյունավետություն: Բավականին ծանր է նաև փոխադրման խնդիրը: Թողարկվող արտադրանքի ծավալը մեծ է լինելու, և երկաթուղու գործարկումը դառնալու է կենսական խնդիր:

Գյուղատնտեսական արտադրությունը ներկայումս չի ապահովում այն հատույցը, որ անհրաժեշտ է մարդկանց նորմալ կենսագործունեության համար: Բացի այդ, հողերի խոշորացման պայմաններում, այդ ոլորտում զբաղվածների մի մասն անխուսափելիորեն զրկվելու է սեփականությունից, դառնալու է վարձու աշխատող: Իսկ դաշտավարության բարձր սեզոնայնության պայմաններում արդյունաբերական արտադրությունների կազմակերպումը մարդկանց այդ խմբի համար կարող է դառնալ բարձր եկամտի կայուն աղբյուր: Այսինքն, ճյուղի վերագործարկումը կլուծի սոցիալական շատ կարևոր խնդիր:

Ի թիվս այլ հիմնախնդիրների, ոլորտի զարգացման նպատակով անհրաժեշտ կլինի կատարել բավականին մեծ կապիտալ ներդրումներ: Դրանց ետզման ժամկետները բավականին երկար կլինեն և զուտ տնտեսական տեսանկյունից գոնե առաջիկա 5 տարում բարձր եկամտաբերություն չեն ապահովի:

Մարզում այնպիսի նոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների կազմակերպումը, որոնք ընդունակ կլինեն մարզը դարձնել կարևոր արդյունաբերական կենտրոն, մի քանի առումներով տնտեսապես անհեռանկարային է: Դա ունի իր օբյեկտիվ պատճառները.

- 1. Անհրաժեշտ ենթակառուցվածքներ ունեցող բնակավայրերի տարածքային սահմանափակվածությունը: Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքները շրջապատված են բնակավայրերի խիտ ցանցով և ունեն միայն քաղաքաշինության նպատակներին հարմար կառուցապատման տարածքներ: Մյուս բնակավայրերի տարածքներում նոր ձեռնարկությունների կառուցումը տնտեսապես ձեռնտու չէ, քանի որ չկան անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ կլինի կազմակերպել: Դրա փոխարեն մարզում կան դատարկ կամ չօգտագործվող մեծաթիվ շինություններ, որոնք համեմատաբար քիչ ներդրումներով, կարելի է վերակառուցել և հարմարեցնել այլ նպատակների: Կերճատվեն նաև հետզմումների ժամկետները:*
- 2. Անհրաժեշտ կլինի նոր կառուցումների հետ միաժամանակ ներդնել նոր տեխնոլոգիաներ: Դա բավականին թանկ կարժենա և ներդրումների հետզմման ժամկետները բավականին երկար կլինեն:*
- 3. Չկա համապատասխան որակի ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմ: Նրանց ուսուցումը ևս բավականին զումարներ կարժենա:*
- 4. Երկիրը և մարզը զրկված են հաղորդակցության նորմալ ուղիներից, և չկա երաշխիք, որ դրանք մոտ ապագայում կգործեն անխափան: Համեմատաբար թույլ է զարգացած նաև երկաթուղին: Ինքնաթիռային փոխադրումները երբեմն անհնար կլինեն արտադրանքի*

մեծ ծավալների պայմաններում և մեծ չափով կրարձրացնեն արտադրանքի ինքնարժեքը, կիջեցնեն արտադրության շահութաբերությունը:

5. Շուկայի պահանջարկի մասին փաստացի տեղեկատվությունը բացակայում է, անկատար է շուկայավարման համակարգը:

Այնուամենայնիվ, այս բոլոր դժվարությունների պայմաններում առաջարկվող ծրագիրը չափազանց կարևոր է մարզի բնակչության զբաղվածության և աղքատության հաղթահարման խնդիրների լուծման համար:

Ուստի բնագավառի նորովի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է ունենալ նոր հայեցակարգ և ճյուղի զարգացման որակապես նոր ծրագիր:

Բազմաթիվ գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի արդյունաբերության ոլորտում առաջատար դերը կարող է ստանձնել գիտաարտադրական համալիրը, առաջին հերթին՝ գիտատար արդյունաբերությունը: Նպատակային միջոցառումներ իրականացնելու դեպքում այն հնարավորություն ունի ապահովելու բոլոր անհրաժեշտ հիմքերը՝ մարզի տնտեսության արագ, կայուն և արդյունավետ զարգացման համար. մարզը ցածրարդյունավետ գյուղատնտեսական շրջանից վերածել գիտաարտադրական համալիրի ոչ միայն համապետական, այլև՝ տարածաշրջանային կենտրոնի:

Միաժամանակ անհրաժեշտ է զարկ տալ տնտեսության մյուս ճյուղերին՝ գյուղատնտեսությանը, շինարարությանը, առևտրին, զբոսաշրջությանը և ծառայություններին:

Տնտեսական ոլորտի զարգացումով է առաջին հերթին պայմանավորված մարզում աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծումը:

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ

Աղքատության վերացմանը նպատակամղված պայքարն ամրագրված է ՀՀ կառավարության կողմից ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում», ԿԶԾ-ում, ԱՀՌԾ-ի միջոցառումների պլանում, ինչպես նաև Կառավարության հաստատած միջին ժամկետ ծախսային ծրագրում:

ԱՀՌԾ-ի քաղաքականությունների փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է ամբողջ երկրի մասշտաբով նախանշված գերակա ուղղությունները, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային կառավարման բարեփոխումներին, ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին, հանրության մասնակցության ու մոնիթորինգի մեխանիզմների ներդրմանը: Այն ռազմավարական ծրագիր է, որի մարտավարությունը, այսինքն, իրականացվելիք միջոցառումների ուղղվածության որոշումը, պահանջում է ռազմավարական խնդիրների տեղայնացում՝ ըստ երկրի առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և աղքատության դրսևորման առանձնահատկությունների:

Ինչպես երկրում, այնպես էլ Արագածոտնի մարզում աղքատությունը կրճատվելու ակնհայտ միտում ունի: 2006 թ.-ին, 1999 թ.-ի համեմատությամբ մարզում աղքատ բնակչության թիվը նվազել է 33, իսկ շատ աղքատներինը՝ 20.2 կետով:

Նման միտում դրսևորվել է նաև հաջարդ տարիներին: 2007 թ.-ին Հայաստանում ոչ աղքատ էր համարվում բնակչության 75 տոկոսը, աղքատ՝ 21.2 տոկոսը, շատ աղքատ՝ 3.8 տոկոսը: (Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2008 թ.)

Սակայն այդ միտումն ունի իր առանձնահատկությունները: Եթե 1999 թ.-ին գյուղական ոչ աղքատ բնակչության միջին ամսական եկամուտները երկրում ավելի բարձր են եղել, քան Երևանում և հանրապետության այլ քաղաքներում, ապա 2005 թ.-ին գյուղական բնակչության եկամուտները 5 տարվա ընթացքում աճել են ընդամենը 612.4 դրամով, իսկ Երևանում՝ 1323.5 դրամով:

Ընդ որում, գյուղմթերքների վաճառքից ստացվող եկամուտներն ընդհանուր եկամուտների կազմում գյուղական ոչ աղքատ բնակչության շրջանում այդ տարիների ընթացքում պակասել են՝ 1999 թ. 63.2 տոկոսից 2005 թ-ին իջնելով 9.6 տոկոսի: Կրճատվել են նաև գյուղմթերքներից ստացվող բացարձակ եկամուտները: Եթե 1999 թ-ին գյուղմթերքների իրացումից գյուղական ոչ աղքատ բնակիչների միջին ամսական վաստակը կազմել է 11529.5 դրամ, ապա 2005 թ-ին այն իջել է 6213.3 դրամի: Այդ տարիների ընթացքում եկամուտների մեջ ավելացել են սոցիալական և մասնավոր տրանսֆերտները՝ համապատասխանաբար բարձրանալով 10.9 և 8.0 տոկոսով:

Համաձայն վիճակագրական տվյալների, Հայաստանի գյուղական բնակավայրերի աղքատ համարվող բնակիչների միջին ամսական եկամուտները 1999-2005 թթ.-երին բարձրացել են 4005.0 դրամով և 2005 թ-ին կազմել են 4901.3 դրամ: Աճը կազմել է 70.8 տոկոս:

Այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում միջին հաշվով այդ խավի եկամուտներն աճել են 4272.1 դրամով և կազմել 6542.5 դրամ; Աճը կազմել է 88.2 տոկոս: Այդ նույն ցուցանիշը Երևանում կազմել է 92.6 տոկոս:

Գյուղական բնակավայրերի շատ աղքատ համարվող բնակիչների միջին ամսական եկամուտները 2005 թ-ին 1999 թ-ի համեմատությամբ ավելացել են 2100.4 դրամով: Աճը կազմել է 236.3 տոկոս: Երկրում միջին աճը կազմել է 213.6 տոկոս:

Սոցիալական տրանսֆերտները կրճատում են շատ աղքատ խավերի աղքատությունը: Սակայն հասարակության մյուս՝ աղքատ խավի վրա դրանք լուրջ ազդեցություն չունեն: Միաժամանակ, դրանք բավականին ցածր են՝ աղքատ բնակչության կենսամակարդակի վրա էական ազդեցություն ունենալու համար:

Արագածոտնում գրանցվել է հանրապետությունում աղքատության կրճատման ամենամեծ առաձգականությունը՝ 3.18, հիմնականում՝ աղքատության մեկնարկային շատ բարձ մակարդակի պատճառով:

Սակայն աղքատությունը մարզում մնում է բարձր մակարդակի վրա:

ԱՀՌԾ-ի տեղայնացման հիմնախնդիրն առավել հրատապ է այն տարածաշրջանների համար, որոնց զարգացման միտումներն զգալիորեն հետ են մնում հանրապետության միջին ցուցանիշներից՝ պայմանավորված լինելով՝

ա) տարածքի տնտեսական ներուժի սահմանափակություններով,

Տվյալները վկայում են, որ ինչպես հարապետությունում, այնպես էլ Արագածոտնի մարզում աղքատ և ծայրահեղ աղքատ բնակիչների ամսական եկամուտներն ավելի արագ տեմպերով են աճում, քան ոչ աղքատ բնակչության շրջանում: Համաձայն ՏՏԿԱՀ տվյալների, աղքատության մակարդակը ավելի բարձր է հատկապես աղետի գոտու, հեռավոր, սահմանամերձ ու գյուղատնտեսության վարման համար առավել անբարենպաստ պայմաններ ունեցող տարածքներում: ՀՀ Արագածոտնի մարզում աղքատության բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է վերջին գործոնով:

Թալինի, Ապարանի և Արագածի տարածաշրջանների գյուղատնտեսական հողերի մի մասն է ընդամենը ոռոգովի: Շատ են քարքարուտները և անօգտագործելի, մեքենայական մշակության համար անհարմար փոքր հողակտորները: Հիմնականում լեռնային և բարձրլեռնային տարածքներում ցածր է գյուղատնտեսության արդյունավետությունը:

բ) ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների թերզարգացած ցանցով,

Հիմնականում փոքր համայնքներում չկան բուժապասարկման կետեր, առևտրի օբյեկտներ, բավարար չեն կրթական և մշակութային պայմանները: Այդ գյուղերի բնակչությունը ստիպված իր կարիքները հոգում է ավելի մեծ բնակավայրերում, հիմնականում՝ նախկին շրջկենտրոններում:

Անմխիթար վիճակում են գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները, շատ բնակավայրերում հեռուստահաղորդումների և կապի որակը բարձր չէ:

Չնայած ավելացել են գյուղացիական տնտեսությունների վարկավորման հնարավորությունները, սակայն բանկային և վարկային ծառայությունը բնակչության մեծամասնության համար անհասանելի է մնում:

զ) բնակչության անբարենպաստ սոցիալ-ժողովրդագրական կազմով,

Բավականին էական են աղքատության մակարդակների գենդերային և տարիքային տարբերությունները: Հիմնականում առավել ծանր սոցիալական վիճակում են բազմանդամ ընտանիքները: Հինգ և ավելի հոգանոց ընտանիքներում աղքատության կրճատումը տեղի է ունեցել առավել ցածր տեմպերով, քան 1-4 հոգանոց ընտանիքներում: Համաձայն վիճակագրական տվյալների, 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների աղքատության մակարդակը զիջում է միայն գործազուրկների կենսական մակարդակին: Այս տվյալները վկայում են, որ կատարվող տնտեսական և սոցիալական բարեփոխումները առավել քիչ են անդրադառնում այդպիսի ընտանիքների կենսամակարդակի վրա:

Այն փաստը, որ Արագածոտնի բնակչությունը մեծ մասամբ գյուղաբնակ է, արդեն կանխորոշում է մարզում աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծման հետ կապված առավել բարդ իրավիճակը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մարզում բնակվում են մեծ թվով եզրի ազգաբնակչության ներկայացուցիչներ, որոնք, ավանդաբար, ունեն բազմանդամ ընտանիքներ, այս բնակիչների վիճակն աղքատության տեսակետից առավել վատ է:

Դա սպասցուցվում է նաև ժողովրդագրական և արտաքին միգրացիայի տվյալներով. արտագնա աշխատանքի մեկնողների թիվը եզրի բնակչության շրջանում առավել մեծ է, քան հայերի: Հատկապես գյուղատնտեսական աշխատանքների շրջանում այդ ընտանիքների ճնշող մեծամասնության տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի՝ տնտեսությամբ զբաղվելու հոգսը թողնելով կանանց և երեխաներին: Իսկ նրանց աշխատանքը պակաս արդյունավետ է: Շատ ընտանիքներ ընդհանրապես, ընդմիջտ հեռանում են մարզից և երկրից:

ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի շրջանակներում 2005 թ. իրականացված «Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում» հետազոտության արդյունքները վկայում են, որ Արագածոտնի մարզն աչքի է ընկնում սոցիալական խոցելիության բարձր համաթվով, որը հաշվարկվել է փորձագիտական հետազոտության արդյունքում ստացված խոցելի խմբերի ցանկի և նրանց խոցելիության աստիճանների ամփոփ գնահատականների հիման վրա (տես Աղյուսակ 6):

**Աղյուսակ 6. Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում
(% մարզի բնակչության թվում)**


ՀՀ մարզեր	Խոցելի խմբերը ՀՀ մարզերում, % մարզի բնակչության թվում								Խոցելիության համաթիվ
	Հաշմանդամներ՝ այդ թվում երեխա	Ծնողազուրկ երեխաներ	Միայնակ ծեբեր	Գործազուրկներ	Տարեցներ	Բազմազավակ ընտանիքներ	Փախստականներ	Նպաստառուներ	
Երևան	4.4	2.1	9.8	25.0	12.9	4.9	4.6	9.2	31.7
Արագածոտն	3.7	3.1	9.8	16.9	12.0	20.2	5.1	17.5	34.2
Կոտայք	2.6	1.7	6.2	37.1	8.8	14.8	11.0	13.7	38.1

Գեղարքունիք	4.0	1.4	8.4	37.3	12.0	21.4	11.0	23.3	45.5
Տավուշ	6.9	5.1	16.2	27.8	15.7	8.0	7.4	21.2	45.6
Լոռի	5.1	3.9	9.6	19.1	11.6	9.0	5.8	29.4	35.5
Շիրակ	4.2	4.8	13.2	18.2	11.8	8.2	1.3	35.9	36.6
Արարատ	3.4	3.1	7.8	14.9	13.1	12.6	17.0	12.4	31.8
Արմավիր	2.9	2.8	9.6	18.3	10.5	13.8	8.6	9.1	30.5
Սյունիք	5.5	5.2	13.2	19.7	12.6	9.6	9.0	14.5	37.5
Վայոց Ձոր	5.6	2.5	7.2	21.9	13.3	13.2	7.0	19.0	35.6
Ընդամենը ՀՀ	4.2	3.2	10.1	24.2	12.2	12.3	7.2	17.3	36.6

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական միտումները: Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում: Տեղեկատվական վերլուծական պարբերական: ՄԱԿԶԾ - Հոկտեմբեր 2005թ.: Էջ 17

Աղյուսակի տվյալները վկայում են, որ Արագածոտնի մարզի սոցիալական խոցելիության համաթիվը չի գերազանցում հանրապետական միջին համաթիվին (36.6%): Սակայն դա չի նշանակում, թե մարզում հիմնախնդիրը սրությամբ չի ծառայում:

Գրաֆիկական պատկեր 8. Խոցելի խմբերի հարաբերակցությունը Արագածոտնի մարզում



Խոցելի բնակչության տեսակարար կշիռն ավելի մեծ է փոքր համայնքներում (մինչև 500 բնակիչ ունեցող): Փաստորեն, որքան փոքր է համայնքը, այնքան մեծ է այնտեղ խոցելի բնակչության տեսակարար կշիռը և որքան մեծ է փոքր համայնքների տեսակարար կշիռը մարզի համայնքների ընդհանուր թվում, այնքան բարձր է խոցելի բնակչության միջին մակարդակը մարզում:

Ըստ Հայաստանի աղքատության առանձնահատկությունների, գյուղական բնակչությունը առավել դանդաղ տեմպերով է հաղթահարում աղքատությունը, քան քաղաքայինը (տես՝ Աղյուսակ 7): Միաժամանակ, անհավասարության աստիճանը գյուղական բնակավայրերում նկատելիորեն բարձր է քաղաքային բնակավայրերի համեմատ, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես չափազանց լուրջ աղքատաժին գործոն:

Աղյուսակ 7. Գյուղական և քաղաքային աղքատության միտումները ՀՀ-ում,

1998/99- 2005թթ. (%-ով)

Մարզեր	1998/99	2004	2005
Աղքատության մակարդակը, որից`	56.1	34.6	29.8
Չբավորության մակարդակը	9.3	6.4	4.6
Հայաստանի Հանրապետություն			
Քաղաքային բնակավայրեր			
Աղքատության մակարդակը, որից`	62.1	36.4	30.7
Չբավորության մակարդակը	26.2	7.5	5.3
Գյուղական բնակավայրեր			
Աղքատության մակարդակը, որից`	48.2	31.7	28.3
Չբավորության մակարդակը	14.1	4.4	3.3

Աղբյուրը` ILCS 2004 and 2005, ՀՀ ԱՎԾ:

դ) բնակլիմայական խիստ պայմաններով և այլն:

Արագածոտնում աղքատությունն առավել տարածված է հատկապես բարձրլեռնային (ծովի մակարդակից ավելի քան 1700 մ բարձրությամբ) գոտիներում:

ՀՀ կառավարության 1988 թ. նոյեմբերի 27-ի N 756 որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզում լեռնային բնակավայրերի շարքին են դասվել 16, իսկ բարձրլեռնայինիների շարքին` 23 բնակավայր: Այդ ցուցանիշով Արագածոտնը զիջում է միայն Գեղարքունիքի և Շիրակի մարզերին: Աղքատությունը բարձր է հատկապես սամանափակ հողային հնարավորություններ ունեցող համայնքներում:

Այսպես, միայն 1996-1999 թթ. ընթացքում ծովի մակարդակից 1701 մ և ավելի բարձր գոտում բնակվողների շրջանում աղքատությունն աճել է 15 %-ով (ԱՀՌԾ, Բաժին 6, Աղյուսակ 6.3):

Համայնքների աղքատության վրա ազդում է նաև վերջիններիս մեծությունը:

Որքան փոքրաթիվ է համայնքի բնակչությունը, այնքան մեծ է աղքատության հակվածությունն ու գրեթե «անտեսանելի» համայնքային զարգացման հեռանկարները:

Այն փաստը, որ Արագածոտնի մարզի համայնքների 34.2%-ը (39 համայնք) ունեն մինչև 500 բնակիչ, իսկ 31.6%-ը (36 համայնք)` 501-ից 1000 բնակիչ, արդեն իսկ վկայում է մարզի համայնքների կեսից ավելիի համար համայնքային զարգացման ծրագրերի իրագործման հարցում օբյեկտիվորեն առկա խոչընդոտների մասին:

Աղյուսակ 8. Արագածոտնի մարզի մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքների թիվն ըստ համայնքների մեծության

	Մինչև 300 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը	301-500 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը	501-1000 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը	Ընդամենը
Արագածոտն	30	9	36	75
ՀՀ	200	75	163	438

Աղքատության գնահատումը Արագածոտնի մարզում պարզորոշ վկայում է այդ երևույթի մարզային յուրովի պատկերի մասին:

ԱՀՌԾ-ում ընդունված աղքատության հասկացության սահմանման հիման վրա, Արագածոտնում աղքատությունը գնահատվել է երեք հիմնական ուղղություններով՝ մարզի բնակչության կենսաբանական, սոցիալական և հոգևորմշակութային պահանջմունքների բավարարման իրավիճակի վերլուծության միջոցով:

Վերլուծության համար տեղեկատվական հիմքերն են.

- *ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 1996թ.-ից ի վեր իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները,*
- *ՀՀ կառավարության սոցիալական մոնիթորինգի և վերլուծության կենտրոնական և տարածքային ստորաբաժանումների՝ 2001թ.-ից ի վեր իրականացվող աղքատության սոցիալական ցուցանիշների մոնիթորինգի արդյունքները,*
- *ՀՏԶԾ-ի շրջանակներում անցկացված ԱՄԳ-ի, մարզպետարանի 2006-2008 թթ. կիսամյակային և տարեկան հաշվետվությունների արդյունքները,*
- *Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի (ՏՀԻ)՝ ՀՀ բոլոր մարզերի համայնքներում 2005 թ. իրականացրած հետազոտության արդյունքները,*
- *ՄԱԿ ԶԾ-ի և ՀԲ-ի հրապարակումները,*
- *քաղաքացիական հասարակության առանձին սուբյեկտների (ՀԿ-ներ, անկախ փորձագետներ, ՉԼՄ-ներ) իրականացրած ուսումնասիրությունների արդյունքներն ու հրապարակած տեղեկատվությունը,*
- *պաշտոնական վիճակագրական, վարչական և համայնքային տեղեկատվությունը:*

Աղքատությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկները կատարվել են տնային տնտեսությունների հետազոտությունների հիման վրա: Նման հետազոտություններ ԱՎԾ-ն իրականացրել է 1996, 1998/1999, 2001-2006 թթ.-ին:

Աղյուսակ 9. Աղքատության մակարդակի միտումները ՀՀ մարզերում 1998/99-2005 թթ. (%-ով)

Մարզեր	1998/99	2004	2005
ք. Երևան	58.4	29.2	23.9
Արագածոտն	60.5	35.4	32.3
Արարատ	52.3	32.7	30.9
Արմավիր	41.7	36.0	31.6
Գեղարքունիք	49.9	41.9	36.8
Լոռի	62.6	31.3	28.8
Կոտայք	61.7	39.3	34.5
Շիրակ	75.8	48.8	42.5
Սյունիք	53.1	36.5	28.9

Վայոց Ձոր	34.7	28.9	19.2
Տավուշ	29.3	30.5	25.8
ՀՀ միջինը	56.1	34.6	29.8

Աղյուսակի տվյալներից ակնհայտ երևում է, որ Արագածոտնի մարզում աղքատությունը դրսևորել է նվազման միտումներ՝ 1999 թ.-ի 60.5 տոկոսից 2005 թ.-ին հասնելով 32.3 տոկոսի: Մյուս մարզերի հետ համեմատած այդ նվազման տեմպերը բավականին բարձր են:

Սակայն մարզում աղքատությունը, այնուամենայնիվ, բարձր մակարդակի վրա է: Երկրի միջինի համեմատ այն բարձր է 2.5 կետով: Աղքատության մակարդակով մարզը ներկայումս Գեղարքունիքից և Շիրակից հետո Հայաստանում երրորդն է:

Երկրում և մարզում, ընդհանուր տնտեսական աճի պայմաններում դրսևորվում են նաև աղքատության հաղթահարման անցանկալի միտումներ:

Նախ՝ եկամուտների բացարձակ աճը դեռևս անբավարար է նորմալ կենսապայմաններ ապահովելու համար:

Երկրորդ՝ աղքատության հաղթահարումը Երևանում թե բացարձակ, թե հարաբերական ցուցանիշներով առավել արագ է ընթանում, քան ամբողջ երկրում: Այդ ճեղքվածքն առավել զգալի է հատկապես գյուղական բնակավայրերի համեմատ:

Այլ խոսքով՝ խորանում է հարաբերական աղքատությունը քաղաքային և գյուղական բնակչության շրջանում:

Խոցելիությունը պայմանավորող գործոնների շարքում առանձնանում է բազմազավակ ընտանիքների, միայնակ ծերերի և ծնողազուրկ երեխաների, փախստականների, նպաստառուների, հատկապես լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի մեծ թիվը:

Արագածոտնի մարզում ժամանակին բնակություն են հաստատել շուրջ 4400 փախստականներ և ներքին տեղահանվածներ: Փախստականների թիվը 1996-2008 թթ. ընթացքում պարբերաբար նվազել է՝ պայմանավորված նատուրալիզացիայի և արտագաղթի գործոններով: Սակայն նրանց հիմնախնդիրներն այսօր դարձյալ սրությամբ են ծառայում մարզի առջև: (Փախստականների վիճակն առավել մանրամասն վերլուծված է „Սոցիալական պաշտպանության ոլորտ,, գլխում):

Գյուղական բնակավայրերի շարքում խոցելիության ամենաբարձր համաթիվը բնորոշ է փոքր համայնքներին (մինչև 500 բնակիչ ունեցող և 501 – 1000 բնակիչ ունեցող):

Եթե դիտարկենք համայնքներն ըստ ժողովրդագրական բեռի համաթվի, ապա քաղաքային համայնքներից ամենաբարձր համաթիվն առկա է Ապարան (0.58) և Թալին (0.47) քաղաքներում:

Ինչ վերաբերում է գյուղական համայնքներին, ապա դարձյալ այստեղ նկատվում է նույն միտումը. փոքր համայնքներում. ժողովրդագրական բեռի համաթիվը համեմատաբար բարձր է, քան մեծ համայնքներում, ինչը վկայում է նաև փոքր համայնքների «ծերացման» միտումի մասին:

Ի տարբերություն քաղաքային տնային տնտեսությունների, գյուղական տնային տնտեսությունները մարզում ավելի բազմանդամ են: Մեկ տնային տնտեսությանը բաժին ընկնող անդամների միջին թիվը գյուղերի համար կազմում է 3.15, մինչդեռ քաղաքների համար միջինում՝ 3.00: Համաձայն ԱՎԾ տվյալների՝ ընտանիքի բազմանդամությանը զուգընթաց, ավելանում է աղքատության ռիսկը: Բազմանդամ ընտանիքները, որոնք բաղկացած են մեծ թվով երեխաներից և ավելի քիչ թվով կերակրողներից, ավելի աղքատ են, քան փոքր ընտանիքները: Ընդ որում, 3 և ավել երեխա ունեցող ընտանիքները շարունակում են գերիշխել աղքատ բնակչության կազմում (տես Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Աղքատությունը բնութագրող ցուցանիշները ՀՀ Արագածոտնի մարզում

Ընտանիքի երեխաների թիվը	2004 %		2005 %	
	ծայրահեղ աղքատ	աղքատ	ծայրահեղ աղքատ	աղքատ
0	4	24	2.9	22.2
1	5.5	34.5	4.5	29.6
2	7.4	36.2	5.5	32.1
3	5.9	41.1	4.9	37.4
4 և ավելի	14.7	53.1	8.3	43.9

Համաձայն ԱՎԾ 2006թ. տվյալների:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 26:

Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում: Հայաստանի սոցիալական միտումները: Տեղեկատվական վերլուծական պարբերական: Հոկտեմբեր 2005: UNDP: էջ 6

Հատկանշական է, որ այն տնտեսությունները, որոնց գլխավորը կանայք են, ավելի աղքատ են, քան այն տնտեսությունները, որոնց գլխավորը տղամարդիկ են: Սրանք հիմնականում միգրանտների ընտանիքներն են, որոնց ամուսինները չեն կարողանում կամ չեն օգնում ընտանիքներին, իսկ կանայք ներգրավված են ցածր վարձատրվող աշխատանքներում: 2005թ. այդ-պիսի ընտանիքները կազմել են աղքատ ընտանիքների 20 %-ը և ընդհանուր բնակչության 15 %-ը:

Ընդհանուր առմամբ, Արագածոտնի մարզն աչքի է ընկնում միգրացիայի բարձր մակարդակով. Երևանից, աղետի գոտու մարզերից և Գեղարքունիքից հետո Արագածոտնը հինգերորդն է միգրացիայի բարձր ցուցանիշով: Ընդ որում, միգրացիայի դինամիկայի վերլուծությունը վկայում է, որ եթե եկողների թիվը նվազում է, ապա մեկնողներինը շարունակում է աճել:

Համաձայն մարզի համայնքապետերի պաշտոնական տեղեկությունների, մարզից մշտական բնակության նպատակով այլ վայրեր է տեղափոխվել 2095 մարդ: Դրա փոխարեն այլ բնակավայրերից և արտերկրից մարզում մշտական բնակություն է հաստատել 478 մարդ: Տարբերությունը կազմում է 1617 մարդ:

Ամեն տարի մարզից արտագնա աշխատանքի է մեկնում 5500-6000 մարդ՝ մոտ 5000 ընտանիքներից: Բացարձակ թվերով ամենաշատը բնակավայրերից մեկնում են մարզի մեծ համայնքներից: Սակայն հարաբերականորեն՝ փոքր, բարձրլեռնային և գյուղատնտեսության վարման համար աննպաստ բնակավայրերից, միգրանտների տոկոսային հարաբերությունն ավելի մեծ է:

Արագածոտնի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումները ազգային, այսինքն ամբողջ երկրի մակարդակի վրա են և, հետևաբար, պահանջում են համընդհանուր պետական վերաբերմունք, առնչվում են.

- **գյուղի զարգացմանը,**
- **փոքր համայնքների զարգացմանը,**
- **բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների սոցիալ-տնտեսական աջակցությանը,**
- **բազմազավակ (երեք և ավելի երեխա ունեցող) ընտանիքների սոցիալական օժանդակության պետական ծրագրերի մշակմանը և իրագործմանը:**

Տնտեսական զարգացման առանձնահատկություններով պայմանավորված՝ աղքատության գործոնները հիմնականում առնչվում են առանձին ընտանիքների և անհատների կողմից համախառն եկամուտներ ստեղծելու սահմանափակ հնարավորություններին:

Արագածոտնի մարզի ներկայիս վարչական տարածքում ընդգրկված նախկին երեք՝ Ապարանի, Թալինի և Արագածի շրջանները դեռ խորհրդային ժամանակաշրջանում համարվում էին տնտեսապես թույլ զարգացած: Դրանց բարձրլեռնայնությունը, բնական ռեսուրսների

սակավորությունը, բնակավայրերի գերակշռող մասի հեռավորությունը ոչ միայն մայրաքաղաքից, այլև շրջկենտրոններից, ենթակառուցվածքի անկատարությունը, Արագածի լեռնալանջերի հյուսիսային և արևմտյան մասերում գտնվող բնակավայրերի գրեթե մեկուսացվածությունը հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձություններից, կանխորոշել էր այդ համայնքների ցածր տնտեսական ներուժը:

Նախկինում ինչպես այդ տարածաշրջաններում, այնպես էլ Աշտարակի շրջանում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չափազանց քիչ են եղել: Բյուրականի աստղադիտարանի գործունեության առանձնահատկություններով պայմանավորված, Արագած լեռանը հարող տարածքներում մթնոլորտն աղտոտող արտադրություններ չեն կառուցվել: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում աշխատում էին Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից ստացվող հումքի հիման վրա կամ տարբեր վայրերում պատրաստված հանգույցներից հավաքում էին երկրի տնտեսական կարիքների համար անհրաժեշտ մեխանիզմներ և սարքավորումներ (Ապարանի „Նիգ“, , „Արև,, , Ն. Սասնաշենի, Բուչակի հաստոցաշինական, Արագածի „Արհեստական ավաստների,, գործարաններ, Գառնահովիտի և Մաստարայի կոշիկի ֆաբրիկաներ): Գիտական հաստատությունների Հատուկ կոնստրուկտորական և Հատուկ կոնստրուկտորա-տեխնոլոգիական բյուրոներն արտադրանք էին թողարկում Միության ռազմական կարիքների համար:

Խորհրդային Հայաստանի տնտեսապես ամենաբարվոք ժամանակաշրջանում՝ 1988թ.-ին, Արագածոտնի մարզի նախկին շրջանների բաժինը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում չէր գերազանցել 2 %-ի սահմանագիծը:

Շուկայական տնտեսակարգի հաստատմամբ և պետական ունեցվածքի սեփականաշնորհմամբ Արագածոտնի մարզի տնտեսության կառուցվածքն էապես չփոխվեց: Դեռ ավելին, հիմնականում գյուղատնտեսական կողմնորոշվածություն ունեցող մարզը հետզհետե վերածվում է զուտ ագրարայինի (տես Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում 2007թ.- %

1	արդյունաբերական արտադրանքի	1.3
2	գյուղատնտեսության համախառն արտադրանքի	7.6
3	մանրածախ առևտրի շրջանառության	0.5
4	ծառայությունների	0.5

Արագածոտնի մարզի գյուղական գրեթե բոլոր համայնքների գյուղատնտեսական ուղղվածությունը անասնապահությունն է և բուսաբուծությունը: Որոշ համայնքներ զբաղվում են նաև այգեգործությամբ և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ:

Ընդ որում, ըստ ՏՀԻ տվյալների, այգեգործությամբ և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվելու ներուժ ունեցող համայնքների թիվն ավելի մեծ է, քան գործունեության այդ տեսակներով զբաղվող համայնքների փաստացի թիվը:

Մարզում ներկայումս գործում են 38700 գյուղացիական տնտեսություններ: Այդ ցուցանիշով մարզը երկրում չորրորդն է: Ամեն տարի ավելանում են 120-150 տնտեսություններ:

Սակայն, հաշվարկները վկայում են, որ գյուղատնտեսության ընդլայնումը չի զուգակցվում արդյունավետության բարձրացմամբ: Այսպես, ԱՎԾ-ի տվյալները վկայում են, որ մեկ հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի տնտեսական արդյունքը Արագածոտնի մարզում 2008 թվականին կազմել է ընդամենը 357.1 հազար դրամ: Այդ ցուցանիշով Արագածոտնի մարզը գերազանցում է միայն Վայոց ձորի և Տավուշի համապատասխան ցուցանիշները:

Կարելի է փաստել, որ գյուղատնտեսության էքստենսիվ զարգացումը, չնայած ապահովում է մարզի բնակչության զբաղվածության մոտ 80%-ը, այնուամենայնիվ չի խթանում մարզի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճը:

Գյուղատնտեսական նշանակության հողերի մի զգալի մասը բնակչությունը չի կարողանում արդյունավետ կերպով օգտագործել: Ընդ որում, փոքր համայնքներն են աչքի ընկնում հողերի չմշակվածության բարձր տոկոսով (տես Աղյուսակ 12):

Աղյուսակ 12. Մարզի գյուղական համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը ըստ համայնքի մեծության առանձնացված խմբերի (%) *

Ըստ համայնքապետերի համայնքի բարեկեցության գնահատականը	Խմբում ներառված համայնքների թիվը	Սեփական գ/տ հողատարածք չունեցող SS տ/կ	Տնամերձ հ/տ չունեցող SS տ/կ	Հող վարձակալող SS տ/կ	Ամենամեծ գ/տ հողատարածք չունեցող SS տ/կ	Ամենափոքր գ/տ հողատարածք չունեցող SS տ/կ	Չմշակվող հողատարածքների տ/կ
մինչև 500 բնակիչ ունեցող	32	23.9	32	19.6	15.6	21.8	19.7
501-1000 բնակիչ ունեցող	28	20.7	2.7	19.3	6.8	17.4	10.6
1001-1500 բնակիչ ունեցող	10	12.4	1.8	10.3	5.6	21.7	11.4
1501-3500 բնակիչ ունեցող	14	1.2	2.1	18.7	5.5	21.0	15.7
3501-5000 բնակիչ ունեցող	12	2.8	2.9	5.5	13.5	15.4	12.3
5000-ից ավելի բնակիչ ունեցող	18	2.1	3.0	7.3	10.2	29.1	13.7
Ընդամենը գյուղ	86	5.2	2.7	10.7	9.5	21.9	14.5

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան.

Մյուս կողմից, փոքր համայնքների բնակիչների 23.9 %-ը չունի սեփական գյուղատնտեսական հողատարածք և դա է պատճառը, հավանաբար, որ նրանց գրեթե 20 % հողը վարձակալում է:

Հողի չմշակման պատճառների մեջ գերակշռում են ոռոգման հնարավորությունների (38.5 %), նյութական միջոցների (28 %) բացակայությունը, ինչպես նաև հողերի հեռավորությունը (20.9 %), վատ որակը և քարքարոտությունը (21.7 %):

Մարզում բնակչության սեփականության գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 50072.1 հեկտար, որից ոռոգովի է 21853.4 հեկտարը: Սակայն փաստացի ոռոգվում է 16182.3 հեկտարը: Փաստացի ոռոգվող հողատեսքերը կազմում են սեփականաշնորհված հողատեսքերի ընդամենը 32.3 %-ը: 39 համայնքում ոռոգման ջուր ընդհանրապես չկա: 23 համայնքում ոռոգվում է ընդամենը 10-40 հեկտար հողատարածք:

Դրանք հիմնականում Թալինի և Արագածի տարածաշրջանների բարձրլեռնային բնակավայրերն են, որտեղ գյուղատնտեսության վարման հնարավորությունները սահմանափակ են: Ոռոգման ջրի բացակայությունն այդ բնակավայրերում ոլորտն առավել անարդյունավետ է դարձնում:

Փաստորեն, բնակչության սեփական հողերի գրեթե 68 -70 %-ը չի կարող կայուն եկամտի աղբյուր լինել:

Տարիների ընթացքում կատարված հետազոտությունները վկայում են, որ գյուղատնտեսության ոլորտում հիմնախնդիրները շարունակում են մնալ.

- **բնական աղետները (երաշտ, կարկուտ) և համապատասխան ծառայությունների բացակայությունը,**

- *ռոտզման ցանցի և պայմանների անրավարարությունը,*
- *սերմացու, քիմիկատներ, պեստիցիդներ և դիզելային վառելիք գներու անկարողությունը,*
- *գյուղատնտեսական մեքենաների պակասը,*
- *գյուղատնտեսական վարկերի անմատչելիությունը,*
- *ճանապարհների անրարեկարգ վիճակը,*
- *իրացման ցածր գները և տեղական շուկաների սահմանափակ ծավալները,*
- *վերամշակման արտադրության սահմանափակությունը,*
- *անասնաբուժական ծառայությունների անմատչելիությունը,*
- *տեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների անհասանելիությունը:*

Աղյուսակ 13. Աղքատության կրճատման նպատակային ցուցանիշները

	1999	2006	2011	2012
Աղքատության ընդհանուր մակարդակը, %	56.1	26.5	13.6	11.2
այդ թվում՝				
քաղ. Երևան	58.4	21	8.2	6.4
այլ քաղաքներ	65.5	35.8	18.5	15.1
գյուղական բնակավայրեր	48.2	23.4	14.2	12.0
Ծայրահեղ աղքատության մակարդակը %	21	4.1	1.9	1.6
այդ թվում՝				
քաղ. Երևան	24.8	3.5	1.0	0.8
այլ քաղաքներ	27.4	6.6	2.8	2.3
գյուղական բնակավայրեր	14.1	2.4	1.9	1.7

ՀՀ կառավարության ծրագիր

Աղքատությունը պայմանավորող գործոնների շարքում առանձնանում են հատկապես գործազրկությունը, աշխատանք փնտրող քաղաքացիների մեծ թիվը:

Գործազրկություն

Չնայած պաշտոնապես գրանցված տվյալներով գործազրկության մակարդակը Արագածոտնի մարզում ամենացածրն է Հայաստանում, այնուամենայնիվ, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրական գործազրկությունն ավելի բարձր է:

Գործազուրկ չեն համարվում այն անձինք, ովքեր սեփականաշնորհման արդյունքում հող են ստացել: Բայց բնակչության շուրջ 60 տոկոսի համար այդպիսի սեփականատիրությունը չի կարող կայուն և բավարար եկամտի աղբյուր լինել: Հողերից և գյուղատնտեսական կենդանիներից ստացվող հասույթը չափազանց ցածր է և չի կարող ապահովել ընտանիքների նորմալ կենսագործունեությունը:

Սեփականատերերի շուրջ 20-22 տոկոսն ընդհանրապես չի օգտագործում հողերը: Նրանք իրենց ընտանիքների համար գումարը վաստակում են վարձու աշխատանքի միջոցով կամ մեկնում են արտագնա աշխատանքի:


Այս փաստը վկայում է, որ Արագածոտնի մարզում, հատկապես՝ լեռնային և բարձրլեռնային բնակավայրերում, իրական գործազրկության մակարդակը համեմատելի է Գեղարքունիքի և Շիրակի մարզերի նույն ցուցանիշների հետ:

Աղյուսակ 14. Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը մարզում

Մարզ	2003	2004	2005	2006	2007	2008
Արագածոտն	1429	1336	1267	1436	1374	1311
Հանրապետական միջին	127337	108622	88991	84571	75050	83900

Աղբյուրը՝ ԱՎԾ տարեգրքեր, 2003-2008 թ.թ.

**Գրաֆիկական պատկեր 9.
Գործազրկության մակարդակը մարզում
2003-2008 թթ. երին**



Համաձայն նույն ծառայության տեղեկագրերի, ՀՀ Արագածոտնի մարզում գրանցված է գործազուրկների ամենափոքր թիվը երկրում: Սակայն դրա մակարդակը գրեթե չի պակասում: Մարզում վերջին 5 տարվա ընթացքում գործազուրկների թիվը կրճատվել է ընդամենը 118 մարդով: Սակայն, տնտեսական ճգնաժամով պայմանավորված, 2009 թ-ին գործազուրկների թիվը կավելանա:

ՀՀ ԱՎԾ-ի՝ տնային տնտեսություններում անցկացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունը հնարավորություն է ընձեռում պաշտոնապես գրանցված գործազրկությունից բացի, գնահատել նաև գործազրկության մակարդակն ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանության (սահմանման):

Մարզում գրանցված գործազուրկների 76.9 %-ը կամ 1009 –ը, կանայք են:

Գործազրկության դինամիկայի վերլուծությունը վկայում է, որ 2006 թ.-ին 2005 թ.-ի համեմատ տեղի է ունեցել գործազրկության կրճատում կանանց խմբում և համալրում տղամարդկանց խմբում (համապատասխանաբար 61.53 և 38.47 %): Ընդ որում, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված գործազուրկների (1019, այդ թվում՝ 504 կին) 45.46 %-ն աշխատանք է գտել, որոնց գրեթե կեսը՝ Ջրաղվածության պետական ծառայության աջակցությամբ:

Աշխատանք փնտրող քաղաքացիներ

Լուրջ է նաև աշխատանք փնտրող քաղաքացիների հիմնահարցը: ՀՀ Արագածոտնի մարզային զբաղվածության ծառայության տվյալներով, 2008 թ. դեկտեմբերի 31-ի վիճակով մարզում հաշվառված է աշխատանք փնտրող 2428 քաղաքացի, որոնցից 1399-ը կամ 57.6 % - ը կանայք են: Նախորդ տարվա համեմատությամբ նրանց թիվն ավելացել է 40 մարդով:

2008 թ. ընթացքում հաշվառումից դուրս է եկել 176 մարդ: Ընդ որում, նրանցից աշխատանքի է տեղավորվել ընդամենը 89-ը: 72 մարդ հաշվառումից հանվել է՝ 6 ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ կենտրոն չհաճախելու պատճառով:

Հատկանշական է, որ աշխատանքի են տեղավորվում հիմնականում երիտասարդ տարիքի մարդիկ: Եթե նվազել է 16-45 տարիքային խմբի գործազուրկների թիվը (0,1-1.4 տոկոս), ապա 46-54 և 55 տարեկանից բարձր տարիքային խմբերում գործազրկությունն ավելացել է համապատասխանաբար 2.5 և 5.4 տոկոսով:

Լուրջ դժվարություններ ունեն հատկապես առաջին անգամ աշխատանք փնտրողները, հատկապես՝ 16-24 տարիքային խմբերում: Նրանց աշխատանքի տեղավորվելու համար, որպես չափանիշներ, ներկայացվում են աշխատանքային փորձը և մասնագիտությունը, որից, հասկանալի պատճառով, այդ մարդիկ զուրկ են: Իսկ սա այն հիմնական պատճառն է, որ գործատուները նրանց համար ցածր աշխատավարձեր սահմանեն:

ԱՎԾ 2006 թ. պաշտոնական տեղեկատվության համաձայն, մարզի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմում է միջին հանրապետականի 80%-ը: Հետագա տարիներին այս ցուցանիշը գրեթե չի փոփոխվել:

Արագածոտնի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնք պետք է լուծվեն մարզի տնտեսական զարգացման համալիր ծրագրի շրջանակում և, հետևաբար, պահանջում են տարածքային առանձնահատուկ վերաբերմունք, առնչվում են.

- 1. մարզի տնտեսության ճյուղային կառուցվածքի վերափոխմանը,**
- 2. ոչ գյուղատնտեսական ոլորտում փոքր և միջին բիզնեսի խթանմանը,**
- 3. գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը,**
- 4. գյուղատնտեսության տեխնիկական վերազինմանը և ինտենսիվ զարգացմանը:**

ՀՀ կառավարության աղքատության կրճատման առաջնայնություններից է ենթակառուցվածքների, հատկապես՝ գյուղական ենթակառուցվածքների բարելավումը:

Հաշվի առնելով, որ Արագածոտնի մարզի բնակչության կեսից ավելին բնակվում է գյուղերում, ապա չափազանց կարևոր է գյուղական ենթակառուցվածքների զարգացումը:

Խորհրդային ժամանակներից Հայաստանը ժառանգել է այնպիսի ծավալուն ենթակառուցվածք, որը պահպանման մեծ ծախսեր է պահանջում:

Համայնքների փոքր բյուջեները և դրանց պարբերական թերակատարումը հնարավորություն չեն տալիս հոգալ այդ ենթակառուցվածքների նորոգման և պահպանման ծախսերը: Հետևաբար, ավելի քան 15 տարի է, ինչ ենթակառուցվածքների նորոգման ու պահպանման աշխատանքները կանոնավոր և հետևողական կերպով չեն իրականացվում: Խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ որոշ ենթակառուցվածքների դեպքում հստակ չէ դրանց վարչական պատկանելության հարցը: Մասնավորապես, դա վերաբերում է ճանապարհներին, խմելու և ոռոգման ջրի համակարգերին:


Արագածոտնի մարզի համայնքներում վերջին երեք տարում որոշ ծրագրեր են իրականացվել ճանապարհաշինության, սոցիալական ենթակառուցվածքների, գազաֆիկացման և բնակարանաշինության բնագավառներում: Մարզային զարգացման ծրագրի շրջանակում ևս մարզում նորոգվել և բարեկարգվել են համայնքային ճանապարհներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, խմելու ջրի և ոռոգման համակարգեր:

Աղյուսակ 15. 2006-2008 թթ. մարզում իրականացված ներդրումները (մլն. դրամ)

h/h	ՈԼՈՐՏԸ	2006	2007	2008	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Կրթություն	2068.5	2856.3	3256.4	8181.2
2	Մշակույթ	378.3	452.6	528.6	1359.5
3	Առողջապահություն	59	103.4	126.8	289.2
4	Ոռոգման ջրամատակարարում	61.3	398.9	426.5	886.7
5	Գյուղատնտեսություն	4694.8	5254.3	5886.3	15835.4
6	Խմելու ջրամատակարարում	622.9	685.4	728.6	2036.9
7	Բնակարանաշինություն	116.9	185.2	286.5	588.6
8	Ճանապարհային տնտեսություն	783.0	1504.5	2995.8	5283.3
9	Նպատակային հատկացումներ -սուբվենցիա	394.0	463.0	568.2	1425.2

10	Հեղեղատների կառուցում և նորոգում	245.5	256.4	125.6	627.5
11	Այլ ծրագրեր	1727.7	1952.6	2056.3	5736.6
	Ը Ն Գ Ա Մ Ե Ն Ը	11151.9	14112.6	16985.6	42250.1

Գրաֆիկական պատկեր 10. Ըստ ոլորտների Արագածոտնի մարզում 2006-2008 թթ. կատարված ներդրումները



Հետազոտությունները վկայում են, որ տնտեսական ենթակառուցվածքների բարելավումը չափազանց կարևոր է աղքատության հաղթահարման գործում, քանզի նպաստում է համամասնական եկամտի ստեղծմանը:

Ճանապարհների վրա արվող ներդրումները կրկնակի արդյունավետ են իրենց նպատակատուղվածության և, հատկապես, գյուղական աղքատության նվազեցման առումով, քան միջամտության այլ ձևերը:

Գրեթե անանցանելի համայնքային ճանապարհները, եթե ոչ հիմնական, ապա կարևոր պատճառ են ապրանքաշրջանառության զգալիորեն ցածր մակարդակի համար: Մարզում միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառության ծավալի ցուցանիշը ամենացածրն է երկրում: Արտահանման և ներմուծման գումարային ծավալը երկրի առևտրաշրջանառության համախառն ծավալի 1-1.5 %-ն է կազմում: Մանրածախ ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը երկրի ընդհանուր ծավալում չի գերազանցում անգամ 1 %-ը: Հաշվի առնելով մարզի համայնքների տարածքային ցրվածությունն ու մեծ հեռավորությունը մարզկենտրոնից, մարզի քաղաքներից և մայրաքաղաքից, ճանապարհների բարեկարգման և նոր՝ ավելի կարճ ճանապարհների կառուցման խնդիրը դառնում է գերակա՝ բնակչության և համայնքների տնտեսական ակտիվության խթանման և մեկուսացվածության վերացման հարցում:

ԱՀՌԾ-ն կարևորում է նաև խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: ԱՀՌԾ փորձագետները բազմաթիվ հետազոտությունների արդյունքում եզրակացրել են, որ ջրամատակարարման որակի անկման հետևանքով մեծապես տուժել են աղքատ ընտանիքները:

ՀԲ-ի ուսումնասիրությունների համաձայն Արագածոտնի մարզի գյուղական համայնքների 84 %-ում ջրամատակարարման վիճակը վատ է:

Մարզի համայնքապետերի շրջանում կատարված հարցումները պարզել են նաև աղքատության հաղթահարման հիմնական խոչընդոտները:

Դրանք, նախ և առաջ, վերաբերում են գյուղատնտեսական արդյունավետ արտադրության կազմակերպման դժվարություններին: Դա մի կողմից պայմանավորված է հողերի ցածր որակով, մշակման դժվարություններով, իսկ մյուս կողմից՝ վարկային և ենթակառուցվածքային անբարենպաստ պայմաններով (ռոտզում, ճանապարհ): Համայնքների զարգացումը խոչընդոտող գործոնների շարքում ծանրակշիռ դեր ունեն նաև բնական աղետները: Միայն դրանից հետո համայնքապետերն առանձնացրել են սոցիալական բնույթի հիմնախնդիրները. սոցիալական ծառայությունների անմատչելիության, հոգևոր մեկուսացվածությանն առնչվող հարցեր:

Մարզի 88 համայնքներում նշվել են հետևյալ հիմնախնդիրները, որոնք ներառված են համայնքների զարգացման քառամյա ծրագրերում (2008-2011 թթ.) և հրատապ լուծում են պահանջում: Հիմնախնդիրները ներկայացված են ըստ հանդիպման հաճախականության.

- *ճանապարհների նորոգում,*
- *ռոտզման համակարգի կառուցում և անորոգում,*
- *խմելու ջրի համակարգի կառուցում և նորոգում,*
- *գործազրկության վերացում, աշխատատեղերի ստեղծում,*
- *գյուղատնտեսական տեխնիկայով ապահովում,*
- *գյուղատնտեսական արտադրանքի վերամշակող ձեռնարկությունների ստեղծում:*

Համայնքների բնակչության բարեկեցության բարձրացման համար համայնքապետերն առաջարկել են կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ: Նախ և առաջ նրանք նշել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնումը, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացումը, աշխատատեղերի ստեղծումը: Մարզի երեք քաղաքների համայնքապետերը առաջնայինը համարել են արդյունաբերության զարգացումը, այնուհետև՝ գյուղատնտեսության և ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրները:

Դրա պատճառն այն է, որ քաղաքներն ունեցել են համեմատաբար զարգացած արդյունաբերություն, որի աշխատակիցները, զրկվելով աշխատանքից, չեն օգտվել նաև հողերի սեփականաշնորհման արտոնությունից: Այդ պատճառով մարզի քաղաքային համայնքներում զբաղվածության հիմնահարցն առավել կարևոր է: Քաղաքներում համեմատաբար զարգացած են նաև ենթակառուցվածքները:

Մարզում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ ենթակառույցների զարգացումը՝ ճանապարհների, ջրագծերի, կրթական և մշակութային օբյեկտների հիմնանորոգումները չնայած կարևոր, բայց առաջնայինը չեն աղքատության հաղթահարման գործում:

Նախորդ տարիներին մարզում ենթակառույցների զարգացման գծով բավականին մեծ ներդրումները չեն ուղեկցվել արտադրական կառույցների զարգացմամբ: Չնայած բարելավվել են ճանապարհները, նորոգվել շենքերն ու ջրագծերը, այնուամենայնիվ, մարդկանց սոցիալական վիճակը, համեմատած այդ ներդրումների հետ, դանդաղ է բարելավվում:

Շատ համայնքներ՝ հատկապես փոքր, սեփական բյուջեի շրջանակում չեն կարողանում լուծել համայնքի հիմնախնդիրները: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր է միջհամայնքային միավորումների դերը, որոնք կարող են աջակցել համայնքներին՝ լուծելու ներկայումս անլուծելի որոշ խնդիրներ: Դրանք հնարավորություն կունենան նաև արտադրական ձեռնարկություններ հիմնել, բացել նոր աշխատատեղեր:

Արագածոտնում արդեն կա միջհամայնքային 8 միավորում:

Արագածոտնի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումներն անմիջականորեն առնչվում են համայնքներին ուղղված մարզային մակարդակում միջոցառումների իրագործումից, վերաբերում են.

1. *մարզային և համայնքային ճանապարհների նորոգմանը,*

2. փոքրաթիվ բնակչությանը համայնքների ներգրավմամբ համայնքային միությունների ձևավորմանը (հետագայում՝ միջհամայնքային միավորումներ),

3. փոքր և միջին քաղաքների առաջանցիկ զարգացման քաղաքականությունների և համալիր ծրագրերի մշակմանը, որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի գյուղական և քաղաքային համայնքների ներդաշնակ զարգացումը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ մարզի համայնքների սոցիալ-մշակութային ենթակառուցվածքների զարգացածության աստիճանն ուղիղ համեմատական է դրանց չափերին, այսինքն, փոքր համայնքներում սոցիալական ենթակառուցվածքների իրավիճակն առավել անմխիթար է (տես Աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Գործող սոցիալ-մշակութային ենթակառուցվածքների առկայությունը մարզի գյուղական համայնքներում

Հիմնարկները	Ըստ բնակչության թվաքանակի առանձանցված խմբերը					
	մինչև 500 բնակիչ	501-1000	1001-1500	1501-3000	3001-5000	5000-ից ավելի
Համայնքների թիվը						
Փոստ	0	2	5	8	2	2
Մանկապարտեզ	0	3	7	4	6	5
Տարրական դպրոց	3	1	0	0	0	0
Միջնակարգ 10 - ամյա դպրոց	27	28	17	3	11	4
Միջնակարգ 8 - ամյա դպրոց	27	6	1	1	1	0
Բուժկետ /ամբուլատորիա/ Դեղատուն	16	31	18	9	6	2
Ազատ ժամանցի վայր	0	0	0	0	0	2
Սպորտային հարմարություններ	0	1	0	2	0	1
Մշակութային օբյեկտ	13	23	17	10	8	2
Գրադարան	22	30	19	11	9	2
Ինտերնետային կապ/կենտրոն	0	0	0	0	0	0
Համակարգչային կաբինետ	3	2	1	1	1	2
Եկեղեցի	7	28	10	17	6	1
Երաժշտական, արվեստի, սպորտդպրոց	1	1	2	6	4	3

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Կրթական ենթակառուցվածքներն այս համայնքներում ևս այնքան էլ զարգացած չեն: Միայն 18 համայնք ունեն տասնամյա միջնակարգ դպրոց և մեկ համայնք՝ մանկապարտեզ:

Ինչ վերաբերում է առողջապահական ենթակառուցվածքներին, ապա դարձյալ փոքր համայնքներում դրանք այնքան էլ զարգացած չեն: Գյուղական համայնքներում դեղատներ գրեթե չկան, իսկ մինչև 1501 բնակիչ ունեցող համայնքներում դրանք ընդհանրապես բացակայում են: ՄԱԿ ՁԾ-ի պատրաստված «Աղբատների ձայնը» զեկույցում ևս նշվում է, որ հետազոտված գյուղերից շատերը չունեն դեղատուն կամ դեղ վաճառող միջնորդներ, ինչը պայմանավորված է գյուղում բնակվողների փոքր թվով: Մինչև 500 բնակիչ ունեցող համայնքների գրեթե 30 %-ը չունի նաև բուժկետ կամ ամբուլատորիա: Այդ համայնքների բնակիչներն ստիպված են լինում երկար ճանապարհ անցնել՝ բժշկական ծառայություն ստանալու համար, ինչը հաճախ ֆինանսական և տրանսպորտային միջոցների բացակայության պարագայում չեն էլ անում:

Այդ բնակավայրերում քիչ են նաև առևտրի օբյեկտները: Մինչև 300 բնակիչ ունեցող ոչ մի համայնքում առևտրի կետեր չկան: Դա բացատրվում է բնակավայրում առևտրի շրջանառության փոքր ծավալներով, բնակչության անվճարունակությամբ և շահույթի գրեթե բացակայությամբ:

Սոցիալական պահանջումների բավարարման անհնարինությունը հիմնականում բնութագրվում է մարդկային աղքատության ցուցանիշների համակարգի միջոցով, ինչպես նաև

բնակչության սոցիալական ակտիվների միտումներով: Ստորև շարադրված վերլուծության համար հիմք ծառայած տվյալներն ստացվել են հիմնական «Աղքատների ձայնը» հետազոտության (2007թ.) արդյունքների ամփոփումից:

Մարդկային աղքատության ցուցանիշների համակարգը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչից.

- *կրթության մատչելիություն,*
- *առողջապահության մատչելիություն,*
- *արժանավայել կենսապայմանների մատչելիություն:*

Թվարկված բաղադրիչների հիման վրա կառուցված մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվով Արագածոտնի մարզը երկրում ամենավատ վիճակում է:


Աղյուսակ 17. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվերը ՀՀ մարզերում ու դրանց դասակարգումն՝ ըստ մարդկային աղքատության 2004թ.

Մարզերի դասակարգումը ամենավտոր մարդկային աղքատության համաթվից ամենամեծը	Մարզեր	ՄԱՄՀ	Կրթական ծառայությունների անմատչելիություն	Առողջապահական ծառայությունների անմատչելիություն	Անվտանգ խմելու ջրի աղբյուրների ու մշտական կացարանի անհասանելիություն
1	Երևան	0.325	0.096	0.225	0.005
2	Արագածոտն	0.753	0.215	0.283	0.256
3	Արարատ	0.626	0.178	0.285	0.163
4	Արմավիր	0.517	0.125	0.212	0.181
5	Լոռի	0.575	0.176	0.248	0.151
6	Գեղարքունիք	0.634	0.211	0.242	0.182
7	Կոտայք	0.414	0.084	0.263	0.067
8	Շիրակ	0.520	0.092	0.256	0.172
9	Սյունիք	0.361	0.106	0.220	0.036
10	Վայոց Ձոր	0.438	0.136	0.256	0.047
11	Տավուշ	0.624	0.169	0.263	0.195

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական միտումներ», N 5, Երևան, հունիս 2004, էջ 18:

Երկրում և մարզերում մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվերի մասին առավել ակնառու պատկերոցում է տալիս 11-րդ գրաֆիկական պատկերը:

Գրաֆիկական պատկեր 11. Մարդկային աղքատությունը երկրում՝ ըստ մարզերի



Կրթության ծառայությունների մատչելիության ինտեգրացված (ամփոփ) ցուցանիշով Արագածոտնի մարզը նույնպես վերջին տեղում է:

ՀՀ ԱՎԾ տվյալները վկայում են, որ աղքատությունը և բնակչության կրթական մակարդակը սերտորեն առնչվում են: Բարձրագույն կրթություն ունեցողներն աղքատության ավելի ցածր մակարդակ ունեն, գրեթե 47% հանրապետական միջինից և երկու անգամ պակաս, քան տարրական կրթություն ունեցողները: Այնուամենայնիվ, ըստ վիճակագրական տվյալների, միջնակարգ կրթություն ունեցողները, որոնք գերակշռող մասն են կազմում, ևս համալրում են աղքատների բանակը:

Ընդ որում, քաղաքային բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը գերակշռում է գյուղական բնակչության մեջ այդ կրթությունն ունեցողների թվին:

Գյուղական մեծ համայնքներում ևս (3501 – 5000 և 5000-ից ավելի բնակիչ ունեցող) բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռն ավելի մեծ է, քան մյուս գյուղական համայնքներում:

Ընդհանուր առմամբ, գյուղական և քաղաքային համայնքներում 16 և ավելի տարեկան մեկ բնակչի սովորած միջին տարիների առավելագույն թիվը գրեթե նույնն է (համապատասխանաբար 11.7 և 11.4), մինչդեռ գյուղական մեկ բնակչի սովորած միջին տարիների նվազագույն թիվը գրեթե երկու անգամ պակաս է քաղաքային բնակչի սովորած միջին տարիների թվից (համապատասխանաբար՝ 4.8 և 10.0): Գյուղական բնակավայրերում մեկ ուսուցչի հաշվով աշակերտների միջին թիվը կազմում է 7.4, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 12.3: Սակայն, եթե քաղաքային բնակավայրերում մեկ ուսուցչի հաշվով աշակերտների նվազագույն և առավելագույն թվերի տարբերությունն աննշան է, ապա գյուղական բնակավայրերի համար այդ տարբերությունն զգալի է. նվազագույնը՝ 1.1 և առավելագույնը՝ 18.4:

Կրթական համակարգում ընդգրկվածությունը ևս սերտորեն առնչվում է աղքատությանը: Եթե տարրական և միջին դասարաններում ընդգրկվածությունը շատ բարձր է (97 %), ապա ավագ միջնակարգ դպրոցում այն կազմում է 84.8 % և պայմանավորված է տնային տնտեսությունների աղքատության մակարդակով: Հանրային կրթության բնագավառում, միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են 167 երեխա, մեկ դպրոցին բաժին ընկնող դասարանների միջին թվաքանակը 10.6 է:

Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թիվը 7.3 է, մինչդեռ Երևանում՝ 12.1 է: Ինչ վերաբերում է նախադպրոցական և բարձրագույն կրթությանը, ապա այստեղ ընդգրկվածությունն անհամեմատ ցածր է (27.5% և 25% համապատասխանաբար) և ուղղակիորեն պայմանավորված է աղքատությամբ:

Անցումային ծանր տարիներին ամենավատթար վիճակում հայտնվեցին նախադպրոցական հաստատությունները (ՆԳՀ): Նախ, ծնելիության շոշափելի նվազման, ապա նաև ՆԳՀ-ների պահպանման ծախսերի համայնքների կողմից ֆինանսավորման կրճատման պատճառով, Արագածոտնի մարզի, հատկապես գյուղական վայրերում գտնվող, մանկապարտեզների և մանկամստրների մեծ մասը փակվեց: Գյուղաբնակ երեխաների համար ՆԳՀ-ների անմատչելիությունը հասնում է 68.1 %-ի: Եթե մարզի քաղաքներում նախադպրոցական կրթության անմատչելիությունը պայմանավորված է հիմնականում ընտանիքների նյութական սահմանափակումներով (72.8 %), ապա գյուղերում՝ ֆիզիկական անհասանելիությամբ (72.7%): Մարզի նախադպրոցական տարիքի երեխաների յուրաքանչյուր 9-ից միայն մեկն է նախադպրոցական հաստատություն հաճախում, այն դեպքում, երբ մարզերից մեծամասնությունում այդ ցուցանիշը տատանվում է 30-50 %-ի սահմաններում: Աղջիկների ընդգրկվածությունն ավելի փոքր է (8.8 %), քան տղաներինը (11.5 %): Բավականին ցածր է նաև միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության օղակներում համախառն ընդգրկվածությունը՝ 31.6 %: Այս ցուցանիշով մարզը գերազանցում է միայն Վայոց Ձորին (23.3 %) ու Գեղարքունիքին (26.3 %):

Արտադպրոցական պարապմունքներին հաճախելը հարուստ ընտանիքների երեխաների առավելությունն է: Գյուրոցահասակ երեխաների 33.1 %-ը հաճախում է մասնավոր դասերի: Ընդ որում, կրթության վրա տնային տնտեսությունների կողմից իրականացված ծախսերը տարեցտարի ավելանում են: Այս երևույթը շատ ավելի է բնորոշ քաղաքային, քան գյուղական բնակավայրերին:

Անմխիթար են նաև մարզի դպրոցների գույքային և շենքային պայմանները. դպրոցներում գրեթե բացակայում են լաբորատոր պարագաները: Գրադարաններում հաշվառված գրքերի 20 %-ն անօգտագործելի է, քանի որ չի բավարարում ներկայիս ուսումնական ծրագրերի պահանջները:

ՄԱԿ ԶԾ-ի «Աղքատների ձայնը» գեկույցում կրթական համակարգի շահառուները նշում են հետևյալ հիմնախնդիրները.

- **դպրոցական շենքերի և ենթակառուցվածքի անբավարար կամ ոչ բարվոք վիճակը,**
- **դպրոցների ոչ բարվոք միջավայրը,**
- **անձնական հիգիենայի բացակայությունը կամ ցածր մակարդակը, ջրի և զուգարանների բացակայությունը,**
- **ուսուցիչների կարողությունները,**
- **հին կամ անբավարար կահույքը, սարքավորումները, գույքը և դիտողական նյութերի պակասը,**
- **գրադարանների անբավարարությունը,**
- **լաբորատորիաների, համակարգչային սենյակների ոչ բավարար համալրվածությունը կամ բացակայությունը,**
- **մարզադահլիճների և արտատուսումնական ծրագրերի բացակայությունը կամ պայմանների անբավարարությունը,**
- **մանկապարտեզների վիճակը,**
- **աշակերտների առողջական խնդիրը,**
- **դպրոցական կառույցների (ծնողական խորհուրդ և այլն) անուշաղիք վերաբերմունքը դպրոցի հանդեպ,**
- **կրթական քաղաքականության բացասական ազդեցությունը,**
- **դպրոցի բյուջեն:**

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության և դոնորների կողմից այս ոլորտում իրականացվող միջոցառումների շնորհիվ, վերջին մեկ-երկու տարիների ընթացքում իրավիճակը փոքր ինչ բարելավվել է:

Կրթության ոլորտում պետական բյուջեի մեծ մասը հատկացվել է հիմնական կրթությանը, որը ներառում է դպրոցների նորոգումը, լոկալ ջեռուցման համակարգերի հիմնադրումը, ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը:

Առողջապահական ծառայությունների հիմնախնդիրները մարզում ավելի մտահոգիչ են, քան կրթական համակարգինը, սակայն ոլորտի մատչելիությունը բնութագրող ամփոփ ցուցանիշով՝ 0.242 (տես Աղյուսակ 20), Արագածոտնը շատ չի տարբերվում մյուս մարզերից, անգամ՝ մայրաքաղաք Երևանից (0.225): Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Արագածոտնի մարզում անցումային տարիներին կտրուկ նվազել էր բնակչության հաճախելիությունը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ: Վերջին տարիներին հաճախողների թիվն սկսել է աճել, իսկ 2006թ.-ից սկսած, երբ առաջնային բուժօգնությունը դարձավ անվճար, մարդիկ ավելի հաճախ են բուժհիմնարկներ այցելում:

Առողջապահական բնագավառի ամենամտահոգիչ հիմնահարցը մարզում տարիներ շարունակ եղել է մանկական մահացությունը, որի մակարդակով Արագածոտնը երկրի այլ մարզերի համեմատ, 2000 թ.-ին ունեցել է ամենավատ ցուցանիշը; Մանկամահացության դեպքերը 2000 թվականի սկզբից սկսած նվազել են: Սակայն, 2005-06 թթ.-ին, մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը կրկին ավելացել են (2004 թ.-ի համեմատ այս ցուցանիշը կազմել է 102.6 %):

Ընդհանուր առմամբ, տարբեր հետազոտությունների և հարցումների /ՄԱԿԶԾ - 2007 թ./ արդյունքում առանձնացվել են համակարգի հետևյալ հիմնախնդիրները.

- **տեղական առողջապահական ծառայությունների և դեղամիջոցների սահմանափակ մատչելիությունը,**
- **տեղական բուժկետերի ենթակառուցվածքի սահմանափակությունը և ընթացիկ պահպանման խնդիրները,**
- **գյուղից դուրս գտնվող առողջապահական հիմնարկներ դիմելու դժվարությունները,**
- **տրանսպորտային դժվարությունները և շտապօգնության մեքենայի բացակայությունը,**
- **առողջապահական ծառայություններից օգտվելու համար ֆինանսական միջոցների պակասը,**
- **շտապ բուժօգնության ծառայությունների հետ առնչվող խնդիրները,**
- **դեղատների բացակայությունը,**
- **ջրի աղտոտվածությունը:**

Արժանավայել կենսապայմանների անմատչելիության ամփոփ ցուցանիշով (0.256) Արագածոտնի մարզը առաջ է միայն Տավուշից (0.195): Այս ցուցանիշի գծով մարզի համեմատաբար հետ մնալը երկրի մյուս մարզերից հիմնականում պայմանավորված է անվտանգ խմելու ջրի հասանելիության ցածր մակարդակով: Արագածոտնի տնային տնտեսությունների 4.2 %-ը քաղաքներում և 36 %-ը գյուղերում տանը կամ տան բակում ջրի ծորակ չունեն:

Միաժամանակ, քաղաքաբնակ 62.6 % ընտանիքներում օրական ջրամատակարարման միջին տևողությունը մինչև 2 ժամ է:

Արագածոտնի բնակչության 92-93 %-ն ապրում է իր սեփականության բնակարաններում, այդ թվում՝ 80 %-ը՝ առանձնատներում և մեկ շնչի հաշվով ունի միջինը 18 քմ բնակելի տարածք: Քաղաքային բնակչությունն առավել խիտ է բնակեցված, քան գյուղականը (համապատասխանաբար՝ 2.3 և 0.8):

Սակայն, մարզի տնային տնտեսություններից 1475-ն ապրում է ժամանակավոր կացարաններում: Դա կազմում է մարզի ընտանիքների 4.4%-ը: Սա հանրապետությունում, աղետի գոտու մարզերից հետո երրորդ ցուցանիշն է:

Մարզի բնակչության 3-4 %-ի բնակմակերեսը, մեկ շնչի հաշվով, պակաս է 5 քմ-ից (նշենք, որ նվազագույն նորմատիվն ընդունված է 9 քմ): Գյուղական բնակավայրերում կացարաններում

բնակվող տնային տնտեսության տեսակարար կշիռը անհամեմատ մեծ է քաղաքային բնակավայրերում նույնատիպ պայմաններում բնակվող տնային տնտեսությունների թվից (համապատասխանաբար՝ 1.11 և 0.66):

Բնակարանով ապահովվածության խնդիրը հատկապես սրված է մարզի Աշտարակ քաղաքում, որտեղ բնակարանի կարիք ունի շուրջ 750 ընտանիք: Մարզի բնակարանային հիմնախնդրի ամենացավոտ հարցը քաղաքների բազմաբնակարանային շենքերի անմխիթար, կիսավթարային և հակասանիտարական վիճակն է: Հարկ է նշել, որ բազմաբնակարանային շենքերի գերակշռող մեծամասնությունը կառուցվել է 21-50 տարի առաջ: Ընդ որում, դրանց մեծ մասն ունի տանիքի նորոգման, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման խնդիր:

Արագածոտնի մարզի քաղաքային և գյուղական մի քանի համայնքներում իրականացված աղքատության մասնակցային գնահատման (ԱՄԳ) արդյունքները վկայում են, որ ընտանիքների աղքատության վտանգը մեղմելու և աղքատ ընտանիքներին սատարելու ամենակարևոր ուղղությունը համայնքի անդամների սոցիալական ակտիվների վերականգնումն է՝ **համայնքներում փոխօգնության և սոցիալական զարգացման հիմնադրամների ձևավորման միջոցով:**

Արագածոտնի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են արտադրական ձեռնարկությունների ստեղծման, նախադպրոցական համակարգի վերականգման, մոր և մանկան առողջության պահպանման, խմելու ջրի հասանելիության, քաղաքային տնտեսության բարեկարգման հիմնախնդիրներին, որոնց վերջնական նպատակը պետք է լինի մարզի բնակչության համար կրթության և առողջապահության ծառայությունների մատչելիության բարձրացումն ու արժանավայել կենսապայմանների ապահովումը:

Հոգևոր-մշակութային պահանջումների բավարարման սահմանափակությունը աղքատության երևույթի, թերևս, ամենաքիչ ուսումնասիրված բաղադրիչն է: Սակայն, որոշակի քանակական տվյալների վերլուծության միջոցով, կարելի է պատկերացնել մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջումների բավարարման հնարավորությունների մասին:

Այսպես, մարզում տեղական ոչ մի հեռուստաալիք չի գործում, հրապարակվում է 3 մարզային թերթ («Կանթեղ», «Արագած աշխարհ», «Թալին»), որոնց պարբերականությունը ամիսը մեկ անգամ է: Միաժամանակ, ՄԶԱՀ-ի արդյունքների համաձայն, մեկ ամսվա ընթացքում մարզի աղքատների ընդամենը 10.2, իսկ չբավորների 0.1%-ն է որևէ թերթ կարդում:

Գյուղական համայնքների կեսից ավելին հանրապետական մամուլ չի ստանում: Ինչ վերաբերում է մարզային մամուլին, ապա համայնքների գերակշռող մեծամասնության (84.5 %) համար այն հասանելի է ոչ ավել, քան ամիսը մեկ անգամ: Մարզային մամուլը դժվարությամբ է գոյատևում՝ երբեմն-երբեմն օգտվելով կառավարության հատկացրած միջոցներից: Որպես հասարակության շարժիչ ուժ և տեղեկատվության միջոց, այն չափազանց սահմանափակ հնարավորություններ ունի:

Մարզում կա 68 մշակույթի տուն և 32 ակումբ: Դրանցից 86-ը՝ գյուղական վայրերում են: Գործող 4 գործող եկեղեցիներից 1-ը նույնպես գյուղերում է: Մարզի բնակիչներից ընդամենը 2.6 %-ն է ամսվա ընթացքում այցելել կինո, թատրոն կամ համերգ, 1.2 %-ը՝ թանգարան, ցուցահանդես, իսկ եկեղեցի է այցելել մարզի յուրաքանչյուր երրորդ բնակիչ: Չնայած, որ թանգարանների քանակով (3) մարզը չի զիջում շատ ուրիշ մարզերի, այնուամենայնիվ, այցելությունների թիվն անբավարար է:

Մարզում գործում է երաժշտական 7 դպրոց, որտեղ սովորում է 465 երեխա, դասավանդում է 164 ուսուցիչ: Սակայն դպրոցների նյութատեխնիկական բազան չափազանց աղքատ է, շենքային պայմանները չեն համապատասխանում պահանջերին, ցածր է դասավանդողների աշխատավարձը: Նման պայմաններում անկարելի է այդ դպրոցներից որևէ շոշափելի արդյունք ակնկալել: Ժողգործիքների գծով պետպատվերով ֆինանսավորվում են 6 դպրոց և 57 աշակերտ: Սակայն ֆինանսավորման ծավալները չափազանց փոքր են:

2009 թ. տվյալներով մարզում գործում է 112 գրադարան, որոնց գրքային ֆոնդը 800321 կտոր է: Սակայն գրադարան հաճախողների թիվը շատ քիչ է: Այդ գրադարանները վաղուց չեն

համալրվել գրականությամբ, իսկ եղած գրքերն էլ, շենքային անբարենպաստ պայմանների պատճառով, մաշվել են:

Ֆինանսների անբավարարության պատճառով դրանցում տարիներ շարունակ զանգվածային մշակութային միջոցառումներ չեն իրականանում:

Արագածոտնի մարզը երկրում նշանավոր է իր պատմական հուշարձանների թվով: Մարզում կա պատմության 1796 հուշարձան, որոնցից համապետական նշանակության են 1232-ը: Սակայն դրանց վերականգնման, պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվող աշխատանքներն անբավարար են: Չեն հրապարակվում և տարածվում տեղեկատուներ, ցուցատախտակներ, դրանց պատմության մասին ստույգ տեղեկատվական-ճանաչողական արդիական նյութեր պարզապես չկան:

Արագածոտնի մարզի բնակչության աղքատության հաղթահարման տեսանկյունից հոգևոր-մշակութային պահանջումների բավարարման խնդրի լուծումը պահանջում է.

- *մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջումների որակական հետազոտությունների իրականացում,*
- *հոգևոր-մշակութային պահանջումների դասակարգում՝ ըստ բնակչության տարբեր խավերի համար գերակայությունների,*
- *որոշ համայնքների մեկուսացվածության վերացում՝ թերթերի հասանելիության ապահովման և կապի որակի բարձրացման միջոցով:*

Արագածոտնի մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի աղքատության հաղթահարմանը .

- *մասնավոր ոլորտի և ՓՄՁ զարգացում,*
- *գյուղատնտեսության զարգացում,*
- *սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում,*
- *մարզային ենթակառուցվածքների բարելավում,*
- *մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքի ամրապնդում և հետագա զարգացում,*
- *բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում:*

4. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ԵՎ ՓՄՁ

4.1. ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն

ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2006թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է 40.3 %՝ 2005թ. 39.8 % փոխարեն:

Ուսումնասիրություններն ու փորձագիտական գնահատականները վկայում են, որ գրանցված ձեռնարկությունների կեսից ավելին (52.3 %-ը կամ 21551 տնտեսավարող սուբյեկտներ) գրադված են մեծածախ և մանրածախ առևտրով: Իսկ գրանցված ձեռնարկությունների 40-50 %-ը չի գործում: Վերջին մեկ տարվա ընթացքում, տարբեր պատճառներով, իրենց գործունեությունը դադարեցրել են (համապատասխան գրանցում կատարելով ՀՀ պետական ռեգիստրում) 2398 անհատ ձեռներեց և 523 ձեռնարկություն:

1997թ. ստեղծված ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության ՓՄՁ հիմնախնդիրներով զբաղվող ենթադրորտի, ինչպես նաև մի շարք հասարակական, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների իրականացրած ուսումնասիրություններն ու փորձագիտական հետազոտությունները հնարավորություն տվեցին ամբողջական պատկերացում կազմել Հայաստանի ՓՄՁ ոլորտի առջև ծառայած հիմնախնդիրների մասին: Նկատի ունենալով վերոհիշյալ ուսումնասիրությունների արդյունքները, կարելի է առանձնացնել Հայաստանում ձեռնարկատիրության, և հատկապես փոքր բիզնեսի գլխավոր խնդիրները և զարգացման նախադրյալները.

• Հայաստանում բացակայում է փոքր և միջին բիզնեսի համար հարկային քաղաքականության մասով որևէ հատուկ տեսակետ, դրույթ և հարկային արտոնություն՝ նոր ստեղծվող ձեռնարկությունների համար:

• Կարևորագույն հիմնախնդիր է ձեռնարկությունների ֆինանսավորման հարցը: Ֆինանսավորման առնչվող հիմնական դժվարություններն են՝

- վարկերի բարձր տոկոսադրույքները,
- միջին և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությունը,
- վարկային երաշխիքների և գրավի տրամադրման հարցերը,
- վարկատու կազմակերպություններում դիմումների և (կամ) բիզնեսպլանների քննարկման բարդ ընթացակարգը:

Ձեռնարկությունների վարկային ֆինանսավորման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում, ինչպես անցումային տնտեսությամբ այլ երկրներում, գրեթե բացակայում է ձեռնարկությունների ստեղծման և գործարկման համար անհրաժեշտ նախնական կապիտալը:

• Ձեռնարկությունների զարգացման համար հաջորդ լուրջ խոչընդոտը **ներքին շուկայի ցածր պահանջարկն է:** Չնայած, որ Հայաստանի ներքին շուկան դեռ հեռու է հազեցածության կետից, այնուամենայնիվ, տնտեսության դինամիկ զարգացման համար ձեռնարկությունների գործունեությունը հիմնականում պետք է նպատակաուղղված լինի դեպի արտաքին շուկաներ: Սակայն արտահանման հնարավորությունների զարգացումը պահանջում է նպատակային պետական օժանդակություն, ժամանակ, ֆինանսներ և ուսուցում:

• **Չկա ազգային բիզնես տեղեկատվական և խորհրդատվական զարգացած և կայուն համակարգ,** որը ձեռնարկություններին կտրամադրեր ծառայություններ և տեղեկատվություն՝ լիարժեք գործունեություն ծավալելու համար:

• **Հայաստանում չկա ձեռնարկատիրական կրթության և կադրերի վերապատրաստման համակարգ,** որն էական դեր կխաղար շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի կազմակերպման նոր ձևերի կիրառման, մասնավոր գործունեության ծավալման, նոր մտածողության ձևավորման գործում:

• **Փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշիչների բացակայությունը հանգեցնում է վիճակագրության բացակայության:** Տնտեսության յուրաքանչյուր, այդ թվում՝ ՓՄՁ ոլորտում, իրական քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար անհրաժեշտ է հնարավորին չափ ճշգրիտ վիճակագրական տեղեկատվություն: Այն կարևոր է ինչպես գործարարների, այնպես էլ գործարարության հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին և ձեռնարկատերերին՝ բիզնես ծառայություններ մատուցող կենտրոնների գործունեության համար:

Հայաստանում ձեռնարկատերերն իրենց գործունեության և նոր ձեռնարկությունների ստեղծման ժամանակ բախվում են մի շարք հիմնախնդիրների:

Այդ հիմնախնդիրների մեջ առաջնային տեղ է զբաղեցնում ֆինանսականը:

Փորձագիտական հետազոտությունները հաստատում են, որ ՓՄՁ-երի վարկային և ֆինանսական աջակցությունը խիստ սահմանափակ է և անբավարար: Հատկապես ակնհայտ է

փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հարցերում պետական օժանդակության բացակայությունը:

Միաժամանակ առկա է գործող ֆինանսավորման աղբյուրներին ՓՄՁ սուբյեկտների անհասանելիությունը: Դա հիմնականում բացատրվում է.

- վարկերի տոկոսադրույքների բարձր լինելով,
- միջինժամկետ և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությամբ,
- վարկերի դիմաց տրամադրվող երաշխիքների բացակայությամբ,
- վարկերի գրավային անբավարար սպահովվածությամբ,
- բիզնես ծրագրերի ցածր որակով,
- վարկի ձեռքբերման գործընթացին առնչվող խնդիրներով:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի նշված հիմնախնդիրների հաղթահարմանը և նպաստի ձեռնարկատիրության զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: ՓՄՁ հիմնախնդիրների լուծումը զգալի քայլ կլինի երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի գործում:

Արտադրության ոլորտը և, մասնավորապես, արդյունաբերությունը՝ որպես երկրի տնտեսության զարգացման հիմնական ուղղություններից մեկը, պետք է արտացոլվի ՓՄՁ քաղաքականության մեջ և իրականացվի առանձին ծրագրերի և միջոցառումների ճանապարհով:

ՓՄՁ քաղաքականության իրականացման հիմնական ուղղություններից մեկը հանդիսացող արտադրական ոլորտի ընդլայնումն ու զարգացումը կնպաստի ՓՄՁ քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը, այն է՝ արտադրության ծավալների աճ, առևտրային հաշվեկշռի պակասորդի կրճատում, տեղական հումքի արդյունավետ օգտագործում, արտահանման ծավալների մեծացում, պարապտրդի մատնված արտադրական հզորությունների վերագործարկում, արտադրական հզորությունների և արտադրվող ապրանքների դիվերսիֆիկացիա և այլն:

Արդյունաբերական քաղաքականության տարբեր ուղղություններով արված առաջարկությունները հնարավորություն են տալիս բացահայտելու խոշոր և փոքր ու միջին ձեռնարկությունների միջև համագործակցության հետագա զարգացման, դրանց փոխադարձ կապերի ընդլայնման հնարավորությունները և տնտեսական զարգացման գերակայությունները:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ ՓՄՁ զարգացման մակարդակով մարզը երկրում հետ է մնում: Մարզում գործում են հիմնականում առևտրի փոքր և գերփոքր օբյեկտներ: Սպասարկման ծառայությունները համեմատաբար քիչ են: Առավել քիչ են արտադրական ձեռնարկությունները: Դրանք հիմնականում գյուղմթերքներ վերամշակող փոքր ձեռնարկություններ են և տեղական հումքի բազայի վրա շինանյութեր արտադրող կազմակերպություններ: Չարգացած չէ տուրիստական բիզնեսը: Միաժամանակ, ՓՄՁ-ների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումները դեռևս բավարար չեն՝ էականորեն նպաստելու համար մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացմանը:

ՓՄՁ զարգացման դիմամիկան ուսումնասիրելիս, պարզվում է, որ տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունը, համեմատած ֆինանսական աջակցության հետ, առավել քիչ արդյունավետ է: Հիմնականում դրանով է պայմանավորված Արագածոտնի մարզում ՓՄՁ զարգացման տեմպերի ցածր լինելը:

Ֆինանսական և ոչ-ֆինանսական աջակցություն ստացածների հարաբերակցությունը՝ 23 և 917 (3 % և 97 %) վկայում է, որ անհրաժեշտություն կա հանգամանալից վերլուծել ոչ-ֆինանսական աջակցության գործիքների մատուցման արդյունավետությունը: Այս առումով անհրաժեշտ է, որ ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդն ստեղծի և պարբերաբար վերլուծի ծրագրի շահառուների իր տեղեկատվական բազան:

Այս ուղղության արդյունավետ օգտագործումը մեծապես պայմանավորված է մի շարք պետական և ոչ պետական կառույցների սերտ համագործակցությամբ: Տեխնիկական օժանդակությունը, որը ներառում է տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը, իրականացնում են ինչպես կառավարման պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները, այնպես էլ առևտրային կազմակերպությունները: Այս մեխանիզմը մեծ արդյունքներ կարող է տալ, եթե պետական համապատասխան կառույցներ լրջորեն ընդգրկվեն ՓՄՁ աջակցության քաղաքականության իրականացման գործընթացում:

Աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առաջին գերակշռում են մարզկենտրոնում և քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Ընդ որում՝ գործող ՓՄՁ-ների վարկային երաշխիքի միջին գումարը կազմել է 3.6 մլն ՀՀ դրամ, իսկ սկսնակներինը՝ 1.3 մլն ՀՀ դրամ: Ֆինանսական ռեսուրսների վերաբաշխումը հոգուտ սկսնակների կարող է զգալիորեն ավելացնել սկսնակ շահառուների թիվը:

Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության գործընթացում:

Ծրագրի շահառուների շրջանակներն ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

Կան նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ պատճառներ:

Շուկայում հաստատուն մրցունակ դիրքեր զբաղեցնելու և պահպանելու, արտադրողականության շարունակական աճ ապահովելու, գործարար ռիսկերի կրճատման գործընթացը Հայաստանում ակնհայտորեն դանդաղում է, ի թիվս այլ գործոնների, նաև գործարար կառավարման անբավարար մակարդակի հետևանքով: Գործարար շրջանակներում ռազմավարական պլանավորման, անձնակազմի, ֆինանսական միջոցների, որակի արդյունավետ կառավարման, ինչպես նաև շուկայում ապրանքների և ծառայությունների առաջնդման գործում մարքեթինգային գործելակերպի անտեսումը շարունակում է զսպել գործարարության մրցունակության աճը:

Գլոբալ մրցունակության համաթվով դասակարգված 125 երկրների շարքում 82-րդ տեղ զբաղեցնելու հանգամանքը բացասական առումով պայմանավորված է նաև «Գործարար հղկվածություն» ցուցանիշով Հայաստանի ցածր մակարդակով (104-րդ տեղ):

ՓՄՁ հիմնախնդիրները մարզում պարզելու համար հարցումներ են անցկացվել մարզի բնակիչների շրջանում: Հետազոտության համար ընտրվել են ոչ միայն ՓՄՁ անդամները, այլև այն մարդիկ, ովքեր հրաժարվել են ձեռնարկատիրական գործունեությունից և նրանք, ովքեր կուզենային զբաղվել նման գործով: Հարցմանը մասնակցել են նաև մարզի 28 համայնքապետեր:

Ստացվել են այսպիսի պատասխաններ.

1. Դժվար է ֆինանսներ հայթայթել:

Հայաստանի չափահաս բնակչության 13.5 %-ն է ընդգրկված մասնավոր վարկային գրասենյակում/բյուրոյում) և 2.8 %-ը հանրային վարկային ռեզիստորում, մինչդեռ Մեծ Բրիտանիայում այդ թիվը կազմում է բնակչության մոտ 85 %-ը: Հայաստանը վարկերի ստացման դյուրինության առումով դասակարգվում է 36-րդ տեղում: Դասակարգումը կբարելավվի, եթե վարկային կազմակերպությունների (ներառյալ՝ կոմունալ ձեռնարկությունները) անդամակցությունը վարկային գրասենյակին (բյուրո) դարձնել պարտադիր, որը թույլ կտա բանկային փոխառություն կամ վարկային քարտ չունեցող անձանց համար ստեղծել վարկային պատմություն: Այսպիսի բարեփոխումը կընդլայնի գրասենյակի գործունեության շրջանակը, և կդյուրացնի ձեռներեցների համար բիզնես հիմնելու և այն զարգացնելու անհրաժեշտ միջոցների հայթայթումը:

Չնայած անցած տարվա բարեփոխումներին, Հայաստանում օրենքն իրականացվում է 14 տոկոսով, մինչդեռ Միացյալ Թագավորությունում՝ 85 տոկոսով:

2. Շատ են քաշքշուկները գրանցման և, հատկապես, լուծարման դեպքերում:

Օրինակ, Հայաստանում կազմակերպության լուծարման /սնանկացման/ գործընթացով անցկացնելը միջինը տևում է 1.9 տարի և ծախսը կազմում է գույքի արժեքի 4%-ը:

(„Հայաստանի Գործարար և ներդրումային միջավայրի „Գերազանցության կենտրոն,, համազգային ծրագրի հայեցակարգ,, Երևան, - 2008 թ.)

3. Կա անառողջ մրցակցություն:

Կան ոլորտներ, որտեղ կոշտ մենաշնորհ է հաստատված: Օրինակ, սննդամթերքի, բենզինի ներկրման գործում:

4. Հարկային դաշտն անբարենպաստ է:

Գրանցվելու և հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու դեպքում 2-3 հոգիանոց ձեռնարկությունը չի կարող արդյունավետ գործողություն ծավալել: Այդ պատճառով մնան ձեռնարկությունները հիմնականում խուսափում են գրանցվելուց և դուրս են մնում հաշվառումից կամ գործում են այլ կազմակերպությունների անվան ներքո:

5. Որպես կանոն, ձեռնարկները ֆինանսավորվում են սուբյեկտիվորեն:

Զգալի է անհատական սուբյեկտիվ գործոնի դերը: Արժեքավոր շատ նախաձեռնությունների համար հնարավոր չէ ֆինանսավորում ստանալ: Սակայն ֆինանսավորվում են այնպիսի ծրագրեր, որոնք տնտեսական և սոցիալական ավելի պակաս նշանակություն ունեն:

6. Դժվարություններ կան սկսնակ ձեռնարկությունների ֆինանսավորման գործում:

7. Նամանավանդ, գյուղական համայնքներում դժվար է ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելը: Գյուղերում գործունեության միակ, այն էլ սահմանափակ ոլորտը մանր առևտուրն է: Արտադրության կամ ծառայությունների կազմակերպման հնարավորությունները խիստ սահմանափակ են:

8. Բարձր են վարկային տոկոսները, կարճ են վարկավորման ժամկետները:

9. Տրվող վարկերով լուրջ կապիտալ ներդրումներ իրականացնել հնարավոր չէ:

10. Հարկային բնագավառի աշխատողների գործողությունները կամայական են: Ձեռնարկություններին հաճախ հարկադրում են պլանային չհիմնավորված հարկային մուծումներ կատարել:

11. Շուկա մուտք գործելը դժվար է: Այնտեղ նույնպես անառողջ մրցակցություն կա:

12. Ենթակառուցվածքներն անկատար են: Ծանապարհներն անբարեկարգ են, Դժվարություններ կան գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման գործում:

13. Արտասահմանյան գործընկերներ գտնելը գրեթե անհնար է: Չկա այնպիսի կառույց, որն զբաղվի այդ խնդրով:

14. Չի բավարարում փորձը: Տեղեկատվությունն անբավարար է կամ անսահասանելի:

15. Չկան անհրաժեշտ գիտելիքներ ունեցող լուրջ մասնագետներ:

16. Տեղական բիզնեսի զարգացմանը խոչընդոտում է հատկապես արտասահմանից ցածրորակ և ցածրարժեք ապրանքների ներկրումը:

Մասնավորապես, հարցը վերաբերում է հագուստին և կոշիկեղենին: Մարզում գործող մնանատիպ շատ ձեռնարկություններ փակվել են՝ չդիմանալով մրցակցությանը:

Նշվել են նաև այլ պատճառներ: Գրանցից հիմնականը տեղեկատվական, խորհրդատվական և ֆինանսական հարցերով զբաղվող կազմակերպությունների դժվար հասանելիությունն է: Մարզում ՓՄՉ զարգացման միակ կենտրոնը Ապարանում է: Աշտարակում, Թալինում և Ծաղկահովիտում մնան կառույցներ չկան:

Տրվել են նաև այլ պատասխաններ, վերաբերում են սեփական գործունեությանը և դրանցում ծագած հիմնախնդիրներին և վերլուծության ու գնահատման համակարգում մեծ նշանակություն չեն ձեռքբերում:

Կարևոր հարցադրումներ են արել նաև հարցմանը մասնակցած համայնքապետերը:

Դրանք, ըստ պատասխանների կարևորության, հետևյալներն են.

1. **Հստակ չէ ՏԻՄ-երի դերը ՓՄՁ զարգացման գործում: Կազմակերպությունները գրանցելիս կամ լուծարելիս հաշվի չեն առնվում համայնքապետերի կարծիքները և երաշխավորությունները:**

2. **Չկան ձեռնարկություններին օգնելու, աջակցելու, նրանց գործունեության մասին առաջարկություններ ներկայացնելու և դրանք պաշտպանելու հստակ մեխանիզմներ:**

3. **ՓՄՁ-ները համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործում գրեթե մասնակցություն չեն ունենում:**

4. **Համայնքապետերն առավել շահագրգռված են արտադրական գործունեության զարգացման խնդրում: Նրանք հիմնականում նշում են, որ նախկինում գործող արտադրական ձեռնարկությունների վերագործարկումով հնարավոր է լուծել ներհամայնքային բազմաթիվ խնդիրներ:**

5. **Չկա արտերկրում գործընկերներ գտնելու հնարավորություն: Կապեր հաստատել այլ երկրների ձեռնարկությունների և ՏԻՄ-երի հետ գրեթե անհնար է:**

6. **Օրենքում ամրագրված չէ ՓՄՁ-ների՝ համայնքների առջև սոցիալական պատասխանատվության որևէ նորմ:**

7. **Քիչ են լուրջ բիզնես գիտելիքներ ունեցող անձինք: Իսկ տրված մեթոդական խորհրդատվությունը բավարար չէ կայուն և զարգացող բիզնես ստեղծելու համար:**

8. **Քիչ են ներգրավվում արտասահմանում գործող գործարարները: Նրանք ավելի նպատակահարմար են համարում բիզնեսի համար ներդրումներ կատարել ոչ թե իրենց համայնքում, այլ՝ Երևանում, ուր ավելի մեծ են բիզնես իրականացնելու հնարավորությունները:**

9. **Արժեքավոր շատ մտահղացումներ անիրականացանալի են՝ ֆինանսական միջոցների, պետական օգնության և հովանավորության բացակայության պայմաններում:**

10. **Մասնավոր հատվածում գործարար կառավարման մակարդակը ցածր է:**

Համայնքների ղեկավարները ցանկանում են մասնակցել համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակմանը, իսկ ծրագրերի իրականացման գործում պատրաստ են տրամադրել համայնքում եղած հնարավորությունները, օգտագործել Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող իրավասությունները՝ ՓՄՁ զարգացման և աջակցության գործում: Այդպիսի ծրագրերի մշակման և իրականացման համար համայնքապետերն աջակցություն են ակնկալում պետությունից, դոնոր կազմակերպություններից, ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամից, ինչպես նաև օտարերկրյա և տեղացի մասնավոր ներդրողներից:

Միաժամանակ, նրանց կարծիքով, ՓՄՁ-ները պետք է օրենքով ամրագրված սոցիալական պարտավորություններ ունենան համայնքի առջև:

Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորությունները համայնքապետերը համարում են.

ա) բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը (ընտանիքների 10- 15%),

բ) տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը,

գ) զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով համայնքների մի մասի բարենպաստ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները,

դ) համայնքում ներդրումներ կատարելու տեղացի արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

Համայնքապետերի հարցման արդյունքների վերլուծությունը ցուցահանում է, որ մասնավոր ներդրումների ներհոսքը սահմանափակող հիմնական գործոնները հետևյալն են.

1. համայնքապետերը, կարևորելով մասնավոր ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը, դեռևս հստակ պատկերացում չունեն ներդրումների խրախուսման իրենց դերի վերաբերյալ,

2. մասնավոր ներդրումների համար տեղական ռեսուրսների, մասնավորապես հողի և արտադրական տարածքների հատկացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,

3. գործարար նախաձեռնությունների իրականացման համար անհրաժեշտ որակյալ աշխատուժի և մասնագետների պակասը:

Արդյունաբերական քաղաքականության տարբեր ուղղություններով արված առաջարկությունները հնարավորություն են տալիս բացահայտելու խոշոր, փոքր ու միջին ձեռնարկությունների միջև համագործակցության հետագա զարգացման, նրանց փոխադարձ կապերի ընդլայնման հնարավորությունները և տնտեսական զարգացման գերակայությունները:

Արտադրական ոլորտի արդյունավետ գործող ՓՄՁ-ների թվի և գործառույթների շրջանակի ընդլայնման համար անհրաժեշտ է պետական աջակցություն՝ այդ քաղաքականության իրականացման բոլոր հնարավոր մեխանիզմներով:

Մասնավորապես, պետական գերակա ուղղություններում արտադրական ՓՄՁ-ներին տրվող վարկերի երաշխավորումը այդ մեխանիզմներից է:

Մարզում հիմնադրվող վերամշակող արտադրությունների համար անհրաժեշտ է ստեղծել առավել բարենպաստ ռեժիմ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել տեղական հանքահումքային ռեսուրսները: Արտադրական ՓՄՁ-երի ընդլայնումը մարզում կլուծի ևս մի կարևոր հիմնահարց, այն է՝ գյուղմթերքների վերամշակման արտադրության զարգացում և երկրի պարենային ապահովության հիմնախնդրի մեղմացում: Արդեն այսօր նկատելի են սննդի վերամշակման փոքր և միջին արտադրությունների զարգացման հեռանկարները և դրա ազդեցությունը գյուղատնտեսությունում առկա հիմնախնդիրների լուծման և մեղմացման գործընթացին (գյուղատնտեսական մթերքների գնումների ապահովում, դրանց արդյունավետ վերարտադրություն, ճյուղի ամրապնդում և այլն):

Արտադրական ոլորտի զարգացման համար կարևորվում է նաև պարապուրդի մատնված և (կամ) անարդյունավետ աշխատող խոշոր ձեռնարկությունների վերակազմավորումը (ռեստրուկտուրիզացիան):

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- **մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, որի կազմում են մարզպետարանի պատասխանատու աշխատակիցներ, համայնքապետեր, գործարարներ: Յուրաքանչյուր տասնօրյակ խորհուրդը նիստեր է գումարում և ամփոփում կատարած աշխատանքները, տալիս հանձնարարականներ և որոշակիացնում հետագա անելիքները,**
- **մարզպետարանում հրավիրվել է խոշոր համայնքների համայնքապետերի, դրանցում գործող ՓՄՁ-ների ղեկավարների հանդիպում և քննարկվել են ՓՄՁ զարգացման հեռանկարները, նրանց դերը համայնքների զարգացման գործում,**
- **ստեղծվել է ՓՄՁ զարգացման ոլորտային աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված է 18 մարդ,**
- **ստեղծվել է ՓՄՁ տվյալների բազա, որն անընդհատ թարմացվում է,**

- ***ՓՄՁ ՉԱԿ մարզային կենտրոնի հետ ամփոփվել են ՓՄՁ զարգացման նպատակով մարզում անցած տարիներին իրականացված աշխատանքները, թարմացվել են տվյալները:***

Յուրաքանչյուր ամիս մարզպետարանի պատասխանատու աշխատակիցները հանդիպում են ՓՄՁ այն սուբյեկտների և հասարակական կազմակերպությունների հետ, որոնց գործունեությունը մեծ նշանակություն ունի մարզի տնտեսության զարգացման համար: Նրանց ներկայացվել են ՓՄՁ զարգացման` ՀՀ կառավարության ծրագրերը:

ՓՄՁ ներկայացուցիչներից ստացվում են համագործակցության առաջարկություններ, որոնք ամփոփվում են մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՁ վարչությունում:

Մեթոդական օգնություն և աջակցություն է տրվում ՓՄՁ սուբյեկտներին` բիզնես պլանների կազմման գործում: Նրանց տրամադրվում են նաև երկրում գործող բիզնես կենտրոնների հետ կապ ստեղծելու հնարավորություններ: Այդպիսի երկու կազմակերպությունների բիզնես ծրագրերը կազմել է „Հայկոնսալտ“, խորհրդատվական կենտրոնը:

Վարկավորման համար մարզի 2 կազմակերպության ներկայացրած հայտերը, բավարարվել են: Ապարանի „Նիգ“, և Օհանավանի „Իշխան“, կազմակերպություններին տրվել է 280 միլիոն դրամի վարկային երաշխիք:

Մարզպետարանի ՖՍՏՁ վարչությունում ներկայումս քննարկման ընթացքում են 10 բիզնես ծրագրեր: Աշխատանքների ավարտից հետո դրանք կներկայացվեն համապատասխան կառույցներին:

Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում նախատեսվում են նաև ՓՄՁ զարգացման և աջակցության աշխատանքներ:

ՓՄՁ զարգացման ուղղությամբ խնդիրների, անելիքների և մարզպետարանի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ հաղորդագրություն է տպագրվել մարզում գործող թերթերում: Նյութերը տեղադրվում են մարզպետարանի կայքէջում:

Մարզպետարանի պատասխանատու աշխատակիցները եղել են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կազմակերպված հանդիպումներին, հանդես են եկել առաջարկներով:

4.2. Հայաստանում ներդրումների արդի վիճակը

- 1991-2007 թթ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների ընդհանուր գումարային ծավալը կազմել է 3.5 մլրդ ԱՄՆ դոլար, որից` 2000-2007 թթ. ավելի քան 2.9 մլրդ ԱՄՆ դոլար:

- 2007թ. տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը կազմել է 845.4 մլն ԱՄՆ դոլար (2006թ.-ի հետ համեմատությամբ աճը 34.6 %):

- 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գումարային ՕՈՆ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 27.2 %:

- 2008թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հիմնադրվել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 3698 ընկերություն:

Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2006թ. ընթացքում երկրում ստեղծվել է ավելի քան 10 հազար ՓՄՁ, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 14.5 հազար նոր աշխատատեղ: 2006թ. ՓՄՁ նոր սուբյեկտների ստեղծման, ինչպես նաև ՓՄՁ գործող սուբյեկտների գործունեության ընդլայնման արդյունքում ստեղծված նոր աշխատատեղերի թիվը կազմել է 20.3 հազար, որից 50.2% կամ 10.2 հազարը` ՀՀ մարզերում, իսկ 49.8%-ը կամ 10.1 հազարը` Երևանում:

Աղյուսակ 18. ՀՀ-ում ՓՄՁ զարգացման ինդեքսի դինամիկան 2002-2007 թթ.

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

Տարի	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում %	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում, %	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ /ԱՄՆ դոլար/	ՓՄՁ զարգացման ինդեքս /ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով
2002	81.0	34.4	28.2	739.9	58.1
2003	83.0	36.5	83.3	1.0 873.4	82.0
2004	84.0	38.6	32.9	1104.4	117.8
2005	84.0	39.8	34.0	1513.0	171.9
2006	84.0	40.3	35.1	1996.0	237.2
2007	84.0	41.0	40.7	2744.0	398.6

«Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի 2007 թ. հաշվետվություն, էջ 8

Ըստ ՓՄՁ ՉԱԿ հիմնադրամի հրատարակված 2005-2006թթ. «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում» տեղեկագրի, գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է Աղյուսակ 19-ում:


Աղյուսակ 19. Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն՝ ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց (2007թ.):

Մարզ	ՓՄՁ սուբյեկտներ					
	ԱՉ		ԻԱ		Ընդամենը	
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
Երևան	26149	41	3568	53	61847	48
Ընդամենը մարզեր	37640	59	31113	47	68753	52
Արագածոտն	2553	4	1858	3	4411	3
Արարատ	4669	7	3117	5	7786	6
Արմավիր	5356	8	2929	4	8285	6
Գեղարքունիք	2916	5	3760	6	6677	5
Լոռի	5111	8	4792	7	9903	8
Կոտայք	5387	8	5100	8	10487	8
Շիրակ	3503	6	3239	5	6773	5
Սյունիք	3352	5	3270	5	6591	5
Վայոց Ձոր	1593	3	897	1	2490	2
Տավուշ	3201	5	2150	3	5350	4
Ընդամենը ՀՀ	63789	100.0	66811	100.0	130600	100.0

Աղբյուրը՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում» տեղեկագիր

ՓՄՁ բաշխումն ըստ մարզերի ներկայացված է 12-րդ գրաֆիկական պատկերում:

Գրաֆիկական պատկեր 12. ՓՄՁ սուբյեկտների բաշխումն ըստ մարզերի - %



Ըստ ներկայացվող տվյալների, ՓՄՁ զարգացման մակարդակով ՀՀ Արագածոտնի մարզը Հայաստանում գերազանցում է միայն Վայոց Ձորի մարզի ցուցանիշները:

Սակայն, համաձայն վիճակագրական տվյալների, Արագածոտնի մարզը բնակչության թվաքանակով գերազանցում է Վայոց Ձորի և Տավուշի մարզերին: Իսկ գյուղական բնակչության թվով՝ նաև Սյունիքի մարզին:

Այս ցուցանիշները վկայում են, որ ՓՄՁ զարգացման մակարդակով ՀՀ Արագածոտնի մարզը մեծապես զիջում է հանրապետական միջին ցուցանիշներին:

Յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով մարզում 2007 թ.-ին գործում էր 20.5 ՓՄՁ, այն դեպքում, երբ հանրապետության միջին ցուցանիշը 49.5 է: Այդ նույն ցուցանիշը մարզերում (չհաշված Երևանը) կազմում է 25.2: 2008 թ.-ին այն հասել է 22-ի: Սակայն նախկին հարաբերակցությունը պահպանվել է:

Վերջին տարիների ընթացքում մարզի ՓՄՁ ոլորտում զգալի առաջընթաց է նկատվում: Ավելացել է փոքր և միջին ձեռնարկությունների, իրավաբանական անձանց թիվը: 2006 թ. 3.0%-ի փոխարեն, 2008 թ.-ին, երկրում մարզի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը հասել է 3.4 %-ի:

Աղյուսակ 20. ՀՀ Արագածոտնի մարզում ՀՆԱ-ի արտադրության մեջ ձեռնարկությունների տեսակարար կշիռների մասին համեմատական տեղեկատվություն.

Մարզը	2003				2004			
	ՓՄՁ սուբյեկտներ %			խոշոր %	ՓՄՁ սուբյեկտներ%			խոշոր %
	գերփոքր	փոքր	միջին		գերփոքր	փոքր	միջին	
Երևան	12.8	14.0	14.0	64.0	13.8	13.2	11.7	62.6
Մարզեր	8.6	15.6	9.6	66.2	9.1	15.3	10.1	65.6
Արագածոտն	15.1	23.4	8.5	53.1	15.3	23.6	8.4	52.7
Գեղարքունիք	20.0	9.5	24.2	46.4	20.2	9.5	24.1	46.1
Վայոց Ձոր	20.6	20.6	7.5	51.3	21.1	20.7	7.5	50.7
Ընդամենը ՀՀ	11.0	15.7	9.9	63.5	12.3	14.6	11.7	61.4

«ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2003-2004 թ.թ. էջ 12

2006 թ. ՓՄՁ տեսակարար կշիռը ՀՀ Արագածոտնի մարզի ՀՆԱ-ում կազմել է շուրջ 53.7 %: Միայն 2006 թ. ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզում գրանցվել է 339, 2007 թ.-ին՝ 426՝ 2008-ին՝ 440 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 1800 նոր աշխատատեղ:

2011-2014 թթ. Արագածոտնի մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ հատվածի ռազմավարությունն իրագործելու և ոլորտի աշխատանքները համակարգելու նպատակով

մարզպետի կարգադրությամբ (2009 թ.ապրիլի 10-ի) ստեղծվեց ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ (ՓՄՁ ՉՄԽ), որը Մարզային զարգացման հանձնաժողովի ենթակայությամբ գործող մասնակցային միավոր է:

Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսված են իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ) գործունեության շրջանակներում:

Ստեղծվել է ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի վարկային երաշխիքների հայտերի հանձնախումբ, ընդունվել են դրա գործունեության ընթացակարգերը և մեխանիզմները: Միաժամանակ, ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվում՝ Աշտարակի (ք. Աշտարակ) և Թալինի (ք. Թալին) տարածաշրջաններում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի ներկայացուցչություններ ստեղծելու ուղղությամբ:

Նշված ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը ծրագրի ռազմավարական նպատակների իրականացման կարևոր նախադրյալ է. այն է՝ ՓՄՁ-ներից ստացվող աջակցման հայտերի վերաբերյալ որոշումներն ընդունում է ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդը:

1-ին գծապատկերում ներկայացված են մարզում ՓՄՁ աջակցման նոր ստեղծված ենթակառուցվածքների տեղը ՓՄՁ աջակցման գործընթացում:

Կնքված պայմանագրերի շրջանակում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ուղղություններն են.

1. *Ֆինանսական աջակցություն (սկսնակներին և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում),*
2. *գործարար ուսուցում, տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին,*
3. *շուկաների առաջնդման աջակցում:*

Նշված ուղղություններով մարզի ՓՄՁ-ներին ցուցաբերված աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմներով.

Գծապատկեր 1. Աջակցության մեխանիզմներն ըստ ՓՄՁ սուբյեկտների

Աջակցության ուղղություններ	Աջակցության մեխանիզմներն ըստ ՓՄՁ սուբյեկտների	
	գործող ՓՄՁ-ներ	սկսնակ գործարարներ
Ֆինանսական աջակցություն	Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70 %-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10 մլն. դրամ:	Մինչև 1 մլն. դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130%-ի չափով
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն, Ուսուցողական դասընթացներ	Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար
Տեխնիկական աջակցություն	Գովազդային վահանակների պատրաստում Պիտակների տպագրություն Գովազդ հեռուստատեսությամբ Ինտերնետային կայքի պատրաստում Մասնակցություն ցուցահանդեսներին	

ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործընկեր Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի, Անելիք բանկի, Արդշինինվեստբանկի, Յունիբանկի միջոցով:

2005-2008 թթ. մարզում իրականացվել է սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության 4 ծրագիր (Թալին, Աշտարակ, Ապարան): Ծրագրերի շրջանակներում աջակցություն է տրամադրվել ՀՀ Արագածոտնի մարզի 95 սկսնակ գործարարի:

2005-2008 թթ. մարզում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 14 սկսնակ գործարար: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը 100 %-ով երաշխավորում է սկսնակներին տրամադրվող վարկային պարտավորությունը (վարկի մայր գումարը և տոկոսները, ժամկետանց տոկոսները և տուգանքները):

2008 թ.-ին 467 ՓՄՁ սուբյեկտների խորհրդատվական աջակցություն է տրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով:

ՓՄՁ սուբյեկտներին նեղ մասնագիտական հմտություններ պահանջող տրամադրված տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունն իրականացվել է մրցույթով ընտրված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով: ՓՄՁ 2 սուբյեկտ ստացել են նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցություն, ֆինանսների կառավարման, հաշվապահական հաշվառման, հարկային և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն:

ՓՄՁ 60 սուբյեկտ ուսուցողական աջակցություն է ստացել՝ մասնակցելով «Ֆինանսական հաշվետվությունների կազմում», «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ», «ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ» թեմաներով դասընթացներին:

Շուկաներ առաջմղման աջակցության ծրագրի շրջանակներում մարզի ՓՄՁ 25 սուբյեկտ ստացել է գովազդային վահանակների պատրաստման, պիտակների տպագրման, ինտերնետային կայքի պատրաստման, ցուցահանդեսի մասնակցության և այլ աջակցություն:

Այսպիսով, ՄՁԾ ՓՄՁ աջակցության բաղադրիչն ամբողջությամբ իրագործվում է, և մեկ տարում ծրագիրը ներառել է ընդհանուր առմամբ 940 շահառու:

2008 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի Արագածոտնի մասնաճյուղը ՓՄՁ պետական աջակցության ծրագրով նախատեսված բոլոր ուղղություններով բավարարել է 874 աջակցության հայտ:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 27.8 %, ծառայությունների ոլորտում՝ 15.5 %, առևտրի ոլորտում՝ 54.9 %, շինարարության ոլորտում՝ 3.6 %:

2007 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզում տրամադրվել է 18.6 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ 3 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 29.3 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 15 սկսնակ գործարարի:

Ծրագրի իրականացման արդյունքում առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 3 սկսնակ գործարարի տրամադրվել է 1.7 մլն ՀՀ դրամի վարկ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի երաշխավորությունը կազմել է 2 մլն ՀՀ դրամ:

Սակայն, չնայած կատարված դրական աշխատանքներին, ՓՄՁ-ներին տրամադրված աջակցության ոլորտում մարզը հանրապետությունում զբաղեցնում է վերջին տեղը (Աղյուսակ 21):

Աղյուսակ 21. 2007 թ. տրամադրված վարկային երաշխավորությունների բաշխումն ըստ մարզերի (%)

Տավուշ	8.5
Վայոց Ձոր	8.5
Շիրակ	11.7
Կոտայք	5.3
Լոռի	18.1
Գեղարքունիք	18.1
Արմավիր	12.8
Արարատ	5.3
Արագածոտն	3.2


«ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2003-2004 թթ. էջ 15

Այս ցուցանիշն իր ազդեցությունն է թողել մարզի ՓՄՁ զարգացման վրա: Համապատասխան կազմակերպություններ են ներկայացվող բիզնես-ծրագրեր, բոլոր անհրաժեշտ հաշվարկները: Սակայն վիճակը չի փոխվել:

Նման դրությունը խոսում է այն մասին, ար մարզի ՓՄՁ համակարգը պետական աջակցության բավականին մեծ խնդիր ունի:

Մարզի ՓՄՁ աջակցության վիճակն առավել տեսանելի է ներկայացվում 13-րդ գրաֆիկական պատկերում:

Գրաֆիկական պատկեր 13. ՀՀ-ում Վարկային երաշխավորություններն ըստ մարզերի 2007 թ.



Վարկային երաշխավորությունների տրամադրման պատկերն առավել ամբողջական են բնութագրում 22 –րդ աղյուսակում բերված տվյալները:

Աղյուսակ 22. Տրամադրված երաշխավորություններն ըստ մարզերի

	Մարզ	Քանակ	Վարկ	Վարկային պարտավորություն	Երաշխավորություն	Ապահովվածության %	Վարկի տոկոս (միջին)	Միջին ժամկետայնություն (ամիս)
1	Արագածոտն	3	29250000	35951497	18600000	56.91	16	32
2	Արարատ	5	41000000	50470915	22772500	47.3	15	33.6
3	Արմավիր	12	92200000	113735659	42987500	45.8	16	32.6
4	Գեղարքունիք	17	166300000	207444175	77158125	39.3	15	35.4
5	Լոռի	17	124690000	156609216	72636292	49.7	17	31.5
6	Կոտայք	5	33000000	41680784	17500000	39.84	16	36
7	Շիրակ	11	65050000	82005404	35900000	50.05	16	35.2
8	Սյունիք	8	45300000	57597536	24836250	38.8	17	35.3
9	Վայոց Ձոր	8	61500000	77858290	32283750	40.5	17	34.5
10	Տավուշ	8	64400000	81897695	31006757	47.0	17	34.5
	Ընդամենը	94	722690000	905251171	375681174	45	16	34

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 25.5 %-ը գործում են Երևանում, իսկ 74.5 %-ը՝ ՀՀ մարզերում:

Իրավիճակը փոքր-ինչ շտկվել է 2009 թ-ին: Աջակցություն ստացած մարզերի շարքում Արագածոտնի մարզը երրորդն է՝ Երևանից, Շիրակից և Կոտայքից հետո:

Գրաֆիկական պատկեր 14. Աջակցություն ստացած ՓՄՁ-ների բաշխվածությունն ըստ հանրապետության մարզերի



Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների, հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 35 %, ծառայությունների ոլորտում՝ 29 %, առևտրի ոլորտում՝ 31 %, շինարարության ոլորտում՝ 5 %: ՓՄՁ սուբյեկտներին վարկային

երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 01.08.09 թ. դրությամբ տրամադրվել է 212.2 մլն ՀՀ դրամի երաշխավորություն: ՓՄՁ 39 սուբյեկտ ստացել է 364.1 մլն. դրամի վակային փաթեթ: Աջակցություն ստացած ՓՄՁ 39 սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է 445.9 մլն. դրամ:

Ապրանքների, ծառայությունների շուկաներ առաջնդման ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ մարզերի հետևյալն է. Երևանում՝ 10, Արագածոտնում՝ 30, Արարատում՝ 18, Արմավիրում՝ 12, Գեղարքունիքում՝ 13, Լոռիում՝ 34, Կոտայքում՝ 28, Շիրակում՝ 8, Սյունիքում՝ 30, Վայոց Ձորում՝ 13, Տավուշում՝ 40:

Խորհրդատվական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 55, Արարատի մարզում՝ 14, Արմավիրի մարզում՝ 9, Գեղարքունիքի մարզում՝ 59, Լոռու մարզում՝ 69, Կոտայքի մարզում՝ 63, Շիրակի մարզում՝ 29, Սյունիքի մարզում՝ 88, Վայոց Ձորի մարզում՝ 17, Տավուշի մարզում՝ 122, Երևանում՝ 10:

Ներկայացված ցուցանիշները վկայում են, որ ՓՄՁ-ների քանակով Արագածոտնի մարզը տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ստացած հանրապետությունում զբաղեցնում է միջին տեղերից մեկը և այդ ցուցանիշով գերազանցում է Արարատի, Արմավիրի, Շիրակի, Վայոց Ձորի մարզերին և Երևանին:

ՓՄՁ կարևոր ոլորտներից մեկը մանրածախ ապրանքաշրջանառությունն է, ծառայությունները և սպասարկումները: Այդ ոլորտները 2008 թ.-ին բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Աղյուսակ 23. Մանրածախ առևտրի համեմատական ակտիվությունն ըստ ՀՀ մարզերի 2008թ.

Մարզեր	Մշտական բնակչության թվաքանակը (միջինը), հազ. մարդ	Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը, դրամ	Մեկ բնակչին ընկնող մանրա- ծախ առևտրի շրջանառությունը ՀՀ միջինի նկատմամբ, %
ք.Երևան	1109.6	894902.2	806508.8	246.2
Արագածոտն	140.7	6104.4	43385.9	13.2
Արարատ	277.2	15857.7	57206.7	17.5
Արմավիր	282.2	27587.8	97759.7	29.8
Գեղարքունիք	240.3	10943.8	45542.2	13.9
Լոռի	281.9	21083.7	74791.4	22.8
Կոտայք	278.5	28729.2	103156.9	31.5
Շիրակ	281.0	25435.1	90516.4	27.6
Սյունիք	152.8	10046.3	65748.0	20.1
Վայոց ձոր	55.8	6296.9	112847.7	34.4
Տավուշ	134.2	12584.1	93771.2	28.6
Ընդամենը ՀՀ	3234.2	1059571.2	327614.6	x

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ-ին: Տեղեկատվական զեկույց 2009 թ.

Առևտրաշրջանառության ակտիվության մասին առավել հստակ պատկերացում է տալիս ներկայացվող գրաֆիկական պատկերը:


Գրաֆիկական պատկեր 15. ՀՀ մարզերի առևտրաշրջանառության ակտիվությունը (%)

Ինչպես վկայում են աղյուսակի տվյալները, մեկ բնակչին ընկնող մանրածախ առևտրի շրջանառությամբ մարզը հանրապետությունում վերջին տեղում է: Սա ևս մարզում աղքատությունը գնահատող ցուցանիշներից է:

Սակայն այն ամողջությամբ չի արտահայտում իրական պատկերը:

Աշտարակի տարածաշրջանի բնակավայրերն իրենց առևտուրը հիմնականում իրականացնում են մայրաքաղաքում, և նրանց բերած շրջանառությունը հաշվարկվում է Երևանի հաշվին:

Սպասարկումների բնագավառում պատկերը մի փոքր այլ է: Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալով մարզը գերազանցում է միայն Արարատի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերին:




Աղյուսակ 24. Ծառայությունների ծավալի համեմատական ակտիվությունն ըստ ՀՀ մարզերի, 2008թ.

Մարզեր	Ծառայությունների ծավալը, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը, դրամ	Մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը ՀՀ միջինի նկատմամբ, %
Երևան	669596.9	603457.9	266.8
Արագածոտն	2838.4	20173.4	8.9
Արարատ	5474.4	19748.9	8.7
Արմավիր	5480.7	19421.3	8.6
Գեղարքունիք	4610.3	19185.6	8.5
Լոռի	9398.3	33339.1	14.7
Կոտայք	11024.1	39583.8	17.5
Շիրակ	13273.4	47236.3	20.9
Սյունիք	4947.2	32377.0	14.3
Վայոց ձոր	1853.9	33224.0	14.7
Տավուշ	3159.4	23542.5	10.4
Ընդամենը ՀՀ	731657.0	226225.0	x

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ-ին: Տեղեկատվական գեկույց 2009 թ.

Գրաֆիկական պատկեր 16. ՀՀ մարզերի ծառայությունների ակտիվությունը (%)



Ծառայությունների ընդհանուր ծավալի ցուցանիշով ևս Արագածոտնի մարզը հանրապետությունում հետնապահների շարքում է:

Դա բացատրվում է այն բանով, որ մարզի, հատկապես՝ Աշտարակի, տարածաշրջանի համայնքների մեծ մասը դարձյալ օգտվում է Երևանի հիմնարկների ծառայություններից: Այդպիսի վիճակ է նաև Արմավիրի և Արարատի մարզերում:

4.3. ՄԱՄՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարզի մասնավոր հատվածի զարգացման հայեցակարգը ներառում է երկու բաղադրիչ: Դրանք են.

1. Զարգացման առաջնահերթություններ.
2. Զարգացման գերակայություններ:

4.3.1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացման առաջնահերթությունները որոշելիս որպես մեկնակետ ընդունվել է այն իրողությունը, որ մարզում կան արտադրական ձեռնարկություններ, որոնք կարող են, որոշակի, համեմատաբար քիչ ներդրումների և լուրջ շուկայավարության պայմաններում, դառնալ լիակատար մրցունակ և արդյունավետ տնտեսվարող սուբյեկտներ, ապահովել մարդկանց զբաղվածությունը և բարելավել նրանց սոցիալական պայմանները:

Առաջին հերթին դրանք տեղական հումքով աշխատող այն ձեռնարկություններն են, որոնք սեփական տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններ են մշակել և իրականացնում: Դրանց վերագործարկման ծախսերը համեմատաբար փոքր են և արագ փոխհատուցվող:

ա/ գերբարձր հաճախականության տիրություն մշակվող ռադիոէլեկտրոնային կապի և հաղորդակցության միջոցների արտադրություն և իրացում.

ՀՀ ԳԱԱ Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում մշակված գերբարձր հաճախականությունների կիրառմամբ ներքին կապի համակարգերն իրենց տեխնիկական և տնտեսական ցուցանիշներով լիովին համապատասխանում են համաշխարհային ստանդարտներին: Դրանց նմուշներն արդեն մի քանի տարի է, փորձաշրջան են անցնում արտերկրում:

բ/ Ֆիզիկայի դպրոցական փորձասարքերի արտադրության կազմակերպում.

«Միկրոմ» ՍՊԸ-ն արտադրում է ֆիզիկայի փորձասարքեր, որոնք չեն զիջում արտասահմանյան նմանատիպ արտադրանքներին և բավարարում են իրենց նկատմամբ ներկայացվող բոլոր պահանջները:

Յուրաքանչյուր փորձասարքի հավաքածուի միջին գինը մոտ 900.0 հազար ՀՀ դրամ է: Ապահովում է 10-12 % շահութաբերություն:

Ձեռնարկության արտադրամասում հնարավոր է տարեկան արտադրել մինչև 500 հավաքածու: Տարեկան շահույթը կկազմի 8-10 մլն ՀՀ դրամ:

Ճյուղում ներդրումներ չեն կատարվել: Կարիք կա 150.0 մլն ՀՀ դրամի ներդրման: Ներդրումները հետ են գնվելու չորս տարում: Աշխատանքի կտեղավորվի մոտ 100 մարդ:

Արտադրանքը կիրացվի մեր և այլ երկրներում:

գ/ Անկյան թվային փոխակերպիչների արտադրություն.

Հայաստանի ԳԱ Ռ-ադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի Հատուկ կոնստրուկտորական բյուրոյում արտադրվում են անկյան փոխակերպիչներ, որոնք մեծ պահանջարկ ունենին նախկին ԽՍՀՄ –ում և մինչև հիմա այլ արտադրատեսակներով չեն փոխարինվել:

Ճյուղում ներդրումներ չեն կատարվել:

ՀՀ 270-300 մլն դրամի ներդրման դեպքում տարեկան արտադրությունը կարելի է հասցնել 1400.0 միլիոն դրամի՝ 12-15 % շահութաբերության միջին մակարդակով: Կբացվի 150-160 նոր աշխատատեղ: Ներդրումները հետ են գնվելու 4-4.5 տարում:

դ/ Հիդրոպոմպերի և հիդրոտուրբինների արտադրություն

Նույն հիմնարկությունում մշակված են հիդրոպոմպերի և հիդրոտուրբինային համակարգերի արտադրության նոր տեխնոլոգիաներ:

Արտադրանքի օգտակար գործողության գործակիցը 5-6 % -ով ավելի բարձր է, քան եղածներինը:

Աշտարակում տեղադրված է այդպիսի մի հիդրոպոմպ, որն, առանց էլեկտրաէներգիայի օգտագործման ջուր է մատակարարում քաղաքի Նարեկ թաղամասին:

Բյուրոյի արտադրամասում տարեկան կարելի է արտադրել մինչև 55-60 հիդրոպոմպ և հիդրոտուրբին: Արտադրություններ հնարավոր է կազմակերպել նաև այլ ձեռնարկություններում: Կբացվի մինչև 300 աշխատատեղ:

Դրանց հիման վրա կարելի է կազմակերպել նաև փոքր ՀԷԿ-երի արտադրություններ:

Անհրաժեշտ է կատարել 152-155 մլն ՀՀ դրամի ներդրում, որը հետ է գնվելու 3-4 տարում:

ե/ Թանկարժեք քարերի մշակման և ոսկերչական իրերի արտադրության ծավալների ընդլայնում.

Մելիքայուղի աղամանդի գործարանն զբաղվում է բնական ալմաստի վերամշակմամբ և թողարկում է բարձրորակ արտադրանք: Գործարանը հաճախակի է պարապուրդներ տալիս հումքի բացակայության պատճառով: Ձեռնարկությունն ամբողջ հզորությամբ աշխատեցնելու դեպքում կապահովվի 300 մարդու զբաղվածություն:

Այն հնարավորություն ունի մարզում լիարժեք փոխարինել «Դայմոթեք» ընկերությանը, որով կլուծվի հիշյալ ձեռնարկության՝ հետագայում վերագործարկման խնդիրը:

Երևանի ոսկերչական գործարանի մասնաճյուղը գործում է Թալինում: Այն նույնպես բարձրորակ արտադրանք է թողարկում, սպահովված է անհրաժեշտ սարքավորումներով և մասնագետ կադրերով: Գործարանի հաճախակի պարապուրդները հումքի անկանոն մատակարարման և ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանք են: Անհրաժեշտ վարկավորման և հումքով ապահովվածության պայմաններում գործարանում լրացուցիչ կբացվի ևս 250 աշխատատեղ:

զ/ Հայաստանի քարերից ֆենոլաաստի /մամլանյութ/, գունանյութերի /պիգմենտ/ և ներկերի արտադրության ընդլայնում.

Մարզում մշակված տեխնոլոգիայով ստացված արտադրանքն աչքի է ընկնում բարձր որակով և, որոշ առումներով, գերազանցում է արտասահմանյան նմանատիպ արտադրանքներին: Գները շուկայականի համեմատ էժան են 30-40 %-ով:

Հումքի 80 %-ը քարն է, որի պաշարներն անսպառ են:

Մամլանյութերի և ներկերի արտադրության Աշտարակի ձեռնարկությունը հնարավորություն ունի տարեկան թողարկել մինչև 2000 տոննա արտադրանք: Մասնաճյուղեր կարելի է բացել նաև մարզի մյուս բնակավայրերում և երկրի այլ մարզերում:

30 մլն ՀՀ դրամի ներդրման դեպքում տարեկան կարելի է արտադրել մինչև 5000 տոննա արտադրանք, կբացվի 300-350 նոր աշխատատեղ:

Շահութաբերության մակարդակը կկազմի 12-15 %:

ե/ Թեթևարդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկում.

Մարզում կա տրիկոտաժի արտադրության 32 ձեռնարկություն և կոշիկի արտադրության երկու ֆաբրիկա: Դրանցից այսօրվա դրությամբ աշխատում է միայն Ապարանի տրիկոտաժի ֆաբրիկան, որը հաճախակի պարապուրդներ է տալիս պատվերների բացակայության հետևանքով: Սակայն ինչպես դրա, այնպես էլ մյուս ձեռնարկությունների տեխնոլոգիան հնացած է: Որոշ ձեռնարկություններում մեխանիկական պարկ ընդհանրապես չկա:

Այսօրվա դրությամբ այդ ձեռնարկությունների վերագործարկման համար մի շարք պայմաններ են անհրաժեշտ:

Այս ձեռնարկը նպատակահարմար է այնքանով, որ կապահովվի մինչև 1200 մարդու զբաղվածություն:

ը/ Գորգարտադրության ընդարձակում.

Մարզում տարեկան արտադրվում է 350-400 տոննա բուրդ, որի իրացումը բարդ խնդիր է:

Գորգագործական արտադրամաս է գործում միայն Ապարանում, որի արտադրողականությունը չափազանց սահմանափակ է:

Եղած հումքով այժմ կարելի է արտադրել 10000 գորգ: Գորգարտադրությունը տարեկան կարելի է հասցնել 3500-4000 հատի:

Մեծ կապիտալ ներդրումների կարիք չկա: Գորգագործությունը կարելի է կազմակերպել տնայնագործական եղանակով՝ ինչպես Ապարանի, այնպես էլ, մյուս տարածաշրջաններում:

Անհրաժեշտ է լուծել արտադրանքի իրացման խնդիրը: Այդ դեպքում աշխատանքի մեջ կներգրավվի 2000-2500 ընտանիք:

թ/ Պեռլիտի արդյունահանում և վերամշակում.

Մարզի Արագած գյուղի հարևանությամբ կան պեռլիտի հանքավայրերի մեծ պաշարներ:

Պեռլիտն իր ֆիզիկաքիմիական հատկանիշներով անփոխարինելի շինանյութ է: Ջերմային մշակման ենթարկելիս այն փքվում է և մի քանի անգամ ավելացնում է ծավալը: Պեռլիտի վերամշակումից ստացված հումքն օգտագործվում է շինարարական թեթև կոնստրուկցիաների պատրաստման համար:

Պեռլիտից ստացված պանելները, միջնորմային սալերը թեթև լինելով հանդերձ, սովորական շինանյութերից ստացված կոնստրուկցիաների համեմատ բավականին էժան են: Դրանք մեծ պահանջարկ ունեն մեր հանրապետությունում և արտերկրում:

Այժմ մարզում գործում է պեռլիտի արտադրության 3 ձեռնարկություն, սակայն դրանք ամբողջ պահանջարկը բավարարել չեն կարող: Ձեռնարկություններից մեկի սեփականատերը ԱՄՆ-ի քաղաքացի է, որը նույնպես դադարեցրել է արտադրությունը:

Արագածում պեռլիտի գործարան հիմնելու համար պահանջվում է կատարել 300 000 ԱՄՆ դոլարի ներդրում:

Այս պայմաններում տարեկան կարտադրվի 100 մլն ՀՀ դրամի արտադրանք: Շահութաբերության մակարդակը կկազմի 15-20 %: Կապիտալ ներդրումները հետ են գնվելու 3-4 տարում, կբացվի մինչև 800 աշխատատեղ:

ժ/ Փոքր ՀԷԿ -երի կառուցում և շահագործում.

Մարզում կան մշտական հոսք ունեցող 20-ից ավելի ջրագծեր, որոնց վրա, աշխատանքային և նյութադրամական համեմատաբար քիչ ծախսերով կարելի է ստեղծել փոքր հզորության ՀԷԿ-եր, որոնք հնարավորություն կունենան լուծելու տեղական նշանակության էլեկտրամատակարարման խնդիրներ:

Մարզում մշակված են փոքր ՀԷԿ-երի կառուցման նախագծեր, կան դրանց հանգույցների արտադրությամբ զբաղվող կառույցներ: Դրանց աշխատանքը ենթարկվել է լուրջ գիտական և փորձարարական փորձաքննության և ստացել են բարձր գնահատականներ:

Մարզում հնարավոր է կառուցել 50-ից ավելի նման ՀԷԿ-եր, որոնք կարող են էլեկտրաէներգիա մատակարարել ինչպես բնակավայրերի առանձին թաղամասերի, այնպես էլ արտադրական օբյեկտների:

Պահանջվում է 150.0 մլն դրամի ներդրում: Դրանք հետ են գնվելու 4 տարում: Կբացվի 150-200 աշխատատեղ:

ի/ Գյուղատնտեսական մթերքների վերամշակում.

1. ՄՐԳԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Մարզում տարեկան արտադրվում է 40-45 հազար տոննա պտուղ: Դրանից վերամշակվում է ընդամենը 10-12%-ը: 2008 թ.-ին մարզում արտադրվել է ընդամենը 233400 պայմանական տուփ պահածո:

Պահածոների արտադրությունը մարզում կարելի է հասցնել մինչև 10-15 միլիոն պայմանական տուփի: Այս արտադրության մեջ միջին տարեկան շահութաբերությունը հասնում է մինչև 15-20%-ի, տարեկան շահույթը կկազմի 80-100 միլիոն դրամ: Լրացուցիչ կբացվի 800-1000 աշխատատեղ:

Մարզում այդ նպատակին հարմար արտադրական տարածքներ կան, որտեղ կպահանջվի 90-100 մլն. դրամի ներդրում: Ներդրումները հետ են գնվելու 3-4 տարում:

1/ Ջերմոցային տնտեսության կազմակերպում.

Մարզում ջերմոցային տնտեսության վարման ուղղությամբ մեծ փորձ կա: Տարիներ շարունակ ջերմոցային տնտեսությունը տվել է ձմեռվա ժամանակաշրջանի գյուղատնտեսական արտադրանքի մինչև 40 %-ը: Ջերմոցներում արտադրվել են բանջարեղեն և մերձարևադարձային մշակաբույսեր: Մարզի գործարարների փորձերը ցույց են տվել, որ ոլորտը կարելի է ընդարձակել: Հնարավորություն կա ոչ միայն ձեռնմուխ լինել ավանդական մշակաբույսերի արդյունաբերական արտադրությանը, այլև մշակել և արտադրել ոչ ավանդական մշակաբույսեր:

Ներկայումս մարզում գործում են 10-ից ավելի ջերմոցային տնտեսություններ: Սակայն դրանց թիվը հնարավոր է բազմապատկել:

Կարիք կա 200.0 մլն դրամի ներդրման: Աշխատանքով կապահովվի 1200 մարդ: Բանջարեղենի և մյուս մշակաբույսերի արտադրությունը կարելի է եռապատկել:

2. ՉՐԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Այժմ մարզում չիր արտադրվում է միայն տնայնագործական եղանակով: Կա նաև մի քանի արևային ջերմոց:

Տարեկան կարելի է արտադրել մինչև 1-2 հազար տոննա ծիրանի, դեղձի, խնձորի, սալորի տանձի չիր: Չրի յուրաքանչյուր կիլոգրամը շուկայում վաճառվում է 500-600 դրամով: Այդ դեպքում տարեկան համախառն արտադրանքը կհասնի 0.5-1 միլիարդ դրամի կամ 1.7-2 միլիոն ԱՄՆ դոլարի: Արտադրության գործընթացին կմասնակցի մինչև 2000 ընտանիք: 10-15 % շահութաբերության մակարդակ ապահովելու դեպքում կստացվի 60-80 մլն. դրամի զուտ եկամուտ:

Անհրաժեշտ է կատարել 120-130 մլն. ՀՀ դրամի ներդրում: Դրանք հետ են գնվելու ներդրման 2-րդ տարում:

3. ՄՍԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ - Մարզի շուրջ 39000 գյուղացիական տնտեսություններում պահվում է 48.8 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 66.2 հազար գլուխ ոչխար և այծ, 6000 գլուխ խոզ: Տարեկան արտադրվում է 3000-4000 տոննա միս: Այն հիմնականում վաճառվում է նախկին շրջկենտրոնների և Երևանի շուկաներում: Մարզում գործում է մսի վերամշակման երկու ձեռնարկություն, որոնք, ֆինանսական սահմանափակ հնարավորությունների պայմաններում անկարող են իրականացնել աշխատանքի ամբողջ ծավալը:

Հնարավորություն կա միայն մսի վերամշակումից ոլորտի համախառն արտադրանքի հավելվածը հասցնել մինչև 200-220 միլիոն դրամի, անասունների գլխաքանակն ավելացնել 10-15 հազարով: Գյուղական յուրաքանչյուր ընտանիքի տարեկան եկամուտները կաճեն 350-400 հազար դրամով, կբացվի 200-220 նոր աշխատատեղ՝ ամսական 150 հազար դրամ միջին աշխատավարձով:

4. ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Ներկայումս մարզում տարեկան արտադրվող 65-70 տոննայի փոխարեն հնարավորություն կա արտադրելու 300-350 տոննա տարբեր տեսակի պանիրներ: Թալինում խորհրդային տարիներին արտադրվել են բարձրորակ ռոքֆոր, հոլանդական, ոչխարի և այլ պանիրներ, որոնք մեծ պահանջարկ են ունեցել Խորհրդային Միությունում: 10-15 մլն. ՀՀ դրամի ներդրման դեպքում կսկսվի տեսակավոր պանրի արտադրությունը, չանախ պանրի արտադրությունը կկրկնապատկվի: Լրացուցիչ կստեղծվի 150-200 աշխատատեղ՝ ամսական 130-140 հազար դրամ աշխատավարձով:

Ներդրումները հետ կգնվեն 3 տարում, շահութաբերության մակարդակը կկազմի 10-12 %:
Կզարգանա անասնաբուծությունը:

5. ԳԻՆՈՒ ԵՎ ԳԻՆԵՀՈՒՄԲԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մարզում գործում են Օշականի և Արագածի գինու գործարանները: Արտենիի գործարանը սնանկ է հայտարարված:

Օշականի գինու գործարանում թողարկվում են երկրում եզակի «Խերես» տիպի գինիներ, մի քանի ձեռնարկություններ թողարկում են շամպայններ, գինիներ և օղիներ: Սակայն ֆինանսական միջոցների անբավարարության և շուկայավարության բացակայության պայմաններում ձեռնարկությունը ներկայումս գործում է հնարավորությունների 10-15 տոկոսով: Գինու արտադրության ծավալների ընդլայնումը զարկ կտա խաղողագործության զարգացմանը:

(Բուն գյուղատնտեսության բնագավառի զարգացման առաջնահերթությունները և գերակայությունները ներկայացված են մարզի ագրոարդյունաբերական համալիրի զարգացման ծրագրում):

Կան նաև այլ արտադրություններ և կարողություններ, որոնց ծավալները համեմատաբար փոքր են: Դրանք փոքր, հիմնականում՝ 3-10 աշխատող ունեցող ձեռնարկություններ են, որոնց արտադրանքը մարզի տնտեսության համար մեծ նշանակություն չունի: Այնուամենայնիվ, դրանց թիվը առաջիկայում պետք է ավելանա: Կարևոր խնդիր է նաև այդ ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավումը: Դրանք ունակ են արագորեն վերակառուցել իրենց արտադրությունները, առավել ճկուն են և կարող են ապահովել մարզի բնակչության մինչև 5-6 % զբաղվածություն:

Հիմնականում վերը թվարկածներն են մարզի արդյունաբերության առաջնահերթությունները: Առաջնահերթությունները որոշելիս, նկատի է առնվել որ այդ ձեռնարկություններն արդեն կայացած են, զոյություն ունեցող արտադրական և տնտեսական բազայի վրա, որոշակի տնտեսական գործունեություն են ծավալում, շուկայում ունեն իրենց տեղը, մի մասն աշխատում է տեղական հումքով, մյուսների հումքն ապահովվում է պետական ծրագրերով, կան կազմավորված ենթակառուցվածքներ: Դրանք ունեն քիչ թե շատ հաստատուն աշխատակազմ ու ֆինանսական միջոցներ և կարողանում են ինքնուրույն գործունեություն ծավալել:

Միաժամանակ, շենքերի, շինությունների ու կառույցների ձեռքբերման համար լրացուցիչ ներդրումների կարիք չկա, քանի որ բոլորն էլ ապահովված են դրանցով: Կա հիմնական միջոցների նորացման, նոր տեխնոլոգիայի ներդրման խնդիր, որը կարելի է լուծել ձեռնառու պայմաններով վարկավորման կամ համատեղ ձեռնարկությունների կազմակերպման միջոցով:

Մարզի արդյունաբերության առաջնահերթությունների որոշման համար կարևոր է համարվել այն հանգամանքը, որ կատարվող կապիտալ ներդրումներն անմիջապես, գործունեության առաջին իսկ տարում կսկսեն դրամական հատույց ապահովել: Համեմատաբար քիչ են կատարվող ներդրումների ծավալները և դրանց հետզման ժամկետները՝ համեմատաբար կարճ: Մեծ չէ նաև ռիսկի գործոնը:

Մոտավոր հաշվումներով մարզում առաջիկա 5 տարում 1.5 մլրդ. ՀՀ դրամի ներդրումները արդեն գործող ձեռնարկություններում աշխատանքով լրացուցիչ կապահովեն 3500-4000 մարդու՝ ամսական 250-300 հազար դրամ միջին աշխատավարձով: Կապիտալ ներդրումները որոշ արտադրություններում հետ են գնվելու անմիջապես առաջին տարում, մյուսներում՝ 2-5 տարում, տարեկան միջին շահութաբերությունը կկազմի 18-20 %: Հիմք կստեղծվի մարզի արդյունաբերության նոր որակական կողմնորոշումների համար, էականորեն կբարձրանա մարզի ներդրումը երկրի տնտեսության մեջ, որոշակիորեն կբուլանա սոցիալական լարվածությունը, կավելանան տեղական և պետական բյուջեների մուտքերը, կիրականացվեն խոշորածավալ բարեգործություններ:

Ահա հիմնականում սրանք են մարզի արդյունաբերության բնագավառին ներկայացվող առաջնահերթ խնդիրները, այլ խոսքով՝ կարճաժամկետ ծրագիրը: Ծրագրի իրականացման օպտիմալ ժամկետն ընդունվում է 4 տարին՝ 2011-2014 թվականները:

Մարզի արդյունաբերության զարգացման կարճաժամկետ ծրագիրը հող է նախապատրաստելու մարզում ճյուղի գերակայությունների ծրագրի իրականացման համար:

4.3.2. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011-2014 Թ.Թ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը վկայում է, որ շարունակելով ցուցաբերվող աջակցությունը առանձին ՓՄՁ-ների մակարդակով, մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը:

1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում:

Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումների խրախուսման համար:

2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման հանրապետական և մարզային հայեցակարգերի ընդունում:

Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի դրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում:

Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և, հատկապես, մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները:

Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ օտարերկրյա ներդրողներ: Սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրականացվում՝ տեղերում գործուն ծրագրի, պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պատճառով: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրագեկման միջոցառումներ տեղացի արտագնա և օտարերկրյա ներդրողների համար:

Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ՉՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

Հայաստանի տնտեսության համար գերակա ուղղություններ են համարվում բարձր տեխնոլոգիական, նորարարական ներդրումներով, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ օգտագործող ձեռնարկությունները: Սակայն, փոքր ձեռնարկությունների համար առանձին, հիմնականում իրենց մեծ ծախսատարության պատճառով, այդպիսի գործունեության ծավալումը գրեթե անմատչելի է: Ձեռնարկության զարգացման համար այս հույժ կարևոր հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է ստեղծել բիզնես ինկուբատորներ, տեխնոպարկեր, արդյունաբերական գոտիներ: Դրանք կոլեկտիվ հնարավորություններ են ընձեռում այն դեպքերում, երբ առանձին ձեռնարկությունների համար այս կամ այն ծառայությունը մատչելի չէ:

Չափազանց կարևոր է մասնավոր ձեռնարկությունների և պետության համագործակցության կազմակերպումը: Մինչև այսօր պետությունը ձեռնպահ է մնացել մասնավոր

հատվածի և դրանց արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների նկատմամբ: Պետության երաշխավորած և ուղորդող հայեցակարգի բացակայության պայմաններում ոլորտը թողնվել է ինքնահոսի, որը լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ է առաջացրել:

Այդ բացը լրացնելու համար առաջարկվում է գործադրել պետության և մասնավորի գործունեության (ՊԳՄ) համակարգ:

ՊԳՄ-ի խնդիրն է ենթակառուցվածքների ներմուծում մասնավոր հատված՝ որպես պայմանագրի կողմ ու կարգավորող մարմին: Այն ակնկալվող արդյունքի նկատմամբ պահանջներ է առաջադրում և հանդես է գալիս որպես իր համագործակցության մասի պատասխանատու: Մասնավորին պետությունն առաջադրում է ենթակառուցվածքների քանակը, որակը և հասանելիությունը ապահովելու պահանջներ և, որպես պայմանագրի կողմ, կատարում է ներդրումային և այլ որոշումների ընդունման պարտավորություն:

ՊԳՄ-ն հնարավորություն է տալիս նաև կիսել ռիսկերը մասնավորի հետ և ներդրումները նպատակաուղղել դեպի անհրաժեշտ ոլորտ:

Մինչև այժմ անտեսված է եղել նաև պետություն-մասնավոր համատեղ ձեռնարկությունների կազմակերպման, կողմերի միջև առևտրատնտեսական համագործակցության, փոխադարձ պատասխանատվության և ապահովագրության համակարգը: Այնինչ, սա լուրջ հնարավորություններ է ընձեռում երկրին՝ առավել կարևոր հիմնախնդիրների լուծման համար:

4.3.3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի ամբողջ տնտեսության զարգացման հայեցակարգի հիմքում այն գաղափարն է, որ ինչպես երկիրը, այնպես էլ մարզը պետք է ունենան քիչ էներգատար, քիչ նյութատար, փոքրածավալ, շատ աշխատատար և գիտատար, հնարավոր առավել շատ տեղական հումքով գործող արդյունաբերություն, որը կթողարկի համաշխարհային շուկայում բարձր պահանջարկ և գին ունեցող արտադրանք:

Դրա համար մարզն ունի մեծ հնարավորություններ: Առաջին հերթին դա գիտական հսկայական ներուժն է:

Համաձայն ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների, ՀՀ Արագածոտնի մարզում գիտական աշխատանքների ծավալը 2008 թ-ին կազմել է 398.3 միլիոն դրամ: Դա հանրապետությունում գիտական հիմնարկներ ունեցող մարզերի շարքում ամենաբարձր ցուցանիշն է: Դրանով մարզը հանրապետությունում զիջում է միայն Երևանին (7667.3 մլն դրամ): Ընդ որում, Արագածոտնի գիտական հիմնարկներում 96.8 միլիոն դրամի հետազոտությունները կատարվել են տարբեր պատվիրատուների, օտարերկրյա ներդրումների և այլ միջոցներով: Համեմատության համար նշենք, որ ոչ պետական միջոցներով աշխատանքներ են կատարվել միայն Կոտայքի մարզի գիտական հիմնարկներում՝ 5.4 միլիոն դրամի չափով:

Աշխատողների թվով նույնպես Արագածոտնի մարզը հանրապետությունում առաջատարն է՝ Երևանից հետո: Մարզի գիտահետազոտական ինստիտուտներում աշխատում է 373 գիտնական, գրեթե այնքան, որքան մնացած մարզերում միասին վերցրած: Նրանցից 29-ը գիտության դոկտորներ են, 93-ը՝ գիտությունների թեկնածուներ:

Հենց դա էլ թելադրում է մարզի տնտեսության զարգացման գերակայությունը: Մարզի տարածքում գործող գիտական հիմնարկները ոչ միայն հիմնարար գիտության մեջ են երկրում առաջատար դեր կատարել, այլև ունեցել են տնտեսական մեծ նշանակություն ունեցող կազմակերպված արտադրություններ: Դրանց գործունեության հիմքում դրվել են այդ գիտահետազոտական ինստիտուտների տեսական մշակումները: Լուծված է եղել նաև Խորհրդային նմանատիպ կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների հետ

ինտեգրման խնդիրը: Չնայած այդ կապերը հիմնականում խզվել են, սակայն մինչև այժմ էլ նախկին Խորհրդային տարածքում օգտագործվում են մարզի գիտական հիմնարկների մշակումները, որոնք վերաբերում են բարձր տեխնոլոգիաների ոլորտին: Առանձնապես արժեքավոր են անկյան փոխակերպիչների, արհեստականորեն աճեցված բյուրեղների, բժշկական, լազերային և տիեզերական ճառագայթների ուսումնասիրման և կիրառման բնագավառները: Այդ մշակումների հիման վրա արտադրված արտադրանքը տնտեսության տարբեր ոլորտներում ունի չափազանց լայն կիրառումներ:

Անցած տարիների ընթացքում մարզի գիտական հիմնարկներում հետազոտական աշխատանքները չեն դադարել: Իրականացվել են լայն հեռանկարներ ունեցող և հիմնականում՝ կիրառական մշակումներ: Կատարելագործվել և համաշխարհային ստանդարտներին են համապատասխանեցվել գրեթե բոլոր արտադրությունները, թողարկվել են նոր արտադրատեսակներ, գիտությունը ուղղվել է նաև տնտեսության կարիքների բավարարմանը:

Միաժամանակ, լուրջ աշխատանքներ են կատարվել գիտական մշակումների մաթեմատիկական մոդելավորման ասպարեզում: Ինստիտուտներում այժմ գործում են ծրագրավորման գծով հարյուրից ավելի բարձրակարգ մասնագետներ:

Բավականին մեծ թիվ են կազմում այդ բնագավառի ուսանողները, ասպիրանտները և գիտական աշխատողները: Սակայն անհրաժեշտ բազա չի ձևավորվել և պատճառով նրանք աշխատում են մայրաքաղաքի ծրագրավորման ոլորտի կազմակերպություններում:

Փաստորեն, բարձր տեխնոլոգիաների բնագավառը՝ որպես մարզի զարգացման առաջին գերակայություն, կազմակերպվել և ձևավորվել է: Հրատապ խնդիրը դրա որոշակիացումն է:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտը առաջիկա 10 տարում դրվելու է մարզի զարգացման հայեցակետի հիմքում և դառնալու է զարգացման **հիմնական ուղղությունը**:

Այն, իր հերթին, ունենալու է զարգացման երկու ուղղություն.

- 1. արտադրություն և արտադրական բնագավառի գիտատեխնիկական կատարելագործում,*
- 2. հիմնարար գիտական մշակումներ, դրանց կիրառական ոլորտի զարգացում, ծրագրավորման ցանցերի ստեղծում և ծրագրավորում:*

Առաջին ուղղությունն իրականացվելու է երկու ճանապարհով.

ա/ Գիտատար, աշխատատար, քիչ նյութատար, բարձրարժեք և աշխարհում մեծ պահանջարկ ունեցող արտադրանքների արտադրություն: Նոր արտադրությունների կազմակերպում:

Դրա հիմքերը մարզում դրված են և բնագավառը, փաստորեն, կայացած է: Ներկայացվող պահանջներին լիովին համապատասխանում են կիսահաղորդչային սարքերի, արհեստական ադամանդի արտադրության և բնական ադամանդի մշակման, ոսկերչական զարդերի, գերբարձր հաճախականության տիրույթում մշակվող ռադիոէլեկտրոնային կապի և հաղորդակցության համար սարքերի, անկյան թվային փոխակերպիչների, դպրոցական փորձարարական սարքերի, ավտոմատ կառավարող համակարգերի, արհեստական բյուրեղների, բժշկական և լազերային կիրառական տեխնիկայի արտադրությունները:

Այստեղ անհրաժեշտ է առաջիկա 5 տարիների ընթացքում, որպես զարգացման առաջնահերթություններ, որոշակի դրամական ներդրումներ իրականացնել՝ հիմնականում շրջանառու միջոցների լրացման և շուկայավարության կազմակերպման համար: Կատարվող ներդրումները շատ արագ են փոխհատուցվելու:

Մարզի գիտական հիմնարկների արտադրամասերում, Ապարանի «Նիզ», «Արև», «Վան», Աշտարակի կիսահաղորդիչների գործարաններում մեծ հնարավորություններ կան ժամանակակից հեռուստացույցների, տեսամագնիտոֆոնների, համակարգիչների արտադրություններում կիրառվող բարդ և գիտատար տեխնոլոգիական հանգույցների արտադրության համար: Հնարավոր է կազմակերպել ինչպես պատրաստի արտադրանքի, այնպես էլ պահեստամասերի արտադրություն և տարածաշրջանում դառնալ այդ արտադրանքների արտադրության առաջատարը:

բ/ Այդ արտադրությունների միաժամանակյա տեխնիկական կատարելագործում՝ գիտական մշակումների հիման վրա:

Աշտարակում գործող գիտահետազոտական հիմնարկներն ի վիճակի են թանկարժեք քարերի, ոսկու և կարծր նյութերի վերամշակման, կիսահաղորդիչների արտադրության և մեծ ճշգրտություն պահանջող այլ բնագավառներում ստեղծել ավտոմատ թվային ծրագրավորմամբ կառավարվող համակարգեր, օգտագործել լազերային տեխնիկան: Դա հնարավորություն կտա հասնել աշխատանքների մեծ ճշգրտության, բարձր որակի, բացառել խտտանը, իջեցնել արտադրանքի ինքնարժեքը: Կատեղծվի բարձր մասնագիտական կարողություններ ունեցող ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմ:

Միաժամանակ, նույն սկզբունքով ավտոմատ թվային ծրագրավորմամբ համակարգեր կստեղծվեն Հայաստանի և արտերկրի հաստոցաշինական, ճշգիրտ և լազերային սարքավորումների արտադրական բազայի կատարելագործման համար:

Դրանով երկիրը կունենա սեփական տեխնոլոգիական բազա, որը չի զիջի զարգացած երկրների նմանակներին, սարքավորումների ձեռքբերման համար լրացուցիչ միջոցներ չեն ծախսվի, կապահովվի երկրի տեխնիկական առաջընթացը: Հիմնարար գիտությունը հնարավորություն կստանա ինտեգրվել համաշխարհային գիտական կառույցում:

Փաստորեն, այս գործընթացն իրականացնելու արդյունքում մարզում կստեղծվի գիտության և արտադրության փոխլրացնող համակարգ, յուրահատուկ գիտաարտադրական միավորման մարզային ցանց, որը լուծելու է գիտության և արտադրության առաջադրած համատեղ, նաև՝ համապետական մասշտաբի խնդիրներ:

Երկրորդ գերակայություն - հիմնարար գիտական մշակումների, դրանց կիրառական ոլորտի զարգացման, ծրագրավորման ցանցերի ստեղծման և բուն մաթեմատիկական ծրագրավորման զարգացման համար նույնպես լուրջ հիմքեր կան: Այդ նպատակով Աշտարակ քաղաքի Գիտական թաղամասն անհրաժեշտ է վերածել բարձր տեխնոլոգիաների տեխնոպարկի: Կիրառական գիտության և գիտատար արտադրության միջոցների մի մասը կուղղվի դեպի հիմնարար գիտություններ և մաթեմատիկական ծրագրավորման բնագավառ:

Փոքր և միջին ձեռնարկությունների տեխնոլոգիական և նորարարական աջակցության ձևերից է տեխնոպարկը: Այն գիտական կենտրոնի շուրջ համախմբված նորաստեղծ ձեռնարկությունների համախումբ է, որն առաջարկում է արդիական լիարժեք խորհրդատվություն և տեղեկատվություն՝ ուղղված ձեռնարկությունների տեխնոլոգիական զարգացմանը, արտադրանքի որակի կատարելագործմանը, ինչպես նաև տրամադրում է իրացման շուկաների ուսումնասիրություններ իրականացնելու լայն հնարավորություններ:

Տեխնոպարկերն ավելի հարմար են արդյունաբերական կամ բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների համար, որտեղ արտադրանքի կամ արտադրական գործընթացների կատարելագործման համար շատ կարևոր է նոր տեխնոլոգիաների կիրառումը: Սա փոխշահավետ է ինչպես գիտնականների, այնպես էլ ձեռնարկատերերի համար՝ փորձի և հմտությունների փոխանակման առումով, երբ գիտական ծրագրերը կարող են զարգանալ գործարարության մեջ ներդրվելով, իսկ ձեռնարկատերերը կարող են օգտվել գիտական մշակումներից:

Դրանով լուծվում են մի շարք կարևոր խնդիրներ.

1. *Ոլորտն աստիճանաբար կդառնա ինքնաապահովող և ինքնաֆինանսավորվող:*
2. *Երկիրը և մարզը ստիպված չեն լինի նոր, քանկարծեք տեխնոլոգիաներ ներմուծել: Կտնտեսվի մեծ ծավալի արտաբույս:*
3. *Մարզի զարգացման առաջնահերթությունների հետ միաժամանակ հիմքեր կստեղծվեն գերակայությունների զարգացման համար: Գործընթացները կլինեն մեկը մյուսի օրգանական շարունակությունը:*
4. *Կստեղծվի գիտական և գիտաարտադրական հզոր ներուժ:*
5. *Մարզը կընդգրկվի երկրի զարգացման գերակայություններում և որոշիչ ազդեցություն կունենա հանրապետության տնտեսության ու գիտության զարգացման գործում:*
6. *Մարզը կդառնա երկրի գիտական կենտրոններից մեկը, սահուն կերպով կինտեգրվի հանրապետության արտադրական և գիտական կյանքին, որոշակի ավանդ կունենա երկրի արտադրական կառուցվածքների և ենթակառուցվածքների կազմավորման ու ամրապնդման գործում, կգրավի արտերկրի գործարարների որշադրությունը, կապահովվեն անհրաժեշտ դրամական հոսքեր:*
7. *Աշտարակի՝ որպես տեխնոպարկի, գոյությունը կթեթևացնի մայրաքաղաքի բեռնվածությունը, կդառնա երկրի բնակավայրերի հարմոնիկ զարգացման օրինակ, երկիրը կունենա ուժեղ կենտրոն և ուժեղ ծայրամասեր, կվերացվի բնակավայրերի զարգացման անհամամասնությունը:*

Երրորդ գերակայություն - ագրոարդյունաբերական համակարգի զարգացում և կատարելագործում:

Խնդիր է դրվում որակապես վերանայել գյուղատնտեսության վարման ձևը: Ներկայումս գյուղատնտեսությունը չունի մատակարարման, վերամշակման, իրացման և սպասարկման հստակ համակարգ: Ելուղը զարգանում է տարերայնորեն:

Անհրաժեշտ է վերանայել ճյուղի կազմակերպական և կառուցվածքային սկզբունքները և գործի դնել ագրոարդյունաբերական համալիրի գործունեության նոր ծրագիր:

Նախ՝ անհրաժեշտ է ստեղծել սերմնաբուծության և տոհմային անասնաբուծության զարգացման հստակ ծրագիր և ժամանակացույց:

Երկրորդ՝ ստեղծել պարարտանյութերի, թունաքիմիկատների, բուժանյութերի, մեքենատրակտորային հավաքակալայանի և դրանց պահեստամասերի մատակարարմամբ, հակակարկտային միջոցառումների կազմակերպմամբ զբաղվող կառույց, որը կապահովի անխափան մատակարարում:

Երրորդ՝ մշակել և գործադրել գյուղատնտեսական մթերքների կենտրոնացված գնումների համակարգ, որը, համաձայն նախօրոք կնքված պայմանագրերի, կապահովի գյուղատնտեսական մթերքների իրացումը:

Չորրորդ՝ անցում կատարել դեպի կոոպերացման նոր համակարգ, սկսել գյուղացիական տնտեսությունների խոշորացումները:

Չորրորդ գերակայություն՝ ենթակառուցների զարգացում և կատարելագործում: Դրանք վերաբերում են ճանապարհային, էներգամատակարարման, ջրամատակարարման, կապի, հեռահաղորդակցության ոլորտներին:

Հինգերորդ գերակայություն - Կիսահաղորդչային սարքերի և չիպերի արտադրության կազմակերպում.

Աշտարակի կիսահաղորդիչների գործարանը սեփականաշնորհված է Միլ Գրուպ ընկերությանը: Այն արդիական գործարան է: Սակայն չի գործում: Գործարանը կարելի է վերակազմակերպել ինչպես կիսահաղորդչային սարքերի, այնպես էլ չիփերի արտադրության և նոնոտեխնոլոգիաների իրացման՝ երկրում խոշորագույն ձեռնարկության:

Գործարանի վերագործարկման համար անհրաժեշտ կլինի արտերկրում գտնել համապատասխան գործընկեր, կատարել կապիտալ ներդրումներ և կազմակերպել կադրերի ուսուցում:

Ամբողջ հզորությամբ աշխատելու դեպքում գործարանում կբացվի 500 աշխատատեղ, կապահովվի 18-20 տոկոս շահութաբերության մակարդակ:

Վեցերորդ գերակայություն - Պահեստային տնտեսությունների և տարանցիկ փոխադրումների կազմակերպում.

Ծրագրի նպատակը մարզում պահեստային խոշոր տնտեսություն կազմակերպումը և տարանցիկ փոխադրումների իրականացումն է:

Խոշոր պահեստային տնտեսություն կազմակերպելու համար մարզն ունի բոլոր հնարավորությունները:

Նախ՝ դրա համար նպաստավոր է մարզի աշխարհագրական դիրքը:

Մարզկենտրոնը մայրաքաղաքից հեռու է ընդամենը 20 կմ.-ով: Այն Երևան-Գյումրի, Երևան-Վանաձոր ավտոճանապարհների խաչմերուկում է, և դրանցով ելք կա դեպի Թուրքիա և Վրաստան: Մարզում կա նաև երկաթուղի:

Կան նաև անհրաժեշտ քանակի շինություններ, որոնք, վերակառուցման դեպքում կարող են տեղավորել մինչև 100-150 հազար տոննա հումք և արտադրանք:

Սույն ծրագիրը Երևանի՝ որպես մեգապոլիսի, տրանսպորտային երթևեկության բեռնաթափման ծրագրի բաղկացուցիչ մասն է: Ներկայումս այսպիսի ծրագիր չի շրջանառվում: Բայց արդեն հասունանում է Երևանը բեռնատար մեքենաներից բեռնաթափելու, օդի հետագա աղտոտվածությունը կանխելու, քաղաքի երթևեկությունը կանոնակարգելու խնդիրը:

Առաջարկվում է Երևանում գործող խոշոր արտադրական ձեռնարկությունների պահեստային տնտեսությունները տեղափոխել ՀՀ Արագածոտնի մարզ, որտեղից էլ կիրականացվի ապրանքների վաճառքը և առաքումը:

Բացի Երևանի տրանսպորտային բեռնաթափման խնդիրը լուծելուց, այս ծրագիրը մայրաքաղաքում կազատի արտադրական հսկայական տարածքներ, որոնք զբաղեցրել են պահեստային տնտեսությունները:

Երկրորդ՝ որոշ արտադրություններ կտեղափոխվեն մարզեր, ավելի կմոտենան սպառողներին:

Երրորդ՝ պայմաններ կստեղծվեն նաև մարզերի տնտեսական և սոցիալական զարգացման համար: Հինք կստեղծվի նաև ծայրամասերի հավասարաչափ զարգացման համար:

Այս ծրագիրը լուրջ ուսումնասիրության և հաշվարկների կարիք ունի:

Նշված ծավալի պահեստային տնտեսություն կազմակերպելու համար մոտավորապես կպահանջվի 3.0 մլրդ. ՀՀ դրամ: Կբացվի մինչև 1000 աշխատատեղ: Մարզի համախառն սպասարկման ծավալը կհասնի մինչև 5.0 միլիարդ դրամի:

Չարգացման գերակայությունների ձևավորումը պետք է սկսվի միաժամանակ: Դրանք պետք է լինեն մեկը մյուսի օրգանական շարունակությունը, և ժամանակային տարանջատում չպետք է ստեղծվի այս երկու ուղղությունների միջև: Այս իմաստով վերոնշյալ բաժանումը պայմանական է: Ծրագիրը ենթադրում է իրականացման ընթացքն ըստ առաջնահերթությունների բաժանել փուլերի, որոնցից յուրաքանչյուրն ունենալու է իր ենթածրագիրը, իրականացվող միջոցառումների և աշխատանքների գրաֆիկը, ժամանակացույցը, պահանջվող ներդրումների քանակը և արդյունքները:

Մարզի տնտեսության զարգացման հայեցակարգը և գերակայությունները չեն հակասելու ոչ գերակա ուղղության բնագավառներին: Դրանք չեն համարվելու երկրորդական, քանի որ շոշափելու են մարզի բնակչության մեծամասնության շահերը: Այդ բնագավառները պետք է զարգանան գերակայությունների հետ համաքայլ, դինամիկ և արագ, կատարելագործվեն ժամանակի պահանջին համեմատ:

Միաժամանակ, գործելու են տարածաշրջանային ծրագրեր: Դա պայմանավորված է տարածաշրջանների բնական, աշխատանքային, մասնագիտական և այլ յուրահատկություններով: Իրականացվելու են տարբեր բնույթի և ծավալի ծրագրեր՝ բոլոր բնագավառներում:

Մարզի զարգացման նոր հայեցակարգի իրականացման ժամկետ է սահմանվում 2010-2020 թվականները:

Առաջարկվող ծրագիրը չի կարող և չի հավակնում վերջնական լինել: Այն կազմվել է աշխատանքային դիտարկումների, փաստերի ուսումնասիրման և հետազոտության արդյունքում: Բացի այդ, առաջարկվող ոլորտներում և կազմակերպություններում կատարվում են այնպիսի խորքային փոփոխություններ, որոնք կարող են նոր հիմնախնդիրներ առաջացնել կամ նոր հնարավորություններ բացել: Ուստի, ավելի լուրջ հետազոտությունների և եզրակացությունների համար ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ և մեծածավալ աշխատանքներ պետք է կատարվեն:

ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է 2-րդ գծապատկերում:


Գծապատկեր 2. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման

	Տարածաշրջանային/ համայնքային մակարդակ	Մարզային մակարդակ
Փուլ 1	Գործարարության զարգացման ռեսուրսների հաշվառում և գնահատում	Գերակա ոլորտների ապրանքների և ծառայությունների իրացման շուկաների ուսումնասիրում
Փուլ 2	Մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային/ համայնքային ծրագրերի մշակում և ընդունում	Գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի մշակում և ընդունում
Փուլ 3	Տարածաշրջանային/համայնքային մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկների մշակում	Գերակա ոլորտներում մասնավոր ներդրումների ներգրավման մարզային առաջարկների մշակում
Փուլ 4	Ներդրումային առաջարկների փաթեթների կազմում և առաջնդման միջոցառումների իրականացում	

Այստեղ որոշիչ է մարզպետարանի, մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է 4.1 գծապատկերում:

Գծապատկեր 4.1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեմա



3.5. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Ցուցանիշներ	Ռիսկեր/Նախադրյալներ
<p>Ռազմավարական նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ այդ գործընթացներում ներգրավելով ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին:</p>	<p>ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով: Քաղաքապետարաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի պատասխանատուներ են նշանակվել</p>	<p>ՏԻՄ ղեկավարների աջակցությունը և մասնակցությունը ծրագրերի մշակման գործընթացում</p>
<p>Ծրագիր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջնահերթ միջոցառումներ. • Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցություն • Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում</p>	<p>- Խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթները կազմակերպված և ֆինանսավորված են: - ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավված են ծրագրերի մշակման գործընթացում: - Ընդունված են մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային 5 և համայնքային 20 ծրագիր: - Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները:</p>	<p>Մրցույթների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը</p>
<p>Ռազմավարական նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը:</p>	<p>*Գերակա ոլորտների ձեռնարկությունների եկամուտների աճ: *Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ: *Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում: *Զբոսաշրջիկների և այցելուների քվաքանակի աճ:</p>	<p>Գյուղմթերքների իրացման և զբոսաշրջության շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմանները մարզի համար</p>
<p>Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Առաջնահերթ միջոցառումներ. • Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում • Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում • Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում • Գերակա ոլորտներում գործող ձեռնարկությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում • Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում</p>	<p>- Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցված են - Հետազոտության արդյունքները ներկայացված և ընդունված են գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից - Գյուղմթերքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանը ընդունված է - Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանը ընդունված է - Աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատված է - ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսական պլաններում նախատեսված են գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար</p>	<p>* Շուկաների հետազոտման գործընթացում որակյալ մասնագիտական կադրերի ներգրավում: * Մարզի գերակա ոլորտների զարգացման միջոցառումների պլանը համահունչ է ճյուղային նախարարությունների քաղաքականությանը: * Օտարերկրյա և իջազգային կազմակերպությունները պատրաստ են համաֆինանսավորել վերապատրաստման ծրագրերը:</p>
<p>Ռազմավարական նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես</p>	<p>Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր</p>	<p>Գործարարության զարգացման</p>

<p>նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերում:</p>	<p>ներդրումների ծավալների աճ</p>	<p>տեղական ռեսուրսների և ենթակառույցների անբավարար վիճակը</p>
<p>Ծրագիր 3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Առաջնահերթ միջոցառումներ. • Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում • Ներդրումային հնարավորու-թյունների ներկայացման միջոցառումների կազմակերպում</p>	<p>- Տարածաշրջանային և/կամ ոլորտային ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են - Տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են</p>	<p>Ներդրումային առաջարկների և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են պոտենցիալ ներդրողների ակնկալիքներին:</p>

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. Կրթություն

5.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

Համաձայն ԱՀՌԾ-ի, կրթության բնագավառը տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն է: Կրթության որակի և մատչելիության բարձրացումը միջնաժամկետ և կարժամկետ հատվածում պետության և հասարակության առաջընթացի, զարգացման, ինչպես նաև աղքատության և անհավասարության հաղթահարման կարևորագույն գործոններից է:

ա/ Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջնային և կարևորագույն աստիճանն է: Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ռազմավարության՝ պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը տարբերակված ծրագրերով (այլընտրանքային ծառայություններով), ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով կառավարությունը կապահովի նաև նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակումն ու ներդրումը:

Համաձայն վիճակագրության տվյալների, Արագածոտնի մարզում մանկապարտեզների, հետևաբար նաև երեխաների թիվը մանկապարտեզներում նվազում էր Հայաստանի անկախության առաջին տարիներին:

Հետագայում նույնպես, թեև երկրի տնտեսական վիճակը սկսեց կայունացման միտումներ դրսևորել, նախադպրոցական հաստատությունների թիվը շարունակում էր նվազել: Էներգետիկ ճգնաժամը, ջեռուցման այլընտրանքային միջոցներ (փայտ, կերոսին և այլն) ձեռք բերելու դժվարությունները, իսկ հետո՝ նաև ֆինանսական ռեսուրսների սղությունը մանկապարտեզների և հաճախող երեխաների թվի նվազման պատճառ դարձան:

Եթե Արագածոտնի մարզում 1998-2002 թթ. ընկած ժամանակահատվածում նախադպրոցական հաստատությունների թիվը կրճատվել է՝ 75- ից նվազելով մինչև 24-ի, ապա վերջին տարիների վիճակագրությունը փաստում է, որ դրանց թիվը կայունացման, նույնիսկ՝ աճի միտում ունի:

Արագածոտնի մարզպետարանի տվյալներով 2009 թ. մարզում գործում է 29 նախադպրոցական հաստատություն: Մինչև տարեվերջ կսկսեն գործել Օհանավանի, իսկ 2010 թ-ից՝ Ուջանի մանկապարտեզները:

2006 թ.-ի համեմատ ավելացել է նաև մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը: 2009 թ. մանկապարտեզ է հաճախում 2289 երեխա, որը կազմում է նույն համայնքների նախադպրոցական տարիքի երեխաների գրեթե 31 %-ը: 2008 թվականին մարզում գործել է 29 նախադպրոցական հաստատություն, ուր հաճախել է 2227 երեխա:

Այնուամենայնիվ, ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով գործող մանկապարտեզները ևս կանոնավոր չեն աշխատում: Ներկայումս դրանցից 10-ը աշխատում են շուրջտարյա, իսկ 19-ը՝ սեզոնային ժամանակացույցով: Բոլոր շուրջտարյա մանկապարտեզները գործում են քաղաքային համայնքներում, որտեղ մանկապարտեզների գործարկման համար համեմատաբար բարվոք պայմաններ կան: Փաստորեն, նախադպրոցական կրթությունը քաղաքային կյանքը բնութագրող չափորոշիչ է դառնում:

Ըստ մարզպետարանի հաշվարկների՝ մարզի 3-6 տարեկան երեխաների գրեթե 73 %-ն ընդգրկված չէ նախադպրոցական համակարգում: Ընդ որում, անմատչելիությունը, որպես չընդգրկվածության պատճառ, առավել սուր է արտահայտված գյուղական բնակչության շրջանում:

Նախադպրոցական կրթության անմատչելիության պատճառներից գյուղական բնակավայրերում նախադպրոցական հաստատությունների բացակայություն է (21 համայնք ընդհանրապես մանկապարտեզի չենք չունի), իսկ քաղաքային բնակավայրերում՝ նյութական անմատչելիությունը, համայնքի բյուջեի սղությունը: Դրա հետևանքով քաղաքներում կրճատվում է խմբերի թիվը կամ դրանք փակվում են:

Մանկապարտեզների առջև այսօր ծառայած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

- **Հիմնանորոգում**- նախադպրոցական հաստատությունների գերակշռող մեծամասնության շենքային պայմանները բարվոք չեն: 2007թ. «Կլոր սեղան» հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել է Թալինի N 1 մանկապարտեզի շենքը: 2007թ. Word Wision կազմակերպության միջոցներով նորոգվել են Աշնակ և Կաթնաղբյուր համայնքների մանկապարտեզների շենքերը /20 հազար ԱՄՆ դոլար գումարով/: 2008թ., նույն կազմակերպության ֆինանսավորմամբ, նորոգվել է Դաշտաղեմի մանկապարտեզի շենքը: 2008թ. «Փրկեցեք երեխաներին» կազմակերպության միջոցներով հիմնանորոգվել է Աշտարակի «Հովիկ» մանկապարտեզը:

Մնացած մանկապարտեզները հիմնական նորոգման լուրջ կարիք ունեն:

- **Անբավարար ջեռուցում**- կենտրոնական ջեռուցման համակարգերը գրեթե չեն գործում, և մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի օգնությամբ, ինչը մեծ տարածքների պայմաններում արդյունավետ չէ:

- **Մնունդ**- նախադպրոցական 8-ժամյա ռեժիմով աշխատող հաստատությունների գերակշռող մասում (հատկապես՝ համայնքային ենթակայության), որոնք աշխատում են, երեխաներին որոշակի սնունդ է տրվում: Այնուամենայնիվ, ըստ ԿԳՆ ուսումնասիրությունների, երեխաները թերսնվում են, իսկ սահմանված նորմատիվները չեն պահպանվում: Բացի այդ, սննդի կալորիականությունը և սննդարարությունը չեն համապատասխանում նորմերին: Սննդի տեսականին ևս միատարր է:

- **Գույք**- մանկապարտեզների գույքը և պարագաները թե՛ բարոյապես, թե՛ ֆիզիկապես մաշված են: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատությունները փափուկ և կոշտ գույքի, պարագաների, խմբասենյակների և դահլիճների կահավորման կարիք ունեն:

- **Ուսուցողական նյութեր**- նախադպրոցական հաստատությունների կրթական միջավայրը չափազանց աղքատիկ է և չի համապատասխանում կրթության ժամանակակից պահանջներին: Մանկապարտեզները խաղալիքների և ուսուցողական ցուցադրական պարագաների կարիք ունեն:

• **Մասնագիտական կադրեր**- եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են մանկավարժների վերապատրաստման լուրջ միջոցառումներ, ապա նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է: Չնայած, որ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի միջոցով իրականացվում են վերապատրաստման որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ, դրանց թիվը բավականին քիչ է՝ հիմնախնդիրն ամբողջովին լուծելու համար: Բացի այդ, կարևոր է նաև համարժեք մասնագիտությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդիրը:

բ/ Միջնակարգ կրթություն

Վերջին տարիներին կրթության ոլորտում ՀՀ կառավարության իրականացրած միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի, աշխատուժի օգտագործման արդյունավետության բարելավում) ուղղված են համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հանրակրթության որակի բարելավմանը: Բարձրացել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:


2009 թ.-ին Արագածոտնի մարզի կրթության ոլորտի բյուջետային ծախսերը 2006 թ.-ի համեմատ աճել են 70%-ով (տես Աղյուսակ 25):

Աղյուսակ 25. 2006-09թթ. կրթության ոլորտին ՀՀ բյուջեից հատկացումները և աճը

h/h	Կրթության ոլորտը	2006 թ.	%	2007 թ.	%	2008թ.	%	2009թ.
1	Հանրակրթություն	2743451,1	94.3	3183228,2	93.9	3585064,0	94.6	4662248,5
2	Հատուկ կրթություն	120523,5	4.1	145697,1	4.3	154697,7	3.6	178479,3
3	Արտադպրոցական դաստիարակություն	5534,5	0.2	6455,4	0.2	7863,0	0.2	9750,2
4	Արհեստագործական կրթություն	39208,1	1.3	55507,6	1.6	70223,6	1.6	78181,5
5	Ընդամենը	2908717,2	100	3390888,3	100	3678648,3	100	4928659,5

Աղբյուրը՝ Արագածոտնի մարզպետարան

Գրաֆիկական պատկեր 17. ՀՀ Արագածոտնի մարզի կրթության ոլորտում կատարված ներդրումների աճը 2006-2008 թթ.- երին



Ներկայումս Արագածոտնի մարզում գործում է 124 հանրակրթական դպրոց, այդ թվում՝ 3 հատուկ դպրոց: 2008-2009 թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական հաստատություններում սովորում է 20373 աշակերտ: Անցած ուսումնական տարվա համեմատ աշակերտների թիվը պակասել է 2189- ով: Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում կրճատվել է 24 - ով և հասել 1282.5- ի: Երեք հատուկ դպրոցներում սովորում է 387 աշակերտ, ձևավորվել է 21 դասարան: 2007-2008 ուստարվա համեմատ հատուկ դպրոցների աշակերտների թիվը պակասել է 28- ով: Նման իրավիճակը պայմանավորված է վերջին տարիներին ծնելիության ցածր մակարդակով, արտագաղթով, և երկրում ՄԺԾԾ-ի նորմերով՝ թերհամալրված դասարանների միավորմամբ:

Վերջին տարիներին շարունակում է նվազել առաջին դասարան ընդունվողների թիվը: Դրա պատճառը դարձյալ ծնելիության ցածր մակարդակն է և արտագաղթը:

Ինչ վերաբերում է ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությանը, ապա Արագածոտնի մարզում 2008-2009 թթ. նախորդ ուստարվա համեմատությամբ այն քիչ է փոխվել (տես Աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Աշակերտ ուսուցիչ հարաբերակցությունը Արագածոտնի մարզում

Մարզ	2007-2008 ուստարի			2008-2009 ուստարի		
	աշակերտներ	ուսուցիչներ	հարաբ.	աշակերտներ	ուսուցիչներ	հարաբ.
Արագածոտն	22562	2804	8.05	20373	2772	7.35

2007-08 ուսումնական տարում մարզի 121 հանրակրթական դպրոցներում աշխատել է 2804 ուսուցիչ: Նույն ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը կազմել է 8.05: 2008-2009 ուսումնական տարում այն նվազել է՝ հասնելով 7.35 - ի:

Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության ցածր լինելու պատճառներից է աշակերտական փոքր համակազմով դպրոցների առկայությունը մարզի Արագածի և Թալինի տրածաշրջաններում: 20 դպրոց ունի մինչև 30, իսկ դրանցից 8-ը՝ մինչև 18 աշակերտ: Այս 8 դպրոցը միասին ունեն 109 աշակերտ և 57 ուսուցիչ, 38 սպասարկող անձնակազմ: Դրանք հիմնականում լեռնային, սահմանամերձ և ազգային փոքրամասնությունների գյուղերի դպրոցներ են:

Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում կազմել է 99.7%:

Այնուամենայնիվ, մարզի բնակչության սակավ ապահովվածության պատճառով կրթական ծառայությունների մատչելիությունը դեռևս խնդրահարույց է: Ծնողների անվճարունակության պատճառով երբեմն դասագրքերի նույն համակազմից օգտվում է մի քանի աշակերտ, չեն բավականացնում գրենական պիտույքները: Աշակերտները միշտ չէ, որ կարողանում են օգտվել հասարակական տրանսպորտից և հաճախել արտադպրոցական հաստատություններ, որոնք հիմնականում նախկին վարչական կենտրոններում են:

Արագածոտնի մարզում 2008թ.-ին մեկ աշակերտին ընկնող տարեկան միջին գումարը 176.100 դրամ է, որը գրեթե 1.6 անգամ ավելի է 2006 թ. նույն ցուցանիշից:

գ/ Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

Մարզի դպրոցական շենքերում և շինություններում յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է: Այդ նպատակով կառավարությունը 2008 թ. պետ բյուջեում 25 դպրոցի

համար 1,371 մլրդ. դրամ է հատկացրել: Հատկապես լուրջ ուշադրություն է դարձվում հեռավոր և բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներին:

Մարզի հանրակրթության ոլորտում միայն 2006-08 թթ. իրականացվել են շենքերի նորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների և խորհրդի անդամների վերապատրաստման մի շարք ծրագրեր, որոնք, անշուշտ, դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա: Աղյուսակ 27-ի տվյալները վկայում են, որ վերոհիշյալ ժամանակահատվածում մարզում հիմնանորոգվել է 68 և կառուցվել 2 դպրոց:

Աղյուսակ 27. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում վերանորոգված և կապիտալ շինարարություն իրականացրած դպրոցների թիվը

Տարեթիվ	Նորոգված դպրոցների թիվը	Հիմնանորոգված դպրոցների թիվը
2006	10	15
2007	33	42
2008	25	25
Ընդամենը	68	82

Աղբյուր՝ Արագածոտնի մարզպետարան

Այնուամենայնիվ, բյուջեով նախատեսվող միջոցները բավարար չեն նորոգման աշխատանքներն ամբողջությամբ կատարելու համար (մարզի առաջնահերթ նորոգման կարիք ունեցող դպրոցների ցանկն՝ ըստ վթարայնության աստիճանի, տես Հավելված 1-ում): Այս հարցում զգալի աջակցություն են ցուցաբերում նաև միջազգային կազմակերպությունները՝ ԼԻՆՍ-ի հիմնադրամը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, ամերիկյան դեսպանատունը, «Զորավիզ» հիմնադրամը, «Կաազա» շվեյցարական հիմնադրամը և այլ դոնորներ:

2006-08 թթ. նշված կազմակերպությունների աջակցությամբ մարզի կրթության ոլորտում իրականացվել են դպրոցական շենքերի նորոգման և դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստման ծրագրեր: 2006-2008 թթ. Լինսի հիմնադրամի 851 մլն դրամի ներդրմամբ հիմնանորոգվել է Աշտարակի Ներսես Աշտարկեցու անվան N 1 դպրոցի շենքը:

Ներկայումս աշխատանքներ են տարվում են գյուղական համայնքների դպրոցների ջերմամատակարարման համակարգերի կարգավորման ուղղությամբ:

2004-2008 թթ. մարզի դպրոցները համալրվել են 8060 աշակերտական սեղան-նստարանով, 531 գրատախտախտակով, 435 պահարանով, 608 համակարգչով, քիմիայի 10, ֆիզիկայի 10, կենսաբանության 10 լաբորատորիաներով:

Դպրոցների մարզադահլիճները և խաղահրապարակները (65 դպրոցում) նույնպես կարիք ունեն նորոգման (անհրաժեշտ է փոխել մանրահատակները, տեղադրել պաշտպանիչ ցանցեր, վերանորոգել տանիքները և այլն):

Չնայած իրականացվող միջոցառումներին, կրթական հաստատություններում ներկայումս գրեթե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը: Դպրոցների մեծ մասն աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, գրատախտակների, փափուկ գույքի խիստ կարիք ունի, հրատապ է նաև լոկալ ջեռուցման իրականացման խնդիրը:

Մարզպետարանի կատարած կարիքի գնահատման արդյունքների համաձայն, այսօր մարզի դպրոցներին անհրաժեշտ են.

- 6174 աշակերտական սեղան-նստարան,
- 10836 աթոռ,
- 1209 գրատախտակ,
- 1291 գրապահարան,
- 276 համակարգչային սեղան:

Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում գույքագրված գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 30%-ը օգտագործման համար պիտանի չէ՝ հանրակրթական ծրագրերի փոփոխման պատճառով:

Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը պայմանավորված է ոչ միայն նյութատեխնիկական բազայի առկայությամբ, այլև ուսուցչական անձնակազմի գիտելիքների մակարդակով: Մարզի կրթության համակարգի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը:

2007-2008 թթ. մարզի 4 դպրոց-կենտրոններում համագործակցային ուսուցման մեթոդով վերապատրաստվել է մարզի հայոց լեզու, մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, քիմիա, օտար լեզու առարկաների 1468 ուսուցիչ և 75 դասվար: 2007 թ., նույն մեթոդով, վերապատրաստվել է բնագիտական և հասարակագիտական առարկաների 957 ուսուցիչ: Գնահատման համակարգի պահանջներին համապատասխան վերապատրաստվել են հայոց լեզու, մաթեմատիկա առարկաների 1116 ուսուցիչ և դասվար: Վերապատրաստումներն իրականացվել են ՀԲ «ԿՈՀ» ծրագրի շրջանակում:

Մարզի կրթական ոլորտում գործունեություն են ծավալում նաև ՀԿ-ները: Մասնավորապես, «Կրթություն հանուն կայուն զարգացման» ՀԿ-ն մարզի 3 դպրոցում ստեղծել է համայնքային ռեսուրս կենտրոններ, որտեղ, համայնք-դպրոց կապի ամրապնդման նպատակով, իրականացվում են ուսուցողական ծրագրեր:

Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական են: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և լրամշակել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթը:

2006թ. դպրոցների խորհուրդների գրեթե 500 անդամ ՀԲ «ԿՈՀ» ծրագրի շրջանակում վերապատրաստում են անցել: Սակայն խորհուրդների կազմի փոփոխության պատճառով նոր անդամները տեղյակ չեն կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ՝ դպրոցը դեռ չի կայացել: Դպրոցի կառավարման գործում դեռևս ցածր կամ ձևական է աշակերտների, ծնողների մասնակցությունը: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցել դպրոցին՝ համարելով, որ դա պետության խնդիրն է:

Մարզի 58 դպրոց ունի համակարգչային դասասենյակներ, 46 դպրոց՝ ինտերնետային կապ: Մարզի 46 դպրոց միացված է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին (ՀԴԻՅ): Բոլոր դպրոցներն ընդգրկված են «Համակարգիչների շրջանառու հիմնադրամում»: Սակայն դրանցից 36 ը ֆինանսական խնդիրների պատճառով չի կարողանում նախատեսված կանխավճարը մոծել կամ հետագա պայմանագրով նախատեսված գումարը վճարել:

«Project Harmony» կազմակերպության օժանդակությամբ այսօր մարզի բոլոր տարածաշրջանների 23 դպրոցում արդեն գործում են ինտերնետային կապով ապահովված համակարգչային սենյակներ: Դրանք մատչելի են նաև բնակչության լայն շերտերի համար: 2007 թ. հունիսից կառավարության և «Project Harmony»-ի միջև կնքված հուշագրի համաձայն «Դպրոցների փոխկապակցում» ծրագրի ֆինանսավորումն այսուհետ կիրականացնի ԿԳ նախարարությունը՝ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) միջոցով: 1997թ.

հիմնադրված «Դասագրքերի շրջանառու հիմնադրամի» շրջանակում դասագրքերի ապահովվածության խնդիրը մեծ մասամբ լուծված է: Դպրոցներին իրավունք է վերապահված աշակերտների թվի 8 %-ի շրջանակում սոցիալապես անապահով աշակերտներին ապահովել անվճար դասագրքերով:

ՄԱԿ-ի ՀՊԾ-ի «Դպրոցի սնուցման» ծրագիրը մեծ աջակցություն էր աղքատ համայնքներում ուսուցման գործընթացը պատշաճ ձևով կազմակերպելու համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ամրապնդվեց կապը դպրոցի, աշակերտների և նրանց ընտանիքների միջև: Ծրագիրն ավարտվել է 2007 թ. տարեվերջին:

Արտադպրոցական կրթության ոլորտում պետության ռազմավարությունն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

Մարզի 92 համայնքներից 11-ում գործում է 24 արտադպրոցական հաստատություն, որոնց 177 խմբերում սովորում է 3440 երեխա:

Արտադպրոցական հաստատությունները ևս ունեն մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում ներառում են.

- *շենքային պայմանների անբավարարությունը,*
- *աղքատ նյութատեխնիկական բազան,*
- *ոչ ավանդական արհեստագործական խմբակների բացակայությունը, աշակերտի ընտրության սահմանափակությունը,*
- *համայնքների բյուջեների սղությունը:*

Ազգային երգարվեստի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը երաժշտական և արվեստի դպրոցներին յուրաքանչյուր ամիս ժողգործիքների բաժնում ընդունված մեկ աշակերտի հաշվով հատկացնում է որոշակի գումար՝ 5539 դրամ:

Մարզում կազմակերպվում են մարզամշակութային, գեղարվեստական և առարկայական միջոցառումներ և օլիմպիադաներ, որոնց, սակայն, հեռավոր համայնքների աշակերտները դժվարանում են մասնակցել:

Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունը նպատակաուղղված է հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը և այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը: Դա հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները:

Մարզում գործում է 1 հատուկ դպրոց, որտեղ սովորում են հիմնականում մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաներ: Հանրակրթական դպրոցներում հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաներին ներառելու համար ներկայումս պայմաններ և հնարավորություններ չկան: Մարզկենտրոնից համայնքների հեռավորության և ընտանիքների սոցիալական ոչ բարվոք վիճակի պատճառով այն ներկայումս լուրջ խնդիր է:

Հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման նպատակով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցների նախահաշիվներում այսուհետև կնախատեսվեն նաև թեքահարթակների կառուցումներ:

Նախնական և միջնակարգ-մասնագիտական կրթություն: Ներկայումս Արագածոտնի մարզում գործում է նախնական մասնագիտական երկու հաստատություն՝ Թալինի և Ծաղկահովիտի արհեստագործական ուսումնարանները:

Վերջին տարիներին այս բնագավառում իրավիճակն ավելի վատթարացավ հետևյալ պատճառներով: **Նախ**, անընդհատ նվազում էր մասնագիտական-տեխնիկական կրթության պետական պատվերը, և կրթական հաստատություններն, ստիպված, իրենք պետք է մտածեին ինքնաֆինանսավորմամբ զարգանալու մասին: **Երկրորդ**, այդ հաստատությունները ուսումնանյութական բազայի հագեցվածության, մանկավարժական անձնակազմի, պրակտիկայի կազմակերպման առումով բավարար պայմաններ չունեն: Այսօր դրանք այլևս մրցունակ չեն կրթական ծառայությունների շուկայում, այնպես, ինչպես շրջանավարտները մրցունակ չեն աշխատանքային շուկայում: Ավելին, միջին մասնագիտական հաստատությունը չի անցկացնում տեղական աշխատաշուկայի ուսումնասիրություններ, ուստի չի պատրաստում տեղական աշխատաշուկայի այժմյան պահանջարկին համապատասխան մասնագետներ:

Այնուամենայնիվ, այս ոլորտում կան ընթացիկ ֆինանսական միջոցներով դժվար լուծելի մի շարք խնդիրներ: Գրանց շարքում առաջնահերթ են կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, համակարգչային լաբարատորիաների թարմացման, մասնաշենքերի ընթացիկ նորոգման և ջեռուցման խնդիրները:

Կրթության ոլորտին սերտորեն առնչվում են նաև մշակույթի և սպորտի ոլորտները:

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Արագածոտնի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները հիմնականում վերաբերում են գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանմանն ու զարգացմանը: Բնագավառում սրությամբ հառնել է նաև մասնագետ կադրերի սակավության և կադրերի վերապատրաստման խնդիրը:

ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն, 2009 թ. մարզում գործում է 111 գրադարան, որոնցից 1-ը՝ մարզային (կենտրոնական), 3-ը՝ քաղաքային, 107-ը՝ գյուղական: Գրքաֆոնդը 798584 կտոր է:

Մարզում գործում է 5 թանգարան. գրող Պ.Պռոշյանի, ակադեմիկոս կենսաբան-ֆիզիկոս Ն. Սիսակյանի, ակադեմիկոս-լեզվաբան Գր. Ղափանցյանի, ԳԱԱ բազմամյա նախագահ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի տուն-թանգարանները, Ապարանի երկրագիտական թանգարանը: Շուտով կբացվեն գրողներ Մ. Գալշոյանի և Վ. Պետրոսյանի տուն-թանգարանները:

Գործում է 6 մարզադպրոց, որոնցից 2-ը՝ Աշտարակում և մեկական՝ Թալինում, Ապարանում, Ծաղկահովիտում, Քուչակում: Մարզադպրոցներում ընդգրկված է մոտ 700 սան: Աշտարակ քաղաքում նախատեսվում է ավարտին հասցնել կիսավարտ մարզահամալիրի շինարարությունը՝ պետբյուջեի և բարեգործական ծրագրերի հաշվին:

Գործում են 8 երաժշտական և արվեստի դպրոցներ, որտեղ սովորում է 56 երեխա:

Գրադարաններ: Մարզի գրադարանների շենքային պայմաններն բարվոք չեն, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք կազմակերպել հավաքածուների պահպանությունը և օգտագործումը: Գրադարանային ֆոնդն աղքատիկ է և հնամաշ: Գրադարաններից օգտվողների ընթերցողական պահանջը բավարարելու համար հավաքածուների համալրման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել նոր գրականության:

Գրադարանների վիճակի բարելավումը կնպաստի բնակչությանը մատուցվող գրադարանային-տեղեկատվական սպասարկման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գրադարան հաճախելու ֆիզիկական սահմանափակում ունեցող անձանց գրադարանային սպասարկմանը և գրադարանային հավաքածուների պահպանությանը:

Թանգարաններ: Թանգարանների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կարևոր է հատկապես թանգարանների հավաքածուների անվտանգության ապահովումը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում կայուն ջերմախոնավային պայմանների ստեղծումը: Պետական թանգարաններում ցուցահանդեսների, մշակութային միջոցառումների կազմակերպմանը, հավաքածուների համալրմանը նպատակաուղղված ֆինանսական միջոցները մեծապես կնպաստեն մարզի մշակութային կյանքի աշխուժացմանը:

Պատմամշակութային հուշարձանների պահպանում: Մարզում կա պատմամշակութային ավելի քան 2000 հուշարձան, որոնք պատկանում են հեթանոսական և քրիստոնեական ժամանակաշրջաններին: Դրանցից շատերը գնահատված են որպես համամարդկային արժեք և գրանցված են UNESCO-ում: Պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման, հաշվառման, պեղումների, պահպանության, վերականգնման և օգտագործման գործընթացների համակարգման նպատակով պետական աջակցությունը տարեց տարի ընդլայնվում է՝ յուրաքանչյուր տարի 15-20 % ներդրումների ավելացմամբ:

Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանում: Այս ոլորտի պետական մշակութային քաղաքականությունը նպատակաուղղված է մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանն ու պաշտպանությանը, ՀՀ ազգային ավանդական ոչ նյութական ժառանգության /բանավոր ստեղծագործություններ և հմտություններ/ պահպանմանը, տարածմանն ու զարգացմանը՝ գործընթացին ՀՀ մարզերի ընդգրկվածության ապահովմամբ:

Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ): Այս ենթաոլորտի ռազմավարական նպատակն է թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործության և արհեստների պահպանությունը, ուսումնասիրումը, տարածումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, խթանումը, տարածքային մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը:

Շենքային անբավարար պայմանների, ջեռուցման, օդափոխման համակարգերի բացակայության պատճառով վերջին տասնամյակում ընդհանուր առմամբ խաթարված է թատրոնների բնականոն գործունեությունը, և դրանց մեծ մասը ձմռանը գրեթե չի գործում:

Մարզում կրթական և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և դրա արդյունավետության բարձրացումը: Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

Այս ուղղությամբ կարևորագույն միջոցառումներից մեկը Արագածոտնի մարզում երիտասարդական կենտրոնի ստեղծումն էր, որն ունի հետևյալ նպատակները.

- *Հայաստանում պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնել առավել շատ երիտասարդական կազմակերպություններ,*

- *նպաստել մարզային երիտասարդական կառույցների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության սուբյեկտների խնդիրների մասին եղած տեղեկատվության հավաքմանը, համակարգման և հրապարակման կազմակերպմանը,*

- *երիտասարդությանը մատուցել սոցիալական իրավաբանական, կազմակերպչական ծառայություններ,*

- *աջակցել երիտասարդության շահերն ու իրավունքները ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը և այդ գործընթացում երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը,*

- *իրականացնել երիտասարդության հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ (ուսումնասիրություններ, հոդվածներ, այս բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն),*

- *մարզի երիտասարդության համար հաստատել և ամրապնդել արտաքին կապեր, կատարել փորձի փոխանակում,*

Այսպիսով՝ Արագածոտնի մարզում մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են.

- *մարզի մշակութային կյանքի զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ,*

- *ուղորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերատրակավորում,*
- *նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում,*
- *մշակութային կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում,*
- *սլաքային հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում, քարտեզագրում և օգտագործում,*
- *սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:*

5.1.2. Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

Ներկայումս կրթության ոլորտում առաջնահերթ է համարվում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնածրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման, մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և համապատասխան միջոցառումները:

Այդ միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է նկատի ունենալ մարզային առանձնահատկությունները: Ելնելով Արագածոտնի մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից, **կրթության որակի և մատչելիության բարձրացումը ղիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ:**


Հատկապես ուշադրություն է դարձվելու միջնակարգ կրթության համակարգում կատարվող բարեփոխումներին, որոնք նպատակաուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը:

Անհրաժեշտ է նաև իրականացնել համակարգում հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ: Կարևոր պայման է դպրոցներում հեռահաղորդակցման կենտրոնների ստեղծումը:

Դրա միջոցով ակնկալվում է դպրոցը վերափոխել ինտեգրետային կապով ապահովված համակարգչային, հեռահաղորդակցման, կրթական համայնքային կենտրոնի՝ ամրագրելով տեղեկատվություն ստացող և փոխանակող, մշակութային և կրթական բազմապիսի ծառայություններ մատուցող, ինչպես նաև համայնք-դպրոց շարունակական կապի ամրապնդման հնարավորությունները:

Մարզի կրթության ոլորտի զարգացման առումով չափազանց կարևորվում է նաև նախադպրոցական կրթության համակարգի կատարելագործումը, այլընտրանքային ծառայությունների մշակումը և մատուցումը: Ստորև ներկայացվում են կրթության ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները /տես Գ-ծապատկեր 4/:

Գծապատկեր 4. Կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



5.1.3. Կրթության ոլորտի ֆինանսավորումը

Վերջին տարիներին կրթության ոլորտին ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Այսպես, կրթության ոլորտին պետական բյուջեով տրամադրված ծախսերը (ներառյալ լրացուցիչ կրթության ծախսերը) 2007 թվականին կազմել են ՀՆԱ-ի 2.96 %-ը՝ 2006 թվականի 2.53 %-ի փոխարեն: Կրթության ոլորտին 2006 թվականի պետական հատկացումների 83.5 %-ն ուղղվել է հանրակրթության ոլորտին, իսկ 12.5 %-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը: 2007 թվականին դրանք կազմել են, համապատասխանաբար՝ 85.7 % և 11.5 %:

2009 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության գծով ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 1.7 %-ով և կազմել են 70140.3 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 69.0 %-ը: 2009 թվականին այս ենթախմբի հատկացումները կկազմեն կրթության ընդհանուր պետական ծախսերի 56.83 %-ը: 2010 թվականին՝ 2009 թվականի նկատմամբ ծախսերը կաճեն 2.9 % -ով՝ հասնելով 74788.9 մլն. դրամի: Դա կրթության ընդհանուր պետական ծախսերի 52.48 %-ն է:

Հանրակրթության ոլորտում պետական ծախսերի ծրագրվող աճը կհանգեցնի մեկ աշակերտի հաշվով կատարվող ծախսերի զգալի ավելացման. 2010 թվականին մեկ աշակերտի հաշվով ծախսերը 2007 թվականի համապատասխան ցուցանիշի համեմատ կաճեն 20.9%-ով:


Սակայն, հարկ է նշել, որ մեկ աշակերտի հաշվով ծախսերի նման ցուցանիշները պայմանավորված են նաև բնակչության ժողովրդագրական կառուցվածքում կանխատեսվող փոփոխություններով:

Աղյուսակ 28. Մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը հանրակրթության ոլորտում

	2009	2011	2012	2013	2014
Ինդեքս (2009 թ =100)	100	105.6	113.6	120.9	136.2
Հուշագրային հոդվածներ					
Աշակերտների թիվը (2005 թ. =100)	100	96.7	95.4	93.2	91.1
Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում (2005 թ. =100)	100	101.4	105.4	108.5	110.0

Ինչպես 2007-2009 թվականների, այնպես էլ 2011-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով կրթության բնագավառի հիմնական գերակայությունը հանրակրթության ոլորտն է: Հետևաբար, 2011-2014թթ. ծրագրային ժամանակահատվածում կրթության ոլորտի պետական ծախսերի ավելացումները գրեթե ամբողջությամբ ուղղվելու են հանրակրթության ոլորտ:

Գրաֆիկական պատկեր 18. Մեկ աշակերտի հաշվով ծախսերի ինդեքսի աճը 2009-2014 թթ. -երին



5.1.4. Կրթության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Աղյուսակային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում	<ol style="list-style-type: none"> Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը հանրակրթության բնագավառում Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատու-թյուններում ընդգրկվածության տեսակարար կշիռն այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում, % Հանրակրթական ծառայությունների որակից աշակերտների և ծնողների բավարարվածության աստիճանը ԲՈՒՀ ընդունված դպրոցի 	Կրթության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների (2009 թվականին ՀՆԱ-ի 3.6 %): Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:

	շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ	
1. Գյուղացիների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
1.1. Գյուղացական շենքերի նորոգում 1.2. Գյուղացիների մարզադահլիճների և խաղահրապարակների նորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Նորոգված դպրոցների թիվը Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, % Ձեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը, %	Գյուղացական շենքերի նորոգման և նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով ՀՀ կառավարության հատկացվող ֆինանսական միջոցները տարեցտարի ավելանում են:
1.3. Ձեռուցման լոկալ համակարգի ներդրում Ձեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, %	Նորացված գույք ունեցող դպրոցների թիվը	
1.4. Գյուղացական գույքի տրամադրում (ներառյալ 12-ամյա կրթությանը համապատասխան)		
1.5. Լաբորատոր սարքավորումների և նյութերի, դիդակտիկ պարագաների ձեռքբերում, գրադարանային ֆոնդի համալրում և թարմացում	Համալրված և արդիականացված լաբորատորիաներ ունեցող դպրոցների թիվը Թարմացված գրադարաններ ունեցող դպրոցների թիվը	
1.6. Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը Հանրակրթական դպրոցներում համակարգիչների թիվը՝ 1000 աշակերտի հաշվով Ինտերնետային կապով ապահովված դպրոցների թիվը	
1.7. Գյուղացական արհեստանոցների վերազինում (հաստոցներ, գործիքներ և նյութեր)	Վերազինված արհեստանոց ունեցող դպրոցների թիվը	
1.8. Գյուղացական բուֆետ-ճաշարանների ստեղծում և համապատասխան գույքով ապահովում	Նոր բուֆետ-ճաշարաններ ունեցող դպրոցների թիվը	
2. Ուսուցչական անձնակազմի որակավորման բարձրացում		
2.1. Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում		
2.2. Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը Համակարգչային տիրապետող ուսուցիչների թիվը	Ուսուցիչների վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում:
2.3. Գասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցում		
2.4. Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Ատեստավորված ուսուցիչների թիվը	
3. Գյուղացիների ինքնակառավարման կարողությունների բարձրացում		
3.1. Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների	Գյուղացիների ղեկավար կադրերի վերապատրաստումը

հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում	մասնակցած ղեկավարների թիվը Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր քյուջեում	կառավարության ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում:
3.2. Դպրոցական խորհուրդների անդամների վերապատրաստում՝ խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով	Վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցական խորհրդի անդամների թիվը Դպրոցում իրականացվող ոչ պետական ծրագրերի/նախաձեռնությունների թիվը	
3.3. Աշակերտական խորհուրդների ակտիվության բարձրացում՝ խորհրդի անդամների և դաստիարակության գծով տնօրենի տեղակալի, մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի վերապատրաստման միջոցով		
4. Ներառական կրթության համակարգի զարգացում		
4.1. Հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում և զարգացում	Կրթական հաստատություններում սովորող հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը	
5. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
5.1. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	Վերանորոգված մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների թիվը	
5.2. Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային/համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը Հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ Յուրահանդեսների այցելուների քանակը տարեկան կտրվածքով Թատերական ներկայացումների քանակը Թատերական միջոցառումների մասնակիցների քանակը	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում		
6.1. Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը	Պետությունը հետևողական է նախադպրոցական կրթության օրենքի կիրարկման, ենթաօրենսդրական ակտերի մշակման և գործարկման հարցում:
6.2. Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիկական բազա ունեցող մանկապարտեզների թիվը	
6.3. Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվը	
6.4. Նախադպրոցական	3-6 տարեկան երեխաների	

այլընտրանքային ծառայությունների մատուցում	մախադարոցական հաստատություններում (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ընդգրկվածության %	
---	--	--

5.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

5.2.1. Առողջապահական ոլորտի իրավիճակի վերլուծություն

Բնակչության առողջական վիճակն ու առողջապահության մատչելիությունը

ՀՀ Արագածոտնի մարզի հանրային առողջության վիճակի մասին բնութագրական են **ծնելիությունը, մահացությունը և բնակչության բնական աճը:**

Վերջին տարիների վիճակագրությունը փաստում է, որ մահացության դեպքերի թիվը ինչպես երկրում, այնպես էլ Արագածոտնի մարզում աճել է: 2002թ.-ից ընդհանուր առմամբ սկսել է աճել նաև ծնելիության ցուցանիշը:

Աղյուսակ 29. Առողջության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան Արագածոտնի մարզում

Ծնվածների թվաքանակը			Մահացածների թվաքանակը			Բնական աճը			Մինչև 1 տարեկան մահացած երեխաների թվաքանակը		
2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008
1797	1856	1915	1167	1212	1196	630	644	719	23	15	13

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Բնական աճի պատկերն առավել ակնհայտ է երևում ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերում: Այն ակնհայտորեն ցույց է տալիս, որ 2006 թ-ի համեմատությամբ 2008 թ-ին այդ ցուցանիշը կտրուկ բարձրացել է:

Առողջապահական ծառայությունների հիմնախնդիրները մարզում ներկայումս մտահոգիչ են: Սակայն ոլորտի մատչելիությունը բնութագրող ամփոփ ցուցանիշով՝ 0.242, Արագածոտնի մարզը շատ չի տարբերվում մյուս մարզերից, անգամ՝ մայրաքաղաք Երևանից:

Բավականին մտահոգիչ է մանկական մահացությունը, որի մակարդակը բարձր է նաև երկրի մյուս մարզերում:

Մանկամահացության բարձր ցուցանիշը հետևանք է մի շարք գործոնների.

- **գյուղական համայնքներում նախածննդյան և հետծննդյան ծառայությունների ցածր մատչելիության,**
- **տան պայմաններում ծննդաբերությունների,**
- **մանկան առողջության պահպանման վերաբերյալ բնակչության անբավարար իրազեկության,**
- **սոցիալական անբավարար պայմանների և այլն:**

Չնայած, որ 2006-08 թթ.-երին մանկամահացության դեպքերը 2000 թվականների սկզբից սկսած նվազելու միտումներ են դրսևորում, և զգալիորեն պակասել են մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը, սակայն հիմնախնդիրը դեռևս վերջնականորեն չի լուծվել:

Անցած տարիներին մանկական առողջության պահպանման և մանկամահացության էական կրճատման նպատակով հանրապետությունում և մարզում որոշակի միջոցառումներ են իրականացվել: Մասնավորապես, մարզում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամն ուսուցողական ծրագիր է կազմակերպել, որի շրջանակում ակտիվ վերարտադրողական տարիքի կանանց շրջանում խորհրդատվություններ և ուսուցումներ են իրականացվել: Բացի այդ, առողջության պահպանման առաջնային օղակի բուժանձնակազմի համար վերապատրաստումներ են կազմակերպվել՝ մանկական հիվանդությունների բուժման ուղղությամբ: Մարզպետարանի տվյալների համաձայն, մինչև մեկ տարեկան երեխաների կանխարգելիչ զննումները և պատվաստումներն ընդգրկում են նրանց 95 %-ը:

Մարզի բնակչության առողջական վիճակի մասին կարելի է դատել նաև հիվանդությունների տարածման միտումներով: Դիտարկելով հիվանդությունների տարածման մասին վկայող տվյալները, կարելի է եզրակացնել, որ մարզում հիմնականում մեծ է արյան շրջանառության, ուռուցքա-յին հիվանդություններով և շաքարային դիաբետի բարդություններով տառապող հիվանդների թիվը: Մարզի համար լրջագույն խնդիր են դարձել հոգեկան հիվանդությունները (տես Աղյուսակ 30):

Աղյուսակ 30. Հիվանդությունների դինամիկան Արագածոտնի մարզում

Հիվանդություն	2006թ.	2007թ.	2008 թ.
Շաքարային դիաբետ	1029	1108	1197
Պարբերական հիվանդություններ	88	105	114
Հոգեկան հիվանդություններ	1553	1433	1419
Նորագոյացություններ	1010	982	923
Ոչ շաքարային դիաբետ	7	9	10
Էպիլեպսիա	305	290	301

Աղբյուրը՝ Արագածոտնի մարզպետարանի տվյալներ

Հայաստանը ներկայումս ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածության ցածր ցուցանիշ ունեցող երկրներից է: Սակայն վերջին 4 տարիների ընթացքում գրանցված ՄԻԱՎ վարակի, ՁԻԱՀ-ի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան դեպքերի թիվն աճում է՝ գերազանցելով բոլոր նախորդ տարիների ցուցանիշները:

Արագածոտնի մարզը վարակի գրանցված դեպքերի թվով /18 դեպք/ երկրում ամենացածր ցուցանիշ ունեցող մարզերի շարքում է: Սակայն, մասնագետների կարծիքով, Հայաստանում ՄԻԱՎ-ի դեպքերը 8-10 անգամ ավելին են, քան վկայում է պաշտոնական վիճակագրությունը:

ՄԻԱՎ-ի տարածվածության առումով մարզի բնակչությանը հնարավոր վտանգ են բավականին մեծաթիվ աշխատանքային միգրանտները: Նրանք, վաստակելու նպատակով, ավելի հաճախ մեկնում են այդ հիվանդության տարածվածության բարձր ցուցանիշ ունեցող երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան:

Առաջիկա տարիներին առողջապահության բնագավառում հիմնական գերակայություն է մնում **առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնությունը**:

Սկսած 2006թ.-ից, ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության ծրագրերում ընդգրկվել է երկրի բնակչությունն ամբողջությամբ՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից (բացառությամբ՝ ստոմատոլոգիական բուժօգնության, որն անվճար է միայն բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածների և մինչև 8 տարեկան երեխաների համար): Դրա հետևանքով նկատելիորեն աճել են հաճախումները ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ (տես՝ Աղյուսակ 31):

Աղյուսակ 31. Հաճախումների թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ (2006-2008 թթ.)

հազ մարդ.		
2006թ	2007թ.	2008 թ.
226.9	287.2	300.8

Աղբյուրը` ՀՀ վիճակագրական ծառայություն, ՀՀ մարզերը թվերով 2001-2008, Վիճակագրական ժողովածու

Հաճախումների հարաբերական ցուցանիշները նույնպես վկայում են, որ բնակչությունն այսօր ավելի հաճախ է դիմում կանխարգելիչ բուժհաստատություններ, քան նախորդ տարիներին:

Աղյուսակ 32. Արագածոտնի մարզում մեկ բնակչին ընկնող միջին ամբուլատոր հաճախումների թիվը (2006-2008 թթ.)

2006թ	2007թ.	2008 թ.
1.8	2.1	2.2

Աղբյուրը` ՀՀ վիճակագրական ծառայություն, ՀՀ մարզերը թվերով 2001-2005, Վիճակագրական ժողովածու, Երևան 2009թ.

5.2.2. Առողջապահական համակարգի կառուցվածքային փոփոխությունները

ՀՀ Կառավարության 02.11.2006 թ. N 1911-Ն «ՀՀ մարզերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» որոշմամբ Արագածոտնի մարզի բուժհաստատություններում իրականացվել են հետևյալ կառուցվածքային փոփոխությունները.

1. Աշտարակի տարածաշրջան

«Աշտարակի հիվանդանոց», «Աշտարակի պոլիկլինիկա» և «Աշտարակի մարզային շտապ բժշկական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերությունների միավորմամբ ստեղծվել է «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ: Միավորվել են լաբորատոր-գործիքային և ախտորոշիչ ծառայությունները: Առանձնացվել է նախկին «Աշտարակի մարզային շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ-ի շարժական գույքը և հանձնվել է Թալինի և Ծաղկահովիտի բժշկական կենտրոններին: Կրճատվել է «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը և հասել 70 մահճակալի:

Աղյուսակ 33. «Աշտարակի ԲԿ» հիվանդանոցային մահճակալների թիվը

Բուժհիմնարկ	Առկա բաժանմունքներ	Մահճակալների նախկին թիվը	Մահճակալների առկա թիվը
«Աշտարակի ԲԿ»	վիրաբուժական	45	25
	թերապևտիկ	30	20 /15 մեծերի, 5 մանկական/
	մանկական	10	
	ինֆեկցիոն	10	5 /պալատ/
	մանկաբարձագինեկո-լոգիական	45	20
	վերակենդանացման	/6/	/2/
Ընդամենը		140	70

2. Թալինի տարածաշրջան

«Թալինի հիվանդանոց» և «Թալինի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների միավորմամբ ստեղծվել է «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ: «Աշտարակի մարզային շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ գույքի կազմից, օրենքով սահմանված կարգով, առանձնացվել է Թալինի մասնաճյուղի գույքը և հանձնվել «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, ավելացվել է կանոնադրական կապիտալը:

Ինֆեկցիոն բաժանմունքը տեղափոխվել է հիվանդանոցի հիմնական շենքի առաջին հարկ՝ առանձին մուտքով: Ինֆեկցիոն բաժանմունքի նախկին մասնաշենքը՝ գրեթե 500 քմ, ազատվել է: Հիվանդանոցի և պոլիկլինիկայի ախտորոշիչ ծառայությունները միավորվել են, ստեղծվել է մեկ ախտորոշիչ ծառայություն: Թալինի պոլիկլինիկայի ստորաբաժանում կազմող առանձին շենքում տեղադրված ստոմատոլոգիական բաժանմունքը տեղափոխվել է «Թալինի ԲԿ» ՓԲԸ մասնաշենք, վերոհիշյալ շենքը՝ 1200 ք.մ., ազատվել է:

«Արագածավանի առողջության կենտրոն» ՓԲԸ ստացիոնար մասը լուծարվել և վերակազմակերպվել է որպես «Արագածավանի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ: Կրճատվել է «Արտենիի առողջության կենտրոն» ՓԲԸ ստացիոնար մահճակալների թիվը:

Աղյուսակ 34. Թալինի տարածաշրջանի հիվանդանոցային մահճակալների թիվը

<i>Բուժհիմնարկ</i>	<i>Առկա բաժանմունքներ</i>	<i>Մահճակալների. նախկին թիվը</i>	<i>Մահճակալների առկա թիվը</i>
«Թալինի ԲԿ»	վիրաբուժական	30	10
	թերապևտիկ	15	10 /5 մեծերի, 5 մանկական/
	մանկական	10	
	ինֆեկցիոն	10	8 /պլալատ/
	գինեկոլոգիական	15	6
	մանկաբարձական	20	6
Ընդամենը		100	40
«Արտենիի ԱԿ»	մանկաբարձագինեկոլոգիական	15	5
«Արագածավանի ԱԿ»	մանկաբարձագինեկոլոգիական	10	0
Ընդամենը տարածաշրջանում		125	45

3. Ապարանի տարածաշրջան

«Ապարանի հիվանդանոց» և «Ապարանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների միավորմամբ ստեղծվել է «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ: Միավորման արդյունքում ազատվել է 300 քմ. տարածք, որը հատկացվել է ՀՀ Արագածոտնի մարզի փորձագիտական կենտրոնի Ապարանի մասնաճյուղին: Կրճատվել են նաև կրկնվող՝ լաբորատոր-գործիքային և ախտորոշիչ ծառայությունները:

Աղյուսակ 35. Ապարանի տարածաշրջանի հիվանդանոցային մահճակալների թիվը

<i>Բուժհիմնարկ</i>	<i>Առկա բաժանմունքներ</i>	<i>Մահճակալների. նախկին թիվը</i>	<i>Մահճակալների առկա թիվը</i>
«Ապարանի ԲԿ»	վիրաբուժական	25	20
	թերապևտիկ	10	15
	մանկական	15	

	ինֆեկցիոն	10	5
	մանկաբարձական	15	6
	գինեկոլոգիական	5	4
	տուբերկուլյոզային	30	10
Ընդամենը		110	60
«Արագածի ԱԿ»	թերապևտիկ	4	3
	մանկաբարձական	4	3
ԸՆԴԱՄԵՆԸ		118	66

4. Արագածի տարածաշրջան

«Ծաղկահովիտի հիվանդանոց» և «Ծաղկահովիտի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների միավորմամբ ստեղծվել է «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ: «Աշտարակի մարզային շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ գույքի կազմից, օրենքով սահմանված կարգով, առանձնացվել է Ծաղկահովիտի մասնաճյուղի գույքը և հանձնվել «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին և ավելացվել է կանոնադրական կապիտալը:

Աղյուսակ 36. Արագածի տարածաշրջանի հիվանդանոցային մահճակալների թիվը

Բուժհիմնարկ	Առկա բաժանմունքներ	Մահճակալների նախկին թիվը	Մահճակալների առկա թիվը
«Ծաղկահովիտի ԲԿ»	վիրաբուժական	10	7
	թերապևտիկ	5	7
	մանկական	5	
	ինֆեկցիոն	5	-
	մանկաբարձական	1	6
	գինեկոլոգիական	5	
Ընդամենը		40	20

Բոլոր ծառայությունները կենտրոնացվել են հիմնական մասնաշենքում, ազատվել է 1000 քմ տարածք:

Տուբերկուլյոզային կաբինետները վերանվանվել են «Թոքային հիվանդությունների հայտնաբերման կաբինետներ»՝ վերապահելով դիսպանսեր հսկողության գործառույթ, կազմակերպվել է խորխի բակտերիոսկոպիկ հետազոտության գործառույթը:

Աղյուսակ 37. Արագածոտնի մարզի բուժհաստատությունների թիվը (2006-2009թթ.)

Բուժհաստատություններ	2006թ.	2007թ.	2008 թ.	2009 թ.
Հիվանդանոցներ	4	4	-	-
Բժշկական կենտրոն	-	-	4	4
Պոլիկլինիկաներ	4	4	-	-
Ստոմ. պոլիկլինիկաներ	1	1	2	2
Առողջության կենտրոններ	3	3	2	2
Գյուղական բուժ. ամբուլատորիաներ	13	14	15	16
Շտապ բուժօգնության կայաններ	1	1	-	-

Աղբյուրը՝ Արագածոտնի մարզպետարան

Ընտանեկան բժշկների վերապատրաստում

Շնորհիվ ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման, իրավիճակն առաջնային բուժօգնության ոլորտում բարելավվել է: Առայսօր մարզում վերապատրաստվել են 36 ընտանեկան բժիշկ և 43 ընտանեկան բուժքույր: Մինչև 2009 թ. ավարտը մարզում կվերապատրաստվեն ևս 11 բժիշկ և 6 բուժքույր: Ընտանեկան բժիշկների մասնագիտացման գործընթացը կավարտվի 2010 թ.:

USAID-ը մարզի 92 բուժակման կաբարձական կետերից առաջին փուլով իրականացնում է 60 բուժքույրերի վերապատրաստում՝ որպես համայնքային բուժքույր:

5.2.3. Առողջապահական համակարգի հիմնախնդիրները

ՀՀ Արագածոտնի մարզի առողջապահական համակարգում բավականին լուրջ հիմնախնդիրներ կան: Վերջին տարիներին ԱԱՊ ծրագրի շրջանակներում ներդրումները կատարվել են բացառապես ամբուլատոր օղակում:

Սակայն մարզի տարածքի մեծ մասը կազմում են բարձր լեռնային բնակավայրերը /Ծաղկահովիտ, Ապարան/, և լեռնային բնակավայրերը, որը բերում է բուժօգնության երկարատև ջեռուցման սեզոնի հետ կապված մեծ ծախսերի: Այդ ծախսերը չեն ավելացել:

Առաջիկայում ՀՀ առողջապահության օպտիմալացման ծրագրի շրջանակներում ԱԾԻԳ-ի կողմից մարզում նախատեսվում են խոշոր ներդրումներ՝ շենքերի վերանորոգման, սարքավորումների և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերման համար:

Առողջապահական համակարգը պետության կողմից ֆինանսավորվում է մեկ հիվանդի հաշվով: Այն հիմնականում բավարարում է պետպատվերի շրջանակում ընդգրկված հիվանդությունների ցանկով նախատեսված հիվանդությունների բուժումը և հիվանդների սպասարկումը: Սակայն մարզի բնական պայմանները՝ բարձր լեռնայնությունը, դրա հետ կապված՝ ձմեռային սեզոնի երկարատևությունը ստիպում են լրացուցիչ ծախսեր իրականացնել: Դրա պատճառով հատկացված գումարները երբեմն չեն բավարարում, և շատ հաստատություններ հաճախ մեծ պարտքեր են կուտակում:

Ուստի, կարիք է առաջացել վերանայել լեռնային և բարձրլեռնային գոտում գործող բուժօգնության ֆինանսավորման սկզբունքները և լրացուցիչ գումարներ նախատեսել դրանց ջեռուցման նպատակով:

Անհրաժեշտ նաև թույլատրել տեղերում գլոբալ բյուջեյի ծախսային մասի հողվածից-հողված որոշակի փոփոխություններ կատարել՝ բյուջեի կատարման խնդիրներն ավելի ճկուն լուծելու համար:

Գյուղական համայնքներում ամբուլատոր ծառայության կողմից շտապ օգնության կանչերը պատշաճ մակարդակով չեն սպասարկվում՝ հեռախոսակապի անկատարության, գիշերային հերթափոխային բրիգադների բացակայության, և այլ պատճառներով: Նպատակահարմար է շտապ օգնության կանչերի սպասարկումը իրականացնել բացառապես շտապ օգնության ծառայության կողմից:

Հատկապես անհարմարություններ են առաջացել շտապօգնության հեռախոսային կանչերի հասանելիության ապահովման գործում: Նախկինում բոլոր համայնքներում գործում էր 1-03 հեռախոսահամարը, որից, առանց դժվարության, օգտվում էին բոլոր բնակիչները: Ներկայումս այդ պարզ համարը փոխարինվել է հնգանիշ հեռախոսահամարով, որը բավականին դժվարություններ է առաջացնում հատկապես գյուղական բնակչության շրջանում: Այդ պատճառով նախկին, արդեն ավանդական դարձած համարով իրականացված կանչերը չեն հասնում կայաններ: Դրա հետևանքով շատ ահազանգեր պարզապես մնում են անպատասխան:

Այդ հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտություն է առաջացել վերականգնել նախկին կարճ հեռախոսահամարը և այն հասանելի դարձնել բոլոր համայնքների համար:

Մարզի համար խիստ հիմնահարց է ամբուլատորիաների համայնքային ենթակայությունների խնդիրը: Ներկայումս մարզի բոլոր ամբուլատորիաները համայնքային ենթակայության են: Սակայն համայնքների ֆինանսական սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս իրականացնել այդ հաստատությունների պահպանման բոլոր անհրաժեշտ ծախսերը: Որոշ ամբուլատորիաներում կադրային հարցերը չեն վերահսկվում:

ԲՄԿ-ներին պատկանող շենքերը հիմնականում գտնվում են անմխիթար վիճակում: Հատկապես վատ են ամբուլատորիաների ենթակայության ներքո գործող ԲՄԿ-ների շենքային պայմանները: Որոշ ԲՄԿ-ներ գործում են գյուղապետարաններում, դպրոցներում կամ բուժքրոջ տանը:

Հատկապես անբավարար է մարզի մի շարք բնակավայրերի, հատկապես՝ հեռավոր և բարձրլեռնային համայնքների բուժկետերի վիճակը: Դրանցում աղքատ է նյութատեխնիկական բազան, պակաս է բուժաշխատողների թիվը, նրանց մասնագիտական կարողությունները չեն բավարարում իրենց նկատմամբ ներկայացվող պահանջները:

Հատկապես լուրջ հիմնախնդիրներ կան բուժհաստատությունները բժշկական սարքավորումներով ապահովելու գործում: Այդ մասին պատկերացում է տալիս ստորև ներկայացվող աղյուսակը:

Աղյուսակ 38. ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկներին անհրաժեշտ բժշկական սարքավորումներ:

Պահանջվող սարքավորումներ
«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ավտոկլավ
մոնիտորներ
ԷՍԳ
Նարկոզի ապարատ
Շնչառական ապարատ
Ռենտգենոսկոպիայի ապարատ
Ռենտգենոգրաֆիայի ապարատ
Վիրահատական սեղաններ
Վիրաբուժական գործիքների հավաքածու
Նորածնային տաքացվող սեղան
«Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Կարդիոմոնիտոր
Գաստրոսկոպ
ԷԷԳ
Ստացիոնար կարդիոէլեկտրագրաֆ
Արհեստական շնչառության ապարատ
Ստացիոնար էխոյի ապարատ
Կլինիկական անալիզատոր
Դոպլեր հետազոտության ապարատ
«Թայինի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ԷՍԳ և ԷԷԳ
Դոպլեր հետազոտության ապարատ
ԱՇՖ-ի որոշման ապարատ
Գաստրոսկոպ
Վիրաբուժական գործիքների հավաքածու- 2 հատ

Կարդիոմոնիտոր
Դեֆիբրիլիատոր
Գինեկոլոգիական բազկաթոռ + գինեկոլոգիական գործիքներ
Ավտոկլավ
Անեսթեզիայի սարք
Վիրահատական սեղան
ՔԿԱ գործիքների հավաքածու
«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ
Գաստրոսկոպ
Վիրաբուժական գործիքների հավաքածու
Կյուվեզ
Էլեկտրոկոագուլյատոր
Արհեստական շնչառության ապարատ
Կարդիոմոնիտոր
«Արտենիի առողջության կենտրոն» ՓԲԸ
ավտոկլավ
չոր մանրէագերծիչ լամպ
մանրէասպան լամպ
«Արագածի առողջության կենտրոն» ՓԲԸ
ավտոկլավ
չոր մանրէագերծիչ լամպ
մանրէասպան լամպ

Չափազանց կարևոր է նաև բուժհիմնարկների նորոգման խնդիրը: Դրանք այլևս չեն կարող քավարարել նման հիմնարկներին ներկայացվող պահանջները:

Աղյուսակ 39. ՀՀ Արագածոտնի մարզի վերանորոգման կարիք ունեցող բուժհիմնարկներ

Աշտարակի տարածք	
1.	Շամիրամի ԲՄԿ, /Արուճի ԲԱ/
2.	Դպրեվանքի ԲՄԿ, /Արուճի ԲԱ/
3.	Տեղերի ԲՄԿ, /Ագարակի ԲԱ/
4.	Չորափի ԲՄԿ, /Ագարակի ԲԱ/
5.	Բյուրականի ԲԱ
6.	Անտառուտի ԲՄԿ, /Բյուրականի ԲԱ/
7.	Օրգովի ԲՄԿ, /Բյուրականի ԲԱ/
8.	Լեռնարոտի ԲՄԿ, /Կոշի ԲԱ/
9.	Ուջանի ԲԱ
10.	Արագածոտնի ԲՄԿ, /Ուջանի ԲԱ/
11.	Օհանավանի ԲՄԿ, /Կարբիի ԲԱ/
12.	Արտաշավանի ԲՄԿ, /Կարբիի ԲԱ/
13.	Սաղմոսավանի ԲՄԿ, /Կարբիի ԲԱ/
14.	Բազմադրյուրի ԲՄԿ, /Փարայիի ԲԱ/
15.	Սասունիկի ԲԱ
Ապարանի տարածք	
16.	Սարալանջի ԲՄԿ /Ապարանի ԲԿ/

17.	Վարդենիսի ԲՄԿ, /Ապարանի ԲԿ/
18.	Չքնաղի ԲՄԿ, /Ապարանի ԲԿ/
19.	Թթուջրի ԲՄԿ, /Ապարանի ԲԿ/
20.	Ձորագլխի ԲՄԿ, /Ապարանի ԲԿ/
21.	Արայի ԲՄԿ, /Արագածի ԱԿ/
22.	Երնջատափի ԲՄԿ, /Շենավանի ԲԱ/
23.	Նորաշենի ԲՄԿ, /Շենավանի ԲԱ/
Թալինի տարածք	
24.	Հացաշենի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
25.	Սուսերի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
26.	Սորիկի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
27.	Հակկոյի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
28.	Գյալթոյի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
29.	Բարոժի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
30.	Իրինդի ԲՄԿ, /Թալինի ԲԿ/
31.	Գետափի ԲՄԿ, /Արագածավանի ԱԿ/
32.	Թլիկի ԲՄԿ, /Արագածավանի ԱԿ/
33.	Ծաղկասարի ԲՄԿ, /Մաստարայի ԲԱ/
34.	Գառնահովիտի ԲՄԿ, /Մաստարայի ԲԱ/
35.	Ավթոնայի ԲՄԿ, /Ներքին Բազմաբերդի ԲԱ/
36.	Բայսզի ԲՄԿ, /Ներքին Բազմաբերդի ԲԱ/
37.	Դիանի ԲՄԿ, /Ներքին Բազմաբերդի ԲԱ/
Արագածի տարածք	
38.	Ծաղկահովիտի բժշկական կենտրոն ՓԲԸ
39.	Ռ-յա Թագայի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
40.	Սիրաքի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
41.	Շենկանիի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
42.	Ամրե Թագայի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
43.	Սանգյառի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
44.	Գերեկի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
45.	Օրթանյայի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
46.	Լեռնապարի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
47.	Ջամշուի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
48.	Ավշենի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
49.	Սիփանի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
50.	Գեղաղիրի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/
51.	Հնաբերդի ԲՄԿ, /Ծաղկահովիտի ԱԿ/

Մասնագետների պակասը

Օպտիմալացման հետևանքով բուժանձնակազմի թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային համակարգում կրճատվել է: Սակայն բժիշկ-մասնագետ-սպասարկվող բնակչություն հարաբերակցությունը մնացել է նույնը: Մյուս մարզերի հետ համեմատած, Արագածոտնի մարզում բժիշկ-բնակչություն հարաբերակցության ցուցանիշը բարձր է:

Աղյուսակ 40. ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկներում աշխատող բուժաշխատողների թիվը 2006-2009 թվականների ընթացքում

	2006թ. հունվարի 1-ի դրությամբ	2007թ. հունվարի 1-ի դրությամբ	2008թ. հունվարի 1-ի դրությամբ	2009թ. հունվարի 1-ի դրությամբ
Բժիշկ	224	225	214	214
Բուժքույր	675	646	628	626
Այլ աշխատող	296	299	299	288
ԸՆԴԱՄԵՆԸ	1195	1170	1141	1128

Բոլոր մասնագիտությունների գծով բժիշկներ					
2006		2007		2008	
Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով
241	17.2	234	16.7	214	15.3

Միջին բուժանձնակազմ					
2006		2007		2008	
Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով
730	52.1	699	49.9	626	44.7

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2006-2008, Վիճակագրական ժողովածու, Երևան 2009թ.

Ներկայումս ՀՀ Արագածոտնի մարզի բուժհաստատություններն ունեն հետևյալ մասնագետների կարիքը.

1.«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ

1.1 Օպերատոր գինեկոլոգ

1.2 Ուրոլոգ

2.«Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ

2.1 Օպերատոր գինեկոլոգ

2.2 Ուրոլոգ

2.3 Անեսթեզիոլոգ

2.4 Վնասվածքաբան

3.«Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

3.1 Անեսթեզիոլոգ

4.«Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ

4.1 Նյարդաբան

ՀՀ Արագածոտնի մարզի շտապ բժշկական ծառայությունների վիճակը և հիմնախնդիրները

ՀՀ Արագածոտնի մարզի շտապ բժշկական ծառայությունն իրականացնում են մարզի բժշկական 4 /Աշտարակ, Թալին, Ապարան, Ծաղկահովիտ/, 1 առողջության /Արագած/

կենտրոնները և բժշկական 6 ամբուլատորիաները /Արուն, Ագարակ, Կարբի, Ներքին Բազմաբերդ, Մաստարա, Արագածավան/: Առողջության կենտրոնը և բժշկական ամբուլատորիաները շտապ օգնության ծառայությունը իրականացնում են ԱԾԻԳ-ի հատկացրած մեքենաներով:

Սակայն դրանց տեխնիկական վիճակը հեռու է բավարար լինելուց: Այդ մասին են վկայում ստորև բերվող աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 41. Տվյալների մարզի բուժօգնության շտապօգնության ծառայությունների մասին

<i>N</i>	<i>Բուժօգնարկ</i>	<i>Մեքենաների քիչը և վիճակը</i>	<i>Շտապ օգն. բրիգադների քանակը</i>	<i>Շտապ օգն. բրիգադների տեսակը</i>
1.	«Աշտարակի ԲԿ» ՓԲԸ	5 ենթակա են վերանորոգման	4	ընդհանուր բժշկական
2.	«Թալինի ԲԿ» ՓԲԸ	3 1-ը ենթակա է դուրս գրման, 2-ը վերանորոգման	3	ընդհանուր բժշկական
3.	«Ապարանի ԲԿ» ՓԲԸ	1	4	ընդհանուր բժշկական
4.	«Ծաղկահովիտի ԲԿ» ՓԲԸ	4 2-ը ենթակա է դուրս գրման,	4	ընդհանուր բժշկական
5.	«Արագածի ԱԿ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական
6.	«Արունի ԲԱ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական
7.	«Ագարակի ԲԱ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական
8.	«Կարբիի ԲԱ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական
9.	«Ներքին Բազմաբերդի ԲԱ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական
10.	«Մաստարայի ԲԱ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական
11.	«Արագածավանի ԲԱ» ՓԲԸ	1	1	ընդհ. բժշկական

Ինչպես երևում է աղյուսակից, ԲԿ-ների տեխնիկական պարկը գրեթե ամբողջապես հնացած է և հետագա շահագործման համար պիտանի չէ: Հաճախակի են մեքենաների խափանումները, որը վատ բուժսպասարկման պատճառ է դառնում: Շատ հաճախ, հիվանդի մոտ մեկնող շտապօգնության մեքենան ճանապարհին խափանվում է, և կանչը մնում է չսպասարկված:

Չափազանց կարևոր է նաև կադրերով ապահովվածության խնդիրը: Մարզի բոլոր ԲԿ ՓԲԸ-ները կարիք ունեն բժիշկների: Անհրաժեշտ է կազմակերպել նաև շտապօգնության նոր բրիգադներ: Տարիներ շարունակ համապատասխան հանրապետական կառույցներին մարզպետարանի ներկայացրած պահանջները մնացել են անպատասխան:

Աղյուսակ 42. Մարզի շտապօգնության ծառայությունների համար անհրաժեշտ մեքենաների և բուժկաղերի թիվը

N	Բուժհիմնարկ	Մեքենաների թիվը, մակնիշը	Կաղերի թիվը	Մասնագիտական բրիգադաների թիվը
1.	«Աշտարակի ԲԿ» ՓԲԸ	5 /առաջային քարշիշը ֆոլքսֆագեն մակնիշի/	5 բժիշկ	5 բրիգադա
2.	«Թալինի ԲԿ» ՓԲԸ	2 ՈՒԱՁ, 1 ԳԱՁԵԼ /ռեանիմացիոն սարքավորումներով/	1 բժիշկ- ռեանիմատոլոգ	1 ռեանիմացիոն բրիգադա
3.	«Ապարանի ԲԿ» ՓԲԸ	1 ՈՒԱՁ, 1 Ֆորդ կամ Ֆոլքսֆագեն	2 բժիշկ	-
4.	«Ծաղկահովիտի ԲԿ» ՓԲԸ	2 ՈՒԱՁ	4 բժիշկ	-

Մարզի Արագածավան, Ներքին Բազմաբերդ, Արուն, Ագարակ, Կարբի, Արագած, Մաստարա համայնքների ամբուլատորիաները կառուցվել և նորոգվել են 2000-01 թթ. «Առողջապահության ֆինանսավորման բարելավման և առողջության առաջնային պահպանման զարգացման» 2979-AM առաջին վարկային ծրագրի շրջանակներում և բարվոք վիճակում են: Դրանք հագեցած են անհրաժեշտ սարքավորումներով, բուժգործիքներով և տրանսպորտային միջոցներով:

2006թ.-ին նույն ծրագրի երկրորդ փուլում հիմնովին նորոգվել են Ոսկեվազ և Շենավան համայնքների ամբուլատորիաները, իսկ Օշականում կառուցվել է նոր շենք:

2007 թ.-ին, «ՆՕՎԱ» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ, Թալինի տարածքի մանկաբարձագինեկոլոգիական ծառայության բուժաշխատողների կրթական մակարդակի բարձրացման, ինչպես նաև 18 ԲՄԿ-ներում նորոգումների, և գույքով ու բուժգործիքներով ապահովվելու ուղղությամբ որոշակի աշխատանքներ են իրականացվել:

Նույն ծրագրով, նորածինների բուժօգնությունը կազմակերպելու նպատակով, «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը համալրվել է 15000 ԱՄՆ դոլար արժողությամբ նորագույն սարքավորումներով:

2007-2008թթ. «ՆՕՎԱ» միջազգային բարեգործական կազմակերպությունը նորոգել և գույքով ու բուժգործիքներով ապահովել է մարզի 18 բուժական մանկաբարձական կետեր /ԲՄԿ/

1. Թալինի պոլիկլինիկա	11. Լուսակնի ԲՄԿ
2. Արեգի ԲՄԿ	12. Դավթաշենի ԲՄԿ
3. Նոր Արթիկի ԲՄԿ	13. Ակունքի ԲՄԿ
4. Դաշտաղեմի ԲՄԿ	14. Չարինջայի ԲՄԿ
5. Կարմրաշենի ԲՄԿ	15. Կաքավաձորի ԲՄԿ
6. Կաթնաղբյուրի ԲՄԿ	16. Ներքին Մասնաշենի ԲՄԿ
7. Աշնակի ԲՄԿ	17. Վերին Մասնաշենի ԲՄԿ
8. Եղնիկի ԲՄԿ	18. Ագարակի ԲՄԿ - կառուցվել և կահավորվել է ՀՀ Առողջապահության նախարարի և ՆՕՎԱ ծրագրի կողմից:
9. Ոսկեթասի ԲՄԿ	
10. Շղարշիկի ԲՄԿ	

Համաշխարհային բանկի Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակի /ԱԾԻԳ/ կողմից 2008թ.-ից սկսվել են «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ շենքի հիմնանորոգման, «Քուչակի բժշկական ամբուլատորիա», «Արտենիի առողջության կենտրոն» ՓԲԸ-ների և «Ուշիի առողջության առաջնային պահպանման կենտրոնի» նոր շենքերի կառուցման աշխատանքները: 2009թ.ին ավարտվել է «Քուչակի բժշկական ամբուլատորիա», «Ուշիի առողջության առաջնային պահպանման կենտրոնի» շենքերի կառուցումը: «Արտենիի առողջության

կենտրոն» ՓԲԸ նոր կառուցված շենքում ընթանում են ներքին հարդարման աշխատանքները: Մինչև հոկտեմբերի վերջը կավարտվեն Ապարանի բժշկական կենտրոնի հիմնանորոգումները:

2008թ.-ին, Առողջության Առաջնային Պահպանման Բարեփոխումների /ԱԱՊԲ/ ծրագրի հատկացրած միջոցների հաշվին ավարտվել են մարզի 21 բուժակնանկաբարձական կետերի նորոգումներն ու կահավորումը`

1. Նոր Ամանոսի ԲՄԿ	11. Հարթավանի ԲՄԿ
2. Ավանի ԲՄԿ	12. Ափնայի ԲՄԿ
3. Նոր Եղեսիայի ԲՄԿ	13. Յամաքասարի ԲՄԿ
4. Ոսկեհատի ԲՄԿ	14. Վերին Բազմաբերդի ԲՄԿ
5. Գազարավանի ԲՄԿ	15. Բերքառատի ԲՄԿ
6. Նիգավանի ԲՄԿ	16. Գեղաձորի ԲՄԿ
7. Լուսազյուղի ԲՄԿ	17. Վարդաբլուրի ԲՄԿ
8. Մուլքիի ԲՄԿ	18. Ալագյազի ԲՄԿ
9. Ծաղկաշենի ԲՄԿ	19. Գեղարտի ԲՄԿ
10. Վարդենուտի ԲՄԿ	20. Ծիլքարի ԲՄԿ
	21. Նորաշենի ԲՄԿ

Ծառայությունների որակի զարգացման ֆինանսական խթանների բացակայությունը

2006 թ. սկսած առողջապահական համակարգի ֆինանսական ծավալների ավելացումը և ժամանակին ֆինանսավորումը զգալիորեն նպաստել են առաջնային օղակի բուժաշխատողների աշխատավարձի բարձրացմանը, որը դրական է անդրադարձել մատուցվող ծառայությունների որակի վրա: Այնուամենայնիվ, բուժանձնակազմի ոչ բավարար վերապատրաստումները դեռևս չեն ապահովում սպասարկման բարձր որակ, ինչի արդյունքում բնակչությունն այսօր ավելի հակված է «ինքնուրույն ուղեգրվելու» հիվանդանոցային մասնագետների մոտ` համապատասխան բուժսպասարկում ստանալու նպատակով:

Սակայն, հիվանդանոցային համակարգը նույնպես վերափոխման կարիք ունի: Չնայած, վերջին տարիներին պետական ֆինանսավորումը զգալիորեն ավելացել է, ինչպես նաև փոքր ինչ բարելավվել է բնակչության վճարունակությունը, սակայն համակարգում վիճակը դեռևս մնում է խնդրահարույց: Փաստորեն, հատկացվող բյուջետային միջոցները ուղղվում են ոչ թե բուժօգնության բարելավմանը, այլ համակարգի, այդ թվում` համապատասխան ծանրաբեռնվածությամբ չապահովված կադրերի, մահճակալների և այլնի պահպանմանը: Այսպես` չնայած, որ օպտիմալացման հետևանքով, վերջին տարիների ընթացքում մահճակալային ֆոնդը նվազել է (տես Աղյուսակ 43), ըստ մարզպետարանի տվյալների, 2006թ. այն շարունակում է գործել գրեթե 30 % թերժանրաբեռնվածությամբ:

Աղյուսակ 43. Բնակչության ապահովվածությունը մահճակալային ֆոնդով և դրա օգտագործումը

Մարզը	Մահճակալների թիվը					
	Բացարձակ թվեր			10000 բնակչի հաշվով		
	2006	2007	2008	2006	2007	2008
ԱՐԱԳԱԾՈՏՆ	468	423	201	36.5	30.4	14.3

Ինչպես առաջնային բուժօգնության, այնպես էլ հիվանդանոցային ցանցի համար արդիական է նյութատեխնիկական բազայի բարելավման խնդիրը: Այսպես, հիվանդանոցները ոչ միայն սարքավորումների (վիրաբուժական կոմպլեկտ, արհեստական շնչառության, ռենտգեն ապարատ և այլն), այլև դեղերի, ներարկիչների, գրասենյակային կահույքի կարիք ունեն:


Լրջագույն խնդիր է շենքային պայմանների անբավարար վիճակը: Ներկայումս Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի բժշկական կենտրոնը հիմնանորոգման կարիք ունի: Ավելին, Արագածի տարածաշրջանի՝ բարձրլեռնային լինելու հանգամանքն ավելի հրատապ է դարձնում մարզի այդ հատվածում արդյունավետ բուժսպասարկում ապահովելու խնդիրը:

5.2.4. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

Առողջապահության ոլորտում ՀՀ կառավարության հաստատած ԱՀՌԾ-ի կատարման հանրապետական միջոցառումները անմիջական ազդեցություն կունենան Արագածոտնի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, մալարիայի, տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ուղղություններն ու նրանց համապատասխան մշակված միջոցառումները: Դրանք տարածաշրջանային մակարդակով լրացնելու և, հետևաբար, ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ նկատի ունենալով մարզային յուրահատկությունները:

Մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակն է **բուժճառայությունների որակի և մատչելիության բարձրացումը**: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է **առողջության առաջնային պահպանման մակարդակի բարելավման, առաջնային և երկրորդային բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները** (տես՝ Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները:



5.2.5. Մարզի առողջապահության ոլորտի ռազմավարությունը և Հազարամյակի զարգացման նպատակները

Զարգացման նշված ուղղությունները համահունչ են ՄԱԿ-ի հռչակած և Հայաստանի կողմից ընդունած Հազարամյակի զարգացման նպատակներին: Նրանց իրականացումը երկարաժամկետ հեռանկարում պետք է նպաստի մարզում մանկական մահացության նվազմանը և մայրական մահացության ցածր մակարդակի պահպանմանը, ինչպես նաև ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի և այլ տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, Արագածոտնի մարզում ակնկալվում է 2009թ.-ին 1000 կենդանածինների հաշվով մանկական մահացությունը նվազեցնել մինչև 10% (տես Աղյուսակ 44):

Աղյուսակ 44. Հազարամյակի զարգացման նպատակներն առողջապահության ոլորտում

Նպատակ և խնդիրներ	Ցուցանիշ	2006	2007	2008	2009
Մինչև 2015թ. կանգնեցնել մայրիայի և այլ հիվանդությունների տարածումը	1. Պալարախտի հետևանքով առաջացած մահվան դեպքերը	1	2	5	0
	2. Պալարախտի դեպքերի հայտնաբերում	71	53	79	23
	3. բուժում	47	35	49	16

5.2.6. Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը

Ընդհանուր առմամբ, պետական բյուջեի հատկացումները 2005 թվականից սկսել են ավելանալ: Այդ նույն միտումն է նկատվում առողջապահական առանձին օղակներում: Այսպես, բուժսպասարկման առաջնային օղակի ծախսերը 2005 թ.-ին 10 %-ով գերազանցել են նախորդ տարիների ծախսերի ծավալը: Հիվանդանոցային բուժօգնության գծով նախորդ տարիների համեմատ ծախսերը աճել են 14 %-ով:

Սկսած 2006 թ.-ից Արագածոտնի մարզի առողջապահության ոլորտի գրեթե բոլոր ուղղություններով տարեկան պետական հատկացումները ավելացել են 20-25%-ով: Ընդ որում, առաջնային բուժօգնության ֆինանսավորումը, որպես առողջապահության զարգացման գերակա ուղղություն, աճում է առաջանցիկ տեմպերով: Հավանաբար, դա հնարավորություն կընձեռի բարելավելու ոչ միայն սոցիալապես խոցելի խմբերի, այլև ամբողջ բնակչության առաջնային բուժսպասարկման մատչելիությունը:

2008 թվականին, 2007 թվականի համեմատ, առողջապահությանը պետական բյուջեից հատկացումները ավելացել են 6693.0 մլն. դրամով: Այդ գումարի 40.6 տոկոսը՝ մոտ 2719.1 մլն. դրամ, ուղղվել է բնակչության առողջության առաջնային պահպանմանը: Այն կազմում է առողջապահության ընդհանուր ծախսերի 35.6 %-ը: 2009 թ.- ին այդ ցուցանիշը կազմել է՝ 35 %, իսկ 2010 թ.-ին կհասնի 36 % - ի:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժօգնարկների 2007թ.-ի գլոբալ բյուջեն կազմել է 886,7 մլն. դրամ և 2006թ. համեմատ աճել է 15.5%-ով:

2008թ.-ի գլոբալ բյուջեն 1070, 3 մլն. դրամ է և նախորդ տարվա համեմատությամբ աճել է 20.6% -ով:

2009թ.-ին մարզի առողջապահությանն հատկացվող գլոբալ բյուջեն 1097,2 մլն. դրամ է և 2008թ. համեմատությամբ աճել է 2.5%-ով

Դիտարկվող ժամանակահատվածում բյուջեով նախատեսված գումարներն ամբողջությամբ ստացվել են:


Ստորև ներկայացվում է Արագածոտն մարզի առողջապահության ոլորտին տրամադրվող պետական բյուջեի միջոցների ծավալն՝ ըստ տարիների (տես՝ Աղյուսակ 45):

Աղյուսակ 45. Պետական բյուջեի ծախսերը Արագածոտնի մարզի առողջապահության ոլորտում

	2005	2006	2007	2008
Ընդամենը, մլն. դրամ	672559.4	767912.9	886743.4	1070254.7
1. Հիվանդանոցային բուժօգնություն	256528.3	258570.5	325644.0	336742.4
2. Առաջնային (ամբուլատոր պոլիկլինիկական) բուժօգնություն	416031.1	509342.4	561099.4	733512.2

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան և ՊԱԳ-ի Արագածոտնի մարզային կենտրոն

Գրաֆիկական պատկեր 18. Պետական ներդրումները մարզում 2005-2008 թ.թ.



ԱԱՊԲ ծրագրի աջակցությամբ, համաձայն ՀՀ Կառավարության՝ 30.03.2006թ. թիվ 420-Ն «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» որոշման, ընթացքի մեջ է բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման բժշկի ազատ ընտրության գործընթացը: Մարզի բուժհիմնարկներում գրանցվել է 110570 մարդ, որը մարզի ողջ բնակչության 78.73% -ն է:

5.2.6. Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Ռիսկեր
<p>Ոլորտային նպատակ՝</p> <p>Բարելավել բուժապասարկման մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում</p>	<ol style="list-style-type: none"> Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, հազար մարդ Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ բնակչի հաշվով Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած 	<p>Առողջապահության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների:</p> <p>Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:</p>

	<p>ծնունդներ</p> <p>7. Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, դեպքերի թիվը 10000 բնակիչի հաշվով</p> <p>8. ՄԻԱՎ տարածվածության աստիճանը, վարակակիրների թիվը՝ 10000 բնակչի հաշվով</p> <p>9. Բնակչության հիվանդացությունը ակտիվ տուբերկուլյոզով՝ դեպքերի թիվը 10000 բնակչի հաշվով</p>	
<p>1. Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացությունների և մահացության նվազմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը:</p>		
<p>1.1. Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ առավելագույնս ուշադրություն դարձնելով գյուղական բուժամբուլատորիաների աշխատակազմի</p>	<p>Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի թիվը ամբուլատոր-պոլիկլինիկական մակարդակի անձնակազմի ընդհանուր թվում, %</p>	<p>Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է վերապատրաստման գիտելիքները:</p> <p>Մասնագետների արտահոսքը ցածր է:</p> <p>Երեխաներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մանսնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից:</p> <p>Բուժանձնակազմը և ծնողները համագործակցում են</p>
<p>1.2. Մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում</p>	<p>Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով</p> <p>Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով</p> <p>Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով</p>	
<p>1.3. Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում</p>	<p>Որակյալ բժշկական միջակտությանը ընթացած ծնունդների տեսակարար կշիռը, %</p> <p>Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով</p>	
<p>1.4. Մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների կանխարգելիչ գնումների հաճախակի իրականացում</p>	<p>Երեխաների քրոնիկ թերսնուցման և սակավարյունության դեպքերի քանակ</p> <p>Պատվաստված երեխաների տեսակարար կշիռը երեխաների ընդհանուր թվում, %</p>	
<p>2. Գյուղական բնակավայրերում առողջության պահպանման առաջնային ծառայությունների մատչելիության բարձրացում, որի արդյունքում մարզի բնակչության գերակշռող մեծամասնությունը հնարավորություն կունենա օգտվելու որակյալ առաջնային բուժօգնության ծառայություններից:</p>		
<p>Գյուղական համայնքներում /հատկապես հեռավոր և</p>	<p>Գյուղական համայնքների բնակչության %, որը օգտվել է շրջիկ</p>	<p>Կառավարության կողմից հա,տատված առողջապա-</p>

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

սահմանամերձ/ շրջիկ բժշկական խմբերի կանոնավոր այցելությունների կազմակերպում	բժշկական խմբերի ծառայություններից Շրջիկ բժշկական խմբերի ծառայությունների որակից գյուղական բնակչության բավարարվածության աստիճան	հսկան ծրագրերը իրագործվում են գյուղական վայրերում: Շրջիկ բուժապասարկման ծառայություն իրականացնող անձնակազմն առկա է:
3.Բուժապասարկման ենթակառուցվածքի /առաջնային և երկրորդային/ և նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը:		
3.1.Բժշկական հաստատությունների /հատկապես գյուղական/ շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված բուժհիմնարկների տեսակարար կշիռը,%	Շենքերի, սարքավորումների, շրջիկ բուժապասարկման պարագաների պահպանման և կառավարման կարողությունները մարզում առկա են:
3.2.Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Ախտորոշիչ սարքավորումներով ապահովված հիմնարկների /պոլիկլինիկական-ամբուլատոր,հիվանդանոցային/ տեսակարար կշիռը, %	
3.3.Գյուղական համայնքների /հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ/ ամբուլատորիաների, բուժկետերի առաջին օգնության պարագաներով ապահովում	Առաջին օգնության պարագաներով ապահովված պոլիկլինիկական-ամբուլատոր հիմնարկների տեսակարար կշիռը, %	
3.4.Հիվանդանոցների հիմնանորոգում և ժամանակակից սարքավորումներով ապահովում	Հիմնանորոգված հիվանդանոցների թիվ Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռը, % Երևան ուղեգրված հիվանդների տեսակարար կշիռը բուժօգնություն ստացածների ընդհանուր թվում, %	
4.Բուժհաստատությունների կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում		
4.1.Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում ժամանակակից կառավարման մեթոդների և այլընտրանքային/ արտաբյուջետային ֆինանսական աղբյուրների ներգրավման հմտությունների վերաբերյալ 4.2.Առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շարունակում: Հիվանդանոցային համակարգի օպտիմալացման արդյունքում համակարգի ներքին առողիտի կազմակերպում՝ նյութատեխնիկական բազայի ուսումնասիրման և գույքագրման նպատակով:	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը, % Բուժհաստատության կողմից մատուցվող մասնավոր ծառայություններից գոյացող միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեյում, % Վերամիավորված բուժհաստատությունների թիվ Վերամիավորված բաժանմունքների թիվ	Բուժհիմնարկների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ:
5.Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման պայքարի ուժեղացում, ինչը կբերի սեռավարակիրների թվի կրճատման և մահացության դեղքերի նվազման		
Անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ դպրոցներում դասընթացների կազմակերպում	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակված հիվանդների թիվը՝ 100000 բնակչի	Տեղական իշխանությունները, դպրոցները, բուժհիմնարկները շահագրգռված են

	հաշվով Դասընթացներին ներգրավված դպրոցների տեսակարար կշիռը, %	կանխարգելման միջոցառումների շարունակելիության մեջ:
ՁԼՄ-ների միջոցով տարափոխիկ հիվանդությունների /հատկապես պալարաշտի/, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում	ՄԻԱՎ-ի վարակակիրների թիվը՝ 100000 բնակչի հաշվով ՄԻԱՎ-ի տարածվածությունը հղի կանանց շրջանում Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակարար կշիռը, %	Մշակութային արժեքները չեն շոշրնդոտում անվտանգ սեռական հարաբերությունների, բեղմնականխարգելիչ միջոցների, ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

5.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5.3.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն

ա.Սոցիալապես խոցելի խմբերը

Աղքատությունը ազդեց բնակչության ոչ միայն ավանդաբար ռիսկային համարվող խմբերի (ծերեր, հաշմանդամներ, երեխաներ), այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես բյուջետային հիմնարկներում (կրթության և մշակույթի ոլորտներում զբաղված) և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների վրա:

Աղյուսակ 46. Տնտեսապես ակտիվ բնակչության կազմն ըստ ՀՀ մարզերի, 2008 թ.

Մարզեր	Տնտեսապես ակտիվ բնակչություն, հազ.	այդ թվում՝		Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը %
		զբաղվածներ	գործազուրկներ	
Երևան	335.9	317.9	18.0	5.3
Արագածոտն	65.5	64.2	1.3	2.0
Արարատ	121.7	118.7	3.0	2.5
Արմավիր	125.6	122.2	3.4	2.7
Գեղարքունիք	111.0	105.2	5.8	5.2
Լոռի	104.8	93.4	11.4	10.9
Կոտայք	84.0	77.6	6.4	7.6
Շիրակ	101.2	88.9	12.4	12.2
Սյունիք	59.2	51.8	7.5	12.6
Վայոց Ձոր	28.3	27.3	1.1	3.7
Տավուշ	54.8	50.0	4.8	8.8
Ընդամենը ՀՀ	1194.6	1119.7	74.9	6.3

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ-ին: Տեղեկատվական զեկույց 2009 թ.

Աղյուսակի տվյալները վկայում են, որ Արագածոտնի մարզը պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակով ՀՀ –ում ամենաբարվոք վիճակում է:

Սակայն բնագավառի այլ ցուցանիշների վերլուծությունն ապացուցում է, որ մարզի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը բարվոք չէ:

Աղյուսակ 47. Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում, % մարզի բնակչության թվում

ՀՀ մարզեր	Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում, % մարզի բնակչության թվում								Խոցելիության համաժամանակ
	Հաշմանդաններ՝ այդ թվում երեխա	Ծնողազուրկ երեխաներ	Միայնակ ծերեր	Գործազուրկներ	Տարեցներ	Բազմազավակ ընտանիքներ	Փախստականներ	Նպաստառուներ	
Երևան	4.4	2.1	9.8	25.0	12.9	4.9	4.6	9.2	31.7
Արագածոտն	3.7	3.1	9.8	16.9	12.0	20.2	5.1	17.5	34.2
Արարատ	3.4	3.1	7.8	14.9	13.1	12.6	17.0	12.4	31.8
Արմավիր	2.9	2.8	9.6	18.3	10.5	13.8	8.6	9.1	30.5
Գեղարքունիք	4.0	1.4	8.4	37.3	12.0	21.4	11.0	23.3	45.5
Լոռի	5.1	3.9	9.6	19.1	11.6	9.0	5.8	29.4	35.5
Կոտայք	2.6	1.7	6.2	37.1	8.8	14.8	11.0	13.7	38.1
Շիրակ	4.2	4.8	13.2	18.2	11.8	8.2	1.3	35.9	36.6
Սյունիք	5.5	5.2	13.2	19.7	12.6	9.6	9.0	14.5	37.5
Վայոց Ձոր	5.6	2.5	7.2	21.9	13.3	13.2	7.0	19.0	35.6
Տավուշ	6.9	5.1	16.2	27.8	15.7	8.0	7.4	21.2	45.6
Ընդամենը ՀՀ	4.2	3.2	10.1	24.2	12.2	12.3	7.2	17.3	36.6

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական միտումները: Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում: Տեղեկատվական վերլուծական պարբերական: ՄԱԿԶԾ - Հոկտեմբեր 2005թ.: Էջ 17

Աղյուսակի տվյալները վկայում են, որ մարզի սոցիալական խոցելիության համաթիվը չի գերազանցում հանրապետական միջին համաթիվին (36.6%):

Խոցելի բնակչության տեսակարար կշիռն ավելի մեծ է փոքր՝ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում: Փաստորեն, որքան փոքր է համայնքը, այնքան մեծ է այնտեղ խոցելի բնակչության տեսակարար կշիռը և որքան մեծ է փոքր համայնքների տեսակարար կշիռը մարզի համայնքների ընդհանուր թվում, այնքան բարձր է խոցելի բնակչության միջին մակարդակը մարզում:

Մարզն առանձնանում է նաև սոցիալական պաշտպանվածության առավել կարիք ունեցող խմբերի բազմազանությամբ: Դրանք են.

- գործազուրկներն ու ցածր աշխատավարձով աշխատողները,
- փախստականները և ժամանակավոր կացարաններում բնակվողները,
- թոշակառուներն ու հաշմանդանները (հատկապես՝ միայնակ),
- բազմանդամ, հատկապես՝ բազմազավակ ընտանիքների անդամները:

ա/ Գործազրկությունը մարզում աղքատությունը և խոցելիությունը պայմանավորող հիմնական գործոններից է:

Գործազրկության մակարդակը Արագածոտնում 2005-2008 թ.թ.-երին հիմնականում տատանվել է (2005 թ) 1.57%, (2008 թ) -1.63 % - ի սահմաններում և ունեցել է աճման միտում: Այն կապված է թաքնված գործազրկության կրճատման և գործազրկության նպաստի կտրուկ աճի հետ:

2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ զբաղվածության տարածքային կենտրոնների տվյալների, մարզում հաշվառվել է 2226 քաղաքացի, որոնցից գործազուրկի կարգավիճակ է ստացել 1311 - ը: Նրանցից 77 %-ը կանայք են:

Աղյուսակ 48. Գործազրկության պատկերը ՀՀ Արագածոտնի մարզում

	Աշտարակ	Ապարան	Ծաղկահովիտ	Թալին	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատանք փնտրողներ , որից	1047	449	440	490	2426
կանայք	844	168	191	196	1399
ԳործԱԶՈՒԻԿՆԵՐ	888	180	124	119	1311
այդ թվում՝ կանայք	731	111	90	77	1009
Ըստ տարիքի					
16- 18	0	5	3	0	8
19-24	107	9	8	7	124
25-30	71	4	11	6	92
31-34	77	11	27	11	126
35-45	252	82	45	35	414
46-54	271	46	25	31	373
55 –ից բարձր	117	23	5	29	174
ըստ կրթության հետքուիական	0	0	0	0	0
բարձրագույն	107	5	2	12	126
թերի բարձրագույն	3	0	0	0	3
միջին մասնագիտական	153	20	16	21	210
նախնական մասնագիտական/արհեստագործական	185	2	11	0	198
ընդհանուր միջնակարգ	401	140	82	81	704
հատուկ ընդհանուր	0	0	0	0	0
հիմնական ընդհանուր	39	13	13	0	65
տարրական	0	0	0	5	5
ըստ գործազրկության տևողության մինչև 1 ամիս	37	0	4	4	41
1-3	31	1	7	5	44
3-6	72	1	4	10	87
6-12	179	22	7	32	240
1-3 տարի	372	46	41	55	514
3 ից ավելի	197	110	61	17	385
ըստ բնակավայրի – քաղաքային	649	159	0	74	882
գյուղական	239	21	124	45	429

Ակնառու տնտեսական հետևանքներից բացի, գործազրկությունն ունի մի շարք սոցիալական հետևանքներ, հատկապես, եթե խոսքը երկարատև գործազրկության մասին է:

Այսպես՝

- մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի,
- եկամուտների, գույության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատանքի ձևավորման, մեկուսացման և բարոյական անկման պատճառ է դառնում:
- աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների և շեղվող վարքագծի տարրեր ձևերի /հարբեցողության և այլն/ պատճառ են դառնում,

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, գործազուրկների մեծամասնությունը ենթակա է աղքատության ռիսկի: Ռիսկի գործոնը նվազեցնելու և գործազուրկների մրցունակությունը բարձրացնելու նպատակով վերջին տարիներին մարզում ավելացել է մասնագիտական ուսուցման ծրագրերի թիվը: Բանի որ, համաձայն նոր օրենքի, գործազուրկի կարգավիճակ են ստանում նաև ապահովագրական ստաժ չունեցող անձինք, որոնց մեջ մեծ տոկոս են կազմում երիտասարդները, ապա, նրանց վերապատրաստման նպատակով նույնպես իրականացվում են նոր մասնագիտության ուսուցման ծրագրեր:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2008 թ, վերապատրաստում անցած գործազուրկների վերաբերյալ որոշ վիճակագրական տեղեկություններ:

Աղյուսակ 49. Գործազուրկների մասնագիտական ուսուցումը Արագածոտնի մարզում 2008 թ.

Ցուցանիշի անվանումը	Ընդամենը	այդ թվում		
		վերամասնագիտացում	որակավորման բարձրացում	նախնական (մասնագիտական պատրաստում
Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը տարեսկզբից	65	65	0	0
Մասնագիտական ուսուցում անցնողների թվաքանակը 4-րդ եռամսյակի սկզբին	9	9	0	0
զբաղվածության ծառայության ուսումնական հաստատություններում	0	0	0	0
կազմակերպություններում	36	36	0	0
ուսումնական այլ հաստատություններում	18	18	0	0
այլ կազմակերպություններում	11	11	0	0
որիճ՝ կանայք	55	55	0	0
տող 01-ից տեղավորվել են աշխատանքի	45	45	0	0
նրանցից կանայք	36	36	0	0
16-24 տարեկան երիտասարդներ	12	12	0	0
25-30 տարեկան երիտասարդներ	2	2	0	0
առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցողներ	36	36	0	0
ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցողներ անձանց թիվը	29	29	0	0

Աշխատաշուկայի լարվածությունը մեղմելու և գործազուրկներին աշխատանքում տեղավորելու, նրանց ակտիվությունը բարձրացնելու նպատակով մարզում 2008 թ.-ին մասնագիտական ուսուցման դասընթացներ են կազմակերպվել հրուշակագործի, պահածոյագործի, բնական և արհեստական քարեր մշակողների, օպտիկների, էլեկտրոնային սարքեր հավաքողների մասնագիտություններով: Դրանցում ընդգրկված է եղել 65 գործազուրկ:

2008 թ.-ին մարզում իրականացվել են նաև «Աշխատաշուկայի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրեր, որոնցում ընդգրկվել է 16 քաղաքացի:

Գյուղական բնակչության ժամանակավոր զբաղվածությունն ապահովելու նպատակով միայն 2008 թ.-ին իրականացվել է վարձատրվող հասարակական աշխատանքների 14 ծրագիր, որոնցում ընդգրկվել է 274 մարդ:

Իրականացված ծրագրերի շնորհիվ մարզում 2008 թ.-ին ընդհանուր առմամբ, աշխատանքի է տեղավորվել 584 մարդ, որոնցից 274-ը՝ ժամանակավոր:

բ. Տարեցներին մատուցվող ծառայություններն ընդգրկում են տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների կազմակերպումը: Վերջին տարիներին այս բնագավառում պետության քաղաքականությունն ուղղված է տարեցների, և, հատկապես՝ միայնակ և հաշմանդամ տարեցների կյանքի պայմանների բարելավմանը: Բնագավառում դեռևս առկա են լուծման կարիք ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից են՝

- *տարեցների սոցիալական պաշտպանության բնագավառի օրենսդրության կատարելագործումը (ռազմավարական ծրագրի մշակում),*
- *տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների բարելավում,*
- *տուն-ինտերնատներում սպասարկման որակի բարձրացումը և դրանց պայմանների բարելավում,*
- *անօթևան մարդկանց օգնելու համար ժամանակավոր կացարանային տեղերի ավելացում,*
- *Հայրենական Մեծ Պատերազմի վետերանների, հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանություն:*

Ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում նկատվում է բնակչության ծերացման միտում՝ բնակչության ընդհանուր թվում տարեցների թվի ավելացում: Երիտասարդ ընտանիքների արտագաղթը, ծնելիության կտրուկ անկումը հանգեցրել են տարեց բնակչության տեսակարար կշռի ավելացման: Դրա հետևանքով, սոցիալական և տնտեսական դժվարությունների հետ մեկտեղ, երիտասարդ հասարակությունից դեպի տարեց հասարակություն ժողովրդագրական ցատկ տեղի ունեցավ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն, Արագածոտն մարզում կենսաթոշակառուների տեսակարար կշիռը բնակչության թվաքանակում ՀՀ մյուս մարզերի հետ համեմատած, մեծ չէ (տես Աղյուսակ 50): Այնուամենայնիվ, այս հանգամանքը չի նվազեցնում ծերերի սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը:

Աղյուսակ 50. Կենսաթոշակառուների թվաքանակի և նրանց նշանակված կենսաթոշակի միջին չափի բաշխվածությունն ըստ կենսաթոշակի տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2008թ. տարեվերջ

	Կենսաթոշակառուների թվաքանակը –մարդ-	Այդ թվում				Կենսաթոշակառուների թվաքանակը հազար մարդու հաշվով –մարդ-	Կենսաթոշակի միջին չափը - դրամ-
		ապահովագրական	սոցիալական	զինծառայության հետ լապված	որից՝ երկրորդ կենսաթոշակ ստացողներ		
Երևան	179546	163798	14429	2736	1417	161.8	22937.3
Արագածոտն	22636	19920	2435	460	179	160.9	20015.2
Արարատ	41769	36599	4727	755	312	150.7	19388.1
Արմավիր	39216	34364	4432	620	200	139.0	19665.8
Գեղարքունիք	37281	32382	4211	1184	496	155.1	19662.2
Լոռի	52998	47652	4823	1114	591	188.0	20763.8
Կոտայք	38941	34754	3751	841	405	139.8	20053.7
Շիրակ	49514	43856	5141	991	474	176.2	20217.9
Սյունիք	25750	23479	2013	634	376	168.5	23762.1
Վայոց Ձոր	10433	9480	783	311	141	187.0	21936.8
Տավուշ	25755	23463	1887	779	374	191.9	22747.6
Ընդամենը ՀՀ	523839	469747	48632	10425	4965	162.0	21370.0

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ սոցիալական վիճակը 2008թ.

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում տարեցների լիարժեք սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **ծեղությունը կյանքի յուրահատուկ կենսաքանակային փուլերից է, և տարեցների խոցելիությունը օբյեկտիվ է: Նրանք համարվում են բժշկական և սոցիալական ծառայությունների ամենախոշոր սպառողները, սակայն կենսաթոշակների ցածր մակարդակի պատճառով տարեցներն այսօր բնակչության ամենաանպաշտպան խմբերից են,**
- **տարեցներն ավելի զգայուն են հասարակական փոփոխությունների նկատմամբ և դրա համար կրում են սոցիալական, քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական փոփոխությունների ողջ բեռը,**
- **քանի որ բնակչության այդ կատեգորիան սոցիալականացվել է բոլորովին այլ միջավայրում, ապրելակերպի փոփոխությունները, սոցիալական և տնտեսական համակարգերի փոխակերպումները նպաստել են տարեցների, հատկապես միայնակ ծեղերի, հասարակությունից օտարմանը, մեկուսացմանը:**


Տասը տարուց ավելի է, ինչ հոկտեմբերի 1-ը նշվում է որպես Տարեցների միջազգային օր: Այդ օրվա կապակցությամբ մարզում կազմակերպվում են տոնական միջոցառումներ՝ համերգներ, հանդիսավոր հավաքներ, մարզում բնակվող, վաստակ ունեցող տարեց մարդկանց մեծարման երեկոներ:

Ամերիկայի Հայ Օգնության Ֆոնդ /ՀՕՖ/ բարեգործական կազմակերպությունը մարզում իրականացնում է ծեղերի և հաշմանդամների սննդապահովման ծրագիր՝ բարեգործական ճաշարանների միջոցով, որոնցից մեկը գործում է Աշտարակ քաղաքում և սպասարկում է մոտ 100 անապահով քաղաքացիների:

Աղյուսակ 51. Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2008 թ. դրությամբ (միավոր)

	Ընտանիքների թիվը, ընդամենը	Այդ թվում	
		աղքատության ընտանեկան նպաստ ստացող	միանվագ դրամական օգնություն ստացող
Երևան	23863	20172	3691
Արագածոտն	6025	5279	746
Արարատ	9446	7958	1488
Արմավիր	5912	5397	515
Գեղարքունիք	14907	12847	2060
Լոռի	22954	19414	3540
Կոտայք	10267	9149	1118
Շիրակ	21405	19169	2236
Սյունիք	5228	4421	807
Վայոց Ձոր	2615	2349	266
Տավուշ	6792	5763	1029
Ընդամենը ՀՀ	129414	111918	17496

Գրաֆիկական պատկեր 19. Ընտանեկան նպաստառուների բաշխումը ՀՀ –ում



Համաձայն ՀՀ սոցիալական վիճակը 2008թ. վիճակագրական տարեկան զեկույցի, 2003 թ. 5000-ի փոխարեն, 2008 թ-ին, ՀՀ Արագածոտնի մարզում ընտանեկան նպաստ է ստանում 5279 ընտանիք:

Նման միտում է դրսևորվել Լոռիի, Շիրակի և Տավուշի մարզերում: Երևանում և մնացած մարզերում ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը պակասել է:

դ/ Փախստականների՝ որպես առանձնահատուկ սոցիալապես անապահով առանձին խմբի, սոցիալական օժանդակության ծրագրերի անհրաժեշտությունը ամրագրված է նաև ԱՀՌԾ-ում:

Արագածոտն մարզում 1989-1990 թթ.-երին բնակվում էր 2700 փախստական ընտանիք: 90-ականներին նրանց թիվը նվազեց, և ներկայումս մարզում մշտական բնակություն է հաստատել 1396 ընտանիք:

Արագածոտն մարզում 1994-2005 թթ.. փախստականների համար իրականացվել են բնակարանաշինության տարբեր ծրագրեր: Կառուցվել է 148 բնակելի շենք և նրանց է

հատկացվել վերակառուցված հանրակացարանի 1 շենք: 2002-2007 թթ. բնակարանները սեփականաշնորհել է 291 ընտանիք: Հինգ ընտանիք բնակարանը չի սեփականաշնորհել՝ ՀՀ –ից բացակայելու պատճառով: /Տես աղյուսակ /

Աղյուսակ 52. Տեղեկանք ՀՀ Արագածոտնի մարզում փախստականներին հատկացված բնակելի շենքերի և բնակարանների մասին

Կառուցման տարեթիվ	Օբյեկտների անվանումը և հասցեն	Շենքերի թիվը	Բնակարանների թիվը
1994	գ.Կարին	55 քոթեջ	107
1995	ք. Աշտարակ, «Նարեկ» քաղամաս	35 քոթեջ	70
	ք. Աշտարակ, «Նարեկ» քաղամաս	45 քոթեջ	90
1998	ք. Աշտարակ, բնակելի շենք	1	8
	գ. Կարին	13 քոթեջ	13
2002	ք.Աշտարակ, Սպանդարյան 25 հասցեում հանրակացարանի վերակառուցումը բնակելի շենքի	1	38
2006	գ. Արտաշավան, գ. Մուլքի, գ. Նոր-Ամանոս	3 քոթեջ	3

ՀՀ կառավարության 2004 թ. մայիսի 20-ի թիվ 747 որոշմամբ ՀՀ Արագածոտն մարզից բնակարանի գնման վկայագիր է ներկայացրել 84 փախստական ընտանիք: 51 ընտանիք գնել է իրենց նախկինում բնակեցված տարածքները կամ գնել նոր բնակարաններ: 33 փախստական ընտանիք վկայագրերը վերադարձրել է ՀՀ կառավարություն՝ գնման ժամկետը լրանալու կամ բնակարան գնելու գումարը չբավարարելու պատճառով: 123 ընտանիք դեռևս բնակարանի խնդիր ունի:

ՄԱԿ-ի կողմից 2007թ.-ին իրականացվեց փախստականների հաշվառում, ըստ որի փախստական ընտանիքների թիվը մարզում դարձել է 635: Փախստականների թվի նվազումը հիմնականում կապված է արտագաղթի հետ: Միջինից բարձր տարիք ունեցողները՝ չինտեգրվելով նոր մաջավայրում, ունենալով լեզվական խնդիրներ, և հարմար աշխատանք չգտնելով, լքում են Հայաստանը: Փախստականներից մարզում հիմնականում մնացել են ծերերը:

Այսօր փախստականների առաջ ծառայած են խոցելի բոլոր խմբերին բնորոշ առանձնահատուկ խնդիրներ.

• **Աշխատատեղերի բացակայությունը.** Գործազրկության բարձր մակարդակը բնորոշ է նաև փախստականներին, ինչի պատճառով նրանցից շատերը գտնվում են ծայրաստիճան կարիքի և զրկանքների մեջ:

• **Բնակարանային վիճակը.** Չնայած, որ կառավարության և դոնոր հանրության ջանքերով այսօր արդեն իրական առաջընթաց է գրանցվել փախստականների բնակարանային խնդրի հարցում, այնուամենայնիվ դեռևս կան ընտանիքներ, որոնք ապրում են ժամանակավոր կացարաններում, և ընգրկված չեն առաջնահերթության ծրագրերում: Մարզում բնակվում է մոտ 40 ընտանիք (վարձով, հարազատների ու բարեկամների տանը), որոնք պետական կամ միջազգային որևէ ծրագրերում ընդգրկված չեն:

• **Սոցիալական, կենցաղային տարրական պայմանների անբավարար վիճակ.** Փախստականների կենցաղային պայմանները ևս բարվոք չեն:

- **Իրազեկվածության ցածր մակարդակը:** Փախստականների խոցելիության և աղքատության հաղթահարման խոչընդոտներից է նաև սոցիալական իրավունքների և իրականացվող աջակցության ծրագրերի վերաբերյալ նրանց իրազեկության ցածր մակարդակը:

ե/ Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումն ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոտեզաօրթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունենալու աշխատելու, մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները Դա մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006թ-2015թ.թ.նազմավարության» պահանջներից է:

Հաշմանդամներին բնորոշ հիմնախնդիրները համընկնում են հաշմանդամ երեխաների հիմնախնդիրների հետ: Նրանց բնորոշ առանձնահատկություններն են.

- **հաշմանդամներին հատուկ տիպի մասնագիտական հմտությունների փոխանցման անհրաժեշտությունը,**
- **գյուղաբնակ հաշմանդամների գյուղատնտեսությամբ զբաղվելու սահմանափակ կարողությունները,**
- **անաշխատունակ հաշմանդամների նպաստի և թոշակի անընդունելի ցածր մակարդակը,**
- **ընտանիքների լրացուցիչ ծանրաբեռնվածությունը:** Այն հատկապես օրախնդրային է 1-ին կարգի հաշմանդամներ ունեցող ընտանիքներում, որտեղ անդամներից մեկը ստիպված է անգամ հնարավորություն ունենալու դեպքում հրաժարվել աշխատելուց: Դա կարող է որպես վտանգ դիտվել այդ անձի առումով, քանզի խոչընդոտում է նրա կարողությունների իրացմանը: Այս հանգամանքը տվյալ ընտանիքներին դարձնում է էլ ավելի խոցելի:

Հաշմանդամ երեխաներ խոցելի խմբերի առանձնահատուկ հիմնախնդիրներն ավելի շատ են.

- **առողջապահական ծառայությունները լիարժեք կերպով չեն տրամադրվում,** քանի որ դրանք դարձյալ պետք է իրականացվեն պետպատվերի շրջանակներում: Նշվել են դեպքեր, երբ հաշմանդամ երեխային անհրաժեշտ է դեղորայք, որն անմատչելի է հաշմանդամության ցածր թոշակի և նպաստի պայմաններում:
- **հաշմանդամ երեխաները հիմնականում չեն ընդգրկվում կրթության համակարգում,** որի պատճառներից են նաև շրջապատի վերաբերմունքն ու նրանց հնարավորություններին կրթական հաստատությունների կամ ծրագրերի անհամապատասխանությունը: Էական հիմնախնդիր է նաև երեխայի հաշմանդամության վերաբերյալ ծնողների գիտելիքի ցածր մակարդակը:
- **հաշմանդամների համար սահմանափակ են մասնագիտական կրթության հնարավորությունները,** ինչն անկանխատեսելի է դարձնում նրանց ապագան: Փաստացիորեն, նրանք զրկվում են առանց խնամակալի իրենց կյանքը դասավորելու որևէ հնարավորությունից:
- **նրանց համար նախատեսված ժամանցի վայրերի բացակայությունը ևս լուրջ խնդիր է,** հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ այն նաև խնամակալին է դարձնում խոցելի, քանի որ վերջինս ստիպված է միշտ լինել հաշմանդամ երեխայի կողքին՝ հնարավորություն չունենալով զբաղվել սեփական հիմնախնդիրներով:

• **շրջապատի բացասական վերաբերմունքը հաշմանդամ երեխայի նկատմամբ, հաշմանդամության երևույթի մերժումը շրջապատի կողմից խոչընդոտում են նրանց ինտեգրմանը հասարակությունում:** Նշվել են դեպքեր, երբ այդ վերաբերմունքը նկատվել է ոչ միայն սոցիալական շրջապատից, այլև անմիջապես ծնողներից, հարազատներից:

• **հաշմանդամի կարգավիճակի ձեռքբերման իրավական հիմնախնդիրները նույնպես մտահոգիչ են:** Այս հանգամանքը առկա է նաև չափահաս հաշմանդամների շրջանում: Որպես դրա հիմնական պատճառ նշվում է համակարգում առկա կոռուպցիան:


Հաշմանդամները կազմում են մարզի բնակչության 5%-ը / 2007 թ./: Վերջին տարիներին նկատվել է հաշմանդամների թվի աճի միտում: Սա պայմանավորված է օրենսդրության կատարելագործման, սահմանված արտոնությունների փաթեթի՝ անվճար բուժօգնության տրամադրմամբ և այլ խնդիրներով: Այդ ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարվում նաև մարզպետարանի կողմից: Անցած տարիների ընթացքում 50 հաշմանդամների տրամադրվել են սայլակներ, վատ լսող 75 քաղաքացու լսողական ապարատներ են տրվել:

Գիտարկվող տարիների ընթացքում հաշմանդամների 1-ին խմբում մարդկանց թիվը կրճատվել է: Դա պայմանավորված է հաշմանդամության կարգի տրամադրման խստացմամբ: Դրա հաշվին ավելացել է 2-րդ խմբի թահաշմանդամների իվը: Աճ է նկատվել նաև 3-րդ խմբում: /Տես աղյուսակ 53/:

Աղյուսակ 53. ՀՀ Արագածոտնի մարզի հաշմանդամների թիվն ըստ հաշմանդամության կարգի

h/h	Հաշմանդամներ /մարդ/	2008թ.	2007թ.	2006թ.	2005թ.	2004թ.
1	Առաջին կարգի հաշմանդամ	368	371	419	548	426
2	Երկրորդ կարգի հաշմանդամ	3560	3469	3522	4593	2629
3	Երրորդ կարգի հաշմանդամ	1952	1726	1374	1604	487
4	Մանկուց հաշմանդամ երեխաներ	491	470	774	524	425

Գրաֆիկական պատկեր 20. Հաշմանդամության դինամիկան մարզում



Պետության քաղաքականության արդյունքում, հաշմանդամների մոտ վստահություն է ձևավորվել, և նկատելի է արտոնությունից օգտվելու հնարավորությունների մատչելիությունը:

Հաշմանդամ ունեցող ընտանիքները մարզում հատուկ ուշադրության կարիք ունեն, քանի որ չկա նրանց համար նախատեսված մասնագիտացված կարիքների կենտրոն: Մարզում գործող 3 ՀԿ-ից, միայն 2-ն են որոշ գործունեություն ծավալում, կազմակերպում են միջոցառումներ: Բայց լիարժեք գործելու և անհրաժեշտ մասնագիտացված ծառայություններ մատուցելու համար պետական հիմնավոր մոտեցում և յուրջ ֆինանսական ներդրումներ են անհրաժեշտ:

Ինչպես վկայում են տվյալները, վերջին տարիներին մարզում զգալի ավելացել է հաշմանդամների թիվը: Ընդ որում, ավելացումը նկատվում է հաշմանդամության բոլոր խմբերում:

Զգալի աճել է հաշմանդամ երեխաների թիվը: Աճի բարձր տեմպերը նկատվում են մարզի բոլոր տարածաշրջաններում:

Այնուամենայնիվ, ներկայիս սոցիալական պաշտպանության համակարգը դեռևս չի կարողանում լիարժեք բավարարել հաշմանդամների յուրահատուկ պահանջումները, որի պատճառով հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը դանդաղ է ընթանում:

Գյուղական համայնքներում բազմանդամ տնային տնտեսությունները ոչ միայն բազմազավակ, այլև՝ բազմասերունդ ընտանիքներն են: Այս տնային տնտեսություններում ապրող տարբեր սերունդների մի քանի ընտանիքները միավորված են մեկ տնտեսության մեջ՝ ոչ միայն ավանդական սովորության համաձայն, այլև այն պատճառով, որ նորաստեղծ ընտանիքների համար դժվար է նոր բնակարան կառուցել կամ գնել: Տնային տնտեսությունների կազմի այս առանձնահատկությունները արտահայտվում են նաև մարզի բնակչության տարիքային խմբերի հարաբերակցության և ծանրաբեռնվածության գործակցի թվային արժեքի մեջ:

Մարզի գյուղական բնակչության թվում համեմատաբար փոքր է աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը, բայց մեծ է երեխաների բաժինը: Իսկ քաղաքային բնակչության թվում երեխաների տեսակարար կշիռը զգալիորեն ավելի փոքր է՝ տարեցների ավելի մեծ բաժնի հաշվին: Դրանով պայմանավորված, գյուղում ավելի մեծ է երեխաներով, իսկ քաղաքում՝ տարեցներով ծանրաբեռնվածության գործակիցը: Գյուղական բնակչության ծանրաբեռնվածության ընդհանուր գործակիցը զգալիորեն մեծ է քաղաքայինից:

Մարզում միայնակ ծերերից կազմված ընտանիքները կազմում են 7.5 %, իսկ նպաստառու ընտանիքները՝ 15.8 %:

գ. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է «Երեխայի իրավունքների պաշտպանության մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N1745- Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագրի» հիմնադրույթներով:

Ծրագրի շրջանակներում մանկատներում և ընտանիքներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքի և դաստիարակության անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներին, մանկատների շրջանավարտներին մատուցվում են սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական, խնամքի և դաստիարակության ծառայություններ:

5.3.2. Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Այսօր երեխայի հիմնահարցերի լուծման սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի ստեղծումը,
- երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցումը և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանոնակարգումը,
- երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների պայմանների բարելավումը,
- առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամ երեխաների հիմնախնդիրների լուծումը,
- պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրների լուծումը,
- մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրների կարգավորումը,
- աղքատ ընտանիքներում երեխաների պաշտպանության հիմնախնդիրների քննարկումը և այդ ուղղությամբ ծրագրերի իրականացումը:

5.3.2.1 Իրավիճակի նկարագրություն

ՀՀ կառավարության որոշմամբ 2006 թ. երկրում ստեղծվել է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ, որի միջոցով կազմակերպվում և ապահովվում է երեխաների պաշտպանությունը *ազգային, մարզային և համայնքային* մակարդակներում:

Մարզպետարանի նպատակն է պետական քաղաքականության շրջանակներում աջակցել, համակարգել և վերահսկել մարզում երեխաների իրավունքների պաշտպանության կառույցների գործունեությունը՝ և ապահովել ընտանիքների, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանը նպատակաուղղված պետության նպատակային ծրագրերի իրականացումը: Համայնքներում խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվել են հանձնաժողովներ, որոնց նպատակն է տեղերում ապահովել երեխաների պաշտպանությունն ու բարեկեցությունը:

Այս իրավահարաբերությունների կարգավորումն ու գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, հիմք ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, օրենսդիր մարմինը ընդունել է մի շարք նորմատիվ իրավական ակտեր.

1. ՀՀ «Ընտանեկան օրենսգիրք»,
2. ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»,
3. ՀՀ օրենքը «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին»,
4. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»,
5. ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք»,
6. Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թթ. ռազմավարությունը,
7. ՀՀ կառավարության որոշումը «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառուման կարգը» հաստատելու մասին,
8. ՀՀ կառավարության որոշումը «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը» հաստատելու մասին :

Երեխայի հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղվածություններն են.

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրներ,
- հաշմանդամ երեխաների հիմնախնդիրներ,
- պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրներ,
- մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրներ,
- օրինազանց երեխաների հիմնախնդիրներ,
- կոնֆլիկտային ընտանիքներում գտնվող երեխաների հիմնախնդիրներ,
- աղքատ ընտանիքներում երեխաների պաշտպանության հիմնախնդիրներ:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը համայնքի ղեկավարն է, որի աշխատանքի կազմակերպման համար ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ:

Արագածոտն մարզի բոլոր՝ 114 համայնքներում սահմանված կարգով ձևավորված են **խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ:**

Խնամակալության և հոգաբարձության մարմինները հայտնաբերում են համայնքում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին, նրանց մասին ձեռք են բերում տեղեկություններ և հետազոտում են երեխայի կյանքի պայմանները, երեխայի կյանքին անմիջական վտանգ սպառնալու դեպքում՝ անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները առավել լավատեղյակ են ընտանիքների կարիքներին և առկա ռեսուրսների շրջանակներում կարող են հասցեական աջակցություն հատկացնել դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին: Դրանք առավել մեծ հնարավորություններ ունեն հայտնաբերելու ռիսկային խմբերի երեխաներին, որովհետև ավելի մոտ են գտնվում համայնքի բնակիչներին, ճանաչում են նրանց:

Սրանով հանդերձ, ՏԻՄ մարմինները բավարար արդյունավետ չեն իրականացնում ՏԻՄ օրենքի 33 հոդվածի 2 կետով սահմանված և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 7 կետով նախատեսված պահանջները:

Մասնավորապես, ժամանակիչն և ճիշտ չեն կատարվում բացահայտված ԱԾԽՄ երեխաների սկզբնական հաշվառումը և եռօրյա ժամկետում տեղեկությունները ԵԻՊ բաժին փոխանցումը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 3 տարվա ընթացքում խնամակալության և հոգաբարձության մարմիններն ընդունել են են շուրջ 100 որոշում: Սակայն, պետք է նկատել, որ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից հաճախակի սահմանվում են թե բովանդակությամբ, թե իրավական ձևակերպմամբ սխալ որոշումներ:

Այդ մարմիններին աջակցելու, դրանց իրավական գործունեությունը արդյունավետ դարձնելու նպատակով համայնքի ղեկավարների և աշխատակազմի ղեկավարների համար մարզում կազմակերպվել են տարածաշրջանային տարբեր սեմինարներ: Շատ համայնքների տրամադրվել են մեթոդական գրականություն և գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի փաթեթներ: Սակայն այդ մարմինների աշխատանքները առ այսօր թերի են:

Երեխաների իրավունքների պաշտպանության կարևորագույն ոլորտ է **առանց ծնողական խնամքի մնացած երեխաների** սոցիալական պաշտպանության իրավական կարգավորումը: ՀՀ ԱԾԽՄ երեխաների սոցիալական պաշտպանության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի, «Երխայի իրավունքների մասին», ՀՀ օրենքի, ՀՀ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց

կենտրոնացված հաշվառման կարգը» հաստատելու մասին», «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը» հաստատելու մասին, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումներով: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնական հաշվառումը և ուղղորդումն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Աղյուսակ 54. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվն ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	Տարիքը 0-18	Տարիքը 18-23
Աշտարակ	14	6
Ապարան	11	1
Թալին	10	7
Արագած	3	1
Ընդամենը	38	15

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտումը և հաշվառումը կարևորագույն գործնքաց է, որ պետք է իրականացնեն խնամակալության և հոգաբարձության մարմինները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանել է ԱԾԽՄ երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, որոնք ընդգրկում են՝

- 1. կրթության և դաստիարակության բնագավառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,*
- 2. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առողջության պահպանման իրավունքի ապահովումը,*
- 3. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքի ապահովումը.*
- 4. զբաղվածության բնագավառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:*

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հանրապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատագրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը: 18 տարին լրացած, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ովքեր չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն ստանալու:

Այս բնագավառում մարզից բնակարանային հաշվառման է վերցվել 6 ԱԾԽՄ երեխա՝ Աշտարակ, Փարպի, Ապարան, Իրինդ և Յամաքասար համայնքներից:

Արագածոտնի մարզի երեխաների 10,8 տոկոսը կյանքի դժվարին իրավիճակներում է գտնվում: Կան 53 առանց ծնողական խնամքի մնացած և նրան թվին պատկանող, 578 միակողմանի ծնողագուրկ 410 հաշմանդամ երեխաներ: 3500-ը ապրում են սոցիալապես խիստ

անապահով ընտանիքներում: Բազմաթիվ երեխաներ ունեն հաշմանդամ, հարբեցող, մշտապես արտագնա աշխատանքի մեկնող ծնողներ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանցից 10-ը իրենց ծնողներից բնակարան ժառանգություն չեն ստացել: Նրանց կեսը համայնքներում և ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունում հաշվառվել են որպես բնակարանի կարիք ունեցողներ: Սակայն մինչ օրս նրանցից ոչ մեկի համար բնակարան ձեռք չի բերվել:

Մարզում գործում է Աշտարակի թիվ 1՝ մտավոր թերզարգացած երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցը, որի միջոցով լուծվում է միայն մեկ խմբի՝ կարիքավոր երեխաների խնդիրը: Մարզում լուծված չէ երեխաների խնամքի հաստատությունների բացման հարցը:


Վերջին 3 տարիների ընթացքում մարզում աճում է սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոններ ուղարկվող երեխաների թիվը: Մարզից 26 երեխա գտնվում է հանրապետության տարբեր մանկատներում: 2006 թ. խնամքի, վերականգնողական տարբեր հաստատություններում են գտնվել 4, 2007թ.-ին՝ 15, 2008 թ.-ին՝ 42 երեխա,:

Աղյուսակ 55. Խոցելի խմբի երեխաների թիվը ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	ԱԾԽՄ /մինչև 18/	ԱԾԽՄ /18-23/	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	Հաշմանդամ երեխաներ	Ոստիկանությունում գրանցված երեխաներ
Աշտարակ	11	4	167	179	8
Թալին	11	12	285	126	6
Ապարան	8	3	78	54	9
Արագած	7	3	48	52	2
ԸՆԴԱՄԵՆԸ	37	22	578	411	25

Ընդամենը՝ 1073 երեխա

Գրաֆիկական պատկեր 21. Մարզի երեխաների տոկոսային հարաբերությունն ըստ խոցելիության խմբերի



«Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիրը», «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ.

ռազմավարությունը» փաստաթղթերով կարևորվում է ներառական կրթության կազմակերպումը: Աշտարակի Գ.ր. Ղափանցյանի անվան թիվ 4 դպրոցում և «Հովիկ» մանկապարտեզում մանկավարժները վերապատրաստվել են ներառական կրթություն կազմակերպելու նպատակով: Սակայն մարզում առայժմ այդպիսի մասնագիտացված կրթական հաստատություն չկա:

Կատարված աշխատանքների արդյունքում բացահայտվել են կրթությունից դուրս մնացած հաշմանդամներ: Համայնքի կրթական հաստատություններում համապատասխան պայմանների ապահովման դեպքում հնարավոր կլինեն նրանց ընդգրկել հանրակրթական ուսուցման, նախադպրոցական հաստատությունում:

Մարզի երեխաների պաշտպանության ոլորտի հիմնախնդիրն են.

1. Մարզի ՏԻՄ-երի փոքրաթիվ աշխատակազմը: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն աշխատում են հասարակական կարգով և չեն կարողանում ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների բացահայտման, նրանց աջակցություն կազմակերպման հարցերով արդյունավետ աշխատանքը:

Արագածոտնի մարզի համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ է 2010 թ.-ից յուրաքանչյուր տարածաշրջանի ամենամեծ համայնքներում ունենալ վերապատրաստված 1-ական սոցիալական մանկավարժ, որը խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատող կդառնա:

Այդ ծրագիրն իրագործելու համար յուրաքանչյուր տարածաշրջանին անհրաժեշտ է լրացուցիչ հատկացնել 500 000-ական դրամ՝ աշխատավարձի, ճանապարհածախսի, անհրաժեշտ գրականության ձեռք բերման համար:

2. Մարզում հաշվառված կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված առնվազն 5000 երեխաների համար չկա բազմամասնագիտական աջակցության հաստատություն:

Անհրաժեշտ է 2011-12 թ.թ. ընթացքում Աշտարակում բացել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների աջակցության բազմամասնագիտական շուրջօրյա կենտրոն: Դրա համար պետական բյուջեից կամ դոնոր կազմակերպություններից 2010 թ.-ին անհրաժեշտ կլինի կատարել 180.0 մլն. դրամի ներդրումներ: Հաջորդ տարիներին, համայնքների ներդրումների հաշվին, արտաքին ներդրումների պահանջը պակասելու է մինչև 100 մլն. դրամ: Համայնքներն, այդ ընթացքում, ծրագրի իրականացման նպատակով, 10 մլն. դրամ են ներդնելու:

3. Աճում է ամուսնալուծված ընտանիքների թիվը, որի պատճառով երեխաները հայտնվում են կոնֆլիկտային իրավիճակում:

Այդպիսի վիճակում անհրաժեշտ է դատարան ամուսնալուծության հայցով դիմած անչափահաս երեխաներ ունեցող անձանց և երիտասարդ ընտանիքների համար բացել բժշկահոգեբանական, իրավական աջակցության ընտանեկան կենտրոն:

Դրա համար կպահանջվի 2 500 000 հազար դրամ դոնոր կազմակերպությունների, և 500000 դրամ՝ կամավորական ներդրում:

4. Հաշմանդամ երեխաներին նախադպրոցական և կրթական հաստատություններում ընդգրկելու մատչելի պայմաններ չկան, հասարակությունը պատրաստ չէ նրանց ընդունելու:

Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է մարզում իրականացնել «Յուրաքանչյուր հաշմանդամ երեխայի՝ հատուկ խնամք, կրթություն և վերաբերմունք» ծրագիրը: Այն հնարավորություն կտա.

1/ մարզի դպրոցներն ու մանկապարտեզները մատչելի դարձնել հաշմանդամ երեխաների համար: յուրաքանչյուր տարի մարզի 10 կրթական շենքերում կկառուցվեն թեքահարթակներ,

2/ մանկավարժների, սպասարկող անձանց, հաշմանդամ երեխաների ծնողների և համադասարանցիների հետ կիրականացվեն կրթական, մշակութային ծրագրեր:

3/ կկազմակերպվի տնային ուսուցման:

4/ կապահովվի տրանսպորտային ծառայության:

Այդ նպատակի համար 82 մլն դրամի ներդրումներ անհրաժեշտ կլինեն :

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ցերեկային/ ընտանեկան կենտրոնների ստեղծումը ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական (սոցիալ հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացում) աջակցության ցուցաբերում: Բացի այդ, խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման արդյունավետությունը թույլ կտա շարունակելու ծրագիրը և ավելի մեծ թվով երեխաներ տեղավորելու ընտանիքներում:

5.3.3. Սոցիալական պաշտպանության համակարգի տարրերը

Վերոհիշյալ բոլոր խոցելի խմբերի նկատմամբ այսօր պետությունն իրականացնում է մի շարք միջոցառումներ: Սոցիալական պաշտպանության պետական համակարգը ներառում է.

• պետական սոցիալական օժանդակության ծրագրեր,

Դրանք պետական նպաստներն են (ընտանեկան, ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխաների խնամքի, ինչպես նաև հուղարկավորության նպաստներ), ԽՍՀՄ խնայբանկում ներդրված ավանդների փոխհատուցման և այլ աջակցությունների ուղղված ծրագրերը, ապահովագրական և սոցիալական կենսաթոշակները,

• հաշմանդամների, վետերանների և երեխաների համար սոցիալական ապահովության ծրագրեր.

Այստեղ ներառված են բժշկասոցիալական վերականգնման, տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում սպասարկելու, տուն-ինտերնատների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների պահպանման ծրագրեր,

• պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր.

Դրանք տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներն են, ժամանակավոր անաշխատունակության և հղիության նպաստները,

• գրադվածության ծրագրեր՝

Ներ են առնում գործազրկության նպաստները, գործազուրկների վերապատրաստման, ինչպես նաև հասարակական աշխատանքների և նմանատիպ այլ ծրագրեր:

Համակարգի հիմնախնդիրների կանոնակարգման նպատակով ներկայումս պետության կողմից իրականավում են հետևյալ ծրագրերը.

ա. Պետական նպաստների տրամադրում.

Բնագավառը կանոնակարգվում է «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ օրենքների կիրառությունն ապահովող մի շարք որոշումներով և իր մեջ ներառում է հետևյալ համակարգը և ծրագրերը.

- ընտանեկան նպաստի համակարգ,***
- մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագիր,***
- երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի ծրագիր:***

բ. Ընտանեկան նպաստի համակարգը գործում է 1999 թվականից և կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին: Իրականացվող ծրագիրն անցած տարիներին էապես բարեփոխվել է:

Աճել են այդ նպատակներով պետական բյուջեի հատկացումները: Ավելացել են նպաստի բազային գումարի չափը, 18 տարեկան երեխաների հավելավճարները, նոր ծնված երեխաների ծննդյան միանվագ օգնություն նպաստների գումարները:

Ներկայումս նպաստառու է մարզի բնակչության 5%-ը:

Աղյուսակ 56. Ընտանեկան նպաստին ուղղված պետական ծախսերի դինամիկան 2004-2008 թթ.

	Բնակավայրը		2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008 թ
1	Աշտարակ	Նպաստառու	2997	2929	3026	2960	2489
		Նախատեսված է	349.642.000	462.249.900	586.197.800	650.593.800	726,027,500
		Փաստ. վճարված է	344.330.500	445.765.500	585.023.000	638.567.500	707,480,000
2	Ապարան	Նպաստառու	656	640	681	673	652
		Նախատեսված է	80.479.100	109.743.420	138.747.006	156.491.000	194,651,000
		Փաստ. վճարված է	80.299.500	106.382.500	138.717.000	156.703.500	189,074,000
3	Թալին	Նպաստառու	1559	1588	1598	1611	1526
		Նախատեսված է	192.988.800	257.124.000	317.796.000	348.776.000	418,031,500
		Փաստ. վճարված է	181.805.500	239.214.000	315.331.400	353.123.000	410,318,500
4	Ծաղկահովիտ	Նպաստառու	616	634	693	640	642
		Նախատեսված է	92.269.484	132.379.500	178.401.271	202.017.993	225,710,000
		Փաստ. վճարված է	91.431.000	130.030.000	177.358.000	196.018.500	223,320,000

Աղքատության ընտանեկան նպաստ համակարգի /ԱԸՆՀ/ նպատակը բնակչության առավել աղքատ խավերի սոցիալական բարվոք պայմանների ապահովումն է: Սակայն ներկայումս համակարգը կատարելագործման կարիք ունի:

Կան նախանպաստային ընտանիքներ, ովքեր իրապես աղքատ են, բայց ընտանեկան նպաստ չեն ստանում: Այս խնդիրը փորձում է կարգավորել հրատապ դրամական աջակցության ծրագիրը, որը, խորհուրդների որոշմամբ, նախանպաստային ընտանիքներին գումարներ է հատկացնում:

Համակարգի բարեփոխումների շնորհիվ մեծացել են դրամական աջակցության չափը և տեսակները:

Սակայն կա բնակչության աղքատ մի խավ, որը չի փաստագրվում: Դրա հիմնական պատճառը համակարգի նկատմամբ անվստահությունն է: Այս խմբի մի մասն էլ դժվարություն ունի փաստաթղթերի ձեռք բերման հարցերում:

Այդ խնդիրների կարգավորման նպատակով մարզպետարանը աշխատում է համայնքների և դրանցում գործող ՀԿ-ների հետ:

Մարզի համայնքների մեծ մասը գտնվում են լեռնային և բարձր լեռնային գոտում, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում բնակիչների համար: Երկարատև ձմեռը, դժվար անցանելի ճանապարհները, հասարակական տրանսպորտի պակասը, դժվարեցնում է անգամ մարզկենտրոնի հետ կապը:

Սոցիալական օգնության պետական ծրագրերից ամենամեծն աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրն է: Արագածոտնի մարզում այդ ծրագրի շահառուների թիվը վերջին տարիներին դանդաղորեն նվազում է (տես Աղյուսակ)։ Դա պայմանավորված է կենսաթոշակների չափի բարձրացմամբ, որի արդյունքում մարզի թոշակառուների որոշ մասն համակարգից դուրս է մնացել: Իսկ 2007 թ. մարզի նպաստառուների թվի աճը 2005 թ.- համեմատությամբ հիմնականում պայմանավորված է մարզում ծնելիության աճով :


Աղյուսակ 57. Տեղեկանք Արագածոտնի մարզի ընտանեկան նպաստառուների թվի և միտումների մասին

	2006թ.	2007թ.	2008թ.	01.07.2009թ.
Աշտարակ	3026	2960	2489	2310
Թալին	1598	1611	1525	1358
Ապարան	681	673	652	611
Ծաղկահովիտ	693	640	642	552

Աղբյուրը՝ Արագածոտնի մարզպետարան

Նպաստառուների թվի և ոլորտի զարգացման դինամիկայի մասին առավել ակնհայտ պատկերացում է տալիս ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերը:

Գրաֆիկական պատկեր 22. Ընտանեկան նպաստառուների բաշխումը մարզում



Ընտանեկան նպաստի համակարգում կարիքավորության աստիճանի հիման վրա սկսել է տարբերակված մոտեցում կիրառվել: Փաստորեն, որքան աղքատ է ընտանիքը, այնքան բարձր է աղքատության ընտանեկան նպաստի չափը:

Մարզում նպաստառու ընտանիքների կեսից ավելին բնակվում է գյուղական համայնքներում: Ընդ որում՝ նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում:

Մարզում ընտանեկան նպաստների և այլ սոցիալական օգնության ծրագրերի իրականացման պատասխանատուները սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններն են:

Սակայն նրանք հիմնականում գտնվում են նախկին շրջկենտրոններում և տրանսպորտի ոչ լիարժեք աշխատանքի պատճառով, ոչ բոլորին են հասու: Դրանով է մասամբ պայմանավորված այն, որ բնակչության ամենաաղքատ խավերն ընտանեկան նպաստների համակարգի մասին տեղեկատվությանը լիարժեք չեն տիրապետում: Այդ հանգամանքը պահանջում է, որ նաև սոցիալական ծառայությունները բացահայտեն ամենաաղքատներին, ոչ թե ընտրությունը կատարվի միայն դիմումների հիման վրա:

Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները, ծառայողական տրանսպորտի բացակայության, համակարգչային և այլ տեխնիկայի հնամաշության, սահմանափակ տեխնիկայի պատճառով ժամանակակից ծառայություններ մատուցելու բավարար բազա չունեն:

Ինչ վերաբերում է ՍՃՏԳ-ների մասնագիտական ներուժին, ապա այս ոլորտում վերջին տարիներին ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀԲ-ի համագործակցության շրջանակներում սոցիալական հետազոտությունների Ազգային ինստիտուտում իրականացվում են սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացներ: Դրանք պետք է շարունակվեն նաև եկող տարիներին:

Անհրժեշտություն է նաև փոփոխություններ կատարել ՍՃՏՄ-ների պաշտոնի անձնագրերում և անհրաժեշտ պայման համարել բարձրագույն կրթությունը: Դա հնարավորություն կտա առավել ճշգրիտ մեկնաբանել օրենքները, կազմել և ներկայացնել ճիշտ ու գրագետ փաստաթղթեր:

Հանրապետությունում աղքատությունը մեղմելու և ժամանակավոր զբաղվածություն ապահովելու նպատակով պետությունը 2001թ.-ից հասարակական աշխատանքների կազմակերպմանն ուղղված միջոցառումներ է իրականացնում: Այդ նպատակով պետությունը յուրաքանչյուր տարի հատկացվում է 500 մլն դրամ:

Մարզում մեծ ուշադրություն է դարձվում գործազրկության կրճատման խնդրին: Մարզպետարանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ, իրականացնում է «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագիրը: Դրա արդյունքում մարզի գործազրկության կենտրոններում գրանցված աշխատանք փնտրողները ժամանակավոր աշխատանքով են ապահովվում:

Աղյուսակ 589. Տեղեկանք ՀՀ Արագածոտնի մարզում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի ցուցանիշների մասին

	2004	2005	2006	2007	2008
Ֆինանսավորում/մլն.դրամ/	15000.0	26000.0	29900.0	29000.0	29000.0
աշխատողներ /մարդ/	246	395	449	521	242
աշխատավարձ /օրավարձ դրամ/	1000.0	1000.0	1200.0	1400.0	2000.0

Այս նպատակով մարզին հատկացվող ֆինանսական միջոցները տարեցտարի աճում են: Դա հնարավորություն է տալիս բարձրացնել այդ աշխատանքներում ընդգրկված մարդկանց աշխատավարձը:

Սոցիալական խնդիրները մեղմելու համար անհրաժեշտ է.

1. Կատարելագործել ԱԸՆ համակարգում հաշվառված ընտանիքների անապահովության գնահատման կիրառման անուղղակի /բալային/ մեխանիզմները: Դա կօգնի շտկելու ոչ աղքատ խավերի ընդգրկման սխալները և կբարձրացնի հասցեականությունը:

2. ԱԸՆ համակարգում ապահովել փաստագրված ծայրահեղ աղքատ և աղքատ բնակչության բարձր ներկայացվածությունը՝ բնակչության՝ հատկապես աղքատների իրազեկման ու հայտնաբերման նոր մեթոդների կիրառման, փաստաթղթերի հավաքագրման պարզ և հասանելի սխեմաների ապահովման միջոցով,

3. Աղքատների, տարեցների, հաշմանդամների և նրանց ընտանիքների հոգսերը մեղմելու և նրանց առաջին անհրաժեշտության խնդիրները հոգալու նպատակով մարզում ստեղծել մասնագիտացված մարմին՝ խնամքի տարածաշրջանային կենտրոններ, որոնք կարիքավորներին սոցիալական, հոգեբանական, իրավաբանական անվճար խորհրդատվություն կտրամադրեն: Միայնակ ծեղերի և հաշմանդամների համար անհրաժեշտ է կազմակերպել անվճար ճաշարան և բաղնիք, հիմնել տնային խնամքի հաստատությունը:

4. Մարզում փախստականների համար հիմնված համայնքներում շատ հիմնախնդիրներ կան: Դրանցում չկան կոյուղագծեր, ջրագերր, չի գործում ոռոգման համակարգ: Փախստական 127 ընտանիքներ դեռ ունեն բնակարանի կարիք: Պետական միջոցների հաշվին անհրաժեշտ է կառուցել բնակարաններ, բարելավել ենթակառուցվածքները:

5. Զբաղվածության ոլորտի զարգացման համար գործատուներին տրամադրել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Ստեղծել գործոտու-աշխատանք փնտրող տեղեկատվական համակարգ:

6. Պարբերաբար կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, կադրեր պատրաստել, որոնք, գործատուի ներկայացրած պահանջի դեպքում աշխատանքի կտեղավորվեն:

5.3.4.Արագածոտն մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

Ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակը **սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումն է:**

Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցությամբ սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

ԱՀՌԾ-ի համաձայն, կշարունակվեն ընտանեկան նպաստների ծրագրի և կենսաթոշակային ապահովության համակարգի հետագա կատարելագործման և միանվագ դրամական օգնության վճարների բարձրացման միջոցառումները, որոնք ուղղված են լինելու նաև մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

Այս առումով, մարզի համար, սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

- *հաշմանդամներին (հատկապես՝ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,*
- *ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տան պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,*
- *խնամատար ինստիտուտի ներդրման աշխատանքների շարունակության ապահովումը,*
- *կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների խնամքի ցերեկային /ընտանեկան/ կենտրոնների ստեղծումը,*
- *փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,*
- *սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը,*
- *գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց՝ առնվազան ժամանակավոր զբաղվածության ապահովումը վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի միջոցով:*

Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրագելության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում:

Կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն է:

Ծրագրի ընթացքում կադրերի վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն:


Կարևորվում է նաև սոցիալական ծառայությունների, ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական, մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը՝ հաշմանդամներին, ծերերին նաև՝ տան պայմաններում խնամելու գործընթացի կազմակերպումը:

Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը կարևոր դեր ունի ՄԾՏԳ-ների գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը ներառում է հետևյալ հիմնական բաղադրատարրերը՝

- *ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՄԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդրումը,*
- *պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը,*
- *կամավորների շարժման (կենտրոնի) զարգացումը:*

Գծապատկեր 8. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



5.3.3. Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքեր

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում	<ol style="list-style-type: none"> 1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճան, % 2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի բավարարվածության աստիճան, % 3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը, % 4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշման-դամների, ծերերի տեսակարար կշիռը, % 5. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, % 	<p>Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է:</p> <p>Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:</p>
1. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով		
1.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական և ոչ պետական/ համակարգչային գույքով, տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	<p>Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, %</p> <p>Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների քիվը, %</p>	
2. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ- հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին		
2.1 Դժվարին իրավիճակում	Մարզում դժվարին իրավիճակում	Կյանքի դժվարին

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

<p>հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 2.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում</p>	<p>հայտնված երեխաների թիվ Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվ</p>	<p>իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում:</p>
<p>3.Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում,որը կնպաստի խոցելի խմբերի համար մատուցվող ծառայությունների բազմազանությունը</p>		
<p>3.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամների,ծերերի խնամքը,այդ թվում տնային խնամք իրականացնելու համար</p>	<p>Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը</p>	<p>Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր կազմակերպություններից: Անհրաժեշտ փորձ և հմտություններ ունեցող սոցիալական ծառայություններ մատուցողների /պետական,ոչ կառավարական/ առկայություն: Պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության բարձր աստիճան:</p>
<p>3.2 Սոցիալական անապահով ընտանիքների անդամների սննդապահովում</p>	<p>Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը,%</p>	
<p>3.3 Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում</p>	<p>Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը</p>	
<p>3.4 Հաշմանդամներին /հատկապես հաշմանդամ երեխաներին և նրանց ծնողների/ վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում Հաշմանդամ երեխաների առողջավերականգնողական ցերեկային կենտրոնների ստեղծում</p>	<p>Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը Կենտրոնի ծառայություններից օգտվող հաշմանդամ երեխաների թիվ</p>	
<p>3.5 Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում</p>	<p>Հաշվառված խնամատար ընտանիքների թիվ:Խնամատար ընտանիքներ տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը</p>	<p>ՀՀ կառավարությունը աջակցում է խնամատար ընտանիքների ինստիտուտի կայացմանը հանրապետությունում:</p>
<p>3.6Գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման միջոցառումների կազմակերպում</p>	<p>Վերապատրաստված գործազուրկների թիվը Աշխատանքի տեղավորված վերապատրաստված գործազուրկների տեսակարար կշիռը,%</p>	<p>Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր կազմակերպություններից: Նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները ընդլայնվում են մարզում:</p>
		<p>Աջակցության ցուցաբերում</p>

<p>3.7 Վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի իրականացում</p>	<p>Վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի թիվը Վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը</p>	
<p>4 Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում խոցելի բնակչության սոցիալական սպասարկման գործում կավելանան համագործակցությամբ իրականացվող ծրագրերը</p>		
<p>4.1 ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդրում</p>	<p>ՀԿ-ների, ՏԻՄ-երի, համատեղ սոցիալական ծրագրերի թիվը</p>	<p>Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր կազմակերպություններից:</p>
<p>4.2 Պետական և ոչ պետական կառույց-ների համատեղ ջանքերով խոցելի ծմբերի կարիքների գնահատման միջոցառում-ների կանոնավոր իրագործում</p>		
<p>4.3 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում` նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով</p>	<p>Խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն Խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը</p>	
<p>4.4 Կամավորների շարժման /կենտրոնի/ զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում</p>	<p>Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը</p>	<p>Երիտասարդությունը ցանկանում է հասարակական հիմունքներով ծառայություն մատուցել խոցելի խմբերին:</p>
<p>5. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացում, Ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևարար նաև նրանց աշժատանքի նպատակայնության բարձրացմանը</p>		
<p>5.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների/պետական, հասարակական միջազգային/ և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում</p>	<p>Հրապարակային ներկայացումների թիվը</p>	<p>Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել իրենց սոցիալական ծրագրերի մասին տեղեկատվություն :</p>
	<p>Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռ, % Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում, %</p>	
<p>5.2 Մարզպետարանի սոցիալական</p>		

<p>ապահովության վարչության / ՄՃՏՄ-ների կանոնավոր հաշվետվությունների հրապարակային ներկա-յացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագա-վառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ</p>		
<p>6. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում</p>		
<p>6.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնոր և հովանավորներ որո-նելու հմտությունների զարգացում /դասընթացներ, արտասահմանյան փորձ և այլն / պետական և ոչպետական</p>	<p>Մատուցվող ոչ նյութական ծառայություն-ների թիվը Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը</p>	
<p>6.2 Սոցիալական ծառայություններ մատու-ցող կազմակերպությունների /պետական և ոչ պետական/ կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ</p>	<p>Կարիքի գնահատման դասնթացներին մասնակցածների թիվը /մարզպետարան և ՄՃՏՄ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ</p>	

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծությունը, մարզի բնատնտեսական պայմանները և տեղը Հանրապետության գյուղատնտեսության մեջ

Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն կազմում են մարզի ընդհանուր տարածքի 79.2 %-ը (217809 հա):

Մարզի բնակլիմայական պայմաններն ըստ տարածաշրջանների, բազմազան են: Կան նախալեռնային, լեռնային և բարձրլեռնային գոտիներ: Դրանցով էլ պայմանավորված է գյուղատնտեսության կողմնորոշումը տարբեր տարածաշրջաններում:

Ցածրադիր գոտում՝ Աշտարակի տարածաշրջանում և Թալինի նախալեռնային գոտիներում մշակվում են ջերմասեր մշակաբույսեր՝ խաղող, հնդավոր պտուղներ: Այստեղ տարվա ընթացքում խոտհարքերից ստացվում է 2-3 բերք, հացահատիկի տարածություններն օգտագործվում են երկու անգամ: Այս տարածքներում համեմատաբար զարգացած են ենթակառույցները, որը բարձրացնում է ճյուղի արդյունավետությունը:

Բարձրադիր գոտիներում՝ Ապարանի, Արագածի և Թալինի լեռնային բնակավայրերում գյուղատնտեսության հիմնական ուղղվածությունը անասնապահությունն է: Սակայն, համեմատած ցածրադիր գոտու հետ, այստեղ այն համեմատաբար ավելի քիչ արդյունավետ է:

Մարզի 54.0 հազ. հա վարելահողերից 2009 թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսություններն օգտագործել են 32.1 հազար հա: Դրանից 23.34 հազար հեկտարը հացահատիկային մշակաբույսերն են:

Համայնքներում փաստացի չի օգտագործվել 21.85 հազար հա վարելահող: Դրանք հիմնականում բարձրադիր գոտում են, տարածված են մեծ թեքությունների վրա, քարքարոտ են և համեմատաբար հեռու են համայնքներից:

2008թ. օգտագործման նպատակով հողօգտագործողներին վարձակալությամբ հատկացվել է 6875.05 հա հողատարածք: 2007թ. համեմատությամբ վարձակալությամբ տրված հողամասերն ավելացել են 400 հա-ով /հիմնականում՝ արոտավայրեր/:


Ըստ հողային հաշվեկշռի, մարզում գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը բնութագրվում է աղյուսակում:

Աղյուսակ 59. Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կազմը բնորոշող ցուցանիշներն ըստ 2008 թ. հաշվեկշռի տվյալների (հա)

Ընդամենը գյուղ. հողեր	Վարելահող	Խաղող	Պտուղ	Խոտհարք	Արոտավայր	Այլ
217809	54004.8	1784.8	2790.8	3150	137554	18523.3

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը /63.2 %/ և վարելահողերը /24.8 %/:

Գրաֆիկական պատկեր 23. Գյուղատնտեսական հողատեսքերի բաշխումը մարզում %



2008 թ. Արագածոտնի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 58.0 մլրդ. դրամ: Այն հանրապետության գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի 9.1%-ն է:

6.1.1. Մարզում գյուղատնտեսական հողերի օգտագործման վիճակը

Աղյուսակ 60. ՀՀ Արագածոտնի մարզում 2006-2008 թթ. գյուղատնտեսական մշակաբույսերի տարածության, ստացված բերքի և բերքատվության տվյալները

Ընդամենը մարզում	Հացահատիկ և հատիկաբերեղեն			Կարտոֆիլ			Բանջարեղեն			Խոտ	Պտուղ		Խաղող /տ/	Աշնանացան /հա/
	Տարածություն /հա/	Ստացվել է բերք /տ/	Միջինը բերք /տ/	Տարածություն /հա/	Ստացվել է բերք /տ/	Միջինը բերք /տ/	Տարածություն /հա/	Ստացվել է բերք /տ/	Միջինը բերք /տ/		Տարածություն /հա/	Ստացվել է բերք /գ/		
2	3	3	6	8	8	13	16	18	19					
2006	23033	28337	12.9	1855	36161	211.2	1005	23500	233.8	78.2	4703	550000	8900	8000
2007	22976	58625	25.5	1855	33560	180.9	1065	26716	280.8	82.8	5305	456705	12309	82700
2008	22916	44664	19.5	1703	4034	199.9	885	25824	291.8	82.5	4365.8	575701	13120	8300

Աղյուսակի տվյալները հաստատում են, որ 2006-2008 թթ. մարզում մշակաբույսերի բերքատվությունն աճել է: Սակայն աճի տեմպերը բավարար չեն, և բուսաբուծությունը դեռևս հեռու է իր հնարավորությունների սահմանին հասնելուց:

Մարզի համայնքներում տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունները բերել են այն համոզման, որ Արագածոտնի մարզի գյուղատնտեսության համար առաջնահերթ հիմնախնդիրը տնտեսությունների փոքրությունն է և հողերի մասնատվածությունը: Դա անխուսափելիորեն իջեցնում է արտադրության արդյունավետությունը: Նման պայմաններում հնարավոր չէ հիմնավորված ցանքաշրջանառություն և արտադրական տեխնոլոգիաներ կիրառել, դժվարություններ են առաջանում արտադրության, սպասարկումների, արտադրանքի իրացման և մնացած բնագավառներում: Ստեղծված իրավիճակը պահանջում է տնտեսությունների միավորման, դրանց համատեղ գործունեության կազմակերպման մեխանիզմների (կոոպերացիաների ստեղծում և ֆերմերային տնտեսությունների հզորացում) մշակում և ներդրում:

6.1.2. Մարզի գյուղատնտեսության ներկայիս մասնագիտացումը

Մարզի գյուղատնտեսության մասնագիտական ուղղվածության և ճյուղերի հարաբերակցության մասին պատկերացում է տալիս գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը (տես աղյուսակը):

Աղյուսակ 61. Արագածոտնի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը 2008թ. տվյալներով (հաշվարկված 2008թ. գներով)

	Գյուղատնտեսական մթերքների անվանումը	ՀՀ համախառն արտադրանք (մլրդ դրամ)	տեսակա-րար կշիռը (%)	մարզի համախառն արտադրանք (մլրդ դրամ)	Տեսակա-րար կշիռը (%)	մարզի տեսակա-րար կշիռը ՀՀ –ում (%)
1	2	3	4	5	6	7
1	Հացահատիկ	50.265	11.8	4.913	9.6	9.8
2	Կարտոֆիլ	65.504	15.4	3.4	6.6	5.2
3	Բանջարեղեն	70.153	16.5	1.81	3.5	2.6
4	Բոստան	21.859	5.2	0.6	1.17	2.7
5	Պտուղ	27.015	6.4	11.51	22.46	42.6
6	Խաղող	31.405	7.4	1.7	3.39	5.4
7	Բուսաբուծական այլ արտադրանք	158.099	37.3	27.3	53.28	17.3
	Ընդամենը	424.3	100	51.233	100	12.1
1	Միս	103.698	48.7	8.04	45.1	7.8
2	Կաթ	76.130	35.7	6.45	36.2	8.5
3	Չուր	27.600	13.0	0.8	4.5	2.9
4	Անասնաբուծական այլ արտադրանք	5.572	2.6	2.52	14.15	45.2
5	Ընդամենը անասնաբուծական արտադրանք	213.0	100	17.81	100	8.4
	Ընդամենը համախառն արտադրանք	637.3	100	69.04	100	10.8

Ներկայացված տվյալները հաստատում են, որ մարզն ունի անասնապահության /կաթ, միս/ և բուսաբուծության /հացահատիկ, կարտոֆիլ/ արտադրական ուղղություն: Մարզի բնակչինայական պայմանները բարենպաստ են կորիզավոր և հնդավոր պտղատեսակների համար: Առաջիկա ծրագրային միջոցառումները իրականացնելիս, հաշվի են առնվել նշված նախընտրելի մասնագիտացումները:

6.1.3. Գյուղատնտեսությունում արտադրության կազմակերպման ձևերը և դրանց չափերը

ՀՀ Արագածոտնի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: 2008թ. դրությամբ մարզում գործում էր 38782 գյուղացիական և ֆերմերային տնտեսություն, գյուղատնտեսական մթերքներ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/ վերամշակող 52 կազմակերպություն:

Աղյուսակ 62. Արագածոտնի մարզի գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների միջին չափը՝ ըստ գյուղատնտեսական հողատեսքերի

(հա)

Մեկ գյուղ. տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը բաժին ընկնող գյուղատնտեսական հողատեսքերը	Այդ թվում		
	վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք
5.6	1.4	0.12	0.08

Ստորև ներկայացվող աղյուսակից կարելի է պատկերացում կազմել անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների չափերի մասին:

Աղյուսակ 63. Մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնազյխաքանակը (2009թ. հունվարի 1-ի դրությամբ) /գլուխ/

Մեկ գյուղացիական տնտեսությանը և առևտրային կազմակերպությանը միջին հաշվով բաժին ընկնող անասնազյխաքանակը				
Խոշոր եղջերավոր անասուններ	որից կովեր	ոչխարներ և այծեր	խոզեր	պայմանական անասնազյխաքանակ
1.8	0.84	1.9	0.17	2.1

Ներկայացված տվյալներից ակնհայտորեն երևում է, որ մարզում գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների միջին չափը, ըստ գյուղատնտեսական հողատեսքերը և գյուղատնտեսական կենդանիների միջին գլխաքանակը բնորոշող ցուցանիշների, բավականին փոքր է: Դա տնտեսությունների մասնատվածության հետևանքն է:

Առաջիկա տարիներին խնդիր է դրվում մշակել և գործողության մեջ դնել տնտեսությունների խոշորացման, կոոպերատիվների կազմակերպման գործուն ծրագիր: Դա թույլ կտա էապես բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը:

Ներկայումս մարզում այդպիսի աշխատանքներ կատարվում են. որոշ տնտեսությունների միավորմամբ ստեղծվում են կոլեկտիվ ֆերմերային կազմակերպություններ: Սակայն դրանց կազմակերպման տեմպերը բավականին ցածր են:

Չկան նաև ֆերմերային տնտեսությունների մասին հստակ չափորոշիչներ, դրանց համար չեն սահմանվել արտադրության կազմակերպման, սպասարկման, արտադրանքի իրացման որոշակի ծրագրային ցուցանիշներ: Ուստի, ֆերմերային տնտեսությունների կազմակերպումը նույնպես ընթանում է տարերայնորեն:

Այդ պատճառով դրանց առանձնացումը գյուղացիական տնտեսություններից կատարվել է գուտ պայմանականորեն:

Ստորև ներկայացվում է Արագածոտնի ֆերմերային տնտեսությունների մասին ամփոփ տեղեկատվություն՝ ըստ այդ սահմանումների:

Աղյուսակ 64. Արագածոտնի մարզում խոշոր անասնաբուծական ֆերմերային տնտեսությունների /10 և ավելի կով, 50 և ավելի մաքի, 5 և ավելի խոզամայր/ քանակը 01.01. 2009թ դրությամբ

Տարածաշրջանը	Տավա-րաբու-ծություն	Ոչխա-րաբուծու-թյուն	Խոզաբուծու-թյուն	Տավարաբուծություն և ոչխարաբուծու-թյուն	Տավա-րաբուծու-թյուն և խոզաբուծություն	Ընդամենը
Թալին	45	10	3	26	-	84
Աշտարակ	59	16	3	10	-	88
Այսարան	27	5	-	4	-	36
Արագած	49	3	-	4	-	56
Ընդամենը	180	34	6	44	-	264

Մարզում գյուղատնտեսական տնտեսություններից միայն 229-ն են ֆերմերային տնտեսություններ: Դրանցից 63-ը զբաղվում է անասնապահությամբ, 55-ը՝ դաշտավարությամբ, 14-ը՝ այգեգործությամբ, 30-ը՝ մեղվաբուծությամբ, 52-ը՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/, 15-ը՝ սերմարտադրությամբ:

6.1.4. Սերմնաբուծություն և տնկարանային տնտեսություն

Բուսաբուծության արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է, բարձրորակ սերմերի ու տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորմամբ:

Հանրապետության ագրարային հատվածում իրականացված համակարգային փոփոխություններին և հողի սեփականաշնորհմանը զուգընթաց, տարբեր պատճառներով տեղի ունեցած գործընթացների հետևանքով, լուծարվել են նախկինում գոյություն ունեցող սերմնաբուծության համակարգերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության, միջազգային կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների կողմից վերջին տարիներին սերմի և տնկանյութի արտադրության բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Սակայն դրանք ևս չեն

ապահովել հիմնախնդրի վերջնական լուծումը, ժամանակավոր են եղել և հիմնականում լուծել են տեղական նշանակության խնդիրներ:

Հանրապետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության և, առաջին հերթին, բուսաբուծության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում վճռորոշ դեր է ստանում բարձր վերարտադրության սերմերի և որակյալ տնկանյութի արտադրության կազմակերպումը: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացմանն ուղղված ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարատև (մինչև 2010-2015 թթ.) միջոցառումների իրականացում: Դա հնարավորություն կընձեռի խթանել սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումը և պայմաններ կստեղծի մարզում բարձրորակ սերմերի արտադրության ու օգտագործման համար:

Մարզում հացահատիկի և բանջարաբուստանային կուլտուրաների երաշխավորված և կայուն բերք ապահովելու նպատակով մարզպետարանն անհրաժեշտ ուշադրություն է դարձրել ցանվող սերմանյութի սերմնաթարմացման, սերմափորձարկման և սերմնաբուծության զարգացման ոլորտի, ինչպես նաև տնկարանային տնտեսության աշխատանքների կազմակերպմանը վրա:

ՀՀ կառավարությունը 2008 թ. Արագածի և Թալինի տարածաշրջաններին գարու, ցորենի և բազմամյա խոտերի ցանքատարածությունների ընդլայնման և արտադրության զարգացման նպատակով 551.16 մլն. դրամի սուբսիդավորման ծրագիր է հաստատել, որը տրվել է շահառուներին: Սուբսիդավորումից օգտվել է մարզի բոլոր տարածաշրջանների 60 համայնք: Գումար է հատկացվել մարզի ավելի քան 3000 շահառուների: Դրա հետևանքով մարզում հացահատիկի ցանքատարածություններն ավելացել են 2000 հա-ով:

2009թ. սուբսիդիա է ստանալու մարզի 46 բարձր լեռնային համայնք: Դրանցից 22 -ը Արագածի, 15-ը՝ Ապարանի և 9 համայնք Թալինի տարածաշրջաններից են: Ընդամենը հատկացվելու է 268.56 մլն. ՀՀ դրամ, և ցանք է կատարվելու մոտ 1665 հա տարածության վրա:

Մարզում պտղատու տնկիների արտադրությունը կազմակերպում են բացառապես մանր գյուղացիական տնտեսությունները: Առանձնապես Աշտարակի տարածաշրջանի որոշ համայնքներ զբաղվում են տնկիների աճեցումով: Դրանք հիմնականում բավարարում են իրենց ներկայացվող պահանջները, արտադրում են բարձրորակ տնկանյութ:

Սակայն խաղողագործության ոլորտում այսպիսի աշխատանքներ գրեթե չեն կատարվում: Նախորդ 10-12 տարիներին մարզում խաղողի տարածությունները կրճատվելու միտում ունեին, և, բնականաբար, տնկանյութի պահանջն այնքան բարձր չէր:

Սակայն վերջին 3-4 տարում մարզում խաղողի նոր այգիների հիմնման գործընթաց է սկսվել: Դա պահանջում է, որպեսզի արտադրվեն առավել բարձր բերքատու, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկուն տեսակներ, ներմուծվեն այլ երկրների լավագույն տեխնոլոգիաները:

Այս ծրագիրը մարզի գյուղատնտեսության զարգացման առաջիկա տարիների առաջնահերթություններից է:

6.1.5. Պտղաբուծություն և խաղողագործություն

Վերջին երեք տարում մարզում հիմնվել են 350 հա պտղի և 250 հա խաղողի այգիներ:

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հաշվետվության 2008 թ. տվյալներն են.

Աղյուսակ 65. Գյուղատնտեսական մշակարույթների տարածությունները և համախառն բերքի ցուցանիշները ՀՀ Արագածոտնի մարզում 2008 թ. դրությամբ

Մշակարույթ	տարածքը –հա-	որից՝ բերքատու
1. Պտուղ	4710.64	4365.85
այդ թվում՝ հնդավոր	1711.85	159.46
կորիզավոր	1731.57	1629.97
ընկուզապտուղներ	204.52	163.72
մերձարևադարձային	5.2	5.2
հասապտուղներ	1057.5	1057.5
2. Խաղող	1933.5	1908.9
այդ թվում՝ տեխնիկական	697.9	677.9

2008 թ. 2958.2 հա այգիներից ստացվել է 197476 ցեմտներ պտուղ, 1հա-ի միջին բերքը կազմել է 76,3 ցեմտներ: 184 հա խաղողի այգիներից ստացվել է12732 ցեմտներ. խաղող, 1հա-ի միջին բերքը կազմել է 69,2 ցեմտներ:

6.1.6. Գյուղատնտեսական հիմնական ճյուղերում ստեղծված իրավիճակը

Գյուղատնտեսական ճյուղերի արտադրության ներկայիս մակարդակի և առաջիկա միտումների գնահատման համար ներկայացնենք մարզի բուսաբուծության և անասնաբուծության արտադրական հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 66. Գյուղատնտեսական մշակարույթների հիմնական արտադրական ցուցանիշները 2006-2008թթ.

	Տարածքը (հազ. հա)			Բերքատվությունը (ց/հա)			Համախառն բերք (հազ. տոննա)		
	2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008
Հացահատիկ									
Արագածոտն	23033	22976	22916	12.3	25.5	19.5	28337	58625	44664
ՀՀ	182405	176213	172838	11.6	25.6	24.0	212545	452522.2	4154178
Մարզի տեսակարար կշիռը (%)	12.6	13.0	13.1	1.1	0.9	0.8	13.3	12.9	10.8
Կարտոֆիլ									
Արագածոտն	1855	1855	1703	211.2	180.9	199.9	36464	33560	34034
ՀՀ	33045	31674	34298	163	184	189	539476	583934	648562.4
Մարզի տեսակարար կշիռը (%)	5.6	5.9	4.9	12.9	98.3	106	6.8	5.7	5.2
Բանջարեղեն									
Արագածոտն	1005	1065	558	233.8	250.8	291.8	23500	26716	25824
ՀՀ	24361	25607	24219	320	330	340	779895	845285.1	825337.6
Մարզի տեսակարար կշիռը (%)	4.1	4.2	3.7	72	76	85.8	3.0	3.2	3.1
Բոստան									
Արագածոտն	1	1	159	20	20	396	0.002	0.002	6300

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

ՀՀ	4025	5884	5446	335	350	334	134935	206295.1	182159.4
Մարզի տեսակարար կշիռը (%)	0.025	0.016	0.03	5.97	5.71	118.6	0.0015	0.00096	0.035
Պտուղ և հատապտուղ									
Արագածոտն	4703	5305	4366	116.9	86	131.9	55000	45670	57570
ՀՀ	35403	38020	36748	80.8	68.4	86.4	286133	260239	317834.8
Մարզի տեսակարար կշիռը (%)	13.3	13.9	11.9	144.7	125.7	152.7	19.2	17.5	18.1
Խաղող									
Արագածոտն	1826	1826	1826	48.7	56.2	72.3	8900	12309	13196
ՀՀ	15746	15888	16796	127.8	137.7	110.6	201372	218882	185831
Մարզի տեսակարար կշիռը (%)	11.6	11.5	10.9	38.1	40.8	65.4	4.4	5.6	7.1

Տվյալներից ակնհայտ երևում է, որ բոլոր մշակաբույսերի բերքատվության ցուցանիշներով (բացառությամբ հացահատիկի և պտղի), մարզը հանրապետությունում հետնապահ դիրքերում է:

Դրա պատճառները բազմաթիվ են: Մերմնաբուծության և տնկարանային տնտեսության բացակայության մասին վերևում արդեն խոսվեց: Կան նաև այլ պատճառներ, որոնք իջեցնում են մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետությունը:

Նախ՝ Արագածոտնի մարզը գյուղատնտեսության վարման ռիսկային գոտում է: Այստեղ ամեն տարի գյուղատնտեսությանը մեծ վնասներ են հասցնում տարերային աղետները՝ ցրտահարություն, կարկտահարություն, երաշտ, հեղեղումներ: Այդ պատճառով մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսությունները մեծ վնասներ են կրում: Ամեն տարի հացահատիկի հարյուրավոր հեկտար տարածություններ չեն հնձվում, պտուղները և հատապտուղները կորցնում են ապրանքային տեսքը և շուկայական արժեք չեն ունենում: Սակայն մարզում ոչ մի ապահովագրական ընկերություն չի գործում, և վնասները չեն փոխհատուցվում: Պետական ուղղորդված օգնությունները խնդիրն ամբողջությամբ լուծել չեն կարող:

Երկրորդ՝ չկան անհրաժեշտ քանակությամբ պարարտանյութ, արդյունավետ բունաքիմիկատներ:

Երրորդ՝ ցանքաշրջանառությունը, որպես ագրոտեխնիկական կարևոր միջոցառում, գրեթե ամբողջապես անտեսված է: Նույն տարածությունները, առանց հողի բարելավման միջոցառումների, ամեն տարի օգտագործվում են նույն նպատակներով: Դրա հետևանքով հողերի ֆիզիկական և քիմիական կազմը վատանում է:

Չորրորդ՝ մեքենատրակտորային հավաքակայանը գրեթե ամբողջովին ֆիզիկապես և բարոյապես մաշվել և սպառել է իրեն: Մեքենայական մշակումները չեն կարող ագրոտեխնիկայի կանոններով նախատեսված միջոցառումների որակ ապահովել:

Կան նաև այլ պատճառներ, որոնք հատուկ են ողջ հանրապետության համար:

Վիճակը շտկելու նպատակով մարզում անցած տարիներին որոշ աշխատանքներ կատարվել են:

Մարզի Աշտարակի տարածաշրջանի 10 համայնքներում Արգենտինայի Մեդոզա քաղաքի SAPOL SA ընկերությունը կառուցել և փորձարկել է 15 հակակարկտային կայան: Յուրաքանչյուր համակարգ ապահովում է 100 հա տարածքի անվտանգությունը:

Առաջիկա 4 տարիների ընթացքում մարզում կտեղադրվի ևս այդպիսի 47 կայան: Դրանցից 34-ը գազագեներատորային են լինելու, իսկ 13-ը՝ ռեազենտային: 2009թ. մարզում կտեղադրվի 10-ը գազագեներատորային կայան:

Կարևոր է ապահովագրական համակարգի կազմակերպումը: Դա բնական անցանկալի երևույթների դեմ պայքարի գործում ռազմավարական նշանակություն ունի:

Մարզում ապահովագրական համակարգի ներդրման դեպքում հաշվի են առնվելու գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը:

Մարզի գյուղատնտեսության մյուս առաջատար ճյուղն անասնաբուծությունն է:

Արագածոտնի մարզի անասնապահության ճյուղը բնութագրող ցուցանիշները 2007-2009 թթ. տվյալներով բերվում են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 67. Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի 2006-2008թթ.-ի տվյալները (հազ.գլուխ)

	Խոշոր եղջերավորներ			այլ թվում՝ կովեր			Խոզեր			Ոչխարներ և այծեր		
	2007	2008	2009	2007	2008	2009	2007	2008	2009	2007	2008	2009
Արագածոտն	74	73.642	69.594	37.0	36.815	32.651	6.2	5.598	6.489	94.7	86.783	73334
ՀՀ	592.1	620.2	629.1	297.1	307.1	310.6	137.5	152.8	86.7	591.6	632.9	637.1
Մարզի տեսակարար կշիռը (%)	12.5	11.8	11.1	12.5	11.9	10.5	4.5	3.7	7.5	16	13.7	11.5

Աղյուսակ 68. Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2006-2008թթ.-երին

/հազ.տոննա/

	Իրացվել է միս կենդանի քաշով (հազ. տոննա)			Կաթ (հազ. տոննա)			Չու(մլն հատ)		
	2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008
Արագածոտն	13	13.3	13.6	71.5	74.0	70.5	23.6	28.8	25.7
ՀՀ	117.1	122.2	125.9	620.0	642.0	661.9	463.7	525.4	574.9
Մարզի տեսակարար կշիռը (%)	11.1	10.9	10.8	11.5	11.5	11.9	5.1	5.5	4.5

Մարզում 2006-2008թթ. ընթացքում նկատվում է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի և անասնապահական մթերքների արտադրության որոշակի աճ:

Մարզի բուսաբուծության և անասնաբուծության ճյուղի հիմնական ցուցանիշների փոփոխության գնահատումը հնարավորություն է տալիս հետևություն անելու, որ ցածր է մշակաբույսերի բերքատվությունը և գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Արտադրության ծավալների ավելացումը հիմնականում իրականացվում է էքստենսիվ եղանակով: Ուստի առաջնահերթ հիմնախնդիրը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ու գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացումն է:

Մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնամսամթերքի արտադրությունն է: Մարզի տարածքում է գործում «Աշտարակ կաթ» ընկերությունը, Ապարանի պանրի գործարանը, Թալինի «Բիոկաթ» ընկերությունը: Մարզի Արագածի տարածաշրջանի Ռյա-Թազա համայնքում գործում է 25 տոննա տարողությամբ կաթի ընդունման կետ, որտեղ ընդունում են գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների արտադրած կաթը: Մի շարք մասնագիտացված և հարմարեցված արտադրամասերում արտադրվում է բարձրորակ պանիր, որի պահանջարկը հանրապետության շուկաներում բավականին բարձր է: Սակայն կաթի իրացումից գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ստացված եկամուտը բավականին ցածր է, քանի որ կաթի 1 լիտրը իրացվում է 90-150 դրամով:

Մարզում լայն թափ են ստացել նաև թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը: Վիճակագրական տվյալներով թռչունների գլխաքանակը արդեն հասնում է 136521-ի, իսկ մեղվաբնտանիքներինը՝ 32081-ի:

Վերջին երկու տարիների ընթացքում Աշտարակի տարածաշրջանում ստեղծվել է «Հովքար» խոշոր տոհմային տնտեսությունը, Ավստրիայից ներկրվել են 99 գլուխ բարձրակիթ տոհմային երինջներ: Նախատեսվում է առաջիկա տարիներին տոհմային անասուններ գնելով, կովերի գլխաքանակը հասցնել մինչև 500 գլուխ: Այդ տնտեսության բազայի վրա նախատեսված է մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ապահովել բարձր մթերատու կենդանիներով:

Աղյուսակ 69. Մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 01.01.2009 թ. դրությամբ

Տարածաշրջանի անվանումը	Խ.Ե.Ա.	Որից կովեր	Ոչխար	Այծեր	Խոզեր	Չիեր	Թռչուններ	Մեղուներ	
Աշտարակ	2007	19807	9462	19917	2414	3733	136	41197	4517
	2008	18946	9106	20849		2244		32006	4747
	2009	17703		15524		2440		41847	4747
Թալին	2007	23531	12485	42977	2082	3395	93	66569	4158
	2008	24787	12406	43381	2147	2523	78	55276	4728
	2009	22908	11431	37498	1482	3085	77	54279	4717
Ապարան	2007	14082	6926	11055	695	926	126	22051	2139
	2008	13938	7036	103385	384	545	120	26461	2059
	2009	13231		8290		581		26401	2203
Արագած	2007	14047	7642	12672	667	379	109	16902	602
	2008	15371	8267	12168	679	286	125	19852	710
	2009	15752		13963		334		22368	540
ԸՆԴԱՄԵՆԸ	2007	71467	36515	86621	5858	8433	464	146719	11416
	2008	73042	36515	86783		5598		143436	12289
	2009	69594	34392	73332	3379	6489	431	135159	12212

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն

Մեղվաբուծություն

Մեղվաբուծության զարգացման համար մարզում բնակլիմայական բարենպաստ պայամաններ կան: Մեծ տարածքներ են զբաղեցնում ալպիական և մարզագետինային

արտավաճերը, որտեղ է էկոլոգիապես մաքուր մեղր արտադրելու մեծ հնարավորություններ կան:

Մեղվաբուսանիքների շարժի դինամիկայից պարզ երևում է, որ մեղվաբուծությունը մարզում զարգացման միտումներ է դրսևորում: Եթե 2007թ հունվարի 1-ի դրությամբ մարզում պահվում էր 9000 մեղվաբուսանիք, ապա 2009 թ. հունվարի 1-ի դրությամբ դրանց թիվը հասել է 12212-ի, կամ 2007 թ. համեմատ աճը կազմել է 35.7 %:

Տոհմային գործ

Անասնազվիսաքանակի մասնատումը, կերի կայուն բազայի բացակայությունը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազումը ոչ միայն հանգեցրեցին անասնազվիսաքանակի և անասնապահական մթերքների և հումքի արտադրության կրճատմանը, այլև լուրջ խոչընդոտներ ստեղծեցին լայնածավալ տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացման համար: Վերջինից անմասն չմնաց Արագածոտնի մարզը:

Հանրապետությունում անասնաբուծությունը զարգացնելու, բարձր մթերատու և տոհմային հատկանիշներով օժտված կենդանիներ աճեցնելու և նախիրներն ու հոտերը որակյալ կազմով համալրելու համար անհրաժեշտ է մարզում, առաջին հերթին, ստեղծել տոհմային տնտեսություններ, ընդլայնել գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծավալները:

2008 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2006 թ. համեմատությամբ ավելացել է 2067, մանրինը՝ 7473 գլխով: 2008թ. 26076 գլուխ կովերից արհեստական եղանակով սերմնավորվել է 4140 գլուխը, որը կազմում է կովերի գլխաքանակի 15.8 %-ը:

Իրավիճակի գնահատումից հետևում է, որ առաջնային խնդիր է արհեստական սերմնավորմամբ կովերի գլխաքանակի ավելացումը: Անհրաժեշտ է այն հասցնել կովերի առկա գլխաքանակի 60-70%-ին: Դա կնպաստի կենդանիների հիվանդությունների կանխմանը և մթերատվության բարձրացմանը: Կարևորվում է նաև մարզում տոհմային տնտեսությունների ձևավորումը, որոնք տոհմային կենդանիներ կմատակարարեն մարզի անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին:

Անասնաբուծություն

Ելնելով հանրապետության առանձին տարածաշրջաններում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակից և ղեկավարվելով «Անասնաբուծության մասին» ՀՀ օրենքով, հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացվում են հակահամաճարակային միջոցառումներ:

Համապատասխան անասնաբուժական ծառայությունները ժամանակին կատարվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի, կարանտինային և հակահամաճարակային միջոցառումներ: Պարբերաբար հրավիրվել են փնջային խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են մարզում անասնաբուժական և տոհմային աշխատանքների կազմակերպման վիճակը, անասնապահական մթերքների արտադրության և մթերման, սերմնավորման հարցերը: Դրանց ուղղությամբ կատարվել են համապատասխան միջոցառումներ:

Նախկինում հանրապետությունում պայքարի միջոցառումներ էին իրականացվում կենդանիների 55 անուն վարակիչ հիվանդության դեմ:

2006-2008 թթ. պետպատվերի շրջանակներում բրուցելյոզ և տուբերկուլյոզ հիվանդությունների նկատմամբ տարեկան երկու անգամ ախտորոշիչ հետազոտություն է կատարվել, բուժաբուժֆիլակտիկ պատվաստումներ են իրականացվել սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, պաստերելիոզ ու ժանտախտ հիվանդությունների դեմ:

Վերջին տարիներին, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների անվանացանկի կրճատման հետևանքով, հանրապետությունում որոշակիորեն վատթարացել է հակահամաճարակային վիճակը:

Արագածոտնի մարզում ներկայումս գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնը, որն իր լիազորությունների շրջանակներում սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության բնագավառում «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքների ու իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան վերահսկողություն է իրականացնում: Մարզի համայնքներում աշխատում է 97 անասնաբույժ, որոնք իրականացնում են անասնաբուժական բոլոր միջոցառումները:

Մարզում նշված աշխատանքների վերահսկողության պատասխանատուն սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնն է: «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային աշխատակիցները ախտորոշիչ աշխատանքներ են իրականացնում:

2008 թ. ընթացքում պետպատվերի շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ 90-98 %-ով պատվաստումներ են կատարվել, իրականացվել են ախտորոշիչ հետազոտությունները, անասնաբուժական և անասնաբուժասանիտարական միջոցառումները:

Ներկայումս մարզում առաջնահերթ խնդիրներ են անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ներառվող հիվանդությունների ցանկի ընդլայնումը և սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի բազայի ամրապնդումը:

Գյուղատնտեսական մթերքների իրացումը և ապրանքայնության մակարդակը

Գյուղատնտեսության կայունության, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և գյուղատնտեսության վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով: 2006թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ապրանքայնության մակարդակի ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքները նարկայացված են Աղյուսակում 71-ում /2005թ-ի տվյալներ/:

Աղյուսակ 70. Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բնորոշող ցուցանիշներ

Մթերքների անվանումը	Ապրանքայնության մակարդակը (%)	
	Արագածոտնի մարզ	ՀՀ
Հացահատիկ	32.1	23.0
Կարտոֆիլ	35.3	42.3
Բանջարեղեն	42.9	75.0
Պտուղ	49.0	53.1
Խաղող	10.3	83.7
Միս	84.9	80.3
Կաթ և կաթնամթերք	47.6	45.1
Չու	34.6	44.2
Բուրդ	46.5	48.6
Մեղր	50.1	50.9

Չնայած վերջին տարիներին մարզում որոշակի դրական տեղաշարժեր կան գյուղատնտեսական մթերքների իրացման, հատկապես՝ պտղատեսակների արտահանման ուղղությամբ, սակայն մարզում իրացման հիմնախնդիրները առավել սրված է: Վերջինիս մասին վկայում են աղյուսակում ներկայացված տվյալները. գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը զգալիորեն ցածր է հանրապետության միջին ցուցանիշից: Ըստ հաշվարկների, Արագածոտնի մարզի գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բավականին ցածր է և չի կարող ապահովել գյուղատնտեսության արդյունավետ վերարտադրություն:

Ներկայացված տվյալները վկայում են, որ մարզի գյուղատնտեսության համար կարևոր հիմնախնդիր է ապրանքայնության մակարդակի բարձրացումը, որի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ, որոնցով մեծապես պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության կրճատումը:

Գյուղատնտեսությունում արտադրական ծախսերը և արդյունավետությունը

Գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում մեծապես պայմանավորված է միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերի մակարդակով:

Բարձրորակ տնկանյութի և սերմանյութի օգտագործման, ագրոտեխնիկայի պահանջների կատարման, գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման միջոցով անհրաժեշտ է բարձրացնել մշակաբույսերի և կենդանիների մթերատվությունը՝ արդյունքում բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ մարզում առաջնային հիմնախնդիր է գյուղատնտեսական մթերքների արտադրության ինքնարժեքի իջեցման և արտադրության արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

Գյուղատնտեսական տեխնիկական ապահովվածությունը

Մարզում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու կարևոր նախապայմանը գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին նորագույն տեխնիկայով ապահովվածությունն է: Վերջին տարիներին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան համայրվել է նորագույն տեխնիկայով: Միայն 2008թ ՀՀ գյուղնախարարության և համաշխարհային բանկի՝ համայնքների տնտեսական զարգացման ծրագրով, մարզի 9 համայնքներին հատկացվել է 40 միավոր գյուղտեխնիկա:Բոլոր դրամաշնորհների հաշվին մարզ է ներկրվել 72 տրակտոր և 7 կոմբայն, այդ թվում.

2008 թ. գյուղատնտեսական աշխատանքներին և բերքահավաքին միջին հաշվով մասնակցել է մարզի առկա տեխնիկայի 70-72%-ը:

Աղյուսակ 71. Մեքենատրակտորային հավաքակալայանի սարքինության վիճակը Արագածոտնի մարզում

h.h.	Անվանումը	քանակը /հատ/	որից՝ սարքին	սարքինության %
1	թրթուրավոր տրակտոր	306	269	87.9
2	անիվավոր տրակտոր	945	659	69.7
3	կցասայլ	610	450	73.8
4	գութան	381	270	70.9
5	կուլտիվատոր	272	186	68.4
6	կոմբայն	179	142	79.3
7	ինքնագնաց խոտհնձիչ	89	67	75.3
8	խոտհնձիչ	140	106	75.7
9	մամլիչ	142	109	76.8
10	սրակիչ	90	70	77.8
11	փոշոտիչ	39	25	64.1
12	սերմնագտիչ	19	14	73.7

Սակայն այս տվյալները մեքենատրակտորային հավաքակալայանի ամբողջական պատկերը չեն արտահայտում: Իր որակական հատկություններով այն այսօր գրեթե չի համապատասխանում իր նկատմամբ ներկայացվող պահանջներին: Առավել բնութագրական են ներքոնշյալ ցուցանիշները.

Աղյուսակ 72. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը և տեխնիկական վիճակը

Տեխնիկայի տեսակը	Արագածոտնում		ՀՀ-ում	
	Առկա քանակը (միավոր)	Սարքինության մակարդակը (%)	Առկա քանակը (միավոր)	Սարքինության մակարդակը (%)
Տրակտորներ	1255	73.9	14732	78.7
Բեռնատար ավտոմեքենաներ	-	-	14663	75.2
Հացահատիկահավաք կոմբայններ	189	75.1	1410	84.8
Տրակտորային կցասայլեր	610	73.7	6113	87.5
Տրակտորային խոտհնձիչներ	140	75.7	1867	86.3
Կերահավաք կոմբայններ	89	75.2	296	73.3
Հատիկագտիչ մեքենաներ	19	73.7	456	82.5
Տրակտորային շարքացաններ	-	-	1774	89.2
Տրակտորային գութաններ	-	-	3710	86.7
Կուլտիվատորներ	272	58.3	1977	91.1
Հավաքիչ-մամլիչներ	142	76.7	1376	90.6

Տեխնիկայի ապահովվածության վիճակը գնահատելու համար դիտարկենք Արագածոտնի մարզի գյուղացիական տնտեսությունների և հացահատիկային մշակաբույսերի հաշվով հացահատիկահավաք կոմբայնների ապահովվածությունը:

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ տրակտորների և բեռնատար ավտոմեքենաների ու մի շարք այլ տեխնիկական միջոցների ապահովվածության առումով մարզը գտնվում է միջին մակարդակի վրա: Սակայն տեխնիկայի օգտագործման արդյունավետության ուղղությամբ այստեղ կարևորվում է դրանց համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրումը:

Աղյուսակ 73. Գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածությունը 100 գյուղացիական տնտեսության հաշվով

Տեխնիկայի տեսակը	100 գյուղացիական տնտեսության հաշվով ապահովվածությունը
Տրակտորներ	3.2
Բեռնատար ավտոմեքենաներ	3,8
Հացահատիկահավաք կոմբայններ	0.5
Տրակտորային կցասայեր	1.6
Տրակտորային խոտհնձիչներ	0.2
Կերահավաք կոմբայններ	
Հատիկագտիչ մեքենաներ	0.5
Տրակտորային շարքացաններ	3,5
Տրակտորային գութաններ	1.0
Կուլտիվատորներ	0.7
Հավաքիչ-մամիչներ	0.4

Նշվածից ակնհայտ է, որ ներկայումս մարզի գյուղացիական տնտեսությունների առջև սրությամբ ծառայած է տեխնիկայով ապահովվածության մակարդակի բարձրացման և տեխնիկական վիճակի բարելավման խնդիրը:

Ընդհանուր առմամբ, տեխնիկական հավաքակազմը, ինչպես Արագածոտնի մարզում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, առկա տեխնիկան իր հզորություններով չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

Անհրաժեշտ է նաև աշխատանքի կազմակերպման նոր մեթոդների՝ տեխնիկայի համատեղ օգտագործման մեխանիզմների (կոոպերացիա և այլ կազմակերպական ձևեր) ներդրումը:

Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Գյուղատնտեսության ճյուղի առանձնահատկություններով պայմանավորված, գյուղացիական տնտեսություններում շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն է զգացվում: Բացի այդ, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողները խոշոր ներդրումների կարիք ունեն:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմը /Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն/ համագործակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, որոնք մեծ աջակցություն և օգնություն են ցուցաբերում գյուղատնտեսության աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

2005 թ. սեպտեմբերի ամսից մինչ այժմ «Վորդ-Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպությունը Թալինի տարածաշրջանի 26 համայնքներում տարբեր ծրագրեր է իրականացրել: Արտենի համայնքում կառուցվել են 12.96 մլն. դրամ արժողությամբ արևային չորանոցներ, Ոսկեթասի կաթի ընդունման կետի վերանորոգման և կահավորման վրա ծախսվել է 12.2 մլն. դրամ, Թալինի ՏԶԾ համայնքներ «Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում» դասընթացների կազմակերպումը պահանջել է 1.8 մլն.դրամի ծախս:

Գյուղատնտեսության զարգացման գործում մարզի տնտեսություններին աջակցում է գյուղփոխօգնության բանկը: Միայն 2008 թ. մարզի 97 համայնքներում 5.2 մլրդ. դրամ ընդհանուր արժեքով գյուղատնտեսական վարկեր են տրամադրվել:

2009 թ. գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի (ԾԻԳ-ի) շրջանակներում ներդրվել է 31.3 մլն. դրամ գումար, իսկ գյուղական

տարածքների տնտեսական զարգացման ծրագրի գրասենյակի (ԻՖԱԴ-ի) կողմից՝ ոռոգման ջրատարի կառուցման նպատակով 52.5 մլն. դրամ գումար: Այդ աշխատանքները կշարունակվեն նաև եկող տարիներին:

Մարզում գյուղատնտեսության ոլորտի ներդրումների քանակի և դրանց ծավալների վերաբերյալ բերված տվյալները վկայում են, որ մարզի գյուղացիական տնտեսությունների վարկավորման պահանջն ընդհանուր առմամբ չի բավարարվում: Դա գյուղատնտեսության վերարտադրության, տեխնիկական վերազինման, արտադրության արդյունավետության ապահովման համար խոչընդոտող գործոն է:

Մարզի գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած հիմնախնդիրներից մեկը ճյուղի վարկավորման պայմանների բարելավումն է: Գյուղատնտեսությանն անհրաժեշտ են ցածր տոկոսադրույքով և երկարաժամկետ վարկավորումներ՝ որպեսզի ճյուղն հնարավորություն ունենա ռազմավարական խնդիրներ լուծել: Հակառակ պայմաններում գյուղատնտեսությունը կմնա որպես ցածրարդյունավետ ճյուղ:

Ներկա իրավիճակի վերլուծությունը և Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ճյուղի առջև ծառայած հիմնախնդիրների բացահայտումը հնարավորություն է տվել սահմանելու ծրագրի հիմնական ուղղությունները:

6.1.7. Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ճյուղի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու խոչընդոտների (ՈւԹ-ՀՎ) վերլուծությունը

Մարզի գյուղատնտեսության ներկա իրավիճակի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը հնարավորություն է տվել իրականացնելու տվյալ բնագավառում ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների ու խոչընդոտների վերլուծություն:

Ուժեղ կողմեր են

- 1) գյուղատնտեսական հողային հարուստ ռեսուրսների առկայությունը (հանրապետության վարելահողերի 11.9 %-ը, բազմամյա տնկարկների 16.8%-ը խոտհարքների 0.02%-ը, արոտավայրերի 12.2%-ը գտնվում են Արագածոտնի մարզում),
- 2) գյուղատնտեսության բազմակողմանի մասնագիտացումը պայմանավորող բնական պայմանների բազմազանությունը,
- 3) մասկաթնային անասնապահության և, հատկապես, տավարաբուծության համար զարգացման լուրջ հնարավորությունների առկայությունը,
- 4) խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով հանրապետության մարզերի մեջ առաջատար դիրքեր զբաղեցնելը (2008թ.-ի տվյալներով՝ 11.8%)
- 5) էկոլոգիական գյուղատնտեսություն վարելու նախադրյալների առկայությունը
- 6) մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրության ծավալների ընդլայնման և արտադրության արդյունավետության բարձրացման ձգտումը:

Թույլ կողմերն են

- 1) հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը,
- 2) աշխատուժի թերբեռնված օգտագործումը (գյուղատնտեսությունում ամբողջ տարին զբաղվածների տեսակարար կշիռը մարզում կազմում է 27.3 %),
- 3) գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության ցածր մակարդակը (մարզի կտրվածքով՝ 48.3 %:

- 4) գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների անկատարությունը, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը,
- 5) արտադրության մասնատվածությունը (գյուղացիական տնտեսությունները ունեն փոքր չափեր և դրանց խոշորացման միտումները դեռևս զգալի չեն: Մեկ գյուղացիական տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հողատեսքերը միջին հաշվով 3 հեկտար են, իսկ պայմանական անասնագլխաքանակը՝ 1.8),
- 6) գյուղատնտեսության ռեսուրսների սակավության հետևանքով ագրոտեխնիկական և գոտտեխնիկական պահանջների ոչ լիարժեք կատարումը,
- 7) գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների անկատար վիճակը և արտադրության պահանջներին համապատասխան դրանց ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը,
- 8) ոռոգման ներտնտեսային ցանցի անբավարար վիճակը, դրանց անհամապատասխանությունը հողօգտագործման չափերին, ոռոգման ջրի մեծ կորուստները, մեխանիկական ջրամատակարարման բարձր տեսակարար կշիռը, ջուր մատակարարող և ջուր օգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների անկատարությունը, ոռոգելի տարածքների սակավությունը (փաստացի ոռոգվող տարածքը ընդհանուր ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների նկատմամբ կազմում է 8.9 %),
- 9) տոհմային գործի կազմակերպման անբավարար վիճակը, տոհմային տնտեսությունների բացակայությունը, արհեստական սերմնավորման մեջ ընդգրկվող գլխաքանակի չափազանց ցածր տեսակարար կշիռը (կովերի 8.3%-ը),
- 10) տեխնիկական ապահովվածության ցածր մակարդակը, տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, դրա հետևանքով մեքենայացված աշխատանքների բարձր ինքնարժեքը, բարձր սակագների ձևավորումը, համատեղ սկզբունքով տեխնիկայի օգտագործման կազմակերպական ձևերի կիրառումը գրեթե բացակայությունը,
- 11) հողերի, մասնավորապես արոտների, խոտհարքների բարելավման ուղղությամբ աշխատանքների բացակայությունը,
- 12) գյուղատնտեսության և սպասարկման ոլորտում կոոպերատիվների ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը,
- 13) գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրական կարողությունների գրեթե բացակայությունը և դրանց ստեղծման դանդաղ ընթացքը,
- 14) գյուղացիական տնտեսությունների կողմից մարկեթինգի, շուկայավարման չափազանց ցածր մակարդակը,
- 15) գյուղատնտեսության վարկավորման ծավալների անբավարարությունը և վարկավորման տոկոսադրույքի, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանները,
- 16) գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բացակայությունը:

Հնարավորություններն են

- 1) Տնկարանային տնտեսության զարգացման, այգետարածքների ընդլայնման, կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի բարելավման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության համախառն արտադրանքի և արտադրության արդյունավետության բարձրացումը,
- 2) տոհմային գործի և անասնաբուժական ծառայությունների վիճակի բարելավման միջոցով գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացումը և անասնապահական մթերքների որակի և արտադրության արդյունավետության աճը,
- 3) վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը, մասնավորապես բազմամյա կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, հացահատիկի տարածքների ընդլայնումը

- 4) նպատակային վարկերի միջոցով գյուղատնտեսական հումքի վերամշակման փոքր կարողությունների ձևավորումը,
- 5) գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության բարձրացումը և համակարգի կատարելագործումը,
- 6) գյուղատնտեսությունում իրականացվող վարկային ծրագրերի համապատասխան բաղադրիչների նպատակադրումը գյուղատնտեսության, վարկավորման, տնկարանային տնտեսության, սերմնաբուծության, տոհմային գործի, կոոպերացման, ձեռնարկատիրության զարգացման խնդիրներին:

Խոչընդոտներն են

- 1) Նշված հնարավորությունների իրականացման համար գյուղացիական տնտեսությունների սեփական միջոցների բացակայությունը,
- 2) տվյալ տնտեսությունների համար վարկային (փոխառու) միջոցների սղությունը և անմատչելիությունը,
- 3) արտադրանքի արտահանման համար տնտեսությունների սակավ հնարավորությունները և դրա իրականացմամբ զբաղվող կառույցների գրեթե բացակայությունը,
- 4) գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկի առկայության և ապահովագրական համակարգի բացակայությունը,
- 5) մարզում սահմանամերձ գյուղատնտեսական հողերի առկայությունը:

6.1.8. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը

Ծրագրի հիմնական նպատակը

Ծրագրի հիմնական նպատակն է Արագածոտնի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

Ռոռզման համակարգեր

ՀՀ կառավարության կողմից ընդունված «Ռոռզման համակարգի բարեփոխումներ» ծրագրով նախատեսվում է ռոռզման համակարգի կառավարման մասնակցային ձևը, որը նպատակ ունի բարելավելու և հուսալի դարձնելու ռոռզման համակարգը: Այդ բարեփոխումների էական մասն է կազմում Ջրօգտագործողների ընկերությունների ստեղծումը, որոնց վերապահված է երկրորդական և երրորդական ռոռզման համակարգերի շահագործումը և պահպանումը:

Այս բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

- 1) ռոռզման գոյություն ունեցող համակարգերի և ռոռզման կարիքների գույքագրումը,
- 2) ջրօգտագործողների գործող համակարգի վերջնական ձևավորումը,
- 3) համակարգում էներգակիրների ծախսերի կրճատումը և ինքնահոս ջրամատակարարումների ընդարձակումը,

- 4) փոքր և միջին կարգավորման ջրամբարների կառուցումը,
- 5) համայնքներում ոռոգելի և խմելու ջրի վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրումը և դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցի կազմումը:

Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգերի անխափան աշխատանքն է:

Մարզի 54000 հա. վարելահողերից ոռոգվում են 18511հա-ը, որը խիստ ազդում է գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացման և հողի մշակութային արդյունավետության բարձրացման վրա: Խնդիրը կարգավորելու համար, մարզում վերակառուցվել և վերանորոգվել է ոռոգման ինքնահոս ջրագծերը, մայր առուները և ներքին ցանցերը, որի արդյունքում ավելացել է ոռոգման ցանքատարածությունները:

2007 թ. մարզում առկա ութ ջրօգտագործող ընկերությունների կողմից ոռոգման ջրի հասույթը կազմել է 554 մլն.դրամ, գանձվել է 302.7 մլն. դրամ կամ գանձումը կատարվել է 54.6 %-ով:

2008թ. մարզում ԾԻԳ-ի կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը

1. Կոշի ճյուղ -35.0 մլն.դրամ
2. Քասախ-Էջմիածին ճյուղ-24.0 մլն.դրամ
3. Ամբերդի ջրանցքի գլխամաս -10.0 մլն.դրամ
4. Մուշ ՋՕԸ-ի մոտեցնող ջրանցքներ-10.3մլն.դրամ
5. Քասախ -Էջմիածին ջրանցք-15.0 մլն.դրամ
6. Երնջատափի ջրանցք -10.0 մլն.դրամ
7. Թալին ՋՕԸ-ի պոմպակայաններ-22.0 մլն.դրամ
8. Թալին ՋՕԸ-ի ջրատարներին մոտեցնող ջրանցքներ-7.0 մլն.դրամ
Ընդամենը` 133.3 մլն.դրամ

2009 թ. մարզում «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից պետական բյուջեով իրականացվելիք ծրագրերն են

1. Շամիրամ ՋՕԸ Կոշի ճյուղի հիմնանորոգում -15.0 մլն.դրամ
2. Քասախ-Էջմիածին ջրանցքի հիմնանորոգում —20.5 մլն.դրամ
3. Արզնի ջրանցքի ճյուղի հիմնանորոգում -18.5 մլն.դրամ
4. Ջրամբարներին մոտեցնող ջրանցքների հիմնանորոգում -10.0 մլն.դրամ
5. Քասախի ոռոգման համակարգի աջ և ձախ ճյուղի հիմնանորոգում -20.0 մլն.դրամ
6. Երնջատափի մայր ջրանցքի մասնակի հիմնանորոգում -6.5 մլն.դրամ
7. Թալին ՋՕԸ-ի պոմպակայանների հիմնանորոգում -25.0 մլն.դրամ
8. Թալին ՋՕԸ-ի ջրատարներին մոտեցնող ջրանցքների հիմնանորոգում-7.0 մլն.դրամ
Ընդամենը` 122.5մ լն.դրամ

«Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում նախատեսված էր ոռոգման ցանցերի նորոգումներ.

Միտեմա -4 Թալինի համակարգ

- 4.1. Թալինի մայր ջրանցքի վերականգնում-Մուսեր, Դաշտադեմ, Մաստարա, Թլք, Սորիկ, Հացաշեն, Գյալթո, Լուսակն, Կաթնաղբյուր, Բառոժ Չովասար,

- Ցամաքասար, Չարիջա, Ակունք, Արտենի, Աշնակ, Արեգ,Թալին, Դաշտաղեն, Դաբաղթափա, Հակկո
- 4.2. Վեց պոմպակայանների վերականգնում-Արեգ, Դաշտաղեն, Աշնակ, Դաբաղթափա, Արագած
- 4.3. Ներտնտեսային համակարգի վերականգնում-Դաշտաղեն, Դաբաղթափա

Միսենա - 5 «Արզնի-Շամիրամ» համակարգ

- 5.1. «Արզնի-Շամիրամ» մայր ջրանցքի վերականգնում,
5.2. Աշտարակի ինքնահոս համակարգի վերականգնում
5.3. Հինգ պոմպակայանների վերականգնում /Ն.Բազմաբերդ, Արուն, Ագարակ, Թալին/
5.4. Լեռնարտի Ջրամբարի կառուցում –Լեռնարտ, Ագարակ , Թալին

Միսենա 9- Հալավարի համակարգ

- 9.1. Հալավարի ինքնահոս համակարգի կառուցում /Քուչակ, Հարթավան, Շենավան, Ափնա, Մուլքի, Չքնաղ, Վարդենիս/
9.2. Վարդենուտի ջրամբարի կառուցում –Վարդենուտ, Շենավան, Արայի, Ափնա Հարթավան
9.3. Ներտնտեսային համակարգի վերականգնում-Քուչակ, Հարթավան, Շենավան, Ափնա, Մուլքի, Չքնաղ, Վարդենիս:

Արվում է հնարավորը «Հագարամյակի մարտահրավերներ» ծրագիրը պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին իրականացնելու համար:

Իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովումը

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆերմերների համար ներկայումս հրատապ է գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը: Այսօր ֆերմերներն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով, ինչպես նշվել է, կարևորվում է Մեղրիի ժամանակակից պահանջներին համապատասխան մեծածախ շուկայի ձևավորումը, որը կօգնի նաև հանրապետության մյուս մարզերի գյուղմթերք արտադրողներին բերքի կազմակերպված իրացման և արտահանման գործում:

Սահմանված չափանիշներին համապատասխան պահեստային և սառնարանային տնտեսությունների բացակայության պատճառով, ֆերմերներն իրենց մթերքներն իրացնում են կարճ ժամանակահատվածում և այդ դեպքում մեծ գյուղատնտեսության առաջնահերթ խնդիրները, ապահովել հետադարձ կապը ֆերմերների հետ ծրագրերի իրագործման ընթացքում, մարզի տարածաշրջաններում ստեղծել գյուղատնտեսական ծրագրերի աջակցության գրասենյակներ:

Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում

Ինչպես նշվել է ֆինանսական միջոցների մատչելիությունը կարևորագույն դեր ունի գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդման և գյուղարտադրության զարգացման համար: Դրա հետ կապված սկզբունքային նշանակություն ունի գյուղատնտեսության ոլորտի վարկավորման տոկոսադրույքների իջեցումը և գրավի պայմանների մատչելիության ապահովումը: Այս առումով անհրաժեշտ է հիշատակել Հայգյուղփոխբանկի նոր ռազմավարությունը, որի համաձայն էապես իջեցվեցին վարկային տոկոսադրույքները այն համայնքների համար, որտեղ չկան ժամկետանց պարտավորությունների բանկի նկատմամբ և

որոշ միկրովարկերի համար պարզեցվեցին գրավի ձևակերպումները (առանց նոտարական վավերացման): Նման միտումների զարգացումը կնեծացնի վարկերի մատչելիությունը, նորանոր մասնակիցներ կընդգրկվի վարկավորման գործընթացում և կարևոր խթան կհանդիսանա գյուղատնտեսական արտադրության համար:

Առաջիկայում հողերի կադաստրային արժեքի վերագնահատումը էապես կընդլայնի բանկային վարկավորման հնարավորությունները:

Անհրաժեշտ է առավել նպատակային օգտագործել Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվող «Գյուղատնտեսության բարեփոխումներին աջակցություն» նոր ծրագիրը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ նախատեսվող «Գյուղական տարածքների տնտեսական զարգացում» ծրագիրը: Գյուղատնտեսության ոլորտի վարկավորման առաջարկի պայմաններում գները լինում են զգալիորեն ցածր, քան ձմռան և վաղ գարնան ամիսներին: Պահեստային և սառնարանային տնտեսությունների ձևավորումը կնպաստի գյուղացիական տնտեսությունների եկամուտների և վերարտադրողական կարողությունների ընդլայնումը:

Պահեստային և սառնարանային տնտեսությունները գյուղական համայնքներում նպատակահարմար է կազմակերպել համատեղ օգտագործման (կոոպերատիվ) սկզբունքով: Պահանջվող ֆինանսավորումը սկզբնական ժամանակահատվածում հնարավոր է իրականացնել դրամաշնորհային ծրագրերով, այնուհետև նպատակային վարկերի և մասնավոր ներդրումների միջոցով:

Անասնապահությամբ մասնագիտացված Արագածոտնի մարզում իրացման շուկայի մատչելիությանը և արտադրողի շահերի պաշտպանությանն ուղղված քայլ կարող է լինել գյուղական համայնքներում կաթի հավաքման և նախնական վերամշակման կետերի և փոքր սպանդանոցների հիմնումը:

Իրացման շուկայի մատչելիությունը և սպառողների շահերի պաշտպանվածությունը կնպաստի մարզում գյուղատնտեսական մթերքների իրացման, վերամշակման գործառույթ ունեցող տնտեսավարող սուբյեկտների կայացմանը:

Արագածոտնում գյուղատնտեսության զարգացման ոլորտներից մեկը կարող է դառնալ ծխախոտի հումքի արտադրությունը: Նախկինում մարզի նախկին շրջաններում այն որոշակիորեն զարգացած էր: Օրինակ՝ Աշտարայի նախկին շրջանում 1983 թվականի տվյալներով ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին 133 հա, որից ստացվել էր 1654 տոննա ծխախոտի հումք, միջին բերքատվությունը կազմում էր 12.4 ցենտներ: Այսօր հայրենական ծխախոտ վերամշակող և արտադրող ձեռնարկությունների առկայության պայմաններում սա հնարավոր տարբերակ է և արտադրանքի իրացումն ապահովված կլինի:

Մի շարք գյուղական համայնքներում անհրաժեշտ է իրականացնել կրծողասպան /դեռատիզացիոն/ աշխատանքներ /գյուղապետարանների շենքերի, դպրոցների և մանկապարտեզների մասով/, որի համար կպահանջվի տարեկան շուրջ 12.0 մլն. դրամ գումար:

Խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը

Խորհրդատվական ծառայությունների բնագավառում Արագածոտնի մարզի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է այդ ծառայությունների մատչելիության բարձրացումը, նրանց առավել նպատակային, հասցեացված օգտագործումը: Ծրագրի ռազմավարությունը այս ուղղությամբ ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը:

- 1) Մարզային ուսուցողական-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել ուսուցողական-խորհրդատվական դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ
- 2) Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի, արմատավորման ուղղությամբ

- 3) Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ
- 4) Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսությանը վերաբերվող մասնագիտական աշխատանքների մասին:

Վերամշակող ձեռնարկությունների արդյունավետության բարձրացումը և ընդլայնումը

Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է ստեղծել կամ վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող կառույցներ, կազմակերպել պտղի, բանջարեղենի չորացման փոքր արտադրամասեր, ծխախոտ ֆերմետացիոն և բուսալուծերի արտադրության փոքր արտադրամասեր, բրդի ընդունման և լվացման կետեր, հացաբուլկեղենի և հրուշակեղենի արտադրամասեր, բնական հյութերի և խտահյութերի արտադրության, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրամասեր և այլն:

Այս նպատակին կարելի է հասնել՝ ընդլայնելով արտադրանքի իրացման հնարավորությունները, ակտիվորեն համագործակցելով գոյություն ունեցող և պոտենցիալ գնորդների հետ: Առաջնահերթությունը պետք է տրվի փոքր ձեռնարկությունների ստեղծմանը:

Մարզում ՓՄՁ-ների գործունեության ակտիվացումը կնպաստի համապատասխան ենթաճյուղերի վերականգնմանը: Անհրաժեշտ է նաև բանջարաբոստանային կուլտուրաների և պտղաբուծության զարգացման հետ համատեղ նախապայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Այս առումով կարևորվում է մարզում սառնարանային տնտեսության ստեղծումը:

Մարզում ներկայումս գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արտադրություններից են «Թամարա Ֆրուտ», «Աշտարակկաթ». «Իշխան», /գործում է փոքր կարողությամբ/:

Գյուղատնտեսական հումքի վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրությունների ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով:

Գյուղատնտեսության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները ներկայացված են Հավելված -ում:

Ծրագրի հաջող իրագործման դեպքում ակնկալվում են հետևյալ վերջնական արդյունքները.

- 1) մարզի հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովում
- 2) բուսաբուծական մթերքների՝ հատկապես տարբեր պտղատեսակների, կարտոֆիլի, հացահատիկի արտադրության ծավալների ավելացում, արդյունավետության բարձրացում, մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացում, հատկապես պտղի և դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում
- 3) անասնապահական մթերքների՝ հատկապես մսի, կաթի, արտադրության ծավալների ավելացում, արտադրության արդյունավետության բարձրացում, անասնապահական մթերքների ապրանքայնության բարձրացում
- 4) մասնագիտացված տնկարանային և սերմնաբուծական տնտեսությունների (տարբեր պտղատեսակների, կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի) ձևավորում, որոնք հիմնականում կրավարարեն գյուղացիական տնտեսությունների պահանջարկը բարձրորակ տնկանյութի և սերմացուների նկատմամբ
- 5) բույսերի պաշտպանության (հատկապես պտղատու այգիներում) պայքարի կենտրոնացված միջոցառումների իրականացում

- 6) մարզում տոհմային տնտեսությունների ձևավորում, արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում և կատարելագործում, տոհմաբուծական ծառայությունների ձևավորում
- 7) կերային բազայի ընդլայնում, բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալների ավելացում, խոտհարքների և արոտների արդյունավետ օգտագործում
- 8) մարզի գյուղատնտեսության մասնագիտացմանը համապատասխան փոքր վերամշակող արտադրական կարողությունների (պտղի, կաթի, մսի, բրդի) ձևավորում
- 9) գյուղատնտեսական տեխնիկայով մարզի ապահովվածության մակարդակի բարձրացում, տեխնիկայի համատեղ օգտագործման (կոոպերացման սկզբունքով) կառույցների ձևավորում
- 10) տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում
- 11) խոշոր ապրանքային ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորում
- 12) մարզում ապահովագրական համակարգի ձևավորման համար նախադրյալների ստեղծում
- 13) զարգացած համայնքային ենթակառուցվածքների առկայություն, մասնավորապես ներհամայնքային և միջհամայնքային բարեկարգ ճանապարհների, հուսալի գործող կապի և հաղորդակցության ապահովում
- 14) հետևողական և արդյունավետ կերպով օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով
- 15) ավելացնել բուսաբուծական մթերքների, հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի արտադրության ծավալները, բարձրացնել ապրաքայնության մակարդակը, էապես ընդլայնել հացահատիկարնդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները
- 16) ավելացնել անասնապահական մթերքների, հատկապես մսի, կաթի արտադրության ծավալները, բարձրացնել անասնապահական մթերքների ապրանքայնությունը և արտադրության արդյունավետությունը
- 17) ընդլայնել կերային բազան, ավելացնել բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալները, արդյունավետ օգտագործել խոտհարքները և արոտները
- 18) բարելավել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ կառուցել նոր և վերանորոգել առկա ջրագծերը, պոմպակայանները, ջրանցքերը, բարելավել ոռոգման ներտնտեսային համակարգը և վերացնել ջրօգտագործման ասպարեզում առկա թերություններն ու բացթողումները
- 19) անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը և ապրաքայնության մակարդակը
- 20) արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները
- 21) աստղած ուշադրություն դարձնել գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, աջակցելով տարածաշրջաններում մասնավոր սերմաբուծական կայուն տնտեսությունների ստեղծմանը
- 22) յուրաքանչյուր տարածաշրջանում ստեղծել գյուղատնտեսական մթերքների ընդունման մեծածախ շուկա, դրանք կահավորելով պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներով
- 23) գյուղական համայնքներում հիմնադրել գյուղատնտեսական մթերքների վերամշակման կառույցներ
- 24) աջակցել մասնագիտացված սերմաբուծական տնտեսությունների /մասնավորապես հացահատիկի և կարտոֆիլի/ ձևավորմանը՝ մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բարձրորակ սերմացուների նկատմամբ բավարարելու նպատակով

- 25) ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական ձեռնարկությունների համար
- 26) նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության գիտակ մասնագետների ուժերը, խորհրդատվությունը, բարելավել ճյուղերի նյութատեխնիկական սպասարկումը, մատչելիությունը
- 27) բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը՝ կոոպերացիայի և այլ կազմակերպական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով
- 28) աջակցել մարզում հողերի խոշորացման և գյուղացիական տնտեսությունների միավորման գործընթացին
- 29) մարզի բնակչությանը սիստեմատիկաբար իրազեկել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին
- 30) ագրոտեխնիկական, գոտտեխնիկական, անասնաբուժական պահանջների կատարման ապահովում
- 31) գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում
- 32) գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում
- 33) վերամշակող ձեռնարկությունների արդյունավետության բարձրացում և ընդլայնում
- 34) իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովում
- 35) խորհրդատվական ծառայությունների ընդլայնում
- 36) օրենսդրական դաշտի կատարելագործում:

Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտային նպատակներ / ակնկալվող արդյունքներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ
Ոլորտային նպատակ՝ Ավելացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կրճատել աղքատությունը գյուղական բնակավայրերում	1. Գյուղացիական տնտեսությունների աղքատության մակարդակը, % 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ դրամ 3. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում, %	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 1. Ոռոգման համակարգի բարելավում	1.1. Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը, հա 1.2. Էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը, % 1.3. Ջրի կորուստների տեսակարար կշիռը, % 1.4.«Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում նախա-տեսված են ոռոգման ցանցերի նորոգումներ.	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն Համակարգի ընթացիկ պահպանման հնարավորություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն

	<p style="text-align: center;"><u>Թալինի համակարգ</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Թալինի մայր ջրանցքի վերականգնում-Մուսեր, Դաշտադեմ, Մաստարա, Թլլք, Սորիկ, Հացաշեն, Գյալթո, Լուսակն, Կաթնաղբյուր, Բառոժ Ջովասար, Յամաքասար, Չարիջա, Ակունք, Արտենի, Աշնակ, Արեգ,Թալին, Դաշտադեմ, Դաբաղթափա, Հակկո: 2. Վեց պոմպակայանների վերականգ-նում-Արեգ, Դաշտադեմ, Աշնակ, Դաբաղթափա, Արագած 3. Ներտնտեսային համակարգի վերականգնում-Դաշտադեմ, Դաբաղթափա <p style="text-align: center;"><u>«Արզնի-Շամիրամ» համակարգ</u></p> <ol style="list-style-type: none"> 1. «Արզնի-Շամիրամ» մայր ջրանցքի վերականգնում 2.Աշտարակի ինքնահոս համակարգի վերականգնում 3. Հինգ պոմպակայանների վերականգնում /Ն.Բազմաբերդ, Արուճ, Ագարակ, Թալին/ 4. Լեռնարոտի Ջրամբարի կառուցում –Լեռնարոտ, Ագարակ , Թալին <p style="text-align: center;"><u>Հալավարի համակարգ</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Հալավարի ինքնահոս համակարգի կառուցում /Քուչակ, Հարթավան, Շենավան, Ափնա, Մուլքի, Չքնաղ, Վարդենիս/ 2. Վարդենուտի ջրամբարի կառուցում –Վարդենուտ, Շենավան, Արայի, Ափնա Հարթավան <p>Ներտնտեսային համակարգի վերականգնում-Քուչակ, Հարթավան, Շենավան, Ափնա, Մուլքի, Չքնաղ, Վարդենիս:</p>	
<p>Արդյունք 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և արտադրության արդյունավետության բարձրացում</p>	<p>2.1. Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը, հազ.տ. 2.2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, ց/հա</p>	<p>Ֆինանսական ռեսուրսների առկայություն Որակյալ սերմերի, տնկանյութի առկայություն</p>

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

	<p>2.3. Մերմնաբուծական և տնկարանային տնտեսությունների թիվը</p> <p>2.4. Խոշորացված ֆերմերային տնտեսությունների, ձևավորված կոոպերատիվների թիվը</p>	
<p>Արդյունք 3. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, հիվանդությունների կանխում, անասնապահական մթերքի որակի և արտադրության արդյունավետության բարձրացում</p>	<p>3.1. Կաթի արտադրության ծավալները, հազ.տ.</p> <p>3.2. Իրացված միսը կենդանի քաշով, հազ.տ.</p> <p>3.3. Ընդհանուր անասնազխաքանակը (խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, ոչխարներ, այծեր), հազ. գլուխ</p> <p>3.4. Արհեստականորեն սերմնավորված անասնազխաքանակը, հազ. գլուխ</p> <p>3.5. Համաճարակների դեմ պատվաստված անասնազխաքանակը, 1202.83հազ. գլուխ Ներդրման չափ՝ 2011թ.-ին - միլիոն ՀՀ դրամ</p> <p>3.6. Գյուղկենդանիների հիվանդացության մակարդակը, %</p>	<p>Տոհմային գործի բարելավման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայություն</p> <p>Անասնաբուժական կանոնների ճիշտ և ժամանակին կիրառում</p> <p>Գյուղկենդանիների հիվանդությունների բռնկման կանխարգելում</p>
<p>Արդյունք 4. Հողային և մարդկային ռեսուրսների լիարժեք օգտագործման ապահովում</p>	<p>4.1. Օգտագործվող վարելահողերի մակերեսը, հա</p> <p>4.2. Չօգտագործվող հողերի մակերեսը, հա</p> <p>4.3. Գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը, %</p> <p>4.4. Վերամշակող արդյունաբերությունում զբաղվածների տեսակարար կշիռը, %</p>	<p>Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայություն</p>
<p>Արդյունք 5. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում</p>	<p>5.1. Գյուղացիական տնտեսությունների թիվը</p> <p>5.2. Առևտրային կազմակերպությունների թիվը</p> <p>5.3. Գյուղարտադրանքի շուկաների թիվը</p> <p>5.4. Կաթի ընդունման կետերի թիվը Թիրախ՝ 2010-2011թթ.-ին 3 համայնք -սպասարկող 1 կետ</p> <p>5.5. Մթերող և վերամշակող ձեռնարկությունների թիվը</p> <p>5.6. Նորացված գյուղտեխնիկանունեցող համայնքների թիվը</p>	<p>Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն</p> <p>Արտադրական ենթակառուցվածքների և գյուղտեխնիկայի ընթացիկ պահպանման հնարավորություն</p> <p>Բնակլիմայական գործոնի ազդեցություն</p>
<p>Արդյունք 6.</p>	<p>6.1. Գյուղարտադրանքի իրացման</p>	<p>Ֆինանսական և տեխնիկական</p>

<p>Գյուղմթերքի իրացման հնարավորությունների ընդլայնում</p>	<p>ծավալները, % 6.2. Մեծածախ առևտրում ընդգրկված ֆերմերների թիվը 6.3. Գյուղարտադրանքի (հացահատիկ, կարտոֆիլ, բանջարանոցային մշակաբույսեր, պտուղ, խաղող, միս, կաթնամթերք, ձու, բուրդ, մեղր) ապրանքայնության մակարդակը, % 6.4. Վերականգնված ներ, միջհամայնքային, դաշտամիջյան ճանապարհների երկարությունը, կմ</p>	<p>ռեսուրսների առկայություն</p>
<p>Արդյունք 7. Գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների բարձրացում՝ ուղղված եկամտաբեր գյուղատնտեսության զարգացմանը</p>	<p>7.1. Տեխնիկական աջակցություն ստացած ֆերմերների, գյուղացիական ձեռնարկությունների, համայնքների թիվը</p>	<p>Տեխնիկական աջակցության նպատակայնություն Առաջարկվող ծառայություններից օգտվելու ցանկություն գյուղացիական տնտեսությունների կողմից</p>
<p>Արդյունք 8. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում, արդյունքում՝ գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդում և գյուղարտադրության զարգացում</p>	<p>8.1. Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների ձեռնարկությունների թիվը 8.2. ՀՄՀ ջրից դեպի շուկա ենթածրագրի շրջանակներում տրամադրված վարկերի քանակը</p>	<p>Վարկերի հասանելիություն գյուղացիական տնտեսությունների, ձեռնարկությունների համար</p>
<p>Արդյունք 9. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի զարգացում</p>	<p>9.1. Գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկի նվազում, % 9.2. Ապահովագրական համակարգին առնչվող, ապահովագրության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի փաթեթի առկայություն 9.3. Գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների իրավական կարգավիճակի հստակեցման դեպքերի թիվը</p>	<p>Պետական աջակցություն համակարգի զարգացմանը</p>

6.2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի իրավիճակի վերլուծություն

Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտում քաղաքականությունն ու օրենսդրությունը հիմնականում ձևավորվել և կատարելագործվել են վերջին 15 տարիների ընթացքում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցության գործընթացներին, ստորագրել ու վավերացրել է բնապահպանական մի շարք միջազգային ու եվրոպական կոնվենցիաներ և դրանցից բխող արձանագրություններ:

Միջազգային այդ համաձայնագրերի ու կոնվենցիաների շրջանակներում Հայաստանը նպատակ ունի կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը, վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը, մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները, պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները, ապահովել չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործումը:

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև Արագածոտնի մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

Վերջին տարիների ընթացքում, օրենսդրական դաշտի բարելավման առումով, բավականին մեծ աշխատանք է կատարվել նշված խնդիրների լուծման համար. ընդունվել են ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտեր և ծրագրեր: Դրանցից կարելի է նշել ՀՀ նոր անտառային օրենսգիրքը (2005 թ.) և Հայաստանի անտառների ազգային ծրագիրը (2005 թ.), «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը (2005 թ.), «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.), «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006 թ.), «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005 թ.), «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» ՀՀ օրենքը (2006 թ.), «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006 թ.) և «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքը (2007 թ.) և այլն:

Բնապահպանության ոլորտում օրենսդրությունը մարզպետների համար նախատեսել է գործունեության որոշակի շրջանակ: «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.20 կետի համաձայն, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Արագածոտնի մարզպետը՝

- 1) մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում
- 2) մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին
- 3) աջակցում է արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության,

ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը

- 4) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

Բնագավառի խնդիրներով զբաղվելու իրավասություններ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: 1996 թվականին ընդունված և մինչև 2002 թվականը գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև բնապահպանության ոլորտը կարգավորող մինչև 2001 թվականն ընդունված ՀՀ օրենսդրական այլ ակտերը հիմնականում չէին պարունակում համայնքներին բնապահպանության ոլորտում համապատասխան լիազորություններով, պարտականություններով և պատասխանատվությամբ օժտող դրույթներ: Սակայն դրանից հետո իրավիճակը շտկվեց: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի 32-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի բնապահպանական կադաստրը, 45-րդ հոդվածի համաձայն՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, շրջակա միջավայրի պահպանության կազմակերպման՝ պարտադիր, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները

- 1) վերահսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում, կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները
- 2) ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

Բնապահպանության ոլորտը Արագածոտնի մարզում ներկայացված է նաև որոշակի ինստիտուցիոնալ համակարգով: Մարզում բնապահպանությանը հիմնականում առնչվում են հետևյալ կառուցվածքային միավորները՝

- 1) ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը
- 2) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Արագածոտնի տարածքային բաժինը
- 3) Մարզի անտառտնտեսությունները, որոնք գործում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության գերատեսչական ենթակայության տակ
- 4) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքային բաժինը
- 5) Բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

Այսպիսով, մարզում բնապահպանական իրավիճակը կառավարվում է որոշակի օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի միջոցով:

Անտառներ, կենսաբազմազանություն, բնատարածքներ

Բնապահպանական առումով Արագածոտնի մարզի ուժեղ կողմերից է լեռների առկայությունը: Արագածոտնի ընդհանուր անտառային ֆոնը կազմում է 13448 հա, որից անտառածածկ են 8300 հա: Արագածոտնի մարզի անտառածածկ տարածքները գտնվում են մարզի Ապարանի, Արագածի, Աշտարակի և Թալինի տարածաշրջաններում: Մարզի դիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու, էնդեմիզմի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Մարզը Հայաստանի այն տարածքներից է, որոնք ունենալով հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանություն, միաժամանակ ենթարկվում են այն վտանգող մարդածին և տեխնածին մի շարք գործոնների ազդեցությունը: Այդ ազդեցության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի, էկոհամակարգերի և դրանց

համակեցությունների տեսակային կազմի փոփոխություն, ընդհուպ առանձին տեսակների ոչնչացում, կենսառեսուրսների գերօգտագործում, աղտոտում:

Անտառներով համեմատաբար աղքատ Արագածոտնի մարզը գտնվում է որոշակի հակասական վիճակում՝ մի կողմից առկա են գեղատեսիլ բնություն, իսկ մյուս կողմից՝ հանքային պաշարներով՝ քարերով հարուստ ընդերքը հանքարդյունահանվում է, որը սոցիալ-տնտեսական դրական հետևանքների հետ մեկտեղ մարզում առաջացրել է բնապահպանական բազում խնդիրներ:

Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում, որը կարող է մարզի տարածքում փոխել հանքարդյունաբերության աշխարհագրությունը: Հանքարդյունաբերության տեղաշարժը, կլոմի բազմաթիվ ռազմավարական հարցեր, բայց էկոլոգիայի տեսանկյունից լուրջ մտահոգությունների պատճառ է, քանի որ՝ որքան շատանան հանքավայրերը, այնքան կմեծանա շրջակա միջավայրի աղտոտվածությունը, կվտանգվի անտառների ճակատագիրը:

Մարզի անտառտնտեսության գործունեությունը լուրջ բարեփոխումների խնդիր ունի: Այդ ձեռնարկությանը պետական բյուջեից տրվող սահմանափակ աջակցությունը ստիպում է նրանց նորմալ տնտեսվարելու համար առավելագույն կերպով օգտագործել անտառը, միևնույն ժամանակ չավելացնելով անտառվերականգնման ծախսերը: Անտառում այս իմաստով տնտեսվարելու և՛ հնարավորություն և՛ անհրաժեշտություն չկա, այլ անհրաժեշտ է անտառային օրենսգրքով սահմանված անտառների կայուն կառավարում: Արագածոտնի անտառներն այդ «ինքնապահպանման-ինքնաձախսածածկման» ներուժը, ռեսուրսներն ու հնարավորությունները չունեն և այս առումով միայն ազգային-պետական աջակցության և ներդրումների շնորհիվ է, որ անտառները կարող են երկար ժամանակաշրջանի ընթացքում պահպանվել, վերականգնվել և փոխանցվել սերունդներին:

Որպես եկամտի ստացման աղբյուր անտառը պետք է շահագործվի այնքան, որքան նա կարող է տալ՝ միաժամանակ պահպանելով իր ինքնավերականգնման հնարավորությունը և ոչ ավելին: Պարզ է, որ փայտանյութի պաշարները որոշակի սահմանից այն կողմ չեն կարող օգտագործվել և այստեղ չափից անցումը անտառի ինքնավերականգնման կարողությանը լուրջ վնաս կարող է հասցնել: Սյունիքի անտառներում բացի փայտանյութից կան նաև բավական քանակությամբ պտղատու ծառեր ու թփուտներ, որոնց պտուղները կարելի է արդյունաբերական ծավալներով օգտագործել պահածոների, հյութերի, դեղաբույսերի արտադրություն կազմակերպելու համար:

Արագածոտնի անտառները նաև առողջարար և գեղատեսիլ են: Անտառների, որոշակի չափով նաև բուժիչ հանքային ջրերի, պատմամշակութային հուշարձանների, ռելիեֆի այս ձևավորված ամբողջությունը խոսում է մարզում առողջարաններ հիմնելու, ինչպես նաև զբոսաշրջությունը զարգացնելու մեծ ներուժի մասին:

Կարևոր է համայնքների, հասարակության լայն շերտերի մասնակցությունը անտառի պահպանության հարցերում: Այստեղ համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեությունը կարող է ապահովվել միայն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության լայն խավերի, հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավման միջոցով: Օրենսդրական որոշակի բազա կա /ՀՀ Սահմանադրություն, ՀՀ միջազգային պայմանագրեր, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Անտառային օրենսգիրք և այլն/, հասարակությանը նույնպես այս գործընթացներում ներգրավելու համար և այդ ներգրավվածությունը որոշակի չափով առկա է, սակայն այն բավարար համարել չի կարելի, քանզի ակնկալվում է ավելի մեծ մասնակցություն այս խնդիրներին: Ինչ-որ տեղ հասարակության անբավարար մասնակցությունն այստեղ հենց մարդկանց մի սովոր հատվածի կրավորական դիրքորոշման արդյունք է:

Հասարակության անդամները նաև կոնկրետ համայնքների բնակիչներ են: Մի շարք բնակավայրեր տեղադրված են անտառաշատ տարածքներում և կարծես թե այդ բնակավայրերի բնակչությունը ամենասերտ հոգեկան, ֆիզիկական, փոխներգործուն կապի մեջ է գտնվում տվյալ բնակավայրի անտառի հետ: Այսօր անտառային հարցերով հիմնականում որոշումներն ընդունվում են իշխանության բարձր մակարդակներում, բայց ստացվում է այնպես, որ անտառկառավարմանը վերաբերող մի շարք հարցեր ունեն ոչ միայն ազգային պետական այլ նաև տվյալ համայնքների համար համայնքային նշանակություն: Ցանկալի է, որ այս իրողությունը բոլոր դեպքերում հաշվի առնվի և պրակտիկայում ավելի շատ հնարավորություն ստեղծվի նաև համայնքներում քննարկել անտառկառավարման հարցերը և մասնակցել որոշումների ընդունման գործընթացին:

Արագածոտնի մարզում համայնքների վարչական սահմաններում գտնվող անտառների կայուն կառավարումն իրականացվում է անտառտնտեսությունների կողմից: Մեկ անգամ չէ, որ քննարկվել են անտառների կայուն կառավարումը տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելու խնդիրները: Խնդիրը կարևոր նշանակություն ունի և դեռ ենթակա է քննարկումների: Այստեղ մոտեցումը հետևյալն է՝ եթե համայնքային անտառկառավարումը կարող է նպաստել անտառի պահպանմանը, ինքնավերականգնմանը և ապահովել օպտիմալություն, ապա անտառների մի մասը համապատասխան համայնքների կառավարմանը հանձնելը կարող է արդյունավետ լինել:

Արագածոտնի անտառներին լուրջ վնաս հասցրեցին 1990-ական թթ. կատարված անտառհատումները, որոնք պայմանավորված էին տնտեսական ու էներգետիկ ճգնաժամով՝ Էլեկտրոէներգիայի, գազի մատակարարման, կենտրոնացված ջերմամատակարարման բացակայությամբ: Էներգետիկ իրավիճակի բարելավման շնորհիվ անտառհատումները զգալիորեն նվազել են, տեղի է ունենում մարզի բնակավայրերի գազիֆիկացում, որը զգալիորեն կրճատում է բնակչության վառելիքայտի պահանջարկը: Գործընթացը հնարավորություն կտա հատկապես անտառներին մոտ գտնվող գյուղերում զգալիորեն կրճատել անտառհատումները և բարձրացնել անտառի ինքնավերականգնման ներուժը:

Վերոնշյալ բոլոր հարցերի վերաբերյալ մարզպետարանում պարբերաբար անց են կացվում քննարկումներ, որոնց արդյունքում ձևավորված կարծիքները, առաջարկությունները ներկայացվում են ՀՀ կառավարությանը, իրավասու պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին:

Ջրային ավազան

Մարզի տարածքով են հոսում հինգ գետեր՝ Քասախ, Հալավար, Գեղարոտ, Շահվերդ և Ամբերդ:

Աղյուսակ 74. Արագածոտնի մարզի գետային համակարգը

Գետի անվանումը	Ակունքի նիշը /մ/	Գետաբերանի նիշը /մ/	Երկարու- թյունը /կմ/	Միջին թեքությունը /‰/	Ջրահավաք ավազանի մակերեսը /կմ.ք./
Քասախ	3400	830	89	29	1480
Հալավար	2820	1990	11	75	39.9
Գեղարոտ	3600	1726	25	75	66
Շահվերդ	3300	990	28	82	162
Ամբերդ	3700	955	36	76	141

Քասախ գետի մակերեսը 1480 քառ.կմ է, հոսքը 329 մլն./մ/խ, հոսքի մոդուլը՝ /ծավալային/ 0.222:

Մարզում առկա են 28 արհեստական ջրամբարներ

Աղյուսակ 75. Մարզի ջրամբարների ցուցանիշները

<i>h/h</i>	<i>Ջրամբարի անվանումը</i>	<i>Ծավալը մլն. մ/ս</i>	<i>Պատվարի բարձրությունը /մ/</i>
1	Ապարանի	91	51.5
2	Ագարակի	0.196	8
3	Աշնակի	0.113	5.2
4	Դավթաշենի	0.316	8.8
5	Արագածի	0.59	4
6	Թալինի 1	0.248	7.5
7	Իրինդի	0.06	5
8	Ծիլքարի	1.2	13
9	Կաթնաղբյուրի	0.4	10.4
10	Կաքավաձորի 1	0.024	3.8
11	Կոշի	0.5	9
12	Հացաշենի	1.11	7.3
13	Հալավարի	5.5	32.4
14	Ն.Սասնաշենի	1.15	17.4
15	Շղարշիկի	0.097	7
16	Ոսկեթասի	0.105	7
17	Վ.Բագմաբերդի	0.222	8
18	Վ.Սասնաշենի	0.064	4.5
19	Կաքավաձորի 2	1	35
20	Շենիկի	0.78	18
21	Աշնակի	0.331	7
22	Զովասարի	0.91	10.3
23	Սաստարայի	0.077	4
24	Դաշտաղեմի	0.039	5
25	Կաթնաղբյուրի 2	0.01	4
26	Ն.Բագմաբերդի	0.017	4.5
27	Եղնիկի	0.01	3
28	Արուճի	0.05	8
29	Թալին 2	0.03	

Օդային ավազանն աղտոտվում է հիմնականում աղյուներակյան ձեռնարկությունների, ավտոտրանսպորտի արտանետումներից: Ստացիոնար աղբյուրներից արտանետումների կրճատման համար հեռանկարային լուծումը բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների ներդրման համար պետության կողմից նպաստավոր միջավայրի քաղաքականության մշակումն է: Մարդկանց առողջության և կյանքի որակի ապահովման համար կարևորվում է նաև քաղաքներում կանաչ տարածքների, ռեկրեացիոն գոտիների պահպանման և համաչափ զարգացման խնդիրը, որը առավել կարևորվում է ամառվա ամիսներին ջերմային սթրեսներին հարմարվելու համար:

Աղյուսակ 76. ՀՀ Արագածոտնի մարզում բնապահպանության օրենսդրության խախտումները 2008 թվականին

Հ.Հ.	Ցուցանիշներ	Չափի միավորը	Քանակը
1	Ստուգված օբյեկտների քանակը	Միավոր	46
2	Հայտնաբերված խախտումների քանակը	Միավոր	36
3	Վարչական տույժի համար սահմանված գումար	Հազ.դրամ	3915.8
4	Վարչական տույժի ենթարկվածների քանակը	Մարդ	36
5	Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների	Հազ. դրամ	3915.8
6	Վնասի հատուցման արձանագրությունների քանակը	Միավոր	8
7	Հայտնաբերված խախտումների քանակը մարզի 100000 բնակչի հաշվով	Միավոր	50

Մարզում բնապահպանության ոլորտը բնութագրող մի շարք ցուցանիշների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 77. Բնապահպանության ոլորտում ՀՀ Արագածոտնի մարզի իրավիճակը բնութագրող մի քանի ցուցանիշներ

Հ.Հ.	Ցուցանիշը	2006թ.	2007
1	Մթնոլորտային արտանետումներ անշարժ աղբյուրներից /տոննա/	148.2	165.8
2	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը մեկ քառ. կմ-ի հաշվով/կգ/	53.8	60.2
/3	Մթնոլորտ արտանետված փոշու քանակը /տոննա/	140.4	129.8
4	Բնապահպանական ընթացիկ ծախսերի իրականացումը /մլն դրամ/	1.2	1.6
5	Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների փաստացի արժեքները /մլն դրամ/	0.9	0.9
6	Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների արժեքները հիմնական արտադրական միջոցներ ունեցող մեկ կազմակերպության հաշվով /հազ. դրամ/	475.3	448.2
7	Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների հիմնավերանորոգման համար իրականացվող ծախսերը /հազ. դրամ/	38.0	31.0
8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ /հազ. դրամ/	48600.0	55000.0
8.1	Բնապահպանական վճարներ /հազ. դրամ/	18200.0	20240.0
8.2	Բնօգտագործման վճարներ /հազ. դրամ/	30400.0	34760.0

(Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ)

6.2.1. Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը

Արագածոտնի մարզում բնապահպանության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

- 1) Մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունում և իրականացում, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական հզորացմանը: Մարզում գերակայություն է հատկապես հանքարդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների համադրումը, որը հնարավորություն կտա ապահովել հանքարդյունաբերության վերազինումը ժամանակակից անթափոն, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, նվազեցնել շրջակա միջավայրի և մասնավորապես՝ անտառների աղտոտումը: Արդյունաբերական և բնապահպանական ռազմավարության մեջ հնարավոր տարբերակ է ընդհանրապես անտառային կամ դրանց մոտ տարածքներում երկար ժամանակով հանքարդյունահանման արգելումը՝ մինչև եկող սերունդների կողմից նոր, արդիական տեխնոլոգիաների կիրառումը
- 2) Տնտեսական աճին զուգընթաց լավագույն, բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրման խթանում՝ ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող հին տեխնոլոգիաների դուրսաձուլումը
- 3) Մարզում ձեռնարկությունների բնապահպանական վարկանշման մեխանիզմների, այդ թվում՝ միջազգային ISO ստանդարտների մշակույթի կիրառում
- 4) Տնտեսագիտորեն հիմնավորված՝ բնօգտագործման վճարների համակարգի կիրառում, որը կապահովի նոր հանքավայրերի խնայողաբար շահագործումը
- 5) Պոչամբարների և տարբեր պատճառներով լքված և չշահագործվող հանքավայրերի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը նպատակատուղված ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացում, որն անհրաժեշտ է ջրային ռեսուրսների և հողերի հետագա աղտոտումը կանխարգելելու և բնական էկոհամակարգերը վերականգնելու համար: Բնապահպանական վճարների դրույքաչափերի ավելացում՝ շրջակա միջավայրն աղտոտող ձեռնարկությունների մոտ աղտոտման ծավալների նվազման գծով վարքագծի փոփոխման խթանների ստեղծման համար
- 6) Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ուժեղացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում: Անհրաժեշտ է կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն համայնքների մասնակցության ակտիվացմանը ԲՀՊՏ կառավարման գործընթացներում, քանի որ այդ տարածքների համար սահմանված ռեժիմը համեմատաբար մեծ հնարավորություններ է ստեղծում տնտեսական մեխանիզմների կիրառման համար: Մասնավորապես կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը ընդհանուր տնտեսական զարգացման մեջ, անհրաժեշտ է աջակցել համայնքների նախաձեռնություններին՝ էկոտուրիզմի զարգացման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման նպատակով
- 7) Էկոլոգիական կրթության մեջ մարզի կրթական հիմնարկների, հանրակրթական դպրոցների, մարզի բնապահպանական ինստիտուցիոնալ համակարգի ներառում
- 8) Այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառում
- 9) Մարզի գազամատակարարման ցանցի ընդլայնում: Շատ բնակավայրերում տնային տնտեսությունների կողմից որպես ջեռուցման հիմնական միջոց է դիտվում վառելիքայտը, որը, որպես կանոն, հատվում է այդ բնակավայրերի հարևանությամբ գտնվող անտառներից և դրանով իսկ զգալի վնաս է հասցվում այդ տարածաշրջանների շրջակա միջավայրին: Անտառամերձ գյուղերի գազիֆիկացումը այս առումով պետք է առաջնահերթ համարվի
- 10) Հողերի որակի և բերրիության չափորոշիչների մշակում. որակյալ մոնիթորինգի, հողօգտագործման նորմավորման, հաշվառման և վերահսկողության համակարգի ձևավորում:

Վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների վերականգնման համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ: Վարելահողերի մի մասն ինչպես ամբողջ Հանրապետությունում, այնպես էլ Արագածոտնի մարզում չի օգտագործվում՝ ինչպես ներդրումների, այնպես էլ մեխանիզացիայի, պարարտանյութերի և այլ պարագաների բացակայության պատճառով

- 11) Արոտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ կառավարում: Ներկայումս մանր գյուղացիական տնտեսությունները, աղքատության և կազմակերպված կոոպերացիայի բացակայության պատճառով, հիմնականում չեն կարողանում իրենց փոքր հոտերը քշել հեռավոր ամառային արոտավայրեր և ստիպված են օգտագործել միայն գյուղամերձ կերահանդակները: Արդյունքում վերջիններս գտնվում են չափազանց մեծ ծանրաբեռնվածության տակ, իսկ հեռավոր կերահանդակների վիճակը, որպես արոտավայր չօգտագործելու արդյունքում, նկատելիորեն բարելավվում է
- 12) Բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնում
- 13) Համայնքային անտառկառավարման կիրառում մարզի անտառամերձ համայնքներում: Հանրապետությունում նախապատրաստվում են փորձնական ծրագրեր, որոնց հետագա գնահատումը հիմք կհանդիսանա համայնքային անտառկառավարման եղանակների և ծավալների սահմանման համար: Այս գործընթացը պետք է ընթանա տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության նորարարական մեխանիզմների կիրառման ճանապարհով:
- 14) Մարզի տարածաշրջաններում որսահանդակների ստեղծում, որը հնարավորություն կտա որսը կազմակերպել միայն սահմանված վայրերում և կնպաստի կենսաբազմազանության պահպանմանը
- 15) Բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծում
- 16) Աշտարակ, Ապարան, Թալին և Ծաղկահովիտ քաղաքների՝ կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում և վերակառուցում: Ձեռնարկությունների կողմից նախնական մաքրման համակարգերի ստեղծումը էականորեն կնվազեցնի ջրային ավազանների վրա աղտոտման ճնշումը
- 17) Կենցաղային կոշտ թափոնների կենտրոնացված աղբավայրերի կառավարման պլանների մշակում և վերամշակման համար բիզնես ծրագրերի մշակում: Մարզի քաղաքներում արտադրական և կենցաղային թափոնների կառավարման՝ հավաքման, տեսակավորման և կազմակերպված վնասագերծման խնդիրը կարևորվում է ինչպես անմիջական վնասի կանխարգելման, այնպես էլ հողերի ռեսուրսների և ջրային ավազանների աղտոտման հետևանքների վերացման համար հետագայում պահանջվող խոշոր ներդրումների անհրաժեշտությամբ: Գործնականում արդյունաբերական թափոնները և շինարարական աղբը կոշտ կենցաղային թափոնների հետ հեռացվում են քաղաքային և գյուղական աղբյուսներ: Համապատասխան նորմատիվամեթոդական փաստաթղթերի բացակայության պայմաններում աճում է կոշտ աղբի կուտակիչների և աղբավայրերի առկա վիճակի բացասական ազդեցության հավանականությունը բնակչության առողջության և շրջակա բնական միջավայրի, հատկապես՝ հողի վրա: Ներկայումս Արագածոտնում թափոնների հեռացման նպատակով կիրառվող եղանակները համարժեք չեն: Պետական և մասնավոր մի շարք ձեռնարկությունների միջոցով քաղաքապետարանների կողմից մատուցվող աղբահեռացման սպակենտրոնացված ծառայությունների որակի և կարողությունների միջև էական տարբերություններ կան: Աղբահավաքման եղանակները և կիրառվող ենթակառուցվածքը ստանդարտից ցածր են, որի արդյունքում տեղի են ունենում աղբի մեծ կուտակումներ, աղբը հաճախ չի հեռացվում, առաջանում են սանիտարա-հիգիենիկ անբարենպաստ պայմաններ: Թափոնների հեռացման համակարգի կատարողականության բարելավման համար անհրաժեշտ է մշակել նշված

համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբամշակման գործարանի կառուցում: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայնքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ

- 18) Օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերում, որը հնարավորություն կտա կատարել մի շարք բնապահպանական վերլուծություններ:

Բնապահպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտ. Բնապահպանություն		
Խնդիր	Ցուցանիշ	Ռիսկեր
Բարելավել բնապահպանական իրավիճակը Արագածոտնի մարզում	Կենսաբազմազանության պահպանության համար, մասնավորապես անտառների կայուն կառավարման համար ապահովված են պայմանները ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի հաշվետվություն Անտառկառավարման պլաններ ունեցող անտառտնտեսություններ, հա Անտառչինական աշխատանք-ների ծավալը, պաշտպանիչ անտառաշերտեր, հա Հեղեղումների հետևանքով հողերի էռոզիայի կանխարգելման աշխատանքների իրականացման ծավալները, հա, մլն դրամ Ամրացված գետերի հուններ, կմ Տեղադրված զաբիոններ, հատ Աղբավայրեր, որոնք ունեն ցանկապատեր, թիվ	Կազմակերպչական՝ Անտառների կառավարման մեջ թափանցիկության և անկախ մոնիտորինգի համակարգը չի ձևավորվել
Առաջնահերթ ծրագրեր		
Արդյունք 1. Մարզային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և «Հայ-անտառ» ՊՈԱԿ-ի ամագործակցության համար ինստիտուցիոնալ հիմքերն ստեղծված են Խնդիրներ՝ • Ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը բնական	Համայնքների թիվը, որոնք մասնակցում են ԱՊ տարածքների պլանավորման, կառավարման աշխատանքներին Նախագծերի թիվը, որոնք անցել են հանրային քննարկումներ Ակտիվ գործող ՀԿ-ների թիվը և իրականացված ծրագրերի ծավալը (դրամ) Հանրային լուսմներ անցած նախագծերի թիվը ՀԿ-ների մասնակցությամբ իրականացված	Ռիսկեր՝ Կոնֆլիկտներ Հայանտառ» ՊՈԱԿ-ի և համայնքների միջև Շահերի բախումներ Գործունեության քափանցիկության բացակայություն Մեղմում՝ Համայնքները շահագրգռված են մասնակցելու կառավարման գործընթացներին

<p>ռեսուրսների, մասնավորապես անտառների և արոտավայրերի կառավարման գործընթացում</p> <ul style="list-style-type: none"> • Իրականացնել հանրային կարծիքի ուսումնասիրություն ԱՊ տարածքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ • Ապահովել համայնքների տարածքներում իրականացվող նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային լսումներ • Մարզի բնապահպանական ՀԿ-ների և լրատվամիջոցների կարողությունների զարգացում ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և հանրային իրազեկման մեջ նրանց ներգրավելու համար 	<p>ծրագրերի թիվը, ծավալը (դրամ)</p>	<p>Մարզում կան ակտիվ ՀԿ-ներ, 1</p>
<p>Արդյունք 2. Անտառների կառավարման պլանների իրականացման մեջ համայնքների մասնակցության պայմաններն ապահովված են Խճիիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Մշակել ընթացակարգեր անտառների արտոնագրային կառավարման որոշումներին ՏԻՄ մասնակցության ապահովման համար • Հիմնել համայնքային անտառներ • Հիմնել տնկարանային տնտեսություններ համայնքային հողերի վրա 	<p>Անտառային ռեսուրսների կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության արդյունավետ մեխանիզմները մշակված են</p> <p>Հանրային լսումների թիվը Համայնքների թիվը, որտեղ իրականացվել են ուսուցողական սեմինարներ Ուսուցում անցած տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետների թիվը Հիմնադրված անտառի մակերեսը, 5 հա Համայնքային անտառների ծավալը, հա Վերականգնված անտառների մակերեսը, 10 հա Բարեկարգված անտառային ճանապարհներ, 8կմ Հիմնադրված /վերականգնված տնկարանային տնտեսությունների քանակը, տարեկան արտադրվող տնկիների քանակը, հազ. տնկի Իրացված ոչ բնափայտային անտառային մթերքի ծավալը, կգ, հազ. դրամ</p>	<p>Ռ-իսկեր՝ Շահերի անհամապատասխանություն համագործակցության ստեղծման համար ՏԻՄ-երի կողմից անտառների կառավարման համար աջակցության մեխանիզմները չեն հստակեցվել ՏԻՄ-երի կողմից անտառների կառավարման համար հմտությունների բացակայություն</p>
<p>Արդյունք 3. Արոտավայրերի կայուն կառավարման համակարգը ներդրված է Արոտավայրերի կայուն կառավարման պլանները մշակված են բոլոր համայնքների համար և իրականացման համար ապահովված</p>	<p>արոտավայրերի օգտագործման համար կոուպերացիայի խթանում կատարված է համայնքների բյուջեների հաշվին) Տեղադրված ջրարբիացման կետեր, հատ Արոտավայրերի մակերեսը, որոնք ունեն ջրարբիացման կետեր, հա Վերանորոգված դաշտամիջյան</p>	<p>Ռ-իսկեր՝ Ֆինանսների բացակայություն, ՏԻՄ-երի կողմից համաֆինանսավորում իրականացնելու շահագրգռվածության բացակայություն Մեղմում՝</p>

<p>են միջոցները և հսկողության մեխանիզմները Բարելավված արտավայրեր և խոտհարքներ, հազ. հա Ռ-իսկեր՝</p> <p>Ֆինանսների բացակայություն ՏԻՄ-երի կողմից համաֆինանսա-Տավուշի մարզի զարգացման ծրագիր, 2008-2011թթ. Խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Արտավայրերի օգտագործման համար ճանապարհների կառուցում և երթուղիների համաձայնեցում ԱՊ պահպանության ռեժիմի հետ • Արտավայրերի և խոտհարքերի արդյունավետության բարձրացում • Արտավայրերի ջրարբիացում • Բեռնվաճառության կանոնակարգում 	<p>ճանապարհներ, կմ, տեղադրված ջրահեռացման խողովակներ, հատ Արտավայրերի քանակը և մակերեսը, որոնք ունեն օգտագործման տեխնիկական պայմաններ Մշակված արտավայրերի կառավարման պլաններ, համայնք Աջակցություն ստացած կոոպերատիվներ</p>	<p>Համապատասխանում է ՀՀ գյուղատնտեսության ռազմավարությանը, 2006թ. ԲՊԿԶՆ Ծրագրով մշակվել են համայնքների արտավայրերի կառավարման պլաններ</p> <p>Կոոպերացիայի ձևավորման համար աջակցության սխեմաների բացակայություն</p>
<p>Արդյունք 4.</p> <p>Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգը կատարելագործված է և տարերայնորեն առաջացող աղբյուրների առաջացումը կանխարգելված է Խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում • Միջհամայնքային աղբավայրերի նախագծում <p>Տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցություն՝ աղբահանության պայմանագրա-յին հարաբերությունների ձևավորման համար</p>	<p>Մարզում թափոնների կառավարման համար պայմաններն ապահովված են Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ, թիվ Աղբավայրեր, որոնք ցանկապատվել են, թիվ</p> <p>Մարզի քաղաքներում մշակված աղբավայրերի կառավարման պլաններ, ցանկապատված գործող աղբավայրեր Աշտարակ, Ապարան, Թալին համայնքներում</p> <p>Միջհամայնքային աղբավայրերի մշակված նախագծեր, թիվ Կազմակերպված է աղբահեռացման միջհամայնքային կազմակերպություն, թիվ Համայնքներ, որոնք ունեն աղբա-հեռացման պայմանագրեր, թիվ</p>	<p>Ռ-իսկեր՝</p> <p>Ֆինանսական միջոցների բացակայությունը ՏԻՄ-երը չեն կարևորում խնդիրը</p> <p>Մեղմում՝</p> <p>Թափոնների կառավարման հիմնախնդիրը կառավարության գերակայությունների շարքում է</p> <p>Աղբավայրերի վերակառուցման/կառուցման խնդիրը նախատեսված է քաղաքների գլխավոր հատակագծերով</p>
<p>Արդյունք 5.</p> <p>Հողային ռեսուրսների օգտագործման և պահպանության արդյունավետության բարձրացում Խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Գաբիոնների կառուցում • Հենապատերի ամրացում • Գետերի հունների մաքրում • Հողերի էռոզիայի կանխարգելման համար անտառավերականգնման /անտառհիմնման աշխատանքների իրականացում • Լքված հանքավայրերի ռեկուլտիվացիա 	<p>Հողերի դեգրադացիայի կանխարգելման աշխատանքներն իրականացվում են պետական, համայնքային և մասնավոր համագործակցության շրջանակներում</p> <p>Տեղադրված գաբիոններ, հատ Ամրացված հենապատեր, Հեղեղումների հետևանքով հողատարման կանխարգելման համար հիմնված անտառտնկարկներ, հա</p> <ul style="list-style-type: none"> • Ապարան համայնքում հիմնվել է 20 հա անտառ • Բյուրական համայնքում հիմնվել է 8 հա անտառ <p>Աշտարակի տարածաշրջանի քարհանքեր, խախտված հողերի ռեկուլտիվացիայի նախագիծը մշակված է, ֆինանսավորումն ապահովված է</p>	<p>Ռ-իսկեր՝</p> <p>Համայնքների կողմից անտառտնկման համար բավարար շահագրգռվածություն չի ցուցաբերվի</p> <p>Հանքավայրի ռեկուլտիվացման համար ֆինանսական միջոցների բացակայությունը</p>

	Ռեկուլտիվացված տարածքի մակերեսը, հա	
<p>Արդյունք 6. Ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում և գետերի մեջ առանց նախնական մշակման թափվող կեղտաջրերի ծավալների նվազեցում Խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Ջրավազանային կառավարման խորհրդի աշխատանքներում ՏԻՄ-երի և հանրային մասնակցության ապահովում • Կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման կայանների ստեղծում 	<p>Ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելման աշխատանքները դրված են կայուն հիմքերի վրա Ջրավազանային կառավարման մարմիններում ՏԻՄ-երի մասնակցությունն ապահովված է Կեղտաջրերի մաքրման պարզ կայանների նախագծերը մշակված են Արտադրական և նոր կառուցվող կենցաղային սպասարկման ձեռնարկությունները կահավորված են կեղտաջրերի մաքրման պարզ կայաններով Մարզի հորատանցքերը գույքագրված են, արդյունահանման ծավալները ճշտված են</p>	<p>Ռիսկեր՝ Ջրահեռացման խնդիրը ջրավազանային կառավարման մարմնի կողմից չի կարևորվում</p>
<p>Արդյունք 7. Բնապահպանական հիմնախնդիրների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում Խնդիրներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Բնապահպանական ծրագրերի իրականացման համար հասարակական կազմակերպություններին աջակցության տրամադրում 	<p>Իրականացված ծրագրերը, դրան ՁԼՄ հրատարկված հոդվածներ, հեռուստահաղորդումներ</p>	<p>Ռիսկեր՝ Ֆինանսական միջոցների քացակայությունը</p>

7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության բնագավառում տարիների ընթացքում կուտակվել են հիմնահարցեր, որոնք հրատապ լուծում են պահանջում:

Դրանք ըստ առաջնահերթությունների հետևյալ խնդիրներն են.

- *Օրենսդրության կատարելագործում,*
- *Պետրյուջեով կատարվող շինարարությունների հարցում պատվիրատու-շինարար, վերահսկող հարաբերությունների որոշակիացում,*
- *Գոտիավորում,*
- *Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում,*
- *Բնակարանաշինության ծավալների ընդարձակում և բնակարանների նորոգման իրականացում,*
- *Ենթակառուցվածքների կատարելագործում:*

7.1.1. Օրենսդրության կատարելագործում

ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երին տրված է համայնքներում կատարվող շինարարությունների նախագծման, իրականացման և վերահսկման գործառույթը: Սակայն, տեղերում անհրաժեշտ մասնագետների բացակայության պատճառով, այդ աշխատանքները պահանջված ձևով չեն կատարվում:

Նախագծերը հաճախ արվում են՝ անտեսելով քաղաքաշինական նորմերը և պահանջները:

Այդ պատճառով հետագայում անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ միջոցներ և ժամանակ ծախսել՝ շինարարության սխալները և բացթողումները շտկելու համար: Որոշ դեպքերում անհնար է լինում վերացնել թերությունները և շինությունը իր նպատակներին ամբողջովին չի ծառայում:

Այս սխալից խուսափելու համար անհրաժեշտ է բարձրացնել մարզպետարանների դերը: Մարզպետարանն ինքը պետք է իրավունք ունենա համաձայնեցնել նախագծերը, իրականացնել շինարարության վրա վերահսկողության գործառույթը:

7.1.2. Գոտիավորում

Հանրապետության, դրա կազմում մարզի գոտիավորման բացակայությունը հնարավորություն չի տալիս արդյունավետ կազմել համայնքների գլխավոր հատակագծերը, որոշակիացնել կառուցապատվող տարածքները:

Հանրապետության և մարզի բնակավայրերի լիսավոր հատակագծերը կազմվում են առանց միասնական գոտիավորման համակարգի, որի պատճառով արդեն կազմված հատակագծերը հաճախ հնանում են և հետագա օգտագործման համար դառնում են ոչ պիտանի:

Հիմնախնդիրը ամբողջապես լուծելու համար անհրաժեշտ է ունենալ հանրապետության և մարզի ժամանակակից գոտիավորում:

7.1.3. Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում

Մարզի շատ համայնքներ չունեն գլխավոր հատակագծեր, որի պատճառով հաշվի չեն առնվում գոտիավորման, համայնքների՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան պահանջները: Ուստի, բնակավայրերի տարածքային զարգացումը կատարվում է տարերայնորեն:

Մի շարք համայնքներում գլխավոր հատակագծերը հնացած են և չեն համապատասխանում քաղաքաշինության նորմերին և պահանջներին: Դրանց կազմումը բավականին թանկ արժե: Իսկ անհրաժեշտ գումարը վճարել շատ համայնքեր պարզապես չեն կարող:

Այս խնդիրը պետք է համարվի առտանահերթ հիմնահարց, և միջոցներ պետք է հայթայթվեն՝ խնդիրն ամբողջովին և վերջնականապես լուծելու համար:

7.1.4. Կազմակերպական և կառուցվածքային փոփոխություններ

Վերանայման կարիք ունեն քաղաքաշինական պետական տեսչությունների աշխատանքի սկզբունքները: Նրանք չպետք է լինեն այն կառույցների կազմում, որոնք շինարարության պատվիրատուներն են: Այս դեպքում վերահսկողությունը արդյունավետ լինել չի կարող: Անհրաժեշտ է որպեսզի վերահսկողներ հաստատվեն կազմակերպությունները:

Այն դեպքերում, երբ որպես շինարարության պատվիրատու հանդես է գալիս, մարզպետարանը, նախագծերի պատվիրատուն լինում է այլ կազմակերպություն: Դա հնարավորություն չի տալիս վերահսկել նախագծման ընթացքը, ժամանակին նկատել

թերությունները և ուղղել դրանք: Ուստի, անհրաժեշտ է, որ պատվիրատուի գործառույթի հետ միաժամանակ մարզպետարանին տրվեն նաև նախագծի պատվիրատուի գործառույթներ:


Շինարարության հիմնական ցուցանիշները 2008 թ-ին ըստ հանրապետության մարզերի բերվում է աղյուսակում:

Աղյուսակ 78. ՀՀ –ում շինարարության հիմնական ցուցանիշները 2008 թ-ին

	հիմնական միջոցների գործարկում, մլն. դրամ (ընթացիկ գներով)	Շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	
		ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Երևան	561722.8	736206.3	671947.9
Արագածոտն	7854.3	6685.4	6655.4
Արարատ	8323.3	10381.0	10328.7
Արմավիր	7009.3	8227.8	6648.9
Գեղարքունիք	3766.4	5279.0	5242.0
Լոռի	5537.2	6377.6	6358.0
Կոտայք	5570.1	16476.8	16357.8
Շիրակ	4016.7	13214.8	10910.2
Սյունիք	17814.8	25357.7	19992.7
Վայոց ձոր	9138.6	9901.6	9752.1
Տավուշ	2499.4	4243.0	4236.3
Ընդամենը ՀՀ	633242.9	842351.0	768430.0

Առանց Երևանի մարզերում շինարարության հիմնական ցուցանիշները տոկոսային հարաբերությամբ պատկերացվում է ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերում

Գրաֆիկական պատկեր 24. Մարզերում շինարարության համեմատական ծավալները



Հիմնական միջոցների գործարկման 88.7 տոկոսը իրականացվել է Երևանում: Այդ ցուցանիշով Արագածոտնի մարզը հանրապետությունում 4-րդ -ն է՝ Երևանից, Արարատի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերից հետո, իսկ շինարարության ծավալներով զբաղեցնում է 7-րդ տեղը: Իսկ մարզերի հետ համեմատած, Արագածոտնը զիջում է միայն Արարատի,

Սյունիքի և Վայոց Ձորի մարզերին:

7.2 Բնակարանային շինարարություն

7.2.1. Բազմաբնակարան շենքերի կառավարում

ՀՀ Արագածոտնի մարզում կա 231 բազմաբնակարան շենք, որոնք կառուցվել են Խորհրդային իշխանության տարիներին:Անցած տարիներին մարզում այդպիսի շենք չի կառուցվել:

Ըստ բնակավայրերի բազմաբնակարան շենքերի քանակն հետևյալն է.

Աղյուսակ 80. Բազմաբնակարան շենքերի թիվը մարզի բնակավայրերում 2008 թ. դրությամբ

h.h.	Բնակավայրը	շենքերի քանակը	բնակարանների քանակը
1	ք. Աշտարակ	57	2030
2	ք. Այարան	26	804
3	ք. Թալին,	30	900
4	Ծաղկահովիտ	5	170
5	Ջրամբար	3	20
6	Արտենի	52	274
7	Արագածավան	40	590
8	Երնջատափ	2	40
9	Սասունիկ	16	384
	ԸՆԴԱՄԵՆԸ	231	5212

Դրանից սեփականաշնորհված է 3909 բնակարան:

Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է հիմնականում համայնքների կողմից: Ստեղծված են նաև 3 համատիրություններ:

Այդ շենքերի կոմունալ սպասարկումը իրականացնում են համայնքապետարանների և համատիրությունների կողմից:

Նախորդ տարիներին որոշակի աշխատանք արված է այդ շենքերի բարելավման ուղղությամբ:

Աղյուսակ 81. ՀՀ Արագածոտնի մարզում վերջին տարիներս իրականացված բազմաբնակարան շենքերի վերանորոգման ուղղությամբ կատարված աշխատանքները

h.h	Համայնքը	Աղբյուրը	Գումարը
	2005թ.		
1	Թալինի թիվ 7 բնակելի շենքի ամրացում	ՀՀ պետբյուջե	27.0
2	Թալինի թիվ 25 կիսակառույց շենքի ավարտում	ՀՀ պետբյուջե	154.0
	2006թ.		
1	Թալինի Սյասնիկյանի թիվ 48 շենքի ամրացում	ՀՀ պետբյուջե	93.805
	2007թ.	ՀՀ պետբյուջե	
1	Արագածավանի Գալի 1,2,3,4,5,6,7,8 բազմաբնակարան բն. շենքերի տանիքի վերանորոգում	ՀՀ պետբյուջե	25.0
2	Արտենիի Բաղրամյան 1.2.3.4.5.6 բն. շենքերի տանիքի վերանորոգում	ՀՀ պետբյուջե	25.0
3	Թալինի Տերյան 22 շենքերի տանիքի վերանորոգում	ՀՀ պետբյուջե	12.0
4	Թալինի Սիրոյան 8 շենքերի տանիքի վերանորոգում 2009թ.	ՀՀ պետբյուջե	20.0
1	Ծաղկահովիտի թիվ 5 շենքի վերանորոգում	ՀՀ պետբյուջե	240.0

Սակայն կատարված աշխատանքը բավարար չէ: Տարիների ընթացքում կուտակվել են շատ հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Շատ շենքերի տանիքները, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, մուտքերը հիմնական վերանորոգման կարիք ունեն: Խնդիրներ կան նաև աղբահանության, կանաչապատման և այլ ոլորտներում:

7.2.2. Անհատական բնակարանաշինություն – Մարզում բնակելի շենքերի 80%-ը անհատական բնակելի տներ են, դրանցից 10%-ը վթարային է, և ունի հիմնանորոգման կարիք:

Անհատական բնակարանաշինության տեմպերը մարզում 1990- ական թվականներին անկում են ապրել: Այդ ուղտությամբ որոշակի առաջընթաց արձանագրվել է 2004-2008 թվականներին: Մարզում 2007 թ.-ին շահագործման է հանձնվել, 2008 թ.-ին` 7213 6760 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակելի շենք: Աճը կազմել է 6.7 %: Սակայն, ներկայումս, կապված տնտեսական ճգնաժամի հետ, բնակարանային շինարարության տեմպերն անկել են:

Շատ են նաև լքված տները: Դրանց տները ժամանակավորապես կամ հիմնական բացակայում են հանրապետությունից: Իսկ տները, ենթարկվելով բնական պայմաններին, քայքայվում և շարքից դուրս են գալիս:

Այդ տարիներին մարզում կազմավորվել են նոր ընտանիքներ, որոնք հնարավորություն չունեն նոր բնակարաններ կառուցել և առանձին ծուխ դառնալ:

Դրա պատճառը բնակիչների ֆինանսական միջոցների սղությունն է և հիպոթեքային վարկերի ոչ հասանելիությունը:

Ներկայումս քաղաքաշինության բնագավառում մարզում կատարվում են հետևյալ աշխատանքները.

Աղյուսակ 82. ՀՀ Արագածոտնի մարզում ՀՄՆՀ միջոցներով 2009 թ. իրականավոր ծրագրեր (մլն. դրամ)

1	Եղիպատրուշ գյուղի համայնքի կենտրոնի հիմնանորոգում	76,23
2	Արտենիի առողջական կենտրոնի շենքի շինարարության ավարտ	50,49
3	Երնջատափ գ. համայնքի կենտրոնի շենքի վերակառուցում	66,65
4	Շղարշիկի խմելու ջրամատակարարման համակարգի վերակառուցում	69,76
5	Անտառուտի դպրոցի տարածքի բարեկարգում, հատակների նորոգում	19,34
6	Խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում	28,02
7	Արայի խմելու ջրի ջրատարի վերակառուցում	29,93
8	Օշականի «Գայանե» մ/ մանկապարտեզի հիմնանորոգում	109,69
9	Գեղաձոր համայնքի կենտրոն-դպրոցի վերանորոգում	62,53
10	Ապարան քաղաքի հանգստի գոտու բարեկարգում	20,03
11	Մուլքիի ՕԿՁ-ի կառուցում	32,81
12	Նիգավանի ՕԿՁ-ի վերակառուցում	2,9
13	Աշնակի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	53,78
14	Լուսագյուղի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում	45,61
15	Իրինդ համայնքի կենտրոնի վերակառուցում	103,88
	ընդամենը`	771,65

«ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում» ծրագիր

Համայնքը	Սուբվենցիաների տրամադրման նպատակը	Գումարը /հազ. դրամ/
Շողակն և Երնջատափ գյուղական համայնք	Համայնքների խմելու ջրի ջրհավաք ավազանների և մասնակի ջրագծերի կառուցում	35 000.0
Մաստարայի գյուղական համայնք	«Մաստարա բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ զարգացման ծրագրի նախագիծ	5 000.0
Ոսկեվազի գյուղական համայնք	Համայնքի արվեստի դպրոցի վերանորոգում	15 000.0

«Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի կողմից 2009-2014 թթ կիրականացվի Աշտարակի արհեստագործական ուսումնարանի 1-ն և 2-րդ մասնաշենքերի տանիքների, սան-հանգույցների և պատուհանների վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում՝ 60.0 մլն. դրամ:

7.3. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն

Մարզային ենթակառուցվածքների զարգացումը ինչպես ԱՀՌԾ, այնպես էլ Արագածոտնի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է:

Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի արելավման), կոյուղիների (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), նմխիթար վիճակում գտնվող ճանապարհների (հատկապես գյուղական վայրերի), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրները հատկապես գերակա են այն համայնքների համար, որոնք սահմանամերձ են և որոնց բնակչությունը հեռանում է հայրենի վայրերից, ինչպես նաև մեծ թվով բնակչություն ունեցող համայնքների համար:

7.3.1. Ջրամատակարարում

Անվտանգ խմելու ջրի աղբյուրների մատչելիությունը ոչ միայն Հազարամյակի զարգացման նպատակների և ԱՀՌԾ-ի կարևոր թիրախներից մեկն է, այլև մարդկային աղքատությունը պայմանավորող գործոններից է:

Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրնուղկոյուղի» կազմակերպության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ: Այսպիսով՝ ջրամատակարարման ոլորտի խնդիրը կապված է ոչ թե ջրի պակասի, այլ.

- **ջրամատակարարման համակարգերի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայության,**
- **արտահոսքի և կորուստի (հատկապես պոմպակայաններում),**
- **համայնքների կողմից ուշադրության պակասի (սեփականատիրոջ վերաբերմունիք պակասի),**
- **զանճումների ցածր մակարդակի,**

• որակի խնդիրների հետ:

Կարիքների, արդյունավետության ու ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները.

• տեխնիկական և տնտեսական տվյալներ,

• հիդրո-տեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ (ծավալ, հզորություններ և այլն),

• ջրագծերի վերաբերյալ տվյալներ (երկարություն, ինժեներական պարամետրեր),

• կարիքներ (օրական ծավալներ՝ խմելու և ոռոգման ջրի համար),

• սակագներ,

• որակ,

• ջրահեռացման ծավալները:

Էլեկտրաէներգիայի և/կամ ջրի սահմանաքանակային տրամադրումը կարող է հանգեցնել աղտոտման, հաշվի առնելով, որ այս դեպքում գծերում դրենաժը գործում է միայն մասնակի ռեժիմով, ինչպես նաև կան օդի խցանման պատճառով առաջացող այլ խնդիրները:

Մատակարար-սպառող և ներդնող-շահառու փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը: Այստեղ պարզ «ծախսերի և օգուտների» վերլուծությունը բավարար չի կարող լինել ներդրման կենսունակությունը գնահատելու համար:

Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը: Այնուամենայնիվ, սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսաձեռնարկից: Կապիտալ ծախսերը պետք է իրականացվեն պետության կողմից՝ պետական ներդրումային ծրագրերի միջոցով:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

2006 և 2007 թթ. իրականացված աշխատանքները ջրամատակարարման (խմելու ջուր և ոռոգում) և ջրահեռացման ոլորտում ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 83. ՀՀ Արագածոտնի մարզում 2006-2008 թ.թ. ջրամատակարարման բնագավառում իրականացված աշխատանքները

2006 թ.

1	Ծաղկահովիտ համայնքի խմելաջրի ջրագիծ		IFAD	249 921\$
2	Հարթավանի անցնող ջրագիծը		IFAD	211266\$
3	Աշնակ համայնքի խմելաջրի ջրագծի վերականգնում		IFAD	330827\$
4	Լուսազյուղի ջրամատակ. համակարգի կառուցում		ՀՄՆՀ	48.7

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

2007թ.

1	Ակունք, Արեգ, Կաքավաձոր, Կաթնաղբյուր գյուղերի խմելու ջրագծի վերանորոգում		Word Wision	20.0
2	Արեգ համայնքի խմելու ջրագծի վերականգն.		IFAD	148.0
3	Աշտարակ քաղաքի ջրամատ. համակարգի վերանորոգում		Համաշխարհային բանկի վարկային ծրագիր	129.0
4	Ապարան քաղաքի ջրամատ. համակարգի վերանորոգում		---/---	122.0

2008 թ.

1	Վարդենուտի ջրարբիացման համակարգ		ՀՀ գյուղատնտ. նախարարություն	35.0
2	Ափնա համայնքի խմելու ջրագծի կառուցում		ճապոնական կազմակերպություն	8.0
3	Արտաշավանի ներհամայնքային ջրամատ. համակարգի վերականգնում		«Վիվա-Սել»	10.0
4	Ուշիկի ներհամ. ջրամատ. համակարգի վերականգնում		---/---	10.0
5	Փարայի ջրամատ. համակարգի վերականգնում		---/---	20.0
6	Եղնիկ համայնքի խմելաջրի մայր ջրագծի վերանորոգում և ՕԿՋ-ի կառուցում		ԾԻԳ. Համայնքների զարգացման ծրագիր	16.272
7	Վ. Բազմաբերդի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում		---/---	16.992
8	Չքնաղի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում		---/---	9.0
9	Թթուջուր համայնքի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում		---/---	12.816
10	Եղիպատուշի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում		---/---	26.604
11	Ծաղկաշենի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում		---/---	21.6
12	Ձորագուլիս համայնքի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում		---/---	13.176
13	Սելիք գյուղի խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում ՕԿՋ-ի կառուցում		---/---	40.392
14	Հնաբերդի խմելաջրի մայր ջրագծի վերանորոգում		---/---	70.668
15	Լեռնարտուի խմելաջրի մայր ջրագծի վերանորոգում		---/---	12.384

Մարզում ջրամատակարարման բարելավման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարել և ներկայումս կատարում են նաև բարեգործական կազմակերպությունները:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվում է «Խմելու ջրագծի կառուցում ՀՀ Արագածոտնի մարզի Սուսեր և Նոր Արթիկ համայնքների համար» ծրագիրը՝ 20 800 000.0 դրամ արժողությամբ: /2009թ./

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության /JICA/ կողմից իրականացվելու է ՀՀ Արագածոտնի մարզի 61 բնակավայրերի /Արագածի տարածաշրջան՝ 13, Ապարանի՝ 18, Թալինի՝ 21, Աշտարակի՝ 9 բնակավայր/ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ծրագիրը:

ՀՀ Արագածոտնի մարզի Արտենի, Իրինդ, Գիան, Գավթաշեն և Կաթնաղբյուր բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքները նախատեսված են Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության /JICA/ ծրագրի նախագծում:

Ներքին Արթիկ, Ցամաքասար, և Սուսեր գյուղերի ջրամատակարարումն իրականացվում է «Չլկաններ» աղբյուրներից: Բացի այդ համայնքներից, նշված աղբյուրից սնվում են ՀՀ Արագածոտնի մարզի ևս 12 համայնքներ: Ջրամատակարարումն իրականացվում է 80 կմ երկարության ջրատարներից, որոնց ելքը ենթարկվում է սեզոնային մեծ տատանումների: Չմռան ամիսներին ջրի սակավության պատճառով ջրատարի ծայրամասերում գտնվող բնակավայրերի

ջրամատակարարումն իրականացվում է ընդհատումներով: Ջրաղբյուրներում ջրաքանակի սեզոնային անկման ժամանակահատվածում աղբյուրների առկա ջրաքանակը չի բավարարում անգամ հաշվարկային ջրապահանջը: «Չլկաններ» աղբյուրների համակարգի բարելավմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների համար նախնական պահանջներով նախատեսվում է մոտ 270 մլն. դրամ: Հարցը կարգավորելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի մասնակցությամբ կնախապատրաստի և ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացնի համապատասխան առաջարկություններ:

Այնուամենայնիվ, ներկայումս առկա հիմնախնդիրներից ամենաարդիականը մարզում պետական գործակալությունների, դոնոր կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պակասն է: Հետևաբար, այս բնագավառում իրականացված ծրագրերի և կատարված ներդրումների իրական թիվը հավանաբար ավելի մեծ է, քան ներկայացված է վերևում:

Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանների կառուցումը մարզի բոլոր քաղաքներում: Ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների հիմնական նպատակն է նվազեցնել Քասախ գետի ավազանի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև բարձրացնել առողջապահական ցուցանիշները՝ կեղտաջրերի մաքրման համակարգի բարելավման միջոցով՝ կիրառելով աէրացման և մաքրման մեխանիկական եղանակները մարզի բոլոր համայնքներում:

Ջուգահեռաբար մասնավոր հատվածի մասնակցությունը այս բնագավառում պետք է մանրամասնորեն ուսումնասիրվի՝ գործող պայմանագրի ժամկետի ավարտից հետո այսպիսի մասնակցությունը շարունակական դարձնելու նպատակով:

Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանների կառուցումը մարզի բոլոր քաղաքներում: Այս կապակցությամբ անհրաժեշտ են հետևյալ ներդրումները՝

- **Աշտարակ - 1.5 մլրդ դրամ**
- **Ապարան - 1.0 մլրդ դրամ**
- **Թալին – 0.8 մլրդ դրամ**

Ընթացիկ շրջանում հրատապ են կոյուղացման հիմնախնդիրները Աշտարակում, Ապարանում, Թալինում (յուրաքանչյուրի գծով ներդրումների գնահատված պահանջը կազմում է 0.5-1.0 մլն ԱՄՆ դոլար), քանի որ այսօր Քասախ գետ թափվող կեղտաջրերը ակնհայտ բացասական էկոլոգիական վնաս են հասցնում գետի էկոհամակարգին:

Առավել հրատապ են հետևյալ լուծում պահանջող խնդիրները.

1. Աշտարակ քաղաքը սնող Արտաշավան-Աշտարակ ինքնահոս ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1998թ-ին: 220լ/վրկ նախագծային հզորության փոխարեն ներկայումս գործում է 70լ/վրկ հզորությամբ: Անհրաժեշտ է հեղեղումներից պաշտպանելու համար վերակառուցել գլխամասը և կառուցել նոր կապտաժներ՝ նախագծային հզորությունն ապահովելու համար: Աշխատանքների համար կպահանջվի 500.0 մլն. դրամ:

2. Իրինդ-Արտենի խմելու ջրամատակարարման համակարգի շահագործումը և սպասարկումը հանձնել «Հայջրնուկոյուդի» ՓԲԸ:

3. Կառուցել Ամբերդի ջրաղբյուրներից Աշտարակի տարածքի մի խումբ համայնքների ինքնահոս ջրամատակարարման համակարգը, բարելավելով Ուխան, Կոշ, Նոր Ամանոս, Նոր Եղեսիա, Արագածոտն, Շամիրամ և Դպրեվան համայնքների ջրամատակարարումն ինքնահոս եղանակով, որի համար կպահանջվի 800.0 մլն. դրամ ֆինանսական միջոցներ:

4. Մարզի Թալինի տարածաշրջանի Արագածավան, Արտենի համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում արտեզյան ջրաղբյուրներից, որի համար կպահանջվի համապատասխանաբար 1.2 մլրդ և 0.6 մլրդ դրամի ֆինանսական միջոցներ: Նշված համայնքներում ապրում է շուրջ 10 000 մարդ:

5. Արագածի տարածաշրջանի Սանգյառ, Վարդաբլուր, Ռյա-Թագա, Շենկանի, Գեղաձոր, Գեղաղի, Բերքառատ, Հնաբերդ համայնքները խմելու որակի ջրով ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել Գեղաձորի և Օրթանյա համակարգերի գլխամասերը և վերանորոգել և վերակառուցել համակարգեր, որի համար կպահանջվի 1.0 մլրդ դրամ:

6. «Ջինջ ակներ համակարգում հիմնանորոգել և կառուցել 3000.0խ/մ ՕԿՁ, որի համար կպահանջվի 300.0 մլն. դրամ:

Աղյուսակ 84. Արագածոտնի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցառումների ծրագիր` ըստ առաջնահերթությունների

Աշտարակի տարածաշրջան /2012թ./

h/h	Պահանջվող ֆինանսական միջոցները	Միջոցառման անվանումը	Երկարությունը կմ	Խողովակի տրամագիծ մմ	ՕԿՁ ծավալ մ3	Բնակչության թիվ
1	500000.0	Ամբերդի ջրաղբյուրներից Աշտարակի մի խումբ համայնքների ինքնահոս ջրամատ. համակ. կառուցում	25.5	200.0 250.0 150.0		5000

Թալինի տարածաշրջան /2010 թ./

2	150000.0	«Ջինջ ակներ» համակարգի ՕԿՁ-ի կառուցում			3000 խ.մ	3000
---	----------	--	--	--	----------	------

Արագածի տարածաշրջան /2011թ./

3	80000.0	Օրթանյայի ինքնահոս ջրամատակ. համակարգի գլխամասի կառուցում	1.5	250.0		3500
---	---------	---	-----	-------	--	------

7.3.2. Ճանապարհներ

Ֆիզիկական մեկուսացվածությունը ԱՀՌԾ-ում սահմանված է որպես կարևորագույն գործոն, որը խոչընդոտում է կենսաբանական, սոցիալական ու մշակութային կարիքները հոգալուն: Հայաստանում աղքատության մակարդակը ուղղակիորեն կապակցված է Երևանից ու մարզկենտրոններից հեռավորության և հատկապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակի հետ:

Այս առումով աղքատության աստիճանը ուղղակիորեն կապվում է ճանապարհային ցանցի վիճակի հետ:

Մարզի միջպետական ու մասամբ հանրապետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք, իսկ համայնքային ու մարզային նշանակության ճանապարհները

անմխիթար վիճակում են: Արագածոտնի մարզով անցնում են 133 կմ միջպետական, 164 կմ հանրապետական և 493 կմ տեղական (որից 364.4 կմ. մարզային ու 128.6 կմ. համայնքային ենթակայության) ճանապարհներ:

Մարզի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհային ցանցում կա 66 կամուրջ և 54 երկաթբետոնե խողովակ: Դրանք վթարային են՝ հեղեղումների և երկար տարիներ չնորոգվելու պատճառով: Մարզի ամբողջ ճանապարհային ցանցի տարեկան պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջը շուրջ 2.5 մլրդ դրամ է:

2007թ պետական բյուջեի միջոցների, Լինսի հիմնադրամի և այլ ծրագրերով հիմնանորոգվել են մի շարք հանրապետական ու մարզային նշանակության ավտոճանապարհներ և կամուրջներ, այդ թվում՝ հանրապետական ճանապարհ Հոռոմ-Արթիկ-Ալագյազ (590 մլն. դրամ) և Արմավիր-Իսահակյան - Գյումրի (25.3 մլն դրամ), Լինսի հիմնադրամ/: Երևան-Եղվարդ-Հարթավան Երնջատափի հատված (37 մլն. դրամ): Ծաղկահովիտի համայնքային ճանապարհ 1.5 կմ (69 մլն. դրամ), ԻՖԱԴԻ ծրագրով 2007 թ. մարզային 32 ավտոճանապարհների վրա կատարվել են 1 միլիարդ 830 միլիոն դրամի ասֆալտ-բետոնյա, փոսային և հիմնանորոգման աշխատանքներ:

2007 թ. մայիսյան հեղեղումների պատճառով փլվեցին և վթարվեցին նաև տեղական նշանակության 18 կամուրջներ և կամրջային անցումներ, ողողվեց ավելի քան 21,5 կմ տեղական նշանակության ճանապարհ: Պատճառվեց շուրջ 750 միլիոն դրամի վնաս:

ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 12-ի թիվ 802-Ա որոշմամբ հատկացված միջոցների հաշվին հիմնանորոգվել են 3 կամուրջներ և մաքրվել Ապարան քաղաքի ջրատար առուներն ու մայթերը: Ըստ օբյեկտների գումարները ծախսվել են.

- 1 Արագած-Շենավան կամրջի վրա՝ 18.600.0 հազ. դրամ
- 2 Մելիք գյուղի մուտքի կամրջի վրա՝ 6850,0 հազ. դրամ
- 3 Մուլքի գյուղի Քասախ գետի կամրջի վրա՝ 6250,0 հազ. դրամ
- 4 Ապարան քաղաքի ջրատար առուների և մայթերիմաքրման համար 13920.0 հազ.

Աղյուսակ 85. Արագածոտնի մարզում ճանապարհների կապիտալ վերանորոգման, վերականգնման և պահպանման աշխատանքների ֆինանսավորումը 2007-2008թ.թ. (մլն դրամով)

Ճանապարհներ	2007		2008	
	Բյուջե	Փաստացի	Բյուջե	Փաստացի
Միջպետական ու հանրապետական ճանապարհների կապիտալ նորոգում	267մլն	267մլն	1միլիարդ 175մլն	1միլիարդ 175մլն
Միջպետական և հանրապետական ճանապարհների պահպանում ու շահագործում				
Միջպետական և հանրապետական ճանապարհների ձմեռային պահպանում և շահագործում				
Համայնքային ճանապարհների կապիտալ նորոգում և վերականգնում	156.0	156.0		
Մարզային ճանապարհների պահպանում ու շահագործում	60.0	60.0	70.0	70.0
Համայնքային ճանապարհների ձմեռային պահպանում				

Ամփոփելով ճանապարհաշինության ոլորտի 2007-2008թ.թ. ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումների իրականացման փորձը՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգումների:

- Միջպետական և հանրապետական ճանապարհների ձմեռային պահպանումը 2007 և 2008 թվականներին պահանջված կարգով է իրականացվել:

Սակայն այդ գումարը բավարար չէ ճանապարհների ընթացիկ նորոգման և պահպանության համար: Մարզը հիմնականում լեռնային և նախալեռնային գոտի է, ուր ձմեռը տևում է 4-5 ամիս: Ուստի, կարիք կա ձմեռային պահպանության համար նախատեսված գումարներն ավելացնել 50 տոկոսով:

Կան նաև այլ հիմնախնդիրներ, որոնց լուծում առօրեական է: Այսպես.

- Մրցույթներն ու պայմանագրային փաստաթղթերը պատրաստելու համար հատկացված ժամանակ բավարար չէ, որի հետևանք, աշխատանքներն ուշացած են սկսվում և համընկնում են եղանակային վատ շրջանի հետ: Գրանից խուսափելու համար անհրաժեշտ է մրցույթներն անցկացնել ամեն տարվա փետրվար-հունվար ամիսներին:

- Համապատասխան ու բավարար երաշխիքների դիմաց կանխավճարները պետք է կապալառուներին տրվեն այն նյութերը գնելու համար, որոնց գների տատանումների հավանականությունը բարձր է (օրինակ, բիտումը):

- Հաշվետվությունների վիճակը խնդրահարույց է: Կապալառուները չեն ներկայացնում ընթացիկ հաշվետվությունները մարզպետարանին, իսկ մարզպետարանը միշտ չէ, որ ներգրավված է ընդունման հանձնաժողովներում: Բացի այդ, մարզպետարանին լիարժեք տեղեկատվություն չի տրամադրվում դոնորների և հասարակական կազմակերպությունների գործունեության մասին:

2010-2013թ.թ սույն վերանայված մարզային զարգացման ծրագրով նախատեսվում է նորոգել մարզի տարածքում գտնվող միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ընդհանուր առմամբ 787 կմ երկարության ճանապարհներ:

7.3.3. Գազամատակարարում

Երկարատև ձմեռները (6-7 ամիս) և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում է բնական գազի մատակարարման հրատապությունը մարզի համայնքների համար: Հետևաբար, համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի ընդարձակումը:

Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է տարեկան շուրջ 10-12 խմ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին, նպաստում է մարզի էկոհամակարգի բարելավմանը: Վերջապես, ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել համայնքներին ՓՄՁ-ների զարգացմանը:

«Հայրուսգազարդ»-ի ներդրումները նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում բավարար չեն: Բացի այդ,

Նկատի ունենք համապարփակ ներդրումային մի պլան, որի շրջանակներում կապիտալ ծախսերը կատարում է Կառավարությունը կամ դոնորները, մինչդեռ գազամատակարար ընկերությունը կատարում է շահագործման ու պահպանման ծախսերը, ընդ որում՝ բաժանորդների վարձավճարներից: Որոշ համայնքներ համակարգին կարող են միանալ ոչ մեծ կապիտալ ծախսերի շնորհիվ, օրինակ՝ Օրգով, Անտառուտ, Ն.Սասնաշեն Վ.Սասնաշեն:

Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով ջերմամատակարարման լոկալ համակարգերի ներդրման վրա: Մարզում արդեն աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան տներում լոկալ ջեռուցման համակարգերի տեղադրման ուղղությամբ:

Գազամատակարարման համար կատարվող շահագործման և պահպանման բոլոր ծախսերը փոխհատուցվելու են սպառողների կողմից: Բազմաբնակարան տների արդյունավետ կառավարումը նույնպես կարևոր հարց է ջերմամատակարարման ծառայությունների

հասանելիության և արդյունավետության բարելավման առումով: Այս հարցի լուծմանը կնպաստի 2002 թվականին ընդունված «Բազմաբնակարան տան կառավարման մասին» օրենքի կիրառումը:

2007 թվականին զագամատակարարման համակարգի բաժանորդների թիվը աճել է 15%-ով:

Անկախ պատճառներից, պետական զագամատակարարման ընկերության կողմից ծառայությունների կրճատումը համայնքներում հանգեցրել է սպասարկվող համայնքների թվի կրճատմանը (այժմ գազ ունի խորհրդային շրջանի քաղաքային բազմաբնակարան շենքերի միայն 42%-ը և գյուղական համայնքների 35.1%-ը): Այսօր բնական գազ է մատակարարվում մարզի միայն 39 համայնքներին: Այն բնակավայրերում, որտեղ չկա գազ, ջեռուցման համար օգտագործվում է վառելիքայտ, որն ունի ակնհայտ անբարենպաստ բնապահպանական հետևանքներ:

ՀՀ նախագահի նախընտրական խոստումներով մարզի 6՝ Կոշ, Ուջան, Աղձք, Ալագյազ, Քուչակ և Օհանավան համայնքներում նախատեսվում է 2010 թվականին կատարել 1 միլիարդ 110 միլիոն դրամի զագաֆիկացման աշխատանքներ:

Ամփոփելով ենթակառուցվածքների բաժինը՝ անհրաժեշտ է նշել, որ միջոցների անբավարության պատճառով ենթակառուցվածքների վերականգնումն ու պահպանումը լայնածավալ չեն եղել, այնպես որ շահառուների պատկերացմամբ ներդրումների ազդեցությունը բավարար չի եղել ծառայությունների կենսունակությունն ապահովելու համար: Հետևաբար, հետագա ծրագրերով նախատեսվող միջոցառումները մանրակրկիտ կուսումնասիրվեն առավելագույնի հասցնելու համար իրականացվող միջոցառումների ազդեցությունը և մատուցվող ծառայությունների որակը:

Ենթակառուցվածքների բնագավառում իրականացվող աշխատանքները կալանավորվեն ոչ-ձմեռային ամիսներին, քանի որ աշխատանքների արդյունքները ավելի երկար կծառայեն, իսկ ծախսերը ավելի պակաս կլինեն: Կրթարձրացվի շինարարական աշխատանքների որակը:

Համայնքների մասնակցությունը մոնիտորինգի գործընթացներում, տեղական փորձի ու գիտելիքների օգտագործումն ու, որոշ դեպքերում, նրանց նպատակային մասնակցությունը կարող են շատ արժեքավոր լինել հատկապես այն դեպքերում, երբ խոսքը գնում է տվյալ համայնքի կողմից առաջադրված միջոցառման իրականացման աշխատանքներին:

Ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացումը կպահանջի բավականաչափ ֆինանսական ռեսուրսներ (տես՝ Աղյուսակ 50):

7.2. Ենթակառուցվածքների ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտի նպատակները, արդյունքներն ու միջոցառումները	Արդյունքային ցուցանիշներ Ռ-իսկեր	Ոլորտի նպատակը
Արագածոտնի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում	Միջոցները հատկացվել են և ժամանակին տրամադրվել: Կառավարությունը հետևողական է ապակենտրոնացման քաղաքականություն իրականացնելու հարցում	
1. Մարդկանց բավարարվածության աստիճանը ճանապարհների որակից, %	Արդյունք 1 Արագածոտնի մարզի ճանապարհային ցանցը բարելավվել է Արդյունք 2 Ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման համակարգը բարելավվել է	
2. Մաքուր խմելու ջուր ունեցող մարդկանց տեսակարար կշիռը, %		
3. Մարդկանց բավարարվածության աստիճանը ոռոգման համակարգերով, %		

ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագիր 2011-2014 թթ.

4. Բնական զազ ունեցող տնային տնտեսությունների քիվը		
--	--	--